

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՀՏԳ- 347  
ԳՄԴ- 67.99(2) 3  
Բ 371

**Բարսեղյան Տ.Կ.**

***Երաշխավորվել է տպագրության ԵՊՀ իրավաբանական  
ֆակուլտետի խորհրդի կողմից***

Խմբագիր՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր **Գ.Հ. Ղարախանյան**

**ԳՈՒՅՔԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ  
ԱՐԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Բարսեղյան Տարիել Կարապետի  
Բ 371 Գույքային պատասխանատվության էվոլյուցիան և արդիական  
հիմնահարցերը: Երևանի պետ. համալսարան: Երևանի հա-  
մալս. հրատ., Երևան, 2006, 304 էջ:

Մենագրությունում գույքային պատասխանատվության ինստիտուտը կար-  
գավորող հայրենական, այլ երկրների օրենսդրության, միջազգային իրավա-  
կան ակտերի համեմատական վերլուծության, ինչպես նաև պրակտիկ նյութերի  
ուսումնասիրման հիման վրա բացահայտվում են պատասխանատվության  
զարգացման օրինաչափությունները, առանձնահատկությունները կիրառման  
պայմանները և այլ հիմնահարցեր:

Մանագրությունը կարող է օգտակար լինել իրավաբանական բուհերի և  
ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, դատական  
մարմինների աշխատողների համար:

Բ  $\frac{1203020600}{704(02)06}$  2006

ԳՄԴ- 67.99(2) 3

Երևանի համալսարանի հրատարակչություն  
Երևան - 2006

ISBN 5-8084-0785-0

© Բարսեղյան Տ.Կ., 2006

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրավունքի հուշարձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջանալով մինչև պետության և իրավունքի ձևավորումը պատասխանատվության ինստիտուտն անցել է դինամիկ զարգացման բարդ, երբեմն հակասական, բայց բոլոր դեպքերում սուբյեկտիվ իրավունքների իրականացմանն ու պաշտպանությանը միտված, երկարատև ուղի: Առաջանալով որպես անձնական պատասխանատվություն (արյան վրեժ, դատաստան) այն արձագանքել է հասարակական կյանքում տեղի ունեցող բոլոր փոփոխություններին, փոխվելով և կատարելագործելով կիրառման կառուցակարգերը: Այդ փոփոխությունների հիմնական արդյունքը հանդիսացավ գույքային պատասխանատվության առաջացումը և նրա սահմանազատվելը անձնականից:

Գույքային պատասխանատվությունն առաջացավ այն ժամանակ, երբ արտադրական հարաբերությունների զարգացումը հնարավորություն ընձեռեց վնաս պատճառողի և տուժողի միջև համաձայնություն կայացնել վերջինիս կորուստները բնեղենով հատուցելու մասին: Դրամի, որպես ընդհանրական համարժեք հանդես գալու և տնտեսական հետագա զարգացումների հետևանքով գույքային պատասխանատվությունը տուժողի համար դարձավ իրավախախտմամբ պատճառված կորուստների փոխհատուցման միջոց, իսկ իրավախախտողի համար՝ ունեցվածքի կորստով արտահայտվող մասնավոր «պատիժ»:

Այդ պատասխանատվության զարգացման և կիրառության շրջանակների ընդլայնման հետևանքով գույքային բնագավառը վերջնականապես տարանջատվեց անձնականից, բարձրացավ գույքային շահի, գույքային հարկադրանքի նշանակությունը, որն էլ հիմք հանդիսացավ, որպեսզի պետությունները ավելի ու ավելի սահմանափակեն, իսկ XIX դարում՝ ընդհանրապես արգելեն մասնավոր հարաբերություններում անձի նկատմամբ ցանկացած ֆիզիկական հարկադրանքի կիրառություն:

Գույքային պատասխանատվության էվոյուցիայի արդյունքում, մասնավոր հարաբերություններում թույլատրվեց ներգործել միայն իրավախախտողի գույքային ոլորտի վրա: Ընդ որում, այդ ներգործությունը կիրառելու դեպքում էլ պետությունն իր վրա վերցրեց հարկադրման գործառնություն, արգելեց գույքային հարաբերություններում պա-

տասխանատվության տեսակի (անձնական, գույքային) ընտրության կամայականությունը, դրանով իսկ գույքային պատասխանատվության ինստիտուտին հաղորդելով նոր որակ: Ավելին, աստիճանաբար ընդլայնեց գույքային պատասխանատվության կիրառման շրջանակները: Եթե ի սկզբանե այն ձևավորվեց որպես մասնավոր հարաբերություններում (հատկապես պարտավորական հարաբերություններում) կիրառվող գույքային «պատիժ», ապա հետագայում այդ «պատիժը» որպես իրավախախտմամբ պատճառված կորուստների փոխհատուցման միջոց, լայն կիրառություն ստացավ նաև հանրային իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների խախտման դեպքում (բնապահպանական, հարկային, ֆինանսական, քրեական և այլն):

Գույքային պատասխանատվության հիմնարար սկզբունքների ձևավորման և կիրառման կառուցակարգերի փոփոխման գործում հատկապես կարևոր դեր խաղացին XX դարի երկրորդ կեսին տնտեսավարման բնագավառում կատարված փոփոխությունները: Գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացումը, տնտեսական հարաբերությունների միջազգայնացումը, տնտեսավարման գործում միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին նախապատվություն վերապահելը, աշխարհատնտեսական կապերի ոլորտում կատարված արմատական փոփոխությունները, պարտադրեցին նոր մոտեցում ցուցաբերել տնտեսական հարաբերությունների կարգավորման և դրա ապահովման երաշխիքը հանդիսացող գույքային պատասխանատվության նկատմամբ: Այդ զարգացումները, ըստ էության, չանդրադարձան Հայաստանի Խորհրդային Հանրապետության օրենսդրության և հատկապես պատասխանատվության հարաբերությունները կարգավորող օրենսդրության վրա, որովհետև երկու համակարգերի (կապիտալիստական և սոցիալիստական) հակամարտության պարագայում խորհրդային իրավունքը որդեգրել էր ժխտողական-քննադատական մոտեցում և շուկայական հարաբերությունները կանոնակարգող ամենադրական երևույթներն անգամ դժվարությամբ էին ներթափանցում խորհրդային օրենսդրություն: Թերևս դա պետք է համարել այն հիմնական պատճառներից մեկը, որ շուկայական տնտեսություն ստեղծող Հայաստանի Հանրապետության իրավագիտությունը պարտադրված է գույքային պատասխանատվության կիրառման կառուցակարգերի պատմական զարգացման հետևանքով տեղի ունեցած փոփոխությունների հաշվառմամբ նոր մոտեցում ցուցաբերել այդ ինստիտուտի հիմնահարցերի ու-

սումնասիրության նկատմամբ, հատկապես անդրադառնալ այն հիմնահարցերի պարզաբանմանը, որոնք կարևոր նշանակություն ունեն շուկայական հարաբերությունների պարագայում տնտեսական և տնտեսվարման կառուցակարգերի բնականոն ձևավորման և գործառույթների իրականացումն ապահովելու համար:

Ինչպես ցույց տվեց շուկայական հարաբերություններ մուտք գործող Հայաստանի Հանրապետության իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությունը, սոցիալ-տնտեսական նոր հարաբերություններին անցման դժվարին պայմաններում հապշտապ և մակերեսորեն կատարված օրենսդրական փոփոխությունները, տարբեր իրավական համակարգերի անհարկի և գրեթե մեխանիկական ընդօրինակման արդյունքում ձևավորված օրենսդրությունն ի գործու չէ համալիր կարգավորելու տնտեսական հարաբերությունները, ապահովելու տնտեսվարող սուբյեկտների իրավունքների ու շահերի պաշտպանությունը, ապահովելու գույքային պատասխանատվության արդյունավետությունը և լուրջ փոփոխությունների կարիք ունի:

Մեփականության և պարտավորական իրավունքների հետ միասին քաղաքացիական իրավունքի պատվանդան հանդիսացող գույքային պատասխանատվության ինստիտուտը, մեր կարծիքով, իր նշանակությամբ և դերակատարությամբ կարիք ունի հատուկ ուշադրության և առանձնակի վերաբերմունքի: Ներկայումս, երբ ստեղծված են պատմական զարգացումների հաշվառմամբ, իրավական հարաբերությունների կանոնակարգման համաշխարհային փորձը խելամիտ ընդօրինակելու և այն ոչ միայն հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորմանը, այլև իրավական լեզվամտածողության և ազգային իրավական մշակույթի զարգացման գործին ծառայեցնելու աննախադեպ հնարավորություններ, երբ առկա են մարդկային արժեքների, մարդու և քաղաքացու կյանքի, առողջության, սեփականության, պատվի և արժանապատվության պահպանության, տնտեսվարման ազատության հուսալի երաշխիքներ պարունակող իրավական համակարգ ձևավորելու բոլոր հնարավորությունները, անհրաժեշտ է նոր մոտեցում ցուցաբերել իրավական յուրաքանչյուր ինստիտուտի արժեքման նկատմամբ:

Անհրաժեշտ է վերաարժեվորել իրավունքների պաշտպանության գործում գույքային պատասխանատվության ինստիտուտի դերն ու նշանակությունը, ձերբազատվել խորհրդային իրավունքից ավանդույթի

ուժով նոր օրենսդրություն փոխառված, ժամանակի պահանջներին չհամապատասխանող հասկացություններից, տերմիններից, կատեգորիաներից, լուծել ինչպես տեսական, այնպես էլ գործնական այն հիմնահարցերը, որոնց չլուծվածությունն անդրադառնում է տնտեսվարման արդյունավետության վրա, խանգարում է պատասխանատվության ինստիտուտի լիարժեք կիրառմանը:

Նշված նկատառումներից ելնելով սույն աշխատանքում ուսումնասիրման առարկա են դարձել այն հիմնահարցերը, որոնք ընդհանուր նշանակություն ունեն գույքային պատասխանատվության բոլոր տեսակների, հատկապես տնտեսական հարաբերություններում կիրառվող պատասխանատվության ինստիտուտի զարգացման, ինչպես նաև իրականացվող տնտեսական, քաղաքական, իրավական բարեփոխումների և իրավագիտության առջև ծառայած որոշակի խնդիրների լուծման համար: Փորձ է կատարվել գույքային պատասխանատվության պատմական զարգացման միտումների պարզաբանման, զարգացած իրավակարգեր ունեցող երկրների օրենսդրության, միջազգային իրավական ակտերի և դրանց կիրառման պրակտիկայի համեմատական վերլուծության արդյունքների հիման վրա մշակել Հայաստանի Հանրապետությունում իրականացվող իրավաստեղծ գործունեությանը և օրենսդրության նորացմանն աջակցելու նպատակ հետապնդող առաջարկներ: Վերլուծել XX դարում տնտեսական հարաբերությունների միջազգային իրավական կարգավորման, հատկապես գույքային պատասխանատվության կիրառման փորձը և դրանք հայրենական օրենսդրություն և պրակտիկա ներմուծելու հնարավորությունները:

Աշխատանքում կատարվում է գույքային պատասխանատվությունը կարգավորող օրենսդրության կիրառման նվաճումների և բացթողումների վերլուծություն, վեր է հանվում գույքային պատասխանատվության գործառույթի բացահայտման նշանակությունը, մատնանշվում են օրենսդրական բացթողումների վերացման հնարավոր եղանակները, հիմնավորվում է տնտեսության միջազգայնացման ներկայիս պայմաններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության փոփոխման հրատապությունը, արվում են օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի կատարելագործման կոնկրետ առաջարկներ:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
<b>ԳԼՈՒԽ 1. ԳՈՒՅՔԱՅԻՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....</b>	<b>9</b>
1.1. Գույքային պատասխանատվության պատմական զարգացումը....	9
1.2 Գույքային պատասխանատվության կիրառման մեխանիզմների փոփոխությունը XX դարում .....	25
1.3.Գույքային պատասխանատվության որպես իրավական պատասխանատվության հիմնական տեսակի հասկացությունը .	41
1.4 Մասնավոր հարաբերություններում կիրառվող գույքային պատասխանատվության առանձնահատկությունները .....	58
1.5. Գույքային պատասխանատվության տեսակները.....	73
1.6. Պարտավորության բնեղենով կատարման և պատասխանատվության փոխհարաբերակցությունը.....	91
<b>ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....</b>	<b>111</b>
2.1. Իրավախախտումների համար կիրառվող սանկցիաների հասկացությունը և գործառույթները.....	111
2.2. Օպերատիվ-կարգավորիչ սանկցիաների յուրահատկությունը ....	134
2.3. Վնասների հատուցումը որպես պատասխանատվության հիմնական միջոց .....	145
2.4. Տուժանքը որպես պատասխանատվության ընդհանուր միջոց.....	180
2.5. Գրամական պարտավորությունների խախտման համար գանձվող տոկոսները .....	202

<b>ԳԼՈՒԽ 3. ԳՈՒՅՔԱՅԻՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ .....</b>	<b>216</b>
3.1. Գույքային պատասխանատվության հիմքի և պայմանների հարաբերակցությունը.....	216
3.2. Հակաիրավական վարքագիծը որպես գույքային պատասխանատվության ավանդական պայման .....	227
3.3. Պատճառական կապի հիմնահարցը քաղաքացիական իրավունքում .....	237
3.4. Մեղքի, որպես գույքային պատասխանատվության պայմանի էվոյուցիան.....	245
3.5. Գործարարական ռիսկը որպես գույքային պատասխանատվության պայման .....	278

**ԳԼՈՒԽ 1.**  
**ԳՈՒՅՔԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ**  
**ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**1.1. Գույքային պատասխանատվության**  
**պարմական զարգացումը**

Գույքային պատասխանատվության սաղմերը ձևավորվել են դեռևս նախնադարյան համայնական կարգերում: Նախնադարյան մարդը, երկար և ձիգ հագարամյակներ խմբովի պայքար մղելով իր գոյության և կյանքի համար, բնագործն ձեռք էր բերում ու կատարելագործում գոյության կռվի միջոցներ ու եղանակներ, մշակում էր համակենցաղի կանոններ: Այդ միջոցները, դարավոր կենսական փորձերում սերնդե սերունդ փոխանցելով, պահպանելով և ավանդելով հաջորդներին իր կատարելագործությունները՝ ի վերջո դառնում էին գիտակցական գործողություններ ու կարգեր, որոնք սրբագործվում– վավերացվում էին իբրև սովորույթ<sup>1</sup>:

Իրավունքի պատմաբանները համոզիչ կորպով ապացուցել են, որ իրավունքը որպես պետա–պարտադրական համակարգ ծագել է այն սովորույթներից, որոնց պետությունը իր ակտերով սովել է իրավական ուժ<sup>2</sup>: Հետևաբար, մինչև պետության առաջացումը և նրա կողմից իրավաստեղծ գործունեության իրականացումը գոյություն է ունեցել սովորության նորմերից կազմված նախանորմատիվային «իրավունք», որի նորմերը վեր էին ածվում պարտականություններ ձևավորող և դրանց խախտման դեպքում ներգործության համապատասխան միջոցների կիրառում վերապահող ընդհանուր վարքագծի կանոնների կամ հանրության կողմից (ցեղ, տոհմ և այլն) ֆետիշացված «իրավունքի» թույլատրելի սահմանները կանխորոշող կամ հարաբերություններ կարգավորող չգրված «օրենքների»: «Սովորույթը, հակառակ օրենքի, որը սահմանված է հայտնի օրենսդիր մարմնի կողմից, անդեմ է, նրա հեղինակն անհայտ է. նա ծագում է հասարակության մեջ, ինչպես լեզուն, բանահյուսությունը. նրա սկիզբն անորոշ է: Նա հայտնի է դառնում իր

գոյությամբ միայն այն ժամանակ, երբ արդեն կադապարվել է ու կիրառվում է մարդկանց կողմից<sup>3</sup>:» Ինչպես գրված է աստվածաշնչում, «Քրիստոս կամեցավ, որ ոչ թե օրենքներով հարկադրաբար միմյանց իրավունքները պահպանենք, այլ սիրով և կարեկցանքով, արդարությունը պահպանենք բոլոր ժամանակների չգրված օրենքներով»<sup>4</sup>: Հետևաբար, մինչև պետության առաջացումը, հասարակական բոլոր հարաբերությունները, և առաջին հերթին անձի ու նրա ունեցվածքի պաշտպանության իրականացման հիմքը սովորության նորմերից կազմված նախանորմատիվային իրավունքն էր: Ասվածից բխում է, որ նախնադարյան համայնական կարգերում սովորույթը «իրավունքի աղբյուր» չէր, այլ հանդիսանում էր իրավունքի սաղմնային ձևավորում, սովորության իրավունք, որն ըստ հայ միջնադարյան խոշոր իրավագետ Մխիթար Գոշի մարդուն տրված վերին աստվածային բանականության շնորհն է<sup>5</sup>: Այդ իրավունքը հանրությունը ձևավորել է փաստացի իրավաստեղծման օբյեկտիվ գործընթացի հետևանքով: Իրավունքի նման ձևավորման առանձնահատկությունն այն է, որ վարքագծի համապարտադիր կանոնները սանկցիավորվում էին ոչ թե դրա համար ստեղծված մարմինների կողմից, այլ արմատավորվում էին ավանդույթի, օգտակարության, անհրաժեշտության ուժով:

Սովորույթի «հեղինակությունը» (նրա պարտադրականությունը – Տ.Բ.) կայանում էր այն համոզման մեջ, որ «այդպես վարվել են միշտ և բոլորը»<sup>6</sup>: Այդ պատճառով սովորույթները ձեռք էին բերում պարտադիր բնույթ: Դրանց պարտադիրությունը բխում էր ամբողջ կոլեկտիվի անվթար գոյության, նրանց համակենցաղի պահպանության և շրջապատող բնության դեմ պայքարի կազմակերպվածության սոցիալական բնագրից<sup>7</sup>: Նախնադարյան մարդը հասկանում էր, որ դրանց կիրառումն ու անշեղ պահպանումն անհրաժեշտ է համայնքի պահպանության և դրանով իսկ իր գոյության ապահովման համար: Այդ պատճառով նախնադարյան կարգերի ժամանակ վարքագծի կանոնները պահպանվում էին կամովին՝ «դրանց օգտակարության գիտակցման» ուժով:

<sup>1</sup> Տե՛ս Սամուելյան Խ., նշված աշխույթումը, էջ 26:  
<sup>2</sup> Տե՛ս Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, Եր., 2001, էջ 361:  
<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 339:  
<sup>4</sup> Տե՛ս Հայկյանց Ա., Միջագային գործարար շրջանառության սովորույթները և նրանց տեղը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում // Իրավագիտության հարցեր, Եր., 2004, թիվ 3, էջ 55:  
<sup>5</sup> Տե՛ս Սամուելյան Խ., նշված աշխատությունը, էջ 22:

<sup>1</sup> Տե՛ս Սամուելյան Խ., Հին Հայ իրավունքի պատմություն, Հատոր 1, Եր., 1939, էջ 27:  
<sup>2</sup> Տե՛ս *Æeëei ñeëé Ñ.Ý. Ý ðaäi ðeí eì ðoäeüñeí a ðaäi: i ðaäi ääý iñi í ää i ðaäi ðeí eì ðoäeüñeí e ääýoäeüi i ñðe. 3-ä èçä., I .: Èçä-äi “Í î ði ä”, 2000, էջ 59:*



պատասխանատու լինելու գաղափարը<sup>1</sup>:

Այդ հասարակությունը պատասխանատվություն էր նախատեսում անկախ իրավախախտողի մեղքից և առավել տիպական սանկցիաներ էին հանդիսանում հասարակական պարսավանքը, համայնքից վտարելը, մարմնական վնասվածք հասցնելը, մահապատիժը<sup>2</sup>:

Աստիճանաբար նախնադարյան հասարակությունը սպառող տնտեսավարումից անցում է կատարում վերարտադրող տնտեսավարման, առաջանում է հավելյալ ապրանք, որը հնարավորություն է ընձեռում մեղքը քավել ոչ թե անձնական պատասխանատվությամբ, այլ սեփական կյանքի փոխարեն որոշակի գույքային բարիք (փրկագին) առաջարկելով: Այսինքն, վրեժի փոխարեն աստիճանաբար արմատավորվում է փրկագնի գաղափարը, որն էլ նշանավորում է գույքային պատասխանատվության ինստիտուտի ծնունդը:

Իհարկե հասարակության անդամների անհավասարությունը, վրեժխնդրության շարունակականության ռիսկը նպաստում էր, որպեսզի տուժողը կամ նրա հարազատները, մեծամասամբ, գերադասեին փրկագինը: Բայց իրողությունն այն էր, որ տուժողը կամ նրա հարազատները նախ որոշում էին՝ իրենց անարգողի նկատմամբ ինչ միջոց էին կիրառելու՝ անձնակա՞ն, թե՞ գույքային, ապա գործում էին կայացրած որոշմանը համապատասխան: Նման վիճակը շարունակվեց նաև վաղդասակարգային պետությունների ձևավորվելուց հետո: Այդ պետություններն այնքան ուժեղ չէին, որպեսզի վրեժը վերացնեին, ուստի երկար ժամանակ գույքային փոխհատուցումը (փրկագինը) և արյան վրեժը շարունակում էին համատեղ գոյությունը, և դրանցից մեկի ընտրության իրավունքը պատկանում էր տուժողին:

Վաղդասակարգային պետությունը դեռևս շատ թույլ էր, որպեսզի իր կամքը թելադրեր: Նա սոսկ ամրապնդում էր արդեն իսկ ձևավորված կանոնները և դրանց խախտման նկատմամբ արձագանքելու թույլատրելի ձևերը<sup>3</sup>: Օրինակ՝ Խեթական օրենսգրքը «արյան տիրոջը» թույլատրում էր ընտրություն կատարել մեղավորի կյանքի և փրկագնի միջև<sup>4</sup>:

Մինչպետական նախանորմատիվային իրավունքը, պետականության ձևավորումից հետո երկար գոյատևել չէր կարող, քանի որ ինչպիսի ազնիվ նպատակներ էլ հետապնդեր, իր մեջ պարունակում էր

սուրյեկտիվիզմի, անձնական հայեցողության տարրեր, ստեղծում էր հակադրությունների առաջացման նախադրյալներ, անձնական քմահաճություն դրսևորելու հնարավորություն: Պետություններն էլ ձևավորման սկզբնական փուլում զբաղվում էին ոչ թե իրավաստեղծ գործունեությամբ, այլ սովորութային նորմերի հավաքմամբ, միավորմամբ, դրանցից առավել նպատակահարմարների և «արդարացիների» յուրատիպ կողմի ֆիկացմամբ և սանկցիավորմամբ: Վաղդասակարգային պետություններում, ինչու չէ նաև պետականությունից զրկված երկրներում մի կողմից սահմանում էին նորմեր, որոնք ամրագրում էին արմատացած սովորությունները, մյուս կողմից նախատեսում էին կանոններ, որոնցով ցանկանում էին փոխել իրականությունը: Օրինակ՝ Գոշի «Գատաստանագրքի» առաջին մասի 91-րդ հոդվածը, կրկնելով Սահակ Պարթևի 27-րդ և Գվինի Բ. Ժողովի 23-րդ կանոնները, պահանջում էր տղային և աղջկան «ոչ պասկել առանց զմիմեան տեսանելոյ», քանի որ նրանք գուցե միմյանց չեն հավանում և չեն ցանկանում իրար հետ ամուսնանալ<sup>5</sup>: Այդ նորմը սահմանվել է դեռևս 5-րդ դարում և հասել XII-

<sup>1</sup> Մինչև XII-րդ դարը ազգային օրենսգրքը հայերը չեն ունեցել: Միակը կանոնական իրավունքն էր, որը կողմի ֆիկացիայի էր ենթարկվել VIII-րդ դարում և գործում էր իբրև գրի առնված, որոշ համադրությամբ կազմված օրենսգրք (Տե՛ս Սամուելյան Խ., նշված աշխատությունը, էջ 74): Բացի կանոնական իրավունքից, ըստ պատմական տվյալների և հատկապես Մխիթար Գոշի վկայության, մինչև 12-րդ դարը Հայաստանում կիրառվել են «Կանոնագիրք Հայոց»-ի կանոնները, քանի որ գոյություն չի ունեցել գուտ ազգային օրենսգրքը: Միայն այդ դարում է սկիզբ առնում և իրականանում ազգային օրենսգրքը ունենալու ձգտումը և հաջողությամբ ստեղծվում են Գավիթ Վարդապետի Ալավկա որդու **Գաղասպանագիրքը** (մոտավորապես 1130-ական թվականներ), Մխիթար Գոշի **Գաղասպանագիրքը** (1184թ.), Մմբատ Գունդստարի **Գաղասպանագիրքը** (1265թ.): Այդ օրենսգրքերով քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորվել են ոչ միայն 13-14 դարերում, այլև Մեծ Հայքում ու Կիլիկիայում հայոց պետականությունը վերանալուց հետո: Կարծում ենք, որ ճշմարտության դեմ մեղանչած չենք լինի, եթե ասենք, որ հատկապես Մխիթար Գոշի **Գաղասպանագրով** սահմանված նորմերը «Կանոնագիրք Հայոց»-ի հետ գուցաեռաբար կիրառվել են հայ իրականության մեջ մինչև 19-րդ դարը, երբ Արևելյան Հայաստանում կիրառման է դրվել Յարական Ռուսաստանի օրենսդրությունը: (Գ.Ղարախանյան, դոկտորական ատենախոսություն, էջ 11): Գնիշտ է, ինչպես նկատում է պրոֆ. Ռ.Ավագյանը, Մ.Գոշի դատաստանագրքի «... կազմումը չի հրահանգավորվել օրենսդիր իշխանության կամ օրենսդիր իշխանությամբ օժտված ֆիզիկական անձի կողմից, այնուամենայնիվ դա չի խանգարել դրա համազգային ճանաչմանը» (Տե՛ս Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան մթա 9-րդ դար. մթ 19-րդ դար, գիրք 1, Եր., 2002, էջ 342): Այդ պատճառով ներկա աշխատանքում օրինակներ են բերվում Մխիթար Գոշի դատաստանագրքից:

<sup>1</sup> Տե՛ս Խոխլովա Գ.Վ., նշված հոդվածը, էջ 64:

<sup>2</sup> Տե՛ս Վենգերով Ա.Բ., նշված աշխատությունը, էջ 57:

<sup>3</sup> Տե՛ս Խոխլովա Գ.Վ., նշված հոդվածը, էջ 65:

<sup>4</sup> Տե՛ս Չերնիլովսկի Զ.Մ., նշված աշխատությունը, էջ 49:

րո՞ դար:

Այդ հանգամանքը վկայում է, որ օրենսդրությունը դարեր շարունակ անհաջող պայքար է մղել այդ հարցում հին սովորույթները վերացնելու համար<sup>1</sup>:

Ինչպես նշում է պրոֆեսոր Խվոստովը, չնայած պետության օրենսդրական գործունեությանը, սովորութային իրավունքի նորմերը շատ դեպքերում կարողանում էին գործող օրենքների հետ պահպանել իրենց գոյությունը և հաճախ շեշտակի սահման չէր դրվում գործող օրենքի և սովորույթի միջև: Թերևս այդ էր պատճառը, որ մասնավոր իրավախախտումների համար XII տախտակների օրենքներում նախատեսվում էին բազմապիսի հետևանքներ: Այդ օրենքներում մենք գտնում ենք ոչ միայն կայուն դրամական գումարով սահմանված տուգանքներ, այլև մեղավորի նկատմամբ տուժողի ինքնադատաստանի օրինականացված հնարավորությունները, որը երբեմն թույլատրվում է կողմերի համաձայնությամբ փոխարինել փրկագնով: Հետևանքների այդպիսի խստաբղետությունը բացատրվում է նրանով, որ օրենքի համապատասխան նորմերում հանդիպում են տարբեր պատմական փուլերից շերտանստվածքներ, որոնցով անցել են մասնավոր դեյլիտները մինչև XII տախտակները հրատարակվելը: Մեղավորի նկատմամբ ինքնադատաստանը մասնավոր վրեժի դարաշրջանի մնացուկ էր: Կողմերի համաձայնությամբ փրկագին թույլատրելը հիշեցնում էր անցման դարաշրջանը, երբ մասնավոր վրեժը դադարում է օգտվել հասարակական համակրանքից, իսկ պետությունը դեռևս իր վրա չի վերցնում տուժանքի չափ սահմանելը: Վերջապես, օրենքում սահմանված տուգանքներն այն դարաշրջանի արդյունք են, երբ պետությունը արգելում է մասնավոր վրեժը և այն փոխարինում է օրենքով սահմանված տուգանք ստանալու իրավունքով<sup>2</sup>:

Սովորույթների պահպանությունը բացատրվում էր նրանով, որ դրանցում արտահայտված էին նախորդ տոհմային կարգի ավանդույթ դարձած կենցաղային վերապրուկներ և մնացուկներ, որոնց վերացնելը ձևավորված պետականության ուժերից վեր էր: Պետությունն ի վիճակի չէր սանձահարելու վրիժառության զգացումը, որի պատճառով էլ հան-

<sup>1</sup> Տե՛ս Սուրբիսայան Ա.Գ., Մխիթար Գ-նը և «Հայոց դատաստանագիրքը», Եր., «Միտք» հրատ., 1965, էջ 132:

<sup>2</sup> Տե՛ս *Ōai noi ā Ā.Ī . Enoi deŷ dei nei ai i daāa. Nāāui i ā eçāai ēa. Ī . : Eçā-ai "Ī i nei ā nei ā i āo+i i ā eçāāōāēūōāi", 1919, էջ 128:*

ցանքների, ծանր զանցանքների, անգամ պարտավորությունների չկատարման համար նախատեսում էր վրեժխնդիր լինելու (արյան վրեժի) հնարավորություն: Օրինակ՝ Հին Հռոմում, անտիկ և հին հանրապետության դարաշրջաններում պատասխանատվությունն ուներ միայն անձնական բնույթ: XII տախտակների օրենքներում «արյան վրեժ» talio-ի սկզբունքով, թույլատրվում էր ոչ միայն սպանության և մարմնական վնասվածքի, այլև պարտավորության չկատարման դեպքում: Այդ օրենքներում սահմանված էր, որ պարտավորությունը չկատարելու դեպքում պարտապանը ենթակա է մահվան կամ դառնում է ստրուկ, կամ բանտարկվում է<sup>1</sup>: Միայն մ.թ.ա. 326 թ. Lex Peteliae-ի օրենքով պարտապանի սպանությունն արգելվեց և փոխարինվեց գույքային պատասխանատվությամբ (պարտապանը պարտատիրոջ առջև պատասխանատվություն էր կրում իր ամբողջ գույքով)<sup>2</sup>:

Սակայն մասնավոր վրեժի վնասակար հետևանքները, տոհմերի, կլանների, ընտանիքների միջև սերնդե սերունդ փոխանցվող թշնամանքը, փոքր ինչ ամրապնդված պետական իշխանությանը ստիպում էին միջամտել: Պետությունը աստիճանաբար արգելում է վրեժը, իսկ դրա փոխարեն, որպես պարտադիր կարգ, սահմանում է այն կարգը, որը նախկինում կամավոր էր, այսինքն՝ սահմանում էր մասնավոր տուգանքներ («Վիրա», «wehrgeld» և այլն)՝ որպես պարտադիր փրկագին<sup>3</sup>: Որոշակի դեպքերում փրկագին վճարելու փոխարեն պահպանվում էր վնաս պատճառելու մեջ «մեղավորի» գլխով վճարելու (կենդանու, ստրուկի, իշխանության տակ գտնվող անձի) հնարավորություն: Օրինակ կարող են հանդիսանալ Հին Հռոմի նոկսալ (*i i ēñāēūi ūā*) հայցերը (XII տախտակները, XII, 2բ), տնային կենդանիներ հանձնելը՝ ֆրանկների պետության Սալիկյան պրավոսյով (XXXVI), խոլոպին հանձնելը Ռուսական պրավոսյով<sup>4</sup>:

Չնայած այն բանին, որ պետությունը ամեն կերպ փորձում էր արյան վրեժն արգելել, այնուհանդերձ, ապրանքադրամական հարաբերությունների թերզարգացածությունը նրան պարտադրում էր, այն դեպ-

<sup>1</sup> Տե՛ս *Ī ai ŷoi ēēē dei nei ai i daāa: Çaei Ōi daāēēō, Einiēōōōēē Āāŷ, Āāāēōū P noi ēāi ā. Ī ., 1667, էջ 10:*

<sup>2</sup> Տե՛ս Բաբայան Լև, Հռոմեական մասնավոր իրավունք, Ռուսումնական ձեռնարկ, Եր., 2000, էջ 103:

<sup>3</sup> Տե՛ս Պոկրովսկի Ի.Ա., նշված աշխատությունը, էջ 237:

<sup>4</sup> Տե՛ս Խոխլովա Գ.Վ., նշված աշխատությունը, 65-66 էջեր:



քրոմ, երբ իրավախախտողը փրկագին վճարելու միջոցներ չունեն, բույլատրել նրա նկատմամբ անձնական պատասխանատվության կիրառում: Օրինակ՝ Համմուրաբիի օրենքներով (53, 54 §§) բույլատրվում էր մարդու և նրա ունեցվածքի վաճառքը, եթե նրա անփութության հետևանքով քանդվել էր պատնեշը և հարևանի արտը հեղեղվել, իսկ նա հացահատիկը փոխհատուցելու հնարավորություն չունեն: XII տախտակները նախատեսում էին, որ անգուշությամբ հրդեհ առաջանալու դեպքում, եթե մեղավորը անվճարունակության պատճառով վնասը փոխհատուցել չի կարող, նա պետք է ենթարկվի «ավելի մեղմ պատժի», և ոչ թե մահվան, որին ենթարկում են դիտավորության դեպքում<sup>1</sup>:

Մ.Գոշի «Գատաստանագիրք Հայոց»-ը նախատեսում է, որ «եթե ցույր հարձակվող էր և բողոքել են նրա տիրոջը և նա անփույթ է վերաբերվել այդ բողոքներին և ցույր սպանել է որևէ մեկին, ապա ցույր պետք է քարկոծվի և ցլի տերը մեռացվի: Իսկ եթե փրկանք սահմանեն նրա համար, ապա իր անձի փոխան փրկանք տա, որքան որ սահմանված է, և ցլի տերը փրկվի»<sup>2</sup>:

Վաղ դասակարգային հասարակությունում տնտեսական շրջանառությունն իրականացվում էր ապրանքափոխանակությամբ, և փրկագինը վճարվում էր բնեղենով: Այդ պատճառով էլ Համմուրաբիի օրենքներում հանդիպում ենք բնեղենով փոխհատուցման դեպքերի. հացահատիկ՝ հացահատիկի դիմաց (54, 55), եզ՝ եզի դիմաց (245, 246, 263 և այլն): Խեթական օրենքների առաջին աղյուսակը նախատեսում էր, որ վեճի ժամանակ ուրիշի ստրուկին սպանողը պարտավոր է դրա փոխարեն տալ երկու մարդ (1, 2), եթե որևէ մեկը հրկիզում է ուրիշի գոմը, ապա պարտավոր է կերակրել գոմի տիրոջ անասուններին, տալ փոխհատուցում, կառուցել գոմ (1, 100)<sup>3</sup>:

Բերված օրինակները վկայում են, որ աստիճանաբար անձնական պատասխանատվությունն իր տեղը սկսում է զիջել գույքային պատասխանատվությանը, և սկսվում է ձևավորվել իրավախախտումների համար գույքային պատասխանատվության ինստիտուտը: Սկսում են մշակել իրավական միջոցներ ցանկացած մասնավոր ոտնձգությունից անձնական բարիքները պաշտպանելու մեխանիզմներ: Մի կողմից,

մասնավոր անձանց նկատմամբ ոտնձգությունների որոշակի մասը ենթարկվում է քրեական օրենքի ներգործությանը, մյուս կողմից, քաղաքացիական իրավունքը մի կողմ չի կանգնում, այն իր հերթին այդ բարիքների նկատմամբ ոտնձգությունները դիտարկում է որպես քաղաքացիաիրավական դեյլիկտ և դրա հետ կապում է պատճառված վնասը փոխհատուցելու պարտականությունը<sup>1</sup>:

Գույքային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց տարբեր ժամանակներում, տարբեր պետություններում համարժեքի դեր կատարող գանազան ապրանքներին աստիճանաբար փոխարինում է դրամը և բնամթերային փոխհատուցումը փոխարինվում է դրամականով: Օրինակ, Համմուրաբիի օրենքներում բնամթերային փոխհատուցման հետ հանդիպում է նաև փոխհատուցում արժաթով, իսկ XII դարում Միսիթար Գոշի կազմած դատաստանագրքում գերակշռում է դրամով փոխհատուցումը: Այդ դատաստանագրքում անգամ սահմանվում էր «արնագին» (երեք հարյուր վաթսուհինգ դահեկան ոսկի)<sup>2</sup>:

Բացի դրանից, այդ ժամանակաշրջանի օրենսդրությունը, արյան վրեժի սահմանափակման անհրաժեշտությունից ելնելով, իրավագործ անձի գույքային և անձնական ոչ գույքային շահերի պաշտպանության համար սահմանում էր տարաբնույթ տուգանքներ, սպանության, մարմնական վնասվածք պատճառելու, գողության, ինչպես նաև նյութական վնաս պատճառելու դեպքում: Օրինակ՝ Համմուրաբիի օրենքները տուգանքներ են սահմանում (209, 211-214) կնոջ գանահարության, վիժման հասցնելու և այլ դեպքերում, XII տախտակներում՝ ոսկորը ջարդելու, վիրավորանքի, ծառերը դիտավորությամբ հատելու, տունը կամ հացի դեզը հրկիզելու համար:

Տարաբնույթ մարմնական և նյութական վնասներ պատճառելու համար տուգանքներ էր սահմանում նաև Միսիթար Գոշի Գատաստանագիրքը: Օրինակ՝ 100 դահեկան տուգանք էր նախատեսվում նրանց համար, ովքեր սուտ բամբասում են իրենց կնոջ կույս չլինելու մասին (գլուխ 1)<sup>3</sup>: Այսինքն՝ դրամի, որպես ընդհանրական համարժեքի հանդես գալը նախապայմաններ է ստեղծում, որ վրեժը և բնեղենով փոխհատուցումը փոխարինվեն ֆիքսված դրամական տուգանքներով, բայց չի

<sup>1</sup> Տե՛ս Խոխլովա Գ.Վ., նշված աշխատությունը, էջ 66:

<sup>2</sup> Տե՛ս Միսիթար Գոշ, Գատաստանագիրք, գլուխ ԿԵ, Եր., 2001, էջ 57:

<sup>3</sup> Տե՛ս Աί οί εἰσέϋ ι εδῖαι εἰ δααίαι εἰ ἕνεε. Ἄ 5-ε δ. 0.1, Αἰ δε+ίί πού, Αἰ πῶι +ί ἰά ὀεἰεεεαῶε. Ἰ ὀα. δᾶᾶ. Ἐ.ϑ.Ἰβῆεϋεἰάί, Ἰ ., 1999:

<sup>1</sup> Տե՛ս Ἰ ἰεδῖαιεε Ἐ.Ἄ. Ἰ ἰί ἰάἰ ἰά ἰδῖἰεἰ ἰ ἰδᾶἰἰεἰ ἰ ἰδᾶἰ. Ἰ .: Ἐϋᾶ-ἰἰ “Ἰδᾶῶῶ”, 2001, էջ 121:

<sup>2</sup> Տե՛ս Միսիթար Գոշ, նշված աշխատությունը, էջ 30:

<sup>3</sup> Տե՛ս Միսիթար Գոշ, նշված աշխատությունը, էջ 41:

վերացնում վրեժի կիրառությունը, քանի որ տուգանքը չվճարելու դեպքում կիրառվում է պարտապանի անձնական պատասխանատվություն:

Դրամի կիրառման հետևանքով հանդես են գալիս փոխառության և վարկավորման հարաբերություններ, իսկ դրանց հետ միասին նաև տոկոսներ և վաշխառություն: Առաջանում է պարտավորության մի նոր տեսակ *nexum* (ինքնագրավաղորման պայմանագիր): Այս պայմանագիրը կարգավորող նորմերի համաձայն, եթե պարտապանը ժամկետին չէր վճարում պարտքի գումարը, և պարտատերը չէր հետաձգում վճարման ժամկետը, ապա տեղի էր ունենում հարկադիր գանձման արարողություն: Դա կայանում էր նրանում, որ պարտատերը առանց դատարանի որոշման պարտապանին վաթսուն օր պահում էր կալանքի տակ: Եթե այդ ժամկետում ո՛չ նա և ո՛չ էլ մեկ այլ անձ պարտքը չմարեր, ապա պարտատերը կարող էր վաճառել նրան ստրկության *trans Tiberium* կամ սպանել<sup>1</sup>: Այսինքն, պարտականությունը ժամանակին չկատարած պարտապանը դառնում է *nexi* - պարտատիրոջ ստրուկը, պարտատիրոջ իրը՝ գրկված բոլոր քաղաքացիական իրավունքներից: Նրան կարող էին սպանել, բանտ նետել, ենթարկել մարմնական պատժի, շղթայել, վերջապես՝ վաճառել: *Nexi*-ի համար կար մի փրկություն՝ որևէ անձի երաշխավորությունը (*vadimonium*)՝ պարտքի մարումը այդ անձի կողմից<sup>2</sup>:

Անտիկ աշխարհի իրավունքի զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ իրավունքը աստիճանաբար մշակում է անձնական պատասխանատվությունը վերացնելու եղանակներ: Ըստ Ի.Ա. Պոկրովսկու, որի տեսակետն առավել ընդունելի է, «սկզբում արգելվում է պարտապանին սպանելը կամ վաճառելը, ապա պարտապանին ստրկական կախվածության մեջ գցելը դառնում է պարտքը աշխատավճարմամբ մարելու պարտքային կախվածություն կամ անձի (պարտապանի) արգելափակում՝ մինչև պարտապանի կամ նրա հարազատների կողմից պարտքը մարելը: Պարտապանի մասնավոր արգելափակումն էլ փոխարինվում է պարտքային բանտով և ձեռք է բերում անբարեխղճության համար պատժի բնույթ: Վերջապես, այդ վերջինն էլ անհայտանում է և բանտային կալանքը պահպանվում է որպես սովորական քրեական պատիժ, բայց ոչ թե պարտավորության համար, այլ սնանկության որոշա-

<sup>1</sup> Տե՛ս *Ōāī nōī ā Ā.Ī . Ēnōī dēy dēi nēī āī ī ðāāā. Nāāūī ī ā eçāāī ēā. Ī ., 1919, 120-121 էջեր:*

<sup>2</sup> Տե՛ս Բաբալյան Լև, նշված աշխատությունը, էջ 90:

կի տեսակների համար<sup>1</sup>:

Պատմությունը նաև վկայում է, որ այն պահից, երբ վնաս պատճառողին և տուժողին թույլատրվեց համաձայնություն կայացնել տուժողի մոտ առաջացած վնասները հատուցելու մասին, այդ պահից սկսվեց գույքային պատասխանատվության, որպես պատասխանատվության փոխհատուցողական տեսակի զարգացման գործառույթը: Այդ գործառույթի ծագումն ու զարգացումն անվերապահորեն պայմանավորված էր ապրանքադրամական հարաբերությունների զարգացմամբ, քանի որ այդ զարգացումը հնարավորություն ստեղծեց արյան վրեժը, ապա նաև դատաստանը (*āī çī āçāēē*) փոխարինել դրամական փրկագնով<sup>2</sup>:

Փրկագինը, ինչպես նշում է Վ.Վարկալոն, առավել մեծ չափով էր համապատասխանում դասակարգային հասարակության պահանջներին: Հասարակության կառուցվածքին և ունեցվածքի շերտավորմանը համապատասխան կատարվող դրամական վճարների տարբերակման շնորհիվ և շուկայում հիմնական տնտեսական բարիքներ ձեռք բերելու հնարավորությունների աճին գուցահեռ՝ տուժողներն ավելի շատ ձգտում էին ստանալ փրկագին և հրաժարվում էին վրեժից<sup>3</sup>:

Հրաժարվելով վրեժից՝ տուժողներն ստանում էին երկակի բավարարում. նախ, բավարարում, որը տալիս էր տուժողից վնասները գանձելով նրան պատժելը (ընկճելը), երկրորդ, բավարարում, որը ստանում էր այդ գումարներով կորցրածի փոխարեն բարիքներ ձեռք բերելով: Բայց վրեժն արգելելը և պարտապանի անձի նկատմամբ ներգործությունը վերացնելը քաղաքացիաիրավական պատասխանատվությանը չգրկեց ճնշման (պատժողական) նշանակությունից: Այն միայն սահմանափակեց պատժելիության սահմանները իրավախախտողի նկատմամբ գույքային ներգործությամբ և սահմանափակեց նրա չափը պատճառված վնասների ծավալով: Այդ սահմանափակումները հետագայում կարծեք թե փոխհատուցվեցին պատժի նոր տեսակի (գույքային) կիրառման ոլորտի ընդարձակմամբ<sup>4</sup>:

Գույքային պատասխանատվությունը տուժողի համար հանդես է

<sup>1</sup> Տե՛ս Պոկրովսկի Ի.Ա., նշված աշխատությունը, էջ 121:

<sup>2</sup> Տե՛ս *Āādēāēēī Āēōī ēūā. Ī ā ī ðāāōñōāī ī īñōē ī ī ā ðāēāī nēī ī ō ī ðāāō. Ī ., 1978, էջ 35:*

<sup>3</sup> Տե՛ս Վիտոլդ Վերկալո, նշված աշխատությունը, 35-36 էջեր:

<sup>4</sup> Տե՛ս Վիտոլդ Վերկալո, նշված աշխատությունը, էջ 37:

գալիս որպես կորուստների փոխհատուցման միջոց, իսկ իրավախախտողի համար ունեցվածքի կորուստ, որն իրավախախտն ընկալում է որպես «մասնավոր պատիժ»<sup>1</sup>:

Այսպիսով, իրավախախտման, հատկապես պայմանագրային պարտավորությունների խախտման համար գույքային պատասխանվություն կիրառելու գաղափարը անցել է զարգացման երկար ու ճիգ ուղի՝ մ.թ.ա. III դարից մինչև XVII դար: Այդ գաղափարը եվրոպական երկրներում վերջնականապես արմատավորվեց XVII դարի վերջում, երբ Ռուսաստանում պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով առաջացած պարտքերի համար պարտապահին անձնական պատժի ենթարկելու փոխարեն, սահմանվեց նրա գույքի վրա բռնագանձում տարածելու կարգ: Դա հետևանք էր այն բանի, որ ավատատիրական պետությունները առանձնակի հոգածություն չէին ցուցաբերում իրավունքի և նրա առանձին ինստիտուտների (հատկապես գույքային պատասխանատվության) կատարելագործման նկատմամբ:

Ավատատիրական հարաբերությունների ձևավորմամբ ( XI-XII դարեր) անցում կատարվեց տարածքային օրենքների սկզբունքին: Ավատատիրական պետություններն ըստ էության ամրակուռ կենտրոնացված պետություններ չէին: Պրոֆեսոր Ն.Ադոնցի դիպուկ արտահայտությամբ, ավատատիրական պետությունը բազմազուխ հիմքով, թույլ պետական միասնությամբ բնութագրվող քաղաքական օրգանիզմ է<sup>2</sup>, որի տարբերիչ գիծը կայանում է նրանում, որ հողային հարաբերությունները սերտորեն միահյուսվում են անձերի միջև հարաբերությունների հետ: Հողը դառնում է ոչ միայն հարստության աղբյուր, այլև մարդկանց վրա իշխելու միջոց<sup>3</sup>: Իրենց բազմադարյա գոյության ընթացքում, անընդհատ գտնվելով արտաքին և ներքին հակամարտությունների մեջ, սահմանափակվելով նատուրալ տնտեսության շրջանակներում, նրանք անկարող եղան օրենսդրական լուրջ գործունեություն ծավալելու: Ֆեոդալը (սենյորը) իր տարածքում ուներ անսահմանափակ իշխանություն և այդ տարածքում գործում էին միայն ֆեոդալի սահմանած կանոնները: Խիստ տարածքայնությունն էր ընկած նաև այդ ժամանակաշրջանի հանրահայտ այնպիսի իրավական հուշարձանների հիմքում, ինչպիսիք են Սաքսոնական (1215-1235թթ), Շվաբական (1273-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 37:

<sup>2</sup> Տե՛ս Ամի ԻՕ Ի., *Адмі ай ёй а ыї і оо Р ноеі еаїа. Ёча-аї ААО., Ад., 1971*, էջ 454:

<sup>3</sup> Տե՛ս նույն աշխատությունը, 456-457 էջեր:

1276 թթ) հուշարձանները: Ինչ վերաբերում է այդ ժամանակաշրջանի Հայաստանին, ապա պրոֆ. Խ.Սամուելյանի դիպուկ բնութագրմամբ՝ «Ֆեոդալական Հայաստանը չէր ներկայացնում մի ամրակուռ կենտրոնացված պետություն, նա չունեցավ զարգացած պետական-վարչական օրգաններ: Իր բազմադարյա գոյության ընթացքում անընդհատ ենթակա արտաքին և ներքին քաղաքական տակնուվրայությունների, մինչև վերջ դեգերելով բնական տնտեսության շրջանակներում, հայ ֆեոդալական պետությունը անկարող եղավ օրենսդրական գործունեություն արժարծելու: Հայոց պետականության ամբողջ ընթացքում չենք գտնում ոչ միայն որևէ պետական կողմնակցի նշույլ, այլև չեն երևացել նույնիսկ մասնավոր ձեռներեցությամբ կազմված ժողովածուներ՝ գործող իրավական նորմերից»<sup>1</sup>: Միայն XII դարում առանձին հայ երախտավորների կողմից կազմվեցին պետության կողմից չսանկցիավորված և, բնական է նաև պարտադիր կիրառություն չունեցող իրավական ակտեր՝ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և սրա հետևությամբ կազմված՝ Սմբատ Գունդստաբլի Կիլիկյան Հայ Դատաստանագիրքը, որոնք չնայած մասամբ հորինված են օտար աղբյուրներից քաղված իրավական նորմերով, այնուամենայնիվ զգալի չափով բովանդակում են հայ սովորության իրավունքի նորմեր<sup>2</sup>:

Ֆեոդալական մասնատված պետությունը գրկված էր լուրջ կողմնակցված օրենսդրական գործունեություն ծավալելու հնարավորությունից և գերադասում էր օգտվել սովորության նորմերից, հռոմեական իրավունքից կատարված քաղվածքները փորձում էր հարմարեցնել ֆեոդալական առևտրատնտեսական պահանջներին: Նման մոտեցումը լիովին համապատասխանում էր ֆեոդալական փակ (նատուրալ) տնտեսությանը<sup>3</sup>: Սակայն հարկ է նկատել, որ XI-XII դարերում Եվրոպայի տնտեսական և մշակութային վերելքը խթանեց հռոմեական իրավունքի ռեցեսացիան, նրա՝ որպես գործող իրավունքի ընկալումը և ուսումնասիրությունը<sup>4</sup>: Հռոմեական իրավունքի համակարգված ուսումնասիրման օբյեկտ դարձան Դիգեստները և Կայսր Հուստինիանոսի մյուս մասնավոր կողմնակցիները, որոնք միջնադարում ստացան Corpus juris civilis Քաղաքացիական իրավունքի համահավաք անվա-

<sup>1</sup> Տե՛ս Սամուելյան Խ., նշված աշխատությունը, էջ 33:

<sup>2</sup> Տե՛ս Սամուելյան Խ., նշված աշխատությունը, էջ 38:

<sup>3</sup> Տե՛ս *Ёоdн і аеаоі аді ай і ай аноі і ай і дааа*, էջ 106:

<sup>4</sup> Տե՛ս *Ї дааі ай а дааеөөді ааі еа ай аоі аеі і і і е-аөі е аауоаеі і нө. Ї і а даа. і ді ө. А.Н. Ёі і ади аа, Ї ., 2001*, էջ 53:

նումը<sup>1</sup>: Հռոմեական բարձր իրավական կուլտուրան, նրա կողմից ձևակերպված հասկացությունները, կատեգորիաները վճռորոշ նշանակություն ունեցան միապետերի, սինյորների ակտերի և սովորույթների հետ միասին հռոմեական իրավունքը գործնականում օգտագործելու համար: XIII դարում, հատկապես իտալացի իրավագետները փորձում էին հռոմեական իրավունքից արված քաղվածքները հարմարեցնել ժամանակի պահանջներին:

Բնական է, որ նման պայմաններում մասնավոր իրավունքի առանձնակի կարգավորման, առավել ևս կատարելագործման մասին խոսք գնալ չէր կարող:

Վերը շարադրվածից հետևում է, որ մինչև XVIII դարը իրավունքի զարգացման (այդ թվում նաև՝ գույքային պատասխանատվության էության և զարգացման) գործընթացում Հռոմեական իրավունքին պատկանում է չափազանց կարևոր տեղ: Հռոմեական իրավունքն, անցնելով զարգացման գրեթե հազարամյա ճանապարհ, հանդիսացավ համաշխարհային մշակույթի առավել փայլուն էջերից մեկը: Հռոմեացի իրավաբանները մշակեցին իրավահարաբերությունների նրբագույն դրսևորումներն արտահայտելու ունակ տերմինաբանություն, ժամանակակից իրավունքի հիմքը կազմող բազմաթիվ հասկացություններ (յուրիսպրուդենցիա, վինդիկացիա, ցեսիա, կոնտրակտ, կոմպենսացիա և այլն), բարձր իրավական կուլտուրա, որը վճռորոշ ներգործություն ունեցավ և՛ միջնադարի, և՛ Եվրոպայի ժամանակակից իրավունքի վրա՝ իր արտացոլումը գտնելով շատ երկրների իրավական համակարգերում: Հռոմեական իրավունքի տեքստերը հանդիսացան այն հիմքը, որի վրա, հատկապես XVIII - XIX դարերում զարգացում ապրեց բուրժուական իրավունքի ընդհանուր տեսությունը<sup>2</sup>: Հռոմեական իրավունքն առավել մեծ ազդեցություն ունեցավ Ֆրանսիայում և Գերմանիայում: Այդ երկրներում XIX դարում ձևավորվում են կապիտալիստական կարգեր և հասունանում են մասնավոր հարաբերություններ կարգավորող օրենսդրության համակարգման անհրաժեշտ նախապայմաններ: Ֆրանսիան ընդունում է Նապոլեոնյան օրենսգիրքը (1804թ.), Գերմանիայում գործողության մեջ է դրվում «Գերմանական ուլտենհիե»-ն (1901թ.): Նրանց օրինակին են հետևում Եվրոպայի և այլ մայրցամաքների շատ երկրներ: Այդ օրենսգրքերը՝ ներառելով հռոմեական իրավունքի ստեղ-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս *Ölmi aieääd Ä. İ nīāđai áíííí çíà-áíèè ðèi ñèíāī īđāāā // Ñīāāōñèíā āī ñōāāđñōāī è īđāāī, İ ., 1991, No 5, 98-101 էջեր:*

ծած ողջ արժեքավորը, կանոնակարգում էին հասարակության զարգացման հետևանքով առաջացած հասարակական հարաբերությունները: Այդ երկրներում հռոմեական իրավունքը ձևականորեն կորցնում է իր ուժը, բայց նրանում եղած ողջ արժեքավորը... ըստ էության շարունակում է ապրել նաև այսօր Արևմտյան Եվրոպայի նոր օրենսգրքերում<sup>1</sup>: Բնական է, որ հասարակության զարգացման (այդ թվում նաև գույքային հարաբերությունների) զարգացման հետ բազմապատկվում և բազմաբնույթ են դառնում մասնավոր հարաբերությունները, դրանից բխող խնդիրներն ու շահերը, դրանց կապակցությամբ բախումներն ու հակասությունները: Նման պայմաններում յուրաքանչյուր կոնկրետ դեպքի առանձնահատուկ կարգավորումը դառնում է անհնար, և իրավունքը ձգտում է կարգավորման համար (այդ թվում նաև գույքային պատասխանատվության համար) օգտագործել ընդհանուր նորմեր: Օրինակ՝ Ֆրանսիայի քաղ. օր. 1382 հոդվածը պարունակում է դեյլիկտային պարտավորությանը վերաբերող ընդհանուր նորմ՝ «Ինչպիսին էլ, որ լինեն ուրիշին վնաս պատճառողի գործողությունները, այդպիսիք պարտավորեցնում են նրան, վնասը փոխհատուցել»: «Գերմանական ուլտենհիե»-ն մշակողները ձգտել են տալ դեյլիկտի առավել ճիշտ ընդհանուր կանոն, քան Ֆրանսիական քաղ. օր. 1382 հոդվածում՝ տրվածը: Արդյունքում «Գերմանական ուլտենհիե»-ն պարունակում է 2 պարագրաֆ (823 և 826), որոնք նախատեսում են դեյլիկտին վերաբերող երեք նորմ:

Բուրժուական իրավունքի ձեռքբերումներից մեկն էլ այն էր, որ XIX դարում ընդհանրապես արգելվեց, մասնավոր հարաբերություններում իրավախախտի անձնական ոլորտի նկատմամբ ամեն մի ֆիզիկական հարկադրանք: Անձնական պատասխանատվությունը (անձով պատասխանատու լինելը) ամբողջությամբ անցավ հանրային իրավունքի բնագավառ, մասնավոր իրավունքին թողնելով պարտավոր անձի գույքային ոլորտը: Բայց այս ոլորտում էլ պետությունը, արգելելով մասնավորի կամայականությունը, իր վրա վերցրեց հարկադրման գործառույթը<sup>2</sup>: Բացի դրանից, մասնավոր հարաբերություններում ավելի մեծ չափով գնահատվեց գույքային շահը, և գույքային բնագավառը վերջնականորեն տարանջատվեց անձնականից: Գույքային բնագավառի լիակատար առանձնացումը հանգեցրեց նրան, որ քաղաքացիական իրավունքով մանրամասն կարգավորվեցին նյութական բարիքներ-

<sup>1</sup> Տե՛ս *İ aēđī āñēēē Ē.Ä. Ēñōī ðēy ðèi ñèíāī īđāāā. İ ., 1998, էջ 263:*

<sup>2</sup> Տե՛ս Խոխլովա Գ.Վ., նշված հոդվածը, էջ 76:

րի և դրանց կապակցությամբ առաջացող հարաբերությունների պաշտպանության հարցերը և, հիմք ընդունելով քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտների իրավահավասարությունը, վերաբերվորեց պատասխանատվության ինստիտուտը, այն դիրքակցելով *ցանկացած իրավահասարակական հետաքրքիր հարցում քաղաքացիական իրավունքի մեխանիզմների միջոցով իրականացվող սուբյեկտիվ իրավունք, որը կարող է կիրառվել միայն մասնավոր անձանց նախաձեռնությամբ պետական հարկադրանք կիրառելու միջոցով*<sup>1</sup>:

## 1.2 Գույքային պատասխանատվության կիրառման մեխանիզմների փոփոխությունը XX դարում

XIX դարի վերջում գույքային պատասխանատվության էվոլյուցիայի համար վճռորոշ նշանակություն ունեցան երկու գործոններ՝ գիտատեխնիկական առաջընթացը և արտադրության հանրայնացումը<sup>2</sup>:

<sup>1</sup> Ժամանակակից միջազգային ակտերը հնարավոր են համարում անգամ կոռուպցիայի հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման համար քաղաքացիական իրավական պատասխանատվության մեխանիզմների կիրառություն (St'v Ēīīāāīōēy ī ādāæāāīñēī-īdāāīāīē īdāāōñdāāīīñōē çā ēīdōōīōēļ. Nōdāñāōdā, 4 īīyādōy 1999 āīāā).

<sup>2</sup> Պետականության դարավոր կորստից հետո հայ ժողովրդին միայն 20-րդ դարում հաջողվեց վերականգնել այն: Հայ ժողովուրդը 1918 թ. մայիսի 28-ին հռչակեց իր անկախությունը, ստեղծեց Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Առաջին Հանրապետությունը (1918-1920թթ.) երկրում քաղաքացիական իրավական հարաբերություններ կարգավորող հատուկ նորմատիվ ակտեր չի ընդունել:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն մարմինը՝ Հայաստանի Խորհուրդը, 1918թ. դեկտեմբերի 6-ին ընդունել է օրենք, համաձայն որի Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավորապես կիրառման են դրվել Ռուսական կայսրության բոլոր օրենքները, Ռուսաստանի ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան հատուկ կոմիսարիատի ու Սեյմի և Հայաստանի խորհրդի կողմից արված բոլոր փոփոխություններով ու լրացումներով հանդերձ: (Հայաստանի խորհրդի կողմից 1918-1920 թթ հաստատված օրենքներ, Եր., 1919թ. 1-ին մաս, էջ 27):

Ընդամենը երկու տարի գոյատևած Հայաստանի Հանրապետությունը չհասցրեց ընդունել քաղաքացիական հարաբերությունների կարգավորմանն ուղղված օրենսդրական կամ ենթօրենսդրական ակտեր: Իսկ հետագայում (Խորհրդային կարգերի հաստատումից հետո մինչև անկախության հռչակումը) Հայաստանի օրենսդրությունը ըստ էության խորհրդային միության օրենսդրության վերարտադրությունն էր և հատկապես քաղաքացիական իրավական պատասխանատվության բնագավառում գրեթե չէր տարբերվում մյուս միութենական հանրապետությունների օրենսդրությունից:

Գիտատեխնիկական առաջընթացը հիմք ծառայեց գործունեության առաջադեմ, բայց առավել վտանգավոր տեսակների զարգացման, նոր, հատուկ վերաբերմունք պահանջող նյութերի, ապրանքների, սարքավորումների ստեղծման և դրանց ոչ պատշաճ օգտագործման հետևանքով պատճառված վնասների չափերի կտրուկ աճի: Բացի դրանից, արտադրության մեջ և կենցաղում ներդրվեցին նոր մեքենաներ, ապրանքներ, տեխնոլոգիական պրոցեսներ, որոնք ամբողջությամբ չեն ենթարկվում մարդու վերահսկողությանը և կարող են վնաս պատճառել նաև տիրապետողի մեղքի բացակայության դեպքում:

Վերջապես փոխվեց վնասակար հետևանքների բնույթը: Հաճախ այս կամ այն գործողությունն առաջացնում է թաքնված վնասներ, որոնց հետևանքները ի հայտ են գալիս տևական ժամանակ անցնելուց հետո, դրանով իսկ դժվարացնելով վնաս պատճառող գործողությունների և առաջացած հետևանքների միջև պատճառական կապի հայտնաբերման գործընթացը:

Մյուս կողմից, արտադրության հանրայնացումը կամ, ինչպես ընդունված է որակել, աշխատանքի հասարակական բնույթի ընդլայնումը շատ դեպքերում անհնար է դարձնում այն անձին պարզելը, որի գործողությունը կամ անգործությունը, վերջին հաշվով նպաստել է գույքային վնասի առաջացմանը<sup>1</sup>: Իսկ իրավաբանական անձանց գույքային շրջանառության սուբյեկտի վերաժվելն էլ ավելի դժվարացրեց այլ անձանց սուբյեկտիվ իրավունքները խախտողների բացահայտումն ու պատասխանատվության ենթարկելը: Իսկ այն դեպքերում էլ, երբ այդ անձինք հայտնի են, նրանք որպես կանոն տուժողի հանդեպ պատասխանատվություն չեն կրում: Նրանք պատասխանատվություն են կրում իրավաբանական անձի առջև իրենց ծառայական աշխատանքային պարտականությունների խախտման համար: Այսինքն, տեղի է ունենում իրավաբանական անձի պատասխանատվության փոխակերպում իրավաբանական անձի պաշտոնատար անձանց և աշխատակիցների պատասխանատվության, բայց արդեն ուրիշ հարթության վրա<sup>2</sup>:

Նման զարգացումներն առաջին հերթին սասանեցին քաղաքացիական իրավական պատասխանատվության ավանդական կոնցեպցիան: Եթե քաղաքացիական իրավական պատասխանատվության ավանդական

<sup>1</sup> St'v Ēōēāāēī ī .Ē. Ī dāāīdēīēī ādāēñdāī ē īdāāī: Ī īñō çāīāā. Ēçādāīīñā dōōāñ. Ī .: Ēçā-āī "Nōāōō", 1977, էջ 280:

<sup>2</sup> St'v նշված աշխատությունը, էջ 282:

կոնցեպցիայի հիմքը մեղավոր անձի նկատմամբ սանկցիաների կիրառությունն էր, ապա նոր զարգացումները միտված էին, անկախ իրավախախտողի մեղքից, տուժողին պարտադիր փոխհատուցում վճարելու կողմը: Նոր տեսությունը հիմնականում ուղղված էր գործարարության ոլորտում կիրառվող պատասխանատվության անխուսափելիության հիմնավորմանը և հետապնդում էր գործարարների գործունեությամբ պատճառված վնասների փոխհատուցումն ապահովելու նպատակ: Այդ տեսության կողմնակիցների կարծիքով՝ յուրաքանչյուրը, ով որոշել է զբաղվել այս կամ այն գործունեությամբ, պետք է կրի այդ գործունեությամբ պատճառված վնասների ռիսկը: Այլ կերպ ասած, ով շահ է ստանում, կրում է նաև վնասաբեր հետևանքների ռիսկը<sup>1</sup>: Այդ տեսությունն իր ամրապնդումն ստացավ գործարարների կողմից պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության հիմքերը նախատեսող նորմերում (օրինակ, Քաղ. օր. հոդվ. 417): Այսինքն՝ գործարարության ոլորտում պատասխանատվության փոխհատուցողական դերի ուժեղացման հետևանքով դուրս մղվեց նրա տնտեսական և բարոյաէթիկական բովանդակությունը և պատասխանատվությանը, որպես գործարարական ռիսկի բաշխման գործոնի, դարձվեց ավելի մեծ ուշադրություն<sup>2</sup>:

Ընդգծելով ավանդական բնույթից այդ պատասխանատվության տարբերությունը՝ ֆրանսիացի իրավաբան Ռենե Սավատյեն նշում է. «Քաղաքացիաիրավական պատասխանատվության նախկին կոնցեպցիայում հիմնական նշանակությունը տրվում էր մեղավոր անձի նկատմամբ կիրառվող սանկցիային: Ներկայումս շեշտադրումները փոխվել են և հիմնական նշանակությունը տրվում է փոխհատուցում ստանալու իրավունքին»<sup>3</sup>:

XX դարում լայն թափ ստացավ պայմանագրային և դելիկտային պատասխանատվությունների ունիֆիկացիան:

Միջազգային իրավական ակտերը, ինչպես նաև երկրների մեծամասնության ներքին օրենսդրությունը, անկախ նրանից՝ վնասը պատճառվում է պարտավորության մասնակցի<sup>4</sup>, թե՞ պարտավորության մասնակցից չհանդիսացող անձի կողմից, ատոմային վնասի, ապրանքի

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>2</sup> Տե՛ս *Étî ãđîã Á.Ñ. Ĩ ðããððããííîðü á èîî ï áđ-ãñèîî îáîđîðã. Ĩ ., 1991, 35-36 էջեր:*

<sup>3</sup> Տե՛ս *Ñãããðüá Ð. Ðáí ðèý î áýçãðãèüñðã. Ĩ ., 1972, էջ 323:*

թերություններով պատճառված վնասի, տրանսպորտում պատճառված վնասի համար նախատեսեցին պատասխանատվության միասնական ռեժիմ: Օրինակ, պատասխանատվության միասնական ռեժիմ են սահմանում Եվրոխորհրդի 1977թ. հունվարի 27-ի «Ապրանքների թերություններով մարմնական վնասվածք կամ մահ պատճառելու դեպքում պատասխանատվության մասին» կոնվենցիան, «Թերություններ ունեցող ապրանքների համար պատասխանատվության մասին» ԵՏԽ-ի 1985թ. հուլիսի 25-ի դիրեկտիվը և այլն: Պատասխանատվության միասնական ռեժիմ սահմանելը Ստրասբուրգի կոնֆերանսին ներկայացված գեկույցում բացատրվեց «բոլոր սպառողների համար (անկախ նրանից՝ գնորդներ են, թե օգտագործողներ) միասնական պաշտպանություն ապահովելու անհրաժեշտությամբ»<sup>1</sup>: Նույն կերպ են հարցը լուծում նաև տրանսպորտային կազմակերպությունների կողմից պատճառված վնասի հատուցման հարցերը կարգավորող մի շարք կոնվենցիաները, ինչպես նաև ատոմային վնասի հատուցման մասին իրավական ակտերը:

Պատասխանատվության միասնական ռեժիմ է սահմանում նաև ԱՄՆ-ի Առևտրական միասնականացված օրենսգրքի 2-318 հոդվածը, որը թերություններ ունեցող ապրանքով պատճառված վնասի հատուցման համար նախատեսում է, որ պատասխանողի և հայցվորի միջև պայմանագրային կապի բացակայությունը չի կարող արտադրողի, վաճառողի կամ ապրանքը մատակարարողի դեմ պատճառված վնասը հատուցելու մասին հարուցված հայցը մերժելու հիմք հանդիսանալ: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը նույնպես ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասը հատուցելու հարցը լուծում է՝ անկախ տուժողի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքից: Մասնավորապես, Քաղ. օր. 1088 հոդվածը նախատեսում է, որ քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին, կամ իրավաբանական անձի գույքին՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, քաղաղրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուց-

<sup>1</sup> Տե՛ս Կուլազին Մ.Ի., նշված աշխատությունը, էջ 286:

ման ապրանքը վաճառողի կամ արտադրողի, աշխատանքը կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից: Մենք բաժանում ենք Լորդ Գոֆֆի այն կարծիքը, որ «օրենքի ուժով դրվող պարտականությունը և կողմերի համաձայնությունից բխող պարտականությունը երբեմն տրամախաչվում են (*ի áðáñáèâþõñý*), և ոչինչ վրդովեցուցիչ ու անցանկալի չկա այն բանում, որ հայցվորն իրեն իրավունք է վերապահում ընտրել իր համար առավել շահավետ պահանջը»<sup>1</sup>:

Գիտատեխնիկական առաջընթացը և արտադրության հանրայնացումն առաջացրեցին ոչ միայն գույքային պատասխանատվության բնույթի և կիրառման մեխանիզմների փոփոխություն, այլև կյանքի կոչեցին պատասխանատվության կիրառման նոր սկզբունքներ: Այդ սկզբունքներից իրավագետները հատկապես կարևորում են ուղղորդման (*èâí àèèçèðí àâí èá*) և վնասի առավելագույն չափի սահմանափակման սկզբունքները<sup>2</sup>: Պատասխանատվության ուղղորդման սկզբունքն իր ամրապնդումը ստացավ միջուկային վնասի հատուցումը կարգավորող ներպետական օրենքներում, միջուկային էներգիան խաղաղ նպատակներով արտադրության մեջ (Փարիզի, 1960թ.) և տրանսպորտում (Էրյուսելի 1962թ.) օգտագործելիս պատճառված վնասի համար պատասխանատվության մասին կոնվենցիաներում: Երկու կոնվենցիաներն էլ միջուկային վնասի համար պատասխանատվություն կրող սուբյեկտ էին համարում միջուկային ռեակտորը (ինչպես ստացիոնար, այնպես էլ շարժական) շահագործողին: Նշված կոնվենցիաներում և այլ ակտերում ամրագրված դրույթները թույլ են տալիս եզրակացնելու, որ գույքային պատասխանատվության **ուղղորդվածության սկզբունքի** կիրառման դեպքում պատասխանատվությունը դրվում է նորմատիվ ակտում մատնանշված կոնկրետ սուբյեկտի վրա, անկախ այն հանգամանքներից՝ վնասը պատճառվել է նրա՞, թե՞ մեկ այլ անձի կողմից: Դա նշանակում է, որ երբ իրավական ակտը մատնանշում է կոնկրետ պատասխանողի, ապա արգելվում է պատասխանատվության ենթարկել ի-

<sup>1</sup> Տե՛ս *Ñi edííáá Ì .À. Ñííóííðáíèá àíàíàíðííè è àáèèòííè íðááðñóááíííñðè à àðáæááíñèí í ðááá ðíññèññéíé Óáááðáðèè. Á ñá.: Բ ðèàè-àñèèá èèðá. Ì óááðñóááíííñòu çá íáðóðáíèá í áÿçáðáèùñóá. Ì .: Էçá-àí “Ì Ç Ì ðáññ”, 2004, էջ 171:*

<sup>2</sup> Տե՛ս Կուլագին Մ.Ի. նշված աշխատությունը, էջ 287:

րական վնաս պատճառողին, եթե նրա և պատասխանատու անձի միջև նման համաձայնություն գոյություն չունի: Այդ սկզբունքի կիրառման նպատակը պատասխանատվության սուբյեկտի որոշակիությունն ապահովելն է: Այդ սկզբունքի կիրառությունը արդարացված է այնքանով, որքանով խորը մասնագիտացման և արտադրության կոոպերացման պայմաններում, կոնկրետ վնաս պատճառողին բացահայտելը բավականին բարդ խնդիր է: Եթե փոխհատուցման վճարումը կախվածության մեջ դրվի կոնկրետ վնաս պատճառողին հայտնաբերելու փնտրտուքից, տուժողի համար կստեղծվեն դժվարություններ և կարող են ոտնահարվել նրա գույքային իրավունքները:

Այսինքն, պատասխանատվության ուղղորդումը կոնկրետ պատասխանողին՝ բացառում է վնասի պատճառման մեղավոր անձի անօգուտ փնտրտուքը և այդ կապակցությամբ ծագող այն անպտուղ վեճերը, որոնք, միևնույն է, վնասի փոխհատուցմանը չեն նպաստելու: Այդ սկզբունքի կիրառությունն ըստ էության անհատական պատասխանատվությունը կոլեկտիվ պատասխանատվությամբ փոխարինելու փուլ է, որով անհատական պատասխանատվությունը փոխարինվում է երաշխավորված լրկալ պատասխանատվությամբ:

Հարկ է նկատել, որ պատասխանատվության ուղղորդման սկզբունքը կիրառվում է այն դեպքերում, երբ վնասը հանդիսանում է բազմաթիվ անձանց գործողության կամ անգործության հետևանք, ինչպես նաև այն դեպքերում, երբ վնասը պատճառվում է շահագործման համար բարձր մասնագիտական հմտություններ և ունակություններ պահանջող սարքերի խափանման կամ խաթարման հետևանքով: Այդ սկզբունքն առաջին հերթին ամրագրվել է միջուկային վնասի համար պատասխանատվությունը կարգավորող և միջազգային ակտերում, և ներպետական օրենքներում: Օրինակ «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Օ1 փետրվարի 1998թ. ՀՀ օրենքի 33 հոդվածի համաձայն ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում իրականացվող աշխատանքների հետևանքով իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև շրջակա միջավայրին հասցված միջուկային վնասի համար պատասխանատվությունը կրում է այդ աշխատանքներն իրականացնող լիցենզավորված անձը (միջազգային իրավական ակտերում այդ անձն անվանվում է **միջուկային սարքի օպերատոր**): Այդ անձի պատասխանատվությունը առաջ է գալիս այն պահից, երբ ապացուցվում է, որ

վնասը հասցվել է ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտում տեղի ունեցած միջադեպի հետևանքով: Լիցենզավորված անձի պատասխանատվությունն առաջ է գալիս նաև այն դեպքում, երբ ապացուցվում է, որ վնասը հասցվել է նրա տնօրինության տակ գտնվող ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի համար ստացված կամ այդ օբյեկտում արտադրված միջուկային և (կամ) ռադիոակտիվ նյութերի, ռադիոակտիվ թափոնների հետ կապված միջադեպի հետևանքով, եթե լիցենզավորված անձը մինչև միջադեպը համապատասխան գրավոր համաձայնությամբ ստանձնել է այդ նյութերի կամ թափոնների նկատմամբ պատասխանատվությունը կամ դա դեռ չի փոխանցել մեկ այլ կազմակերպության (ՀՀ օրենքի 34 հոդված): Ըստ միջազգային ակտերի միջուկային սարքի օպերատորը (լիցենզավորված անձը) պատասխանատու է նաև այն դեպքում, երբ վնասը պատճառվել է այլ անձանց մեղքով (անորակ շինարարության, սարքավորումներ մատակարարելու, ռեակտորի նախագծման սխալների և այլ պատճառների հետևանքով): Այսինքն, ատոմային միջադեպից տուժած կողմը վնասի հատուցման պահանջ կարող է ներկայացնել միայն միջուկային սարքի օպերատորին: Այլ անձանց նման պահանջ կարող է ներկայացվել միայն այն դեպքում, եթե վերջիններս օպերատորի հետ կայացրած հատուկ համաձայնության ուժով չեն ազատվել գույքային պատասխանատվությունից: Միջուկային սարքի օպերատորն ազատվում է միջուկային վնասի և դրա համար փոխհատուցման պատասխանատվությունից, եթե միջուկային վնասն առաջացել է ռազմական գործողությունների, զինված հակամարտության, տարերային աղետի կամ այլ իրավաբանական անձանց կամ քաղաքացիների դիտավորյալ գործողությունների հետևանքով: Եթե լիցենզավորված անձն ապացուցում է, որ հասցված միջուկային վնասն ամբողջությամբ կամ մասնակիորեն է տուժող անձի դիտավորյալ գործողության, ապա նա ամբողջությամբ կամ մասնակիորեն ազատվում է այդ անձին հասցված միջուկային վնասի փոխհատուցման պարտականությունից (ՀՀ օրենքի 34 հոդված):

Գույքային պատասխանատվության ուղղորդման սկզբունքն իր դրսևորումն է գտել նաև ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվություն նախատեսող նորմերում: Օրինակ, Քաղ.օր. 1089 հոդվածը նախատեսում է, որ ապրանքի թերությունների հետևանք-

քով պատճառված վնասը, տուժողի ընտրությամբ, ենթակա է հատուցման վաճառողի կամ ապրանքը արտադրողի կողմից: Ընդ որում, միջազգային ակտերը (օրինակ Ե.Տ.Խ.-1985թ. դիրեկտիվը) արտադրող հասկացությանը տալիս են այնպիսի բովանդակություն, որ տուժողը գործնականում հնարավորություն ունենա գտնել պատասխանողի<sup>1</sup>: Նշված դիրեկտիվը արտադրողին է հավասարեցնում արտադրանքը ներմուծողին, մատակարարին, եթե հնարավոր չէ պարզել ապրանքը արտադրողին կամ ներմուծողին՝ ցանկացած անձի, որը արտադրանքի վրա դրել է իր անունը, ապրանքային նշանը կամ տարբերակող այլ նշան: Այսինքն, օրենսդրոթեն սահմանված է կոնկրետ սուբյեկտի հաշվին ապրանքի թերություններով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու հնարավորություն: Ընդ որում, պատասխանատվության ենթարկվող սուբյեկտը պատասխանատվություն է կրում անկախ իր մեղքից: Նա կարող է ազատվել պատասխանատվությունից (անկախ նրանից՝ արտադրողն է, վաճառողն է, թե՞ մեկ այլ անձ է), եթե ապացուցում է, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ սպառողի կողմից ապրանքի օգտագործման կամ պահման համար սահմանված կանոնները խախտելու հետևանքով (Քաղ.օր հոդվ.1091):

**Վնասի առավելագույն չափի սահմանափակման** սկզբունքի կիրառման պատճառ հանդիսացավ այն իրողությունը, որ տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացման հետևանքով XX դարի վերջում տնտեսական գործունեության շատ տեսակներ պարունակում են աստղաբաշխական չափերի վնասներ պատճառելու վտանգ և ոչ մի գործարար, քանի որ դրանք մի քանի անգամ գերազանցում են ունեցած ֆինանսական հնարավորությունները, ի վիճակի չէ դրանք փոխհատուցել: Այդպիսի վնասների հետևանքները, միջոցների անբավարարության պատճառով, չեն կարող վերացվել նաև պատասխանատվության ապահովագրմամբ: Հետևաբար, նման կարգի վնասների դիմաց, որոշակի հատուցում ապահովելու միակ հնարավորությունը հատուցման առավելագույն չափ սահմանելն է:

Վնասների առավելագույն սահմանափակման սկզբունքը կիրառվում է գործունեության այնպիսի բնագավառներում, որոնք առնչվում են մարդկանց մեծ քանակի սպասարկման կամ անկանխատեսելի վնասակար հետևանքների առաջացման հետ: Օրինակ, պատասխանատ-

<sup>1</sup> Տե՛ս Կուլագին Մ.Ի., նշված աշխատությունը, էջ 288:



վորթյան առավելագույն չափի սահմանափակման բնութագրական օրինակներ են օդային տրանսպորտում ուղևորի առողջությանը պատճառված վնասի հատուցման և բեռի կորստի համար սահմանված փոխհատուցումների առավելագույն չափերը<sup>1</sup>:

Ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական ակտերը պատասխանատվության առավելագույն չափեր են նախատեսում նաև միջուկային սարքի խաթարմամբ պատճառված վնասի հատուցման համար: Մասնավորապես՝ Արևմուտքի երկրներում օրենսդրորեն սահմանվում է այն առավելագույն գումարը, որը պետք է հատուցվի միջուկային վնասի պատճառման դեպքում: Բնական է, որ օրենքով սահմանված չափը պակաս է պատճառված վնասի իրական չափից, բայց հնարավորություն է ընձեռում վնաս պատճառողի կամ պետության ունեցած հնարավորությունների սահմաններում առավելագույն փոխհատուցել բազմաթիվ անձանց պատճառված վնասները:

Այդ վնասի մի մասը հատուցվում է կամավոր ապահովագրությամբ, իսկ դրանից գերազանցող մասը հատուցում է պետությունը: Ընդ որում, նորույթ է ոչ միայն այն, որ օրենսդրորեն նախատեսվում է հատուցվող վնասի առավելագույն չափը, այլև այն, որ վնասի մի մասի հատուցման պարտականությունը, երբ վնասն ընդունում է կատաստրոֆիկ չափեր և գերազանցում է ապահովագրական գումարները, իր վրա է վերցնում պետությունը: «Պետության մասնակցությունը վնասի հատուցմանը, ինչպես նշել է Ռ.Լ.Նարիշկինան, հանդիսանում է այն սկզբունքային նորույթը, որը մտցվեց ատոմային էներգիայի մասին օրենսդրությամբ՝ քաղաքացիական իրավունքի այդ ինստիտուտում»<sup>2</sup>:

Այդ ինստիտուտն իր կիրառությունն է գտել շատ երկրներում: Օրինակ ԱՄՆ-ում Գ-Վ-ում, Ֆրանսիայում միջուկային սարքի օպերատորի պատասխանատվության ապահովագրությունը տարածվում է պատճառված վնասի հատուցման համար օրենքով սահմանված գումարի մի մասի վրա: Գործարարի պատասխանատվության համար սահմանված չափից ավելի պատասխանատվությունն իր վրա է վերց-

<sup>1</sup> Տե՛ս «Միջազգային օդային փոխադրումներին վերաբերող որոշկանոնների միասնականացման մասին» Կոնվենցիա, 12 հոկտեմբերի 1929 թ., Միջազգային մասնավոր իրավունք: Միջազգային իրավական փաստաթղթերի ժողովածու, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2005, 196-210 էջեր:

<sup>2</sup> Տե՛ս *Í ἀθεσέειά Δ.Ε. ΝΘΑ: ἀϊνόαδθθαι è -αθθί ύέ θάέθιθ. Ἄδαεάαι θεί-ϊδαίάα ίθί ί θάίέϋ Ἰ ., 1976, էջ 116:*

նում պետությունը<sup>1</sup> (Ամերիկյան օրենքի 170 հոդվածի «C» կետ, գերմանական օրենքի 36, շվեյցարական օրենքի 27 հոդված և այլն):

«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» 1998թ. փետրվարի 1-ի ՀՀ օրենքի 36 հոդվածի համաձայն, եթե միջուկային վնասի համար պատասխանատվությունը կրում է լիազորված անձը և վնասի փոխհատուցման համար անհրաժեշտ գումարները գերազանցում են նախատեսված չափերը, ապա անհրաժեշտ լրացուցիչ գումարների վճարումն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գույքային պատասխանատվության հիմնարար սկզբունքների ձևավորման, պատասխանատվության կիրառման մեխանիզմների փոփոխության գործում հատկապես կարևոր դեր խաղացին XX դարի երկրորդ կեսին տնտեսավարման բնագավառում կատարված փոփոխությունները:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհատնտեսական կապերի ոլորտում կատարված արմատական փոփոխությունները, տրանսպորտի, կապի, հաղորդակցության և տեղեկատվության միջոցների զարգացումը, համաշխարհային ֆինանսական շուկայի ձևավորումը, տնտեսական հարաբերությունների նոր մասնակիցների՝ անդրազգային ընկերությունների, տարածաշրջանային միավորումների, համատեղ ձեռնարկությունների հանդես գալը պետություններին հարկադրեց տնտեսական հարաբերությունների կարգավորման բնագավառում ցուցաբերել նոր մոտեցումներ: Հետպատերազմյան ժամանակաշրջանում զարգացած երկրները կտրուկ անցում կատարեցին ներփակ տնտեսությունից բաց տիպի, դեպի արտաքին շուկա շրջված տնտեսության: Սկսվեց ազգային տնտեսությունների համաշխարհայնացման գործընթաց. համաշխարհային տնտեսությունը վերածվեց միջազգային տարածաշրջանային և ազգային տնտեսավարող սուբյեկտների փոխգործողության տնտեսական համապարփակ համակարգի: Այդ համակարգը ոչ թե ազգային տնտեսությունների պարզ հանրագումար է, այլ նոր, ամբողջական բարդ համակարգ, որի հիմնախնդիրների, տարածայնությունների և վեճերի լուծումը պահանջում էր ստեղծել միջազգային տնտեսական հարաբերությունների կարգավորման միասնական մեխանիզմներ: Այդ հանգամանքը խթանեց միջազգային

<sup>1</sup> Տե՛ս *Ἐθεσέει Ἰ .Ε. Ἐζάδαι ί ύά θδθάύ. Ἰ ., 1997, էջ 290:*





Մինչև XX դարի վերջին քառորդը միանշանակ ընդունվում էր այն տեսակետը, որ արտաքին տնտեսական հարաբերություններում պետության մասնակցությունն ինքնին հիմք չի հանդիսանում պարտավորությունների խախտման համար նրան այլ պետության դատարանի կողմից պատասխանատվության ենթարկելու համար: Պետությունը համարվում էր սուվերենության հատկանիշով օժտված հատուկ սուբյեկտ և օգտվում էր բացարձակ իմունիտետից: Դա նշանակում էր, որ պետության մասնակցությամբ հարաբերություններում առանց նրա համաձայնության օտարերկրյա օրենք կիրառվել չի կարող: Այսինքն, պետությունների մասնակցությամբ հարաբերություններում կիրառվում էր «հավասարը հավասարի նկատմամբ իշխանություն չունի» (Par in parem non habet imperium) սկզբունքը<sup>1</sup>: Պետության հարաբերություններում կիրառվում էր նաև դատական իմունիտետ՝ հավասարը հավասարի նկատմամբ դատազրույթուն (յուրիսդիկցիա) չունի: Գործնականում դա նշանակում էր, որ առանց պետության համաձայնության նրան չէր կարելի ներգրավել քաղաքացիական գործերով դատավարությանը, առանց պետական իրավասու մարմնի թույլտվության չեն կարող կիրառվել հայցի ապահովման հարկադիր միջոցներ, վճիռների հարկադիր կատարում, պետական սեփականություն հանդիսացող գույքի բռնագրավում: Սակայն XX դարի 80-ական թվականներից տարածում ստացավ և զարգացած երկրների օրենսդրությամբ ու մի շարք միջազգային կոնվենցիաներում ամրագրվեց այսպես կոչված «սահմանափակ (ֆունկցիոնալ) իմունիտետ»-ի սկզբունքը<sup>2</sup>: Արդյունաբերական զարգացած պետությունները, ղեկավարվելով իմունիտետի տարաբաժանման (գործառության իմունիտետ) հայեցակարգով, առևտրային նպատակներով պետությունների կնքված պայմանագրերից բխող պահանջների նկատմամբ իմունիտետ չեն տարածում<sup>3</sup>: Օրինակ, «Օտարերկրյա պետությունների իմունիտետի մասին» ԱՄՆ-ի օրենքը (1976թ.) սահմանում է, որ իմունիտետ չի ճանաչվի, «երբ հայցի համար հիմք է ծառայում Միացյալ Նահանգներում այլ պետության կողմից իրականացվող

առևտրային գործունեությունը կամ Միացյալ Նահանգների տարածքից դուրս կատարվող գործողությունը, եթե այն ուղղակի հետևանքներ ունի Միացյալ Նահանգների համար»: Նման օրենքներ են գործում նաև Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Ավստրալիայում, Պակիստանում, Սինգապուրում և այլ երկրներում: Որոշ երկրներ էլ օտարերկրյա ներդրումներ ներգրավելու համար իրենք են հրաժարվում իմունիտետից, այլ պետությունների հետ կնքած պայմանագրերում նախատեսելով, որ ներդրողի հետ առաջացած վեճերը քննվելու են միջազգային առևտրական արբիտրաժում:

Սահմանափակ իմունիտետի սկզբունքը աստիճանաբար իր ամրապնդումն է ստանում նաև միջազգային պայմանագրերում: Օրինակ, ԱՊՀ առնչված պետությունների միջև կնքված «Տնտեսական գործունեության իրականացման հետ կապված վեճերի լուծման կարգի մասին» համաձայնագրով (Կիև, 1992թ., հոդվ.3 երրորդ մաս) անդամ պետությունները համաձայնվել են հրաժարվել բացարձակ իմունիտետից<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը ելնում է Հայաստանի Հանրապետության տարածքում այլ պետությունների և նրանց գույքի բացարձակ ինքնիշխանության սկզբունքից, նրանց համար ապահովում է բացարձակ իմունիտետից օգտվելու հնարավորություն (Քաղ.դատ.օր. 245 հոդվ.) և պահանջում է իր ինքնիշխանության պահպանումն այլ երկրների կողմից: Սակայն զարգացած երկրների հետ տնտեսական հարաբերությունների լիարժեք իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև տնտեսական հարաբերությունների միջազգային իրավական կարգավորման ուղղվածությունը հուշում է, որ անհրաժեշտ է օր առաջ հրաժարվել բացարձակ իմունիտետի սկզբունքից և միջազգային շուկայում լիարժեք հանդես գալու անհրաժեշտությունից ելնելով որդեգրել ու օրենսդրորեն ամրագրել սահմանափակ (ֆունկցիոնալ) իմունիտետի սկզբունքը: Թերևս հարկ է նկատի ունենալ, որ փոփոխված աշխարհաքաղաքական պայմաններում բացարձակ իմունիտետի պահպանումը մեկ առանձին վերցրած և անհրաժեշտ հզորություն չունեցող երկրում իրավունքների պահպանություն ապահովող հուսալի միջոց չէ: Բացի դրանից, եթե ներքին հարաբերություններում Հայաստանի Հանրապետությունը իմունիտետից և ինքնիշխանություն կրողի այլ առավելություններից չի օգտվում և պատասխան

<sup>1</sup> Տե՛ս Հայկյանց Ա.Մ., Միջազգային մասնավոր իրավունք (ուսումնական ձեռնարկ). Եր., 2003, էջ 105:

<sup>2</sup> Տե՛ս *Áadóííáéñéáý éííááíóèý íá èì ì óíèòáòá áí ñóáàðñòá, Ááçáèü, 16 ì äý 1972 áí ää.*

<sup>3</sup> Տե՛ս *Êíííáíáòáðéé é +áñòè íáðáíé Áðáæááíñéíáí éíááèñà Ðíññèéñéíé Óáááðáòèè: äèý ì ðááí ðéíè ì ðááéáé. Í ., 1996, 170-171 էջեր:*

<sup>1</sup> Տե՛ս *Çááèíá Á.Í. Í áæáóí áðí áí íá +áñóí íá ì ðááí, Êóðñ éáèèèé, Í ., 2000, էջ 517:*

նատվություն է կրում պարտավորական հարաբերությունների մասնակից քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը խախտելու համար, ապա ըստ էության ոչինչ չի փոխվի, եթե նման պատասխանատվություն ստանձնի այլ պետությունների, նրանց քաղաքացիների և իրավաբանական անձանց առջև: Մեր կարծիքով, միջպետական և միջազգային տնտեսական հարաբերություններում ևս պետք է կիրառվի պայմանագրային հարաբերության մասնակիցների իրավահավասարության սկզբունքը:

Շարադրվածից դժվար չէ համոզվել, որ պատմական զարգացման ընթացքում գույքային պատասխանատվության կիրառման և դրա մեխանիզմների կատարելագործման բնագավառում տեղի ունեցած փոփոխությունները պարտադրում են նոր մոտեցում ցուցաբերել այդ պատասխանատվության հիմնահարցերի ուսումնասիրության նկատմամբ: Ընդ որում, հատկապես կարևորում ենք այն հիմնահարցերի առավել մանրամասն վերլուծությունը, որոնք տնտեսական հարաբերությունների զարգացման հետևանքով կյանքի կոչված նորույթ են, և որոնք շարունակում են համարվել վիճահարույց:

### **1.3. Գույքային պատասխանատվության որպես իրավական պատասխանատվության հիմնական տեսակի հասկացությունը**

Իրավունքի նորմերը, որպես կանոն, հասարակական հարաբերությունների իրավական արտահայտությունն են, որի հետևանքով էլ բնական է համարվում իրավական հարաբերությունների այնպիսի զարգացումը, որի ժամանակ իրավահարաբերության մասնակիցներն իրենց պարտականությունները կատարում են ճշգրիտ և ժամանակին: Դեպքերի նման ընթացքը բնութագրական է իրավահարաբերությունների ճնշող մեծամասնության համար: Սակայն իրական կյանքում չի բացառվում, որ անձը խախտի իր պարտականությունները: Այդ դեպքում, մեծամասամբ, անխուսափելիորեն խախտվում է այլ սուբյեկտի, այդ պարտականությանը համապատասխանող սուբյեկտիվ իրավունքը և առաջանում է իրավախախտողի նկատմամբ ներգործության միջոցների, առաջին հերթին գույքային ներգործության միջոցների կիրառմամբ

խախտված սուբյեկտիվ իրավունքները պաշտպանելու անհրաժեշտություն, այսինքն, գույքային պատասխանատվության կիրառման անհրաժեշտություն: Սակայն գույքային պատասխանատվության սուբյեկտ-տնտեսական արժեքը ոչ միայն նրանում է, որ գույքային կամ այլ կորուստներ առաջանալու դեպքում ապահովի այդ կորուստների համարժեք փոխհատուցումը, այլև նրանում, որ կանխվի կորուստների առաջացումը: Այդ առումով գույքային պատասխանատվությունը, որպես իրավական պատասխանատվության տարատեսակ, հանդիսանում է, առանց բացառության հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում, իրավախախտումների դեմ պայքարի հիմնական իրավական միջոցը<sup>1</sup>:

Գույքային պատասխանատվությունը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության այն հիմնական իրավական երաշխիքներից մեկն է, որով ապահովվում է իրավունքների իրականացումը և պարտականությունների պատշաճ կատարումը: Անձին վերապահված, բայց իրավախախտումից համապատասխան պաշտպանական միջոցներով չապահովված, սուբյեկտիվ իրավունքը միայն հռչակագրային իրավունք է<sup>2</sup>: Այդ իսկ պատճառով իրավախախտումների համար գույքային պատասխանատվության հիմնահարցերը բոլոր ժամանակներում հանդիսացել են թե՛ օրենսդիրների, թե՛ իրավագետների ուշադրության առարկան: Չնայած այն բանին, որ գույքային պատասխանատվության իմաստը և բնույթը ձևավորվել է մի քանի հազարամյակների ընթացքում, այդուհանդերձ պատասխանատվության հասկացությունը շարունակում է մնալ գիտական բանավեճի առարկա:

Հին Հռոմի կլասիկ մասնավոր իրավունքում «քաղաքացիական (գույքային) պատասխանատվության հասկացություն» ձևակերպված չէր, բայց նրա հիմնական գծերը սկսել էին ձևավորվել<sup>3</sup>: Մասնավորապես, արմատավորվել էր, որ մասնավոր հարաբերություններում պատասխանատվությունն ունի գույքային բնույթ: Այդ պատասխանատվության

<sup>1</sup> Տե՛ս *Ū auct̄ōy oaī deŷ aī nōāad̄nōāā ē ī d̄āāā. Aēāāai ē-añēēē eōd̄i: Ā 2-ō d. Ī īā d̄āā. ī d̄īō. Ī .Ī .Ī ād-aīēī. Ōīī 2., Ī ., 1998, 592-620 էջեր:*

<sup>2</sup> Տե՛ս *Ādēāāīīā Ā.Ī. Ī d̄āāēū ī n̄ōāñōāēāīēŷ ē çāūēōū ād̄āēāīñēēō ī d̄āā. Ī ., 1972, էջ 96: Ī .N̄.Ēīōōā. Ī oāāoñōāāīīīñōū īī nīāāōñēīīō ād̄āēāīñēīīō ī d̄āāō, ĒĀŌ., 1955, էջ 17:*

<sup>3</sup> Տե՛ս *Ōīōēīāā Ā.Ā. Ī īīŷōēā ād̄āēāīñēī-īd̄āāīāīē īōāāoñōāāīīīñōē. Ā ēī.: Aēōōāēūī ūā ī d̄ī āēāī ū ād̄āēāīñēīāī ī d̄āāā. Ā ūīōñē īŷōd̄ē. Ī ., 2002, էջ 70:*

վորությունն ապահովված է պետական հարկադրանքի կիրառման սպառնալիքով: Պատասխանատվությունը, բնականաբար նաև՝ պետական հարկադրանքը, կարող են կիրառվել միայն մասնավոր անձի նախաձեռնությամբ: Ընդ որում, պատասխանատվության ենթարկելիս գնահատվում են ոչ միայն տուժողի գույքի իրական կորուստը (պակասելը), գույքային ոլորտի այլ կորուստները, այլև իրավագոր անձի ոչ գույքային շահերը<sup>1</sup>:

Գույքային պատասխանատվության էության և զարգացման էվոլյուցիայի պարզաբանման համար հռոմեական իրավունքի նշանակությունն ընդգծելն ամենևին էլ պատահական չէ: Հայաստանի Հանրապետության օրենսդրության գույքային պատասխանատվության հարցերը կարգավորող նորմերը, որպես կանոն, իրենց հիմքում ունեն եվրոպական իրավական ավանդույթները: Իսկ խոսել եվրոպական իրավական ավանդույթների մասին հռոմեական իրավունքից և հռոմեական իրական ավանդույթներից դուրս, և՛ պատմականորեն, և՛ իմացաբանորեն ճիշտ չէ<sup>2</sup>, քանի որ հռոմեական բարձր իրավական կուլտուրան վճռորոշ ներգործություն է ունեցել միջնադարի և Եվրոպայի ժամանակակից իրավունքի վրա, իր արտացոլումն է գտել աշխարհի շատ երկրների իրավական համակարգերում<sup>3</sup>:

Եվրոպական օրենսդրությունը, սկզբնաղբյուր ունենալով Հին Հռոմեական իրավունքը, մինչև XIX դարի սկիզբն ըստ էության չէր անդրադառնում գույքային պատասխանատվության հասկացությանը, իսկ անդրադառնալիս էլ տարաբնույթ մոտեցում էր ցուցաբերում պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունների հասկացությունների և հիմնարար սկզբունքների նկատմամբ: Բավական է նշել, որ «քաղաքացիաիրավական պատասխանատվություն» տերմինը օգտագործել սկսվեց միայն XVIII դարում, իսկ նրա հասկացության, բովանդակության և ծավալի մասին հարցերը վիճելի են մինչև օրս<sup>4</sup>: Առաջին հայացքից անհասկանալի թվացող այդ փաստն ունի իր լիակատար արդարացումն ու հիմնավորումը: Ինչպես իրավագիտորեն

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>2</sup> Տե՛ս *Ī dāāī āīā dāāōēēdī āāīēā āīāōīāyēīīī ē-ānēīē āāyōāēūīīnōē. Ī īā dāā. ī dī ō. Ā.Ņ. Ēīī ādī āā, Ī ., 2001, էջ 52:*

<sup>3</sup> Տե՛ս նույն աշխատությունը, էջ 53:

<sup>4</sup> Տե՛ս *Āādēāēēī Āēōīēūā. Ī ā īōāōnōāāīīīnōē īī ādāæāāīnēīī ō īdāāō. Ī ., 1978, էջ 89:*

նշում է Վիտորյո Վարկալոն, կապիտալիստական քաղաքացիական իրավունքի հիմքը հանդիսացող մասնավոր իրավունքը չստեղծեց ո՛չ քաղաքացիական պատասխանատվության ընդհանուր հասկացություն, ո՛չ էլ անգամ պատասխանատվության առավել կոնկրետ *ex delicto* կատեգորիաները: Միայն Նապոլեոնի օրենսգրքում ամրապնդված պարտավորությունների չկատարման և, այսպես կոչված, դելիկտ կատարելու համար (ՖԶՕ 1147 և 1382 հոդվ.) ամրապնդված ընդհանուր ձևակերպումները, առաջին հերթին, ֆրանսիական դոկտրինայի համար ստեղծեցին քաղաքացիական պատասխանատվություն երևույթի ընդհանուր նորմատիվային հիմք, ընդ որում ոչ թե մեկ, այլ երկու՝ պայմանագրային և դելիկտային պատասխանատվություն կատեգորիաների համար<sup>1</sup>:

Միայն XX դարի 50-ական թվականներից հետո գույքային պատասխանատվության իրավական ռեժիմում կատարվող էվոլյուցիան կտրուկ փոխեց գույքային (հատկապես՝ քաղաքացիաիրավական) պատասխանատվության նկատմամբ իրավագետների (հատկապես խորհրդային իրավագետների) վերաբերմունքը, որի արդյունքում սկսեցին առավել լուրջ ուշադրություն ցուցաբերել պատասխանատվության հասկացության, պատասխանատվության կիրառման հիմքերի, հիմնարար սկզբունքների և այլ հիմնահարցերի նկատմամբ: Այդ ժամանակաշրջանից սկսած թե՛ խորհրդային, թե՛ նոր Ռուսաստանի իրավագետներն արտահայտել են տարբեր, և, շատ հաճախ, միմյանցից տրամաբանորեն տարբերվող տեսակետեր: Ընդ որում, մինչև օրս իրավագիտության կողմից միանշանակ ընդունվող քաղաքացիաիրավական (գույքային՝ Տ.Բ.) պատասխանատվության հասկացություն դեռևս գոյություն չունի<sup>2</sup>: Իրավաբանական գրականության մեջ անգամ կարծիք է հայտնվել, որ հայրենական քաղաքացիական իրավունքի տեսությունն ընդհանրապես քաղաքացիաիրավական պատասխանատվության ընդհանուր հասկացության մշակման կարիքը չունի և, անգլո-ամերիկյան իրավական համակարգի մասնությամբ, որպես պատասխանատվության դրսևորումներ պետք է դիտարկի իրավական պաշտպանության միջոցներ<sup>3</sup>: Նման կարծիքն ինքնին անընդունելի է: Երևույթի էության, նրա բնորոշ առանձնահատուկ գծերի մասին կարծիք կազմե-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>2</sup> Տե՛ս Բարանովա Ե.Ա. նշված աշխատությունը, էջ 286:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

լու համար, իրավագիտական վերլուծության առաջին քայլը պետք է ուղղվի այդ իրավական երևույթի հասկացության պարզաբանմանը: Հասկացության բացակայությունը գրկում է պատասխանատվության ինստիտուտի էությունը, իրավական ինստիտուտների համակարգում նրա տեղը և դերը բացահայտելու, գործնական կիրառության արդյունավետության հարցերը պարզաբանելու, կատարելագործման առաջարկներ կատարելու և գիտագործնական բազմաթիվ հարցերի պատասխանները ձևակերպելու հնարավորությունից: Մենք ելնում ենք այն հիմնադրույթից, որ իրավական երևույթների վերլուծությունն ինքնանպատակ չէ, այն կատարվում է մարդկանց սոցիալական գործունեության վրա իրավական նորմերի, ինստիտուտների, կառույցների ազդեցության ուղիներն ու եղանակները գտնելու նպատակով<sup>1</sup>: Այդ պատճառով էլ բաժանում ենք այն հեղինակների տեսակետը, որոնք ոչ միայն գտնում են, որ այդպիսի հասկացության ձևակերպումն անհրաժեշտ է, այլև փորձ են անում այդ հարցի կապակցությամբ իրենց ըմբռնումները ներկայացնել իրավագետների դատին:

Բնական է, որ նրանցից յուրաքանչյուրն այդ հասկացության ձևակերպմանը մոտենում է իր տեսանկյունից, որն էլ նպաստում է տարաբնույթ հասկացությունների ձևավորմանը: Մեր խորին համոզմամբ տարակարծությունները հիմնականում արդյունք են այն բանի, որ պետության և իրավունքի տեսության մասնագետներն «իրավական պատասխանատվության հասկացություն» ձևակերպման համար, որպես կանոն, հիմք են ընդունել հանցագործության համար կիրառվող անձնական պատասխանատվության առանձնահատկությունները, հանրային իրավունքի այլ ճյուղերի մասնագետները, այդ հարցին գրեթե չեն անդրադարձել, նկատի ունենալով, որ օրենսդրությունը հղում է կատարում իրավունքի այլ ճյուղերի, իսկ քաղաքացիագետներն էլ հիմնական ուշադրությունը սևեռել են ոչ թե գույքային պատասխանատվության ընդհանուր հասկացության և այդ պատասխանատվության պատշաճ կիրառման մեխանիզմների հարցերին, այլ այդ պատասխանատվության մասնավոր դրսևորումների՝ պայմանագրային կամ դելիկտային իրավունքում կիրառվող պատասխանատվության հարցերին: Ներկայումս էլ քաղաքացիաիրավական պատասխանատվության հարցերին անդ-

<sup>1</sup> Տե՛ս Այլի Ի. Ածծծեւի ու իծի աեւի ու իեոձի ու իծեաե-աեի ե իծաձոձաի իիոե // Օրենք և իրականություն, 2003, թիվ 3-4, էջ 40:

րադարձող հեղինակները, կարծեք թե մոռանալով, որ պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունները գույքային պատասխանատվության տարատեսակներ են, փորձում են գույքային պատասխանատվության ընդհանրական հարցերը լուծել կամ պայմանագրային, կամ դելիկտային պարտավորությունների դիրքերից: Այդ կապակցությամբ հարկ է նկատել, որ պատասխանատվության դուալիզմի պահպանության պարագաներում հասկացությունների մասնակի սինթեզը չի ընդգրկել և ներկայումս էլ չի կարող ընդգրկել գույքային պատասխանատվության բնորոշ առանձնահատկությունները:

Պատասխանատվության նման դասակարգումն արդարացված էր այն ժամանակ, երբ իրավունքի ինքնուրույն ճյուղեր (քաղաքացիական, քրեական) գոյություն չունեին: Իրավունքի ճյուղերի սահմանազատվելուց, անձնական և գույքային պատասխանատվությունների տարանջատվելուց հետո, նման դասակարգումը կորցրել է իր նախասկզբնական նշանակությունը: Այդ պատճառով քաղաքացիաիրավական պատասխանատվության դուալիզմը (իսկ ավելի ճիշտ՝ երկփեղկվածությունը) ընդհանուր հասկացության ձևակերպման հիմք ընդունելը մենք համարում ենք ճշմարտության բացահայտման ամենալուրջ խոչնդոտներից մեկը: Թերևս դա է այն պատճառներից մեկը, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմնահարցերին վերաբերող ուսումնասիրություններում դիտվում են երկու հակադիր մոտեցումներ: Հեղինակների մի մասը, պատասխանատվությունը համարելով սանկցիա, պատասխանատվության հասկացության մեջ մտցնում է պետական հարկադրանքի միայն այն միջոցները, որոնք առաջացնում են լրացուցիչ պարտավորություն<sup>1</sup>: Մյուսները, պատասխանատվությունը համարելով սանկցիայի կիրառություն, պատասխանատվություն են համարում հարկադրանքի ցանկացած միջոցի (սանկցիայի) կիրառությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Էիծծա Ի.Ն. Ի ձաձոձաի իիոու իի նի աձոձեի ո ձձաաի նեի ո իծաձ. Էճա-աի ԷՂՕ, 1955, էջ 17, Ի աւայ ձաի ձեյ իծաձ ե նիոձաձոձա. Օ-աաի ե. Ի իձ ձա. Ա.Ա. Էճաձաձա. Ի ., 1995, էջ 35, Օիծեի ձա Ա.Ա., նշված աշխատությունը, էջեր 77-78, և այլն: Նշված տեսակետը պաշտպանում են նաև Սանկտ-Պետերբուրգի համալսարանի հրատարակած «Քաղաքացիական իրավունք» դասագրքի հեղինակները (տե՛ս Ածաաի նեի իծաձ. Օ-աաի ե. Ի իձ ձա. Ա.Ի.Նաձաձա, Բ.Է.Օիծեի ձա. Օ. 1. Ի ., 1996, 480-481, 556 էջեր):

<sup>2</sup> Տե՛ս Էաեո Ի.Մ. Նաիեօե ա նի աձոձեի իծաձ. Ի ., 1962, էջ 27, Ի աւայ ձաի ձեյ նի աձոձեի ձա իծաձ. Ի ., 1966, 415-425 էջեր, Ածաձոն Ն.Ի. Բ ձեաե-աեայ ի ձաձոձաի իիոու ե ճաեի իիոու. Ի ., 1976, էջ 69:

Առաջին տեսակետի հիմնադիր կարելի է համարել ականավոր ցի-վիլիստ Օ.Ս. Իոֆֆեն, իսկ երկրորդը ձևակերպել են ճանաչված իրա-վաբաններ Ի.Ս. Սամոչչենկոն և Օ.Է. Լեյստը:

Օ.Ս. Իոֆֆեն գտնում է, որ ցանկացած իրավական պատասխա-նատվության ընդհանուր հատկանիշը «կայանում է նրանում, որ պա-տասխանատվության յուրաքանչյուր միջոց հանդես է գալիս որպես պետական հարկադրանքով ապահովված սանկցիա»<sup>1</sup>: Պատասխա-նատվությունը «որպես կատարված քաղաքացիական իրավախախտ-ման բացասական հետևանք, արտահայտվում է կա՛մ չկատարված պարտականությունը նոր պարտականությամբ փոխարինելու, կա՛մ խախտված պարտականությունը նոր, լրացուցիչ պարտականության միացնելու կա՛մ այն իրավունքից զրկելու մեջ, որից բխել է խախտված պարտականությունը...»<sup>2</sup>:

Դժվար թե կարելի է համաձայնել այն տեսակետի հետ, որը ոչ միայն նույնացնում է թեկուզ և միմյանց հետ սերտորեն կապված, մեկը մյուսին պայմանավորող, բայց այնուհանդերձ միմյանցից տարբերող «սանկցիա» և «պատասխանատվություն» հասկացությունները, այլև անբարենպաստ հետևանքների առաջացումը համարում է ներհատուկ միայն պատասխանատվության միջոցներ համարվող սանկցիաներին: Մեր կարծիքով, իրավական յուրաքանչյուր եզրույթ, կատեգորիա անհ-րաժեշտ է օգտագործել կոնկրետ նշանակությամբ և, հնարավորինս, միանշանակ: Եզրույթների բազմանշանակ օգտագործումը ոչ միայն չի նպաստում, այլև շատ դեպքերում խանգարում է գործնական կարևոր նշանակություն ունեցող հարցերի պարզաբանմանը: Քննարկվող պա-րազայում ստեղծվում է այն թյուր պատկերացումը, թե «սանկցիա» և «պատասխանատվություն» հասկացությունների բազմանշանակ օգ-տագործման կապակցությամբ ծավալված վեճը բանավեճ է տերմիննե-րի ստուգաբանման կապակցությամբ: Մինչդեռ այդ հասկացություննե-րի սահմանազատումը, յուրաքանչյուր եզրույթ որոշակի նշանակու-

յամբ օգտագործելը ոչ միայն կապահովի իրավական տերմինաբա-նության անաղարտությունը, այլև կօժանդակի իրավական հասկա-ցությունների հետագա կատարելագործմանը<sup>1</sup>:

Սանկցիան իրավանորմով կամ պայմանագրով նախատեսված ներգործության միջոց է, իրավախախտման համար նախատեսված անշահավետ հետևանք, որի կիրառման համար ամենաքիչը անհրա-ժեշտ է, որ խախտված լինեն սուբյեկտիվ իրավունքներ, և տուժողը դրսևորի սանկցիա կիրառելու ցանկություն: Սանկցիայում նախատես-ված ներգործության միջոցները սուկ վերացական հնարավորություն են, որոնց կիրառելիությունը, օգտակարությունը և ներգործությունը կախված է և՛ տուժողի ցանկությունից, և՛ պատասխանատվության գոր-ծընթացն ապահովող հիմքերի ու պայմանների առկայությունից: Հետևաբար, սանկցիան, որպես պոտենցիալ հնարավորություն, միշտ գոյություն ունի, իսկ իրավական պատասխանատվությունը վրա է հաս-նում միայն սուբյեկտիվ իրավունքների իրական խախտման դեպքում որպես իրավական սանկցիայով նախատեսված որոշակի հետևանքնե-րի իրականացման գործընթաց, սանկցիայի կիրառման գործառույթ: Այսինքն, գույքային պատասխանատվությունը, որպես որոշակի (հա-տուկ) սանկցիաների կիրառման գործառույթ, սանկցիաների կիրառ-մանն ուղղված փաստացի գործողությունների կատարմանն ուղղված արարողակարգ, իրագործվում է միայն սուբյեկտիվ իրավունքների ի-րական խախտման դեպքում: Ընդ որում, այդ գործընթացում իրավա-խախտողից և տուժողից բացի, որպես հարաբերություններում հար-կադրման ֆունկցիայի իրականացումն ապահովող, մասնակցում է նաև պետությունը: Հետևաբար, գույքային պատասխանատվությունը պե-տության «մասնակցությամբ» մասնավոր հարաբերությունների խախտման համար նախատեսված սանկցիաների հանրային իրավա-կան եղանակներով իրագործման հարաբերություն է՝ իրավախախտողի և տուժողի միջև առաջացող յուրօրինակ հարաբերություն, իսկ իրավա-կան սանկցիան ոչ մի կերպ չի կարելի նման հարաբերություն համա-

<sup>1</sup> Տե՛ս ԷՆՕՕԱ Ի.Ն. Ի օճաօոճաի րի ու ի նի օճոճեի օ ձճաճաի ճեի օ ի ձճաօ. ԷՃՕ., 1955, էջ 17:

<sup>2</sup> Տե՛ս ԷՆՕՕԱ Ի.Ն. Նի օճոճեի օ ձճաճաի ճեի օ ի ձճաօ. Էճա-ճի ԷՃՕ. Օ 1., 1958, էջ 436, ԷՆՕՕԱ Ի.Ն. Ի օճաօոճաի րի ու ի նի օճոճեի օ ձճաճաի ճեի օ ի ձճաօ, էջ 14: Տե՛ս նաև ԷՆՕՕԱ Ի.Ն., Օճաճաճի ճեի օ ի ձճաօ. Ի. Ա. Աի ձի ու ձի ձե օ ի ձճաօ. Ի. ., 1961, էջ 317, ԷՆՕՕԱ Ի.Ն., Օի ճեի օ Բ.Է., Ի ճաճե ԿԷ ճՆՕՆՃ. Էճա-ճի ԷՃՕ, Ի ճաճե Ի.Ն. Էի օ ձճաօճաի ճի օ ձճաօոճաի րի ու ի ու ձի ճեի օ ի ձճաօ, Ի. ., 1968, էջ 74:

<sup>1</sup> Տե՛ս նաև Ի ճի ճեի օ Ա.Ն. Ի ձի ու նի օճոճեի օ ու ձե ճեի օ ձճաօ օ ի ձճաօ օ ձճաօ. Ի. Ա. Աի ձի ու ձի ճաճե օ ի ձճաօ. Աի ճի ձե ճաճաօ, 1960, էջ 180:



րել<sup>1</sup>:

Մեր կարծիքով, գույքային պատասխանատվությունը սոցիալական կատեգորիա է, իրավունքի սուբյեկտների միջև պետության «մասնակցությամբ» առաջացող հարաբերություն, որի նպատակն է սանկցիաների կիրառմամբ ապահովել խախտված սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը: Այսինքն, իրավական պատասխանատվությունը միշտ կապված է իրավական նորմերով նախատեսված սանկցիաների հետ: Իրավախախտման բացակայության դեպքում այդ կապը պայմանավորում է պատասխանատվության որպես կարգավորիչ սկզբունքի նշանակությունը, իսկ իրավախախտման դեպքում՝ ձեռք է բերում իրավապաշտպանական գործոնի որակ<sup>2</sup>: Սակայն այդ հանգամանքը ամենևին չի նշանակում, որ կարելի է «սանկցիա» և «պատասխանատվություն» տերմիններն օգտագործել որպես հոմանիշներ: Հիշյալ տեսակետի մյուս թերությունն այն է, որ անբարենպաստ հետևանքների առաջացումը համարելով միայն պատասխանատվության միջոցների ներհատուկ հատկանիշ, պարտավորության հարկադիր կատարման միջոցները, ինչպես նաև օպերատիվ ներգործության միջոցները<sup>3</sup> սանկցիա չի համարում, գտնելով, որ դրանք պարտապանի համար անբարենպաստ հետևանքներ չեն առաջացնում<sup>4</sup>:

Դժվար չէ համոզվել, որ նման մոտեցումը հեռու է իրականությունից: Պարտավորությունների ռեալ և պատշաճ կատարմանը հարկադրելու համար նախատեսված որևէ միջոցի կիրառում, որն անբարեխիղճ պարտապանի համար պարտավորությունը կատարելուց բացի անշահավետ հետևանքներ չառաջացնի, հայտնաբերել գրեթե անհնար է: Նման դեպքերում անբարեխիղճ պարտապանը, իրավախախտման հետևանքները վերացնելու համար ստիպված է կատարել լրացուցիչ ծախսեր: Օրինակ, առաքված արտադրանքից գնորդի հրաժարվելու

<sup>1</sup>«Սանկցիա» և «պատասխանատվություն» հասկացությունների փոխհարաբերության մասին ավելի մանրամասն տես մեր «Մատակարարի պատասխանատվության մի քանի հարցեր», Եր., 1976, 11-20 էջերը:

<sup>2</sup> Տես Ապիյան Ն.Ա., նշված հոդվածը., էջ 40:

<sup>3</sup> Օպերատիվ ներգործության միջոցներ են համարվում իրավախախտի նկատմամբ իրավագոր անձի կողմից, առանց իրավասու պետական մարմիններից դիմելու, կիրառվող ինքնապաշտպանական բնույթի միջոցներ:

<sup>4</sup> Տես *ΕΙΘΟΔΑ* *Ι.Ν.*, *ΟΙ εθνικές Ρ.Ε. Ι* *ίαυέ ΑΕ ΔΝΟΝΘ*. *Εζα-αί ΕΑΟ*, 225, 229 էջեր, *Ι* *αεαεί Ι.Ν.* *ΕΙ* *όταñοαί* *í* *αγ* *í* *οααñoααί* *í* *ñου* *à* *οί* *çyέñoααί* *í* *úó* *í* *οί* *í* *οαí* *εyó*. *Ι* *..*, 1968, էջ 10:

դեպքում կատարվում են պահելու, փոխադրելու, թերությունները վերացնելու, վերատարալորելու և այլ ծախսերը: Բնական է, որ չնախատեսված ծախսեր կատարելը ևս համարվում է անշահավետ հետևանք: Հետևաբար, անշահավետ հետևանքներ առաջացնելու հանգամանքը պատասխանատվության միջոցներ հանդիսացող սանկցիաներն այլ սանկցիաներից սահմանազատելու ցուցանիշ ծառայել չի կարող:

Այդ տեսակետի հիմնական թերություններից մեկն էլ այն է, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմնահարցերի ձևակերպման համար հիմք են ընդունվում պարտավորական հարաբերություններում կիրառվող պատասխանատվության առանձնահատկությունները: Այսինքն, ելնում է պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունների ձևական տարանջատվածությունից, անտեսելով այն իրողությունը, որ քաղաքացիական իրավունքում անկախ «պայմանագրային» և «արտապայմանագրային» պատասխանատվությունների իրավական ռեժիմների տարբերությունից, կիրառվում է պատասխանատվության մեկ տեսակ՝ գույքային պատասխանատվություն: Հիշեցնենք, որ արևմտյան իրավաբանական գրականությունում պատասխանատվության բաժանումը պայմանագրային և արտապայմանագրային ենթարկվում է քննադատության: Սովորաբար ընդգծվում է, որ այդ բաժանման գոյությունը պայմանավորված է բացառապես պատմական պատճառներով (հռոմեական իրավունքում, որտեղից փոխառված է այդ բաժանումը, դելիկտային պատասխանատվությունը, ի տարբերություն պայմանագրայինի, ուներ քրեաիրավական բնույթ)<sup>1</sup>: Ներկայումս գույքային պատասխանատվության այդպիսի սահմանազատման պատճառները վերացել են: Ավելին, ինչպես արդեն նշել ենք XX դարում լայն թափ ստացավ պայմանագրային և դելիկտային պատասխանատվությունների ունիֆիկացիան: Օրինակ, զարգացած երկրների օրենսդրությունը, կարգավորելով ատոմային վնասի, ապրանքների թերություններով պատճառված վնասի, տրանսպորտում պատճառված վնասի համար պատասխանատվության հարցերը, նախատեսում է պատասխանատվության միասնական ռեժիմ, անկախ նրանից՝ պատասխանատվության հիմքը պայմանագրի խախ-

<sup>1</sup> Տես *Εσοααεί Ι.Ι.* *Ι* *δααί* *δεí* *εί* *αοαéυñοαί* *è* *í* *δααί*: *í* *í* *úó* *çαí* *ααα*. *Εζαδαí* *í* *úα* *òðóáú*, *Ι* *..* *Εζα-αί "Νῶδóó"*, 1997, էջ 286:

տո՞ւմն է, թե՛ դեղիկտը<sup>1</sup>:

Նշված հանգամանքները հիմք են տալիս եզրակացնել, որ գույքային պատասխանատվության հարցերը պարզաբանելիս, գույքային պատասխանատվության էությունը բնութագրելիս, անհրաժեշտ է հրաժարվել վերոհիշյալ տարանջատումից:

Վերջապես, այդ տեսակետի թերություններից մեկն էլ այն է, որ պատասխանատվությունը համարում է լրացուցիչ պարտավորություն: Մեր խորին համոզմամբ, պատասխանատվությունը լրացուցիչ պարտավորություն չէ: Պատասխանատվությունը լրացուցիչ պարտավորություն համարելով՝ մենք այն, կամա, թե՛ ակամա, նույնացնում ենք ապահովման միջոցի հետ, քանի որ *լրացուցիչ պարտավորություն են առաջացնում օրենքի կամ կողմերի հարուկ համաձայնության ուժով կիրառվող այն հարուկ միջոցները, որոնց կիրառության սպառնալիքը պարտապանին խթանում է քարեխղճորեն կատարել իր պարտականությունը, իսկ կիրառությունը պարտավորությունը հնարավորություն է տալիս բավարարել իր պահանջը կամ սրանալ որոշակի փոփոխություն* (գրավ, երաշխավորություն, երաշխիք, կանխավճար, պահում):

Հնարավոր է, որ մնան տեսակետի արտահայտման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ օրենսդիրը տուժանքը (տուգանք, տույժ) համարում է և՛ ապահովման, և՛ պատասխանատվության միջոց, սակայն ինչպես ցույց կտրվի հետագա շարադրանքում, մնան մոտեցումը չի արտացոլում իրերի իրական վիճակը, չի բխում պատասխանատվության բնույթից: Այդ պատճառով էլ մենք գտնում ենք, որ պատասխանատվությունը պարտավորություն (թեկուզ և լրացուցիչ) համարել չի կարելի: Այն քաղաքացիաիրավական իրավունքի ինքնուրույն ինստիտուտ է:

Այլ կերպ են մոտենում գույքային պատասխանատվության հասկացության պարզաբանմանը Ի.Ս.Սամոչենկոն, Օ.Է. Լեյստը և նրանց տեսակետին համակարծիք մյուս հեղինակները: Նրանք գտնում են, որ պատասխանատվությունը իրավախախտման դեպքում սանկցիայի կիրառում է և, որպես կանոն, իրավունքի պաշտպանության համար պետական հարկադրանքը, որը իրավախախտողի վրա դնում է իրավունքի պահանջների խախտման համար նախատեսված անբարենպաստ հետևանքներ՝ դրանով իսկ արտահայտելով պետության և հասարա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը:

կության բացասական ներգործությունն իրավախախտողի վրա<sup>1</sup>:

Ի տարբերություն Օ.Ի.Իռֆեի, հիշյալ տեսակետի կողմնակիցները, մեր կարծիքով, միանգամայն ճիշտ բացատրելով «սանկցիա» և «պատասխանատվություն» հասկացությունների կապը, ավելի լայն են մեկնաբանում պատասխանատվության հասկացությունը և, դրանից ելնելով, ցանկացած սանկցիայի կիրառություն համարում են պատասխանատվություն: Այսպես, Ի.Ս.Սամոչենկոյի և նրա տեսակետը բաժանող մյուս հեղինակների կարծիքով, երբ պարտավորությունը կամովին չի կատարվում և այդ առնչությամբ գործի է դրվում պետական հարկադրման ապարատը, պայմանագրային պարտավորության կատարումը (եթե այդ դեպքում նույնիսկ չեն էլ կիրառվում տուգանային սանկցիաներ) վեր է ածվում իրավական պատասխանատվության<sup>2</sup>:

Մեր կարծիքով, քաղաքացիաիրավական սանկցիաների գործառույթի հիմնական ուղղվածությունը, կիրառման միջոցով խախտված քաղաքացիական իրավահարաբերության կանոնավոր զարգացման ապահովումն է: Դա իրագործվում է ինչպես պարտավորության պատշաճ կատարմանը հարկադրող, այնպես էլ պատասխանատվության միջոց համարվող սանկցիաների կիրառմամբ: Հետևաբար դժվար է համաձայնվել այն պնդման հետ, որ իրավախախտողի նկատմամբ անշահավետ հետևանքներ առաջացնող սանկցիաների կիրառմամբ պարտավորության կատարմանը հարկադրելը պետք է համարվի պատասխանատվություն: Պարտավորության հարկադիր կատարումը պատասխանատվություն դիտարկող տեսակետը, ինչպես արդարացիորեն նկատում է Ն.Ս.Մալեինը, օբյեկտիվորեն արդարացնում է իրավախախ-

<sup>1</sup> Տե՛ս նաև *Î àùàÿ òáí ðèÿ ñî ààòñèîáî ÿ ðààá. Î .: Èçà-áî «Ð ðèàè-àñèàÿ èèòàðàòòðà», 1966, 415-425 էջեր: Èàèòò Î .ÿ. Ñàí èòèÿ à ñî ààòñèî ÿ ðààá. Èçà-áî "Áîñòðèçààò", 1962, 85-90 էջեր: Áðàòòòó Ñ.Í. . Ð ðèàè-àñèàÿ ÿòààòòàáîíîòó è çàèíîíîòó. Î ., 1976, էջ 69: Ñèíàèàá Á.Õ. Î ðèíóæàáèà à àðàæàáîñèî ÿ ðààá. Á èí.: Î ðíàèàì ù ñî àðàì áíîáî àðàæàáîñèîáî ÿ ðààá, Èçà-áî "Áî ðíàòò", Î ., 2000, 219-220 էջեր: Áðàæàáîñèîáî ÿ ðààá. Õ-ááíèè. Î ðà. ðàá. Á.Á.Ñóòáíá. Õ. 1. Î ., 2000, էջ 431 և այլն:*

<sup>2</sup> Տե՛ս *Ñàì ÿùàíèî È.Ñ. Ð ðèàè-àñèàÿ ÿòààòòàáîíîòó à ñî ààòñèî ÿ ðààá, «Õ-áí ùà çàèñèè ÁÍ ÈÈÑÇ», 1961 áó. 2 (18), էջ 30: Նույնի՝ «È Áî ðíàòò ÿ ÿ ðè-èíîíîòò à ÿ èàñòè ð ðèàè-àñèè è ÿòààòòàáîíîòò», «Áî ðíàòò ÿ ÿ ùà è òáí ðèè ñî ààòñèîáî ÿ ðààá», Èçà-áî "Áîñòðèçààò", 1960, էջ 340: Áðàæàáîñèîáî ÿ ðààá. Õ-ááíèè. Î ðà. ðàá. Á.Á.Ñóòáíá. Õ. 1. Î ., 2000, էջ 131:*

տումների համար փաստացի անպատասխանատվությունը<sup>1</sup>:

Անշահավետ հետևանքներ առաջացնող ամեն մի սանկցիայի կիրառություն պատասխանատվություն չէ: Իրավագետներն աներկբայորեն ապացուցել են, որ անշահավետ հետևանքներ են առաջացնում ինչպես պատշաճ կատարում պարտադրող, այնպես էլ պատասխանատվության միջոցներ հանդիսացող սանկցիաների կիրառությունը:

Մեր կարծիքով, գույքային պատասխանատվության բնույթի պարզաբանման համար էական է ոչ միայն անշահավետ հետևանքների առաջացումը, այլև սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ապահովման եղանակը: Հարկ է նկատի ունենալ, որ սուբյեկտիվ իրավունքների պահպանության միջոցներն իրենց իրավական բնույթով միատեսակ չեն: Իրավագետների կողմից դրանք առավել հաճախ բաժանվում են պատասխանատվության միջոցների և քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցների, դրա մեջ ընդգրկելով այն սանկցիաները, որոնք ուղղված են իրավախախտման կանխարգելմանը, իսկ իրավախախտումը տեղի ունենալու դեպքում՝ մինչև իրավախախտումը եղած դրության վերականգնմանը<sup>2</sup>: Պաշտպանության և պատասխանատվության միջոցները միմյանցից տարբերվում են սոցիալական նշանակությամբ, ֆունկցիաների իրականացմամբ, կիրառման պայմաններով, սկզբունքներով և եղանակներով: Դրանց սահմանազատման անհրաժեշտությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ պաշտպանության (օպերատիվ սանկցիաների) միջոցների համար առանձնահատուկ է պատշաճ վարքագիծ դրսևորելուն, թերացումները շտկելուն, վերացնելուն հարկադրելը, իսկ պատասխանատվության միջոց հանդիսացող սանկցիաներին՝ խախտված սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը, իրավախախտմամբ պատճառված վնասի (կորուստների) փոխհատուցումը, տնտեսական (այդ թվում մասնավոր) հարաբերությունների անխաթար իրականացման ապահովումը: Այդ սանկցիաների համար, առնվազն, բնութագրական է երկու հատկանիշ՝ 1) իրենց բովանդակությամբ դրանք իրավախախտողի համար անբարենպաստ հետևանքներ են, 2) սանկցիայի կիրառությունը կապված է պետական հարկադրանքի կամ ծայրահեղ դեպքում դրա կիրառման հնարավորության հետ:՝ Ի տարբերություն իրավական նորմերով կամ պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումն ապահովող օպերատիվ ներգործության միջոցների, պատասխանատվության միջոցներ հանդիսացող սանկցիաների կիրառությունն ապահովված է պետական հարկադրանքով: Այսինքն, ծագելով մասնավոր հարաբերությունների խախտման փաստի ուժով, գույքային պատասխանատվությունը ձեռք է բերում հանրային բնույթ, դառնում է միջոց, որի օգնությամբ պետությունն ապահովում է և՛ սուբյեկտիվ իրավունքների, և՛ իրավակարգի պաշտպանությունը: Այդ պատասխանատվությունը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության այլ եղանակներից տարբերվում է նրանով, որ հարկադրելիությունն օգտագործվում է ոչ թե իրավասու սուբյեկտին պաշտպանելու, այլ իրավախախտողի վրա ճնշում գործադրելու իրագործելիությունն ու անխուսափելիությունն ապահովելու համար: Գույքային պատասխանատվությունն ապահովվում է պետական հարկադրանքով ոչ միայն և ոչ այնքան իրավախախտողի համար բացասական հետևանքներ առաջացնելու, որքան հարաբերությունների բնականոն իրականացումը և իրավահարաբերության մասնակիցների գույքային շահերն ապահովելու համար:

<sup>1</sup> Տե՛ս Ի ԲԵՆԵԴ Ի Ն. Է՛լ օ՛ւա՛նօ՛ճա՛ւ Ի՛պ Ի՛ժա՛օնօ՛ճա՛ւ Ի՛նո՛ւ Ի՛ օ՛ւ Կ՛Ե՛նօ՛ճա՛ւ Ի՛ օ՛ւ Ի՛ժա՛ւ Ե՛յօ. Ի ., 1968, էջ 14:

<sup>2</sup> Տե՛ս Աճա՛ւ Ի՛ճա՛ Ա.Ա. Ի՛ն Ի՛յօ՛ճա՛, ԲԵ՛ճ Ե՛ օ՛ւ՛ժ օ՛ւ Գ՛ժա՛ճա՛ւ ԴԵ՛ւ Ի՛ժա՛ւ Ի՛Ե Ի՛ժա՛օնօ՛ճա՛ւ Ի՛նօ՛ճ. Ա Ե՛ւ.: Աճօ՛ճա՛ւ օ՛ւ Ի՛ժա՛ւ օ՛ւ Գ՛ժա՛ճա՛ւ ԴԵ՛ւ Ի՛ժա՛ա. Ի ., 2003, էջ 283:

քի կամ ծայրահեղ դեպքում դրա կիրառման հնարավորության հետ:՝ Ի տարբերություն իրավական նորմերով կամ պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումն ապահովող օպերատիվ ներգործության միջոցների, պատասխանատվության միջոցներ հանդիսացող սանկցիաների կիրառությունն ապահովված է պետական հարկադրանքով: Այսինքն, ծագելով մասնավոր հարաբերությունների խախտման փաստի ուժով, գույքային պատասխանատվությունը ձեռք է բերում հանրային բնույթ, դառնում է միջոց, որի օգնությամբ պետությունն ապահովում է և՛ սուբյեկտիվ իրավունքների, և՛ իրավակարգի պաշտպանությունը: Այդ պատասխանատվությունը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության այլ եղանակներից տարբերվում է նրանով, որ հարկադրելիությունն օգտագործվում է ոչ թե իրավասու սուբյեկտին պաշտպանելու, այլ իրավախախտողի վրա ճնշում գործադրելու իրագործելիությունն ու անխուսափելիությունն ապահովելու համար: Գույքային պատասխանատվությունն ապահովվում է պետական հարկադրանքով ոչ միայն և ոչ այնքան իրավախախտողի համար բացասական հետևանքներ առաջացնելու, որքան հարաբերությունների բնականոն իրականացումը և իրավահարաբերության մասնակիցների գույքային շահերն ապահովելու համար:

Նույնը չեն նաև նշված սանկցիաների կիրառման հնարավորություններն ու մեխանիզմները: Պատշաճ կատարում պարտադրող սանկցիաների (կատարումը չընդունել, արտադրանքի փոխարինում պահանջել և այլն) կիրառման հնարավորությունը բխում է իրավահարաբերության բովանդակությունից: Դրանք օգտագործվում են առանց պետական հարկադրական ապարատի անմիջական ներգործության հասարակական հարաբերությունների մասնակիցների վրա ներագրելու, պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով: Մինչդեռ պատասխանատվության միջոցների կիրառման համար անհրաժեշտ է նորմատիվային հենք կամ կողմերի հատուկ պայմանավորվածություն: Այսինքն, եթե կոնկրետ իրավախախտման համար պատասխանատվության միջոցներ՝ սանկցիաներ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված չեն, ապա պատասխանատվության մասին խոսք լինել չի կարող: Բացի դրանից, եթե սուբյեկտիվ իրա-

<sup>1</sup> Տե՛ս ԲԵ՛ւԵ՛ճա՛ Ա.Օ Ի՛ժԵ՛ւԵ՛ճա՛ Ե՛ճ Գ՛ժա՛ճա՛ւ ԴԵ՛ւ Ի՛ժա՛ա. Ա Ե՛ւ.: Ի՛ժա՛ճա՛ օ՛ւ ԴԵ՛ւ Գ՛ժա՛ճա՛ ԴԵ՛ւ Ի՛ժա՛ա. Է՛ճ-՛ճ ԴԵ՛ւ “Ա՛ւ՛ժա՛ճ”, Ի ., 2000, էջ 219:

վունքների պահպանության միջոցների կիրառման համար բավարար է միայն իրավախախտման փաստի առկայությունը, սուբյեկտիվ իրավունքը խախտող օրենքին հակասող վարքագծի դրսևորումը, ապա պատասխանատվության միջոցների (վնասների հատուցում, տուժանք և այլն) կիրառման համար իրավախախտման փաստից զատ անհրաժեշտ է նաև իրավախախտողի մեղքը կամ գործարարական ռիսկը<sup>1</sup>, եթե օրենքով կամ պայմանագրով այլ կարգ չի սահմանված:

Ինչ վերաբերում է անշահավետ հետևանքների բնույթին, ապա անհրաժեշտ է տարբերել անբարենպաստ հետևանքների երկու տեսակ՝ սանկցիայի էությունից բխող անբարենպաստ հետևանքներ և ուղեկցող (հարակից) անբարենպաստ հետևանքներ: Առաջինների գոյությունը կանխորոշված է արդեն օրենքով, այսինքն՝ դրանք առաջանում են հենց օրենքի ուժով: Ընդ որում, դրանց կիրառումը նույնպես ուղեկցվում է մի շարք հարակից անբարենպաստ հետևանքներով (օրինակ, դատական ծախսեր, պետական տուրք, փորձագիտական ծախսեր և այլն): Երկրորդներն անբարենպաստ հետևանքներ են առաջացնում ոչ թե օրենքի ուժով, ոչ թե բխում են սանկցիայի էությունից, այլ այն բանի հետևանքով, որ այդ սանկցիաների իրականացումը, ինչպես առաջիններին, կապված է որոշակի ծախսեր կատարելու (մի դեպքում դրանք դատական ծախսեր են, մեկ այլ դեպքում՝ տնտեսա-կազմակերպչական) և եկամուտներ չատանալու հետ:

Առաջին բնույթի անբարենպաստ հետևանքներ առաջացնող սանկցիաները հենց նրանք են, որոնք, իրավախախտողի վրա ներգործելու իրենց ներհատուկ բնույթով և կիրառման առանձնահատկությունների ուժով, տարանջատվում են պարտականությունների պատշաճ կատարմանը հարկադրելու այլ միջոցներից, ճանաչվում են պատասխանատվության միջոցներ, իսկ դրանց կիրառությունը համարվում է պատասխանատվություն: Հարկադրական այդ միջոցների կիրառությունն իրավախախտողի համար առաջացնում է լրացուցիչ ծանրաբեռնվածություն, գույքային կորուստներ<sup>2</sup>:

Վերոհիշյալից հետևում է այն եզրակացությունը, որ անհրաժեշտ է տարբերել գույքային սանկցիաների երկու տեսակ՝ 1) սուբյեկտիվ պար-

տականությունների պատշաճ կատարումն ապահովող սանկցիաներ (այդպիսիք են պարտավորությունների ռեալ և պատշաճ կատարումն ապահովող սանկցիաները), և 2) սուբյեկտիվ իրավունքների խախտման դեպքում որպես պատասխանատվության միջոց կիրառվող սանկցիաներ, որոնք իրավախախտումից տուժած անձին վերապահում են լրացուցիչ սուբյեկտիվ իրավունքներ:

Առաջինների կիրառությունը ոչ մի պարագայում պատասխանատվություն համարվել չի կարող:

Եթե պարտավորության հարկադիր կատարումը համարենք պատասխանատվություն, ապա ստիպված կլինենք ընդունել, որ նշված իրավական հետևանքները նախատեսող նորմերը միանգամայն բավարար են, քանի որ հարկադիր կատարումն արդեն ինքնին պատասխանատվություն է: Պարտավորության կատարմանը հարկադրված կողմն արդեն «պատասխանատվության է ենթարկվում»: Եվ եթե պարտավորության հարկադիր կատարման ձևով «պատասխանատվությունից» բացի գանձվեն նաև վնասները և տուժանքը (տուգանքը, տույժը), ապա ստիպված կլինենք ընդունել, որ սուբյեկտը կրում է «երկակի» պատասխանատվություն: Իրականում, հարկադիր կատարումը մնում է որպես պարտականության կատարում, իսկ գույքային պատասխանատվությունը հանգում է վնասները փոխհատուցելուն, տուժանք (տուգանք, տույժ) բռնագանձելուն, անօրինական ստացած եկամուտները գանձելուն, դրամական փոխհատուցում վճարելուն (հեղինակային իրավունքում), վարկը ժամանակին չվերադարձնելու համար տուգանային տուկոսներ գանձելուն, ինչպես նաև որոշակի իրավունքներից զրկելուն: Նշված միջոցները, որպես կանոն, սահմանված են օրենքի իմպերատիվ նորմերով և կոչված են կա՛մ պահպանել առավել թույլ կողմին մյուս կողմի չարաշահումներից, կա՛մ ապահովել առավել համապարփակ նպատակներ՝ բարեխղճություն, շրջանառության կայունություն, հանրային կարգի պահպանություն: Այդ միջոցների կիրառության համար կողմերի համաձայնությունը չի պահանջվում<sup>3</sup>:

Սեր կարծիքով, ամեն մի հասկացություն պետք է արտացոլի երևույթի էական, հիմնական, վճռորոշ հատկանիշները: Հետևաբար, գույքային պատասխանատվության էության բացահայտման համար

<sup>1</sup> Տե՛ս *Áðàðóñí Ñ.Í . Թ ԾԵՁԵ-ձՈՒՅՅ ԻՕԱՕՈՈՁԱԻ ԻԻՈՍ Ե ԳՅԵԻ ԻԻՈՍ, Ի ., 1976, էջ 4:*

<sup>2</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Բարսեղյան Ս.Կ. Տնտեսական կազմակերպությունների հարաբերություններում կիրառվող գույքային պատասխանատվության արդյունավետությունը, Եր., «Հայաստան», 1988, 52-104 էջեր:

<sup>3</sup> Տե՛ս *ÊìììáíðàðԵԵ Ե Áðàæááíñĕìì ó Եìááĕñó ԾìññԵĕñĕíԵ ȮááðàðԵԵ, +áñòĕ ìáðáíԵ (ìñòàðáéíúԵ), Ի ., 1998, 4-5 էջեր:*





դեպ»<sup>1</sup>: Դա հետևանք է այն բանի, որ քաղաքացիական իրավունքը կարգավորում է իրավահավասար, անկախ և ինքնուրույն սուբյեկտների միջև առաջացող հարաբերությունները, որոնցում գույքային շրջանառության մասնակիցներից մեկի կողմից պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն առաջացնում է հարաբերության մյուս մասնակցի իրավունքների խախտում<sup>2</sup>: Այդ խախտումների համար կիրառվող սանկցիաները հետապնդում են տուժողի իրավունքները վերականգնելու կամ վնասները փոխհատուցելու նպատակ: Այն առանձին դեպքերը, երբ օրենսդրությունը նախատեսում է սանկցիաների գանձում հօգուտ պետության, հանդիսանում են ընդհանուր կանոնի հաստատում և վկայում են այն մասին, որ խախտումները շոշափում են պետության և հասարակության շահերը (հանրային շահերը), որը և կանխորոշում է բռնագանձողական բնույթի միջոցների կիրառությունը<sup>3</sup> (Քաղ.օր. 284, 288, 313 հոդվածներ և այլն):

3. Գույքային պատասխանատվության հաջորդ առանձնահատկությունն այն է, որ կառուցված է դիսպոզիտիվության սկզբունքով: Այդ սկզբունքը գործում է ինչպես պատասխանատվության միջոցներ հանդիսացող սանկցիաներ սահմանելիս, այնպես էլ՝ պատասխանատվության կիրառման հարցը լուծելիս: Մասնավորապես, քաղաքացիական օրենսդրությամբ իրավահարաբերության մասնակիցներին թույլատրվում է ոչ միայն սանկցիաներ նախատեսել այն իրավախախտումների համար, որոնց համար օրենքով սանկցիաներ նախատեսված չեն (օրինակ, պայմանագրային տուժանք՝ Քաղ. օր. հոդվ 369), այլև փոփոխել օրենքով նախատեսված սանկցիաների չափերը (օրինակ, նախատեսել վնասների հատուցման ավելի պակաս չափ՝ Քաղ. օր. հոդվ. 17):

Պատասխանատվության դիսպոզիտիվությունը դրսևորվում է նաև նրանում, որ տուժող կողմն ինքն է իրավասու որոշել կիրառել<sup>4</sup> հարկադրանք, թե՞ հրաժարվել հարկադրանք կիրառելու իրավունքից: Անգամ այն դեպքերում, երբ իրավախախտման հետևանքով առաջացել են գույքային վնասակար հետևանքներ, իրավախախտողից վնասների հատուցում պահանջելու հայց հարուցելը հանդիսանում է տուժողի ի-

րավունքը: Այսինքն, քաղաքացիաիրավական պատասխանատվությունը կիրառվում է բացառապես տուժողի ցանկությամբ և նախաձեռնությամբ: Այն հանդիսանում է մասնավոր հարաբերությունների մասնակից սուբյեկտների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց՝ իրավախախտման հետևանքով առաջացող նոր սուբյեկտիվ իրավունք, որից օգտվելու մենաշնորհը պատկանում է բացառապես իրավախախտումից տուժած անձին: Դա նշանակում է, որ դատարանը իրավախախտողին պատասխանատվության կարող է ենթարկել բացառապես իրավախախտումից տուժած անձի պահանջով: Նման պահանջի առկայության դեպքում դատարանի պարտականությունն է սանկցիաների կիրառման ուղղությամբ անմիջական փաստական գործողություններ կատարել<sup>1</sup>: Սանկցիաների կիրառումը դատարանի նախաձեռնությամբ չի թույլատրվում: Սեփական նախաձեռնությամբ դատարանն իրավասու է գույքային սանկցիաներ կիրառել միայն օրենքով սահմանված դեպքերում, այն էլ երբ մասնավոր շահերի հետ ոտնահարվում են նաև հանրային շահեր (Քաղ. օր. հոդվ. 303, կետ 3): Այսինքն, քաղաքացիական օրենսդրությունը դատարանի նախաձեռնությամբ հարկադրական միջոցների կիրառությունը թույլատրելի է համարում միայն այն դեպքում, երբ օգտագործվում են ոչ թե մասնավոր իրավական, այլ հանրային իրավական սանկցիաներ<sup>2</sup>:

4. Գույքային պատասխանատվության սոցիալ-տնտեսական բնութագրական հատկանիշներից մեկն այդ պատասխանատվության փոխհատուցողական գործառույթն է: Օրենսդիրն այդ գործառույթի նկատմամբ ցուցաբերում է առավել մեծ ուշադրություն, դա համարելով գլխավոր խնդիրներից մեկը և առավել հիմնավորված կարգավորելով այն իրավիճակները, որոնցում կիրառվում է վնասների փոխհատուցումը: Գույքային պատասխանատվության նկատմամբ օրենսդրի մման վերաբերմունքը ճիշտ և հիմնավորված է այն պարզ պատճառով, որ այդ պատասխանատվության անմիջական նպատակը, բոլոր դեպքերում վնասների լրիվ կամ մասնակի փոխհատուցումն է<sup>3</sup>: Դա է այն հիմնական պատճառը, որ գույքային պատասխանատվության ծավալը որոշվում է՝ տուժողին պատճառված վնասները համարժեք փոխհատու-

<sup>1</sup> Տե՛ս Էթերիսեե Ա.Ա. Ի ծիւթիւն ի թեթեւեթե ի ծառնոթիւն ի նոթ. ՈՒ՛ ա. Էթիւթի "Թ թեթեւեթե ծիւթ ի ծառն", 2004, էջ 337:  
<sup>2</sup> Տե՛ս Ածաթիսեե Ի .Է., Էթծիսեե Ա.Ա. Աիթիւծիւն ի ծառն: ի ծառն ի թեթեւեթե. Ի ., 1997, էջ 442:  
<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, 492-493 էջեր:

<sup>1</sup> Տե՛ս նշված աշխատությունը, էջ 102:  
<sup>2</sup> Տե՛ս Եթիւթի Ա.Ա. Ի թեթեւեթե ի ծառն. Ա թիւ: Ի ծիւթիւն ի նոթ. Ի ., 2000, 218-219 էջեր:  
<sup>3</sup> Տե՛ս Ածաթիւ Էթիւթիւ. Ի ծառնոթիւն ի նոթ ի թեթեւեթե ի ծառն. Ի ., 1978, էջ 31:

ցելու անհրաժեշտությունը հիմք ընդունելով: Ընդ որում փոխհատուցման գործառույթի համարժեքության ապահովման համար օրենսդիրը սահմանում է, որ իրավասխախտողից գանձվող գումարները (տուժանք, դրամական պարտավորությունների խախտման համար տոկոսներ), չպետք է գերազանցեն պատճառված վնասների գումարը, և հաշվարկվում են վնասը գանձելիս: Այդ պատասխանատվության առավելագույն չափը կանխորոշվում է տուժողին պատճառված վնասների կամ կորուստների արժեքով: Իրավասխախտողից գանձվող միջոցներն, ըստ ընդհանուր կանոնի, օգտագործվում են տուժողի գույքային և այլ ոլորտում առաջացած կորուստները վերականգնելու համար, որի պատճառով էլ գույքային պատասխանատվությունն ունի փոխհատուցողական բնույթ: Այդ պատասխանատվության հիմնական նպատակը, երբեք չպետք է հենց նրանում, որ փոխհատուցի... գույքային շրջանառության մասնակիցներին պատճառված վնասը<sup>1</sup>:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության փոխհատուցողական բնույթից բխում է տուժողի հարստացման անթույլատրելիությունը: Հարստանալու անթույլատրելիությունը, որը որոշ իրավագետներ անվանում են «Ռեստիտուցիայի սկզբունք», որոշ իմաստով հանդիսանում է քաղաքացիաիրավական պատասխանատվության սահմանափակման չափանիշ և կանխորոշում է պատասխանատվության միջոց համարվող սանկցիաների հաշվարկային բնույթը: Մասնավորապես, նման բնույթ ունեն իրավասխախտման համար գանձվող տուժանքը (բացի տուգանային տուժանքից, որը լայն կիրառություն չունի), դրամական փոխհատուցումը, դրամական պարտավորությունների խախտման համար գանձվող տոկոսները: Այդ սանկցիաների կիրառման դեպքում գանձվող գումարները, որպես ընդհանուր կանոն, չպետք է գերազանցեն առաջացած վնասների ծավալը, իսկ պակաս լինելու դեպքում տուժողը կարող է պահանջել չմարված վնասների գումարը: Այդ հանգամանքը, որոշ իրավագետների հիմք է տալիս դատողություններ անել ոչ թե պատասխանատվության փոխհատուցողական, այլ վերականգնողական բնույթի մասին<sup>2</sup>: Իսկ այլ հեղինակներ, ավելի առաջ գնալով, փոխհատուցումը և ռեստիտուցիան, համարում են վերա-

<sup>1</sup> Տե՛ս *Êõæãæí Ĩ .Ë. Ëçáðáí íúá òðóá. Ĩ ., 1997* էջ 279:  
<sup>2</sup> Տե՛ս օրինակ, *Âðæãáíâ Á.Ë. Ĩ ðááíáúá íðíáæáí ú óíðáæáíéý èà-áñòáá íðíáæðèè. Á èí.: Õíðáæáíéà è íðááí. Ëçá-áí Ĩ ÁÓ, 1975*, էջ 42: *Õèðíí èðíâ Ĩ .P. P ðèæè-áñèáý ýíðèèííáæèý. Ĩ ., 1995*, էջ 194: *Âðáæííèèè Ĩ .Ë., Âèððýííèèè Á.Â.*, նշված աշխատությունը, էջ 569:

կանգնման տարատեսակներ<sup>1</sup>: Նման տեսակետներն ընդունելի չեն հետևյալ պատճառներով: Փոխհատուցումը, ռեստուցիան, վերականգնման տարատեսակներ չեն: Վերականգնումը ինչպես նաև ռեստուցիան բնութագրական են ոչ թե պատասխանատվության միջոցներին, այլ օպերատիվ-կարգավորիչ սանկցիաներին, օրինակ՝ խոտան ապրանքի փոխարինմանը, նախկին վիճակը վերականգնելուն: Փոխհատուցումը կոչված է ապահովելու իրավասխախտմամբ պատճառված վնասների հատուցումը: Այդ պատճառով հարկ է խոսել ոչ թե գույքային պատասխանատվության վերականգնողական, այլ փոխհատուցողական բնույթի մասին: Անհրաժեշտ է նշել, որ չի կարելի սանկցիայի իրավավերականգնող գործառույթը ֆետիշացնել և, բոլոր դեպքերում, սանկցիայի առջև իրավահարաբերությունը վերականգնելու խնդիր դնել: Այդ խնդիրը, անկասկած, լուծվում է միայն իրային իրավունքները պաշտպանող սանկցիաներով<sup>2</sup>: Օրինակ, մատակարարման պայմանագիրն էականորեն խախտելու հետևանքով միակողմ փոփոխելու կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում խոսք չի կարող գնալ խախտված իրավահարաբերությունների նորմալ զարգացումը վերականգնելու մասին:

5. Պատասխանատվությունը, այլ անձանց սուբյեկտիվ իրավունքների պահպանությունն իրավասխախտի հաշվին ապահովող հարկադրման միջոց է: Այն ապահովված է իրավասխախտողի վրա ճնշում գործադրելու իրական հնարավորությամբ: Այդ պատճառով հարկադրելիության տարրը հանդիսանում է գույքային պատասխանատվության անբաժանելի հատկանիշը<sup>3</sup>: Ընդ որում, որոշ իրավագետներ քաղաքացիաիրավական պատասխանատվության հարկադրելիությանը տալիս են այնպիսի կարևոր նշանակություն, որ սանկցիա են համարում «իրավասխախտողի վրա ներգործելու այն միջոցները, որոնք կիրառվում են դատարանի, արբիտրաժի կամ իրավասու այլ պետական կամ հասարակական մարմնի կողմից»<sup>4</sup>:

Գույքային պատասխանատվության հարկադրելիության հատկա-

<sup>1</sup> Տե՛ս Լիպինսկի Գ.Ա. նշված աշխատությունը, էջ 94:  
<sup>2</sup> Տե՛ս *Æèðèííèèè P.Ñ. Ñáíèøèý ííðì ú ñíááñèíáí áðáæáííèèíáí íðáá. Áíðííáæ, 1968*, էջ 34:  
<sup>3</sup> Տե՛ս *Ëí Õðá Ĩ .Ñ. Ëçáðáí íúá òðóá. Õ.1. Ñĭ á, 2003*, էջ 196:  
<sup>4</sup> Տե՛ս *Âðæãáíâ Á.Ë. Ĩ òúáñòæáíéà è çàùèðà áðáæáííèèè íðáá. Ĩ .: Ëçá-áí "Ñòáòó", 2000*, էջ 313: *Âðáæáííèèá íðááí. Ó-ááíèè. Ĩ òá. ðáá. íðí. Õ. Á.Â. Ñðóáíâ. Õ 1. 2-á èçá. Ĩ ., 1998, 429-431* էջեր:



նիշի նկատմամբ քաղաքացիագետների մեծ ուշադրությունը հետևանք է այն բանի, որ մասնավոր հարաբերությունների համար առավել կարևոր նշանակություն ունի հասարակական հարաբերությունների դրական կարգավորումը: Այդ հարաբերությունների ճնշող մեծամասնությունն առաջանում է ինքնավար կամք դրսևորող իրավահավասար սուբյեկտների ազատ կամահայտնության հիման վրա: Այդ հարաբերությունների կողմերից յուրաքանչյուրը հետապնդում է որոշակի նպատակ: Այդ նպատակները համաձայնեցվում են պայմանագրերում՝ ստեղծելով կայուն և կանխատեսելի իրավահարաբերություններ: Բայց մնան հարաբերությունների կարգավորումն ապահովող իրավունքն էլ պետք է իրականացնի պաշտպանական ֆունկցիաներ, պարունակի բնականոն հարաբերություններն իրավախախտումներից պաշտպանելու ինստիտուտներ:

Բանն այն է, որ քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարությունն անսահմանափակ չէ: Այն կաշկանդված է իմպերատիվ նորմերով, որոնք կոչված են ապահովել թույլ կողմին մյուս կողմի չարաշահումներից կամ պահպանել առավել ընդգրկուն նպատակներ՝ բարեխղճություն, շրջանառության կայունություն, հանրային կարգի պահպանություն<sup>1</sup>: Բացի դրանից, չի բացառվում նաև իրավահարաբերության մասնակիցների կողմից իրավունքների չարաշահումը, սահմանանցումը կամ անտարբերությունը: Վերջապես, հարաբերության մասնակիցներն ի սկզբանե չեն կարող կանխատեսել պարտավորությունների կատարմանն ուղեկցող բոլոր իրավիճակները և պարտավորությունների կատարմանը խոչնդատող փաստական հանգամանքները:

Ընական է, որ պարտավորությունների կատարման խոչնդատները չհաղթահարելու, կատարման ընթացքում այլ թերացումներ ցույց տալու դեպքերում գործադրվում է պատասխանատվության մեխանիզմը: Հետևաբար, կողմերի ազատ կամահայտնությամբ առաջացող հարաբերություններ կարգավորող իրավունքն էլ է կատարում պաշտպանական գործառույթ, նրանում էլ կան բնականոն հարաբերություններն իրավախախտումից պաշտպանելու ինստիտուտներ, բայց պաշտպանական ինստիտուտներն այդ իրավունքում ունեն օժանդակող բնույթ, և

<sup>1</sup> Տե՛ս *Մատթեոսի Եւանգելիոսի 10-րդ գլուխի 1-11-րդ հոդվածները* (մատթեոսի 10-րդ գլուխի 1-11-րդ հոդվածները) // *Մատթեոսի Եւանգելիոսի 10-րդ գլուխի 1-11-րդ հոդվածները*, 1999, 11, էջ 133:

հարկադրանքն օգտագործվում է սուկ այդ նպատակով: Ընդ որում, պաշտպանական ինստիտուտների կիրառելիության մասին խոսելիս, չի կարելի հաշվի չառնել քաղաքացիաիրավական սանկցիաների բնութագրական առանձնահատկությունը՝ պետական հարկադրանքի կիրառման հնարավորությունը որպես դատարարական միջոց: Մենք համամիտ ենք Յու. Ս. Ժիցինսկու հետ, որ դրանում է դրսևորվում իրավունքի հիմնական տարբերությունը դատարարական բոլոր այլ մեթոդներից ու եղանակներից: Համամիտ ենք նաև այն հարցում, որ քաղաքացիաիրավական սանկցիան երկու հակադրությունների՝ համոզման և հարկադրման միասնություն է, և իրավահարաբերության զարգացման տարբեր փուլերում այդ միասնության գլխավոր կողմը կարող է լինել ինչպես համոզումը, այնպես էլ հարկադրանքը<sup>1</sup>: Ընդ որում, հարկադրանքը գործի է դրվում միայն իրավական նորմերով (կամ պայմանագրով) նախատեսված կանոնների պահպանման անխուսափելիության մեջ համոզելու անհրաժեշտությունից:

Այդ պատճառով, մեզ թվում է, որ ճիշտ չեն այն հեղինակները, որոնք հարկադրանքը համարում են ամբողջությամբ քաղաքացիական իրավունքին ներհատուկ հատկանիշ<sup>2</sup>: Քաղաքացիական իրավունքում հարկադրանքը ներհատուկ է բացառապես պատասխանատվությանը և գործի է դրվում իրավահարաբերության մասնակցի ցանկությամբ՝ այն դեպքերում, երբ իրավախախտողը կամովին չի վերացնում իրավախախտման հետևանքները:

Բանն այն է, որ բնականոն տնտեսական հարաբերությունները հարկադրանքի վրա կառուցվել չեն կարող: Եթե այդ հարաբերությունների կենսագործունեությունը ապահովելու համար մշտապես օգտագործվում է հարկադրանք, ապա դա ինքնին վկայում է նորմալ հարաբերությունների ոչ նորմալ վիճակի մասին<sup>3</sup>: Քաղաքացիական իրավունքում հարկադրանքի էական առանձնահատկությունն այն է, որ ունի օժանդակող՝ ապահովող բնույթ, հանդիսանում է և՛ պատասխանատվության, և՛ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց: Ընդ որում, քաղաքացիական իրավունքը իրավունքի այլ ճյուղերից տարբեր-

<sup>1</sup> Տե՛ս *Միգրանտի Յու.Ս.*, նշված աշխատությունը, էջ 29:  
<sup>2</sup> Տե՛ս *Մատթեոսի Եւանգելիոսի 10-րդ գլուխի 1-11-րդ հոդվածները* (մատթեոսի 10-րդ գլուխի 1-11-րդ հոդվածները) // *Մատթեոսի Եւանգելիոսի 10-րդ գլուխի 1-11-րդ հոդվածները*, 1999, 221-222 էջեր:  
<sup>3</sup> Տե՛ս *Մատթեոսի Եւանգելիոսի 10-րդ գլուխի 1-11-րդ հոդվածները* (մատթեոսի 10-րդ գլուխի 1-11-րդ հոդվածները) // *Մատթեոսի Եւանգելիոսի 10-րդ գլուխի 1-11-րդ հոդվածները*, 2002, էջ 6:

վում է նաև նրանով, որ օգտագործում է առանց պետական հարկադրական ապարատի անմիջական ներգործության հասարակական արտադրության մասնակիցների տնտեսական շահերի վրա ներագդելու, հասարակական արտադրության կազմակերպման, կարգ ու կանոնի ապահովման դարերով մշակված յուրատիպ մեթոդներ: Պետական հարկադրանքն օգտագործվում է միայն այն դեպքում, երբ իրավունքների պահպանության կամ վերականգնման համար օրենսդրորեն կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված միջոցները ցանկալի արդյունք չեն տալիս:

Ավելին, քաղաքացիական իրավունքում պատասխանատվության հարկադրելիության բնույթն այնպիսին է, որ առանձին դեպքերում հարկադրանքի կիրառման իրավունքը վերապահվում է պայմանագրային հարաբերության մասնակցին, նկատի ունենալով, որ այն հնարավոր է կիրառել նաև առանց պետական մարմնի միջամտության: Օրինակ, գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելը (Քաղ. օր. հոդվ. 249), պահված գույքի արժեքից պարտատիրոջ պահանջները բավարարելը (Քաղ. օր. հոդվ. 374), պայմանագիրը չկատարելու դեպքում կանխավճարը ստացողի մոտ մնալը (Քաղ. օր. հոդվ. 396, կետ 2)<sup>1</sup> և այլն:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության հարկադրելիության բնույթի յուրահատկության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ դրա կիրառման երկյուղը և վնասների ավելացումն իրավախախտողին հաճախ ստիպում են կամովին վերացնել իրավախախտման հետևանքները:

Հանրագումարի բերելով ասվածը՝ կարելի է նշել, որ գույքային պատասխանատվության կիրառման հարցում հարկադրականության առկայությունը պատասխանատվության կանխարգելիչ ներգործության նախապայման է: Դա հետևանք է այն բանի, որ գույքային պատասխանատվությունը իրավագոր անձի համար ապահովում է իրավախախտողի վրա ճնշում գործադրելու համար պետական հարկադրական ապարատի հնարավորությունների օգտագործում, դրանից բխող բոլոր անշահավետ հետևանքներով: Այդ հարկադրանքի նպատակը ճնշում գործադրելու անխուսափելիության և իրագործելիության ապահովմամբ իրավախախտողին ընտրության հնարավորությունից զրկելը

<sup>1</sup> Քաղ. օր. 395, 396 հոդվածներում, մեր կարծիքով, 1923 և 1964 թթ. օրենսգրքերում օգտագործվող «կանխավճար» եզրույթը, ոչ ճիշտ բարգամության հետևանքով փոխարինվել է «նախավճար» եզրույթով:

իրավագոր անձի պահանջը նրա կողմից ընտրված ձևով բավարարելուն ստիպելն է:

Գույքային հարկադրանք կիրառելիս պետությունը հանդես է գալիս ոչ թե որպես կողմ, որի օգտին գանձվում են օրենքով նախատեսված սանկցիաները, ինչպես դա տեղի է ունենում հարկային, վարչական և քրեական հարաբերություններում, այլ իրականացնում է սույլ հարկադրողի դերակատարություն: Նրա կողմից կիրառված հարկադրանքի արդյունավետությունը կամ անարդյունավետությունը գնահատվում է՝ հարկադրանքի վերջնական արդյունքից ելնելով, մասնավորապես այն փաստից, թե հարկադրանքի կիրառման արդյունքում ինչ չափով են փոխհատուցվում տուժողի կրած վնասները: Բնական է, որ հարկադրելիության բարձրագույն նպատակը վնասների լրիվ փոխհատուցումն է:

6. Գույքային պատասխանատվության հաջորդ հատկանիշն այն է, որ իրավախախտողի համար պատասխանատվությունն առաջացնում է նյութական անշահավետ հետևանքներ<sup>1</sup>: Այն իրավախախտին պարտադրում է փոխհատուցել տուժողի վնասները, վճարել տուժանք, տոկոսներ կամ որոշակի դրամական գումար: Անգամ այն դեպքերում, երբ իրավախախտումը շոշափում է անձնական ոչ գույքային իրավունքները կամ տուժողին պատճառում է ֆիզիկական կամ հոգեկան տանջանքներ (բարոյական վնաս), քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառությունը հանգում է տուժողին համապատասխան դրամական փոխհատուցում տրամադրելուն կամ պատճառված վնասները գանձելուն: Այսինքն, առաջացնում է, որպես կանոն, որոշակի դրամական գումարի կորուստ<sup>2</sup>: Դրա շնորհիվ գույքային պատասխանատվությունը ներգործում է կարգավորվող հարաբերությունների վրա, օժանդակում խախտված հարաբերությունների վերականգնմանը:

7. Գույքային պատասխանատվությունը ինքնուրույն իրավական ինստիտուտ է: Մակայն ինչպես պետության և իրավունքի տեսության, այնպես էլ քաղաքացիական իրավունքի որոշ մասնագետներ փորձում են այդ պատասխանատվությունը նույնացնել կամ կապել պարտավորության հետ: Օրինակ, Դ.Ա. Լիպինսկին իրավական պատասխանատվությունը համարելով իրավական կամ անձնական բնույթի սահմանա-

<sup>1</sup> Տե՛ս *Εἰς ὅσα Ἰ.Ν. Ἰ δαὰὸὸαἰίίἰἰὸὸῦ ἰἰ ἡἡ ἰἰἰἰἰἰἰ ὀ ἰἰἰἰἰἰἰἰἰ ὀ ἰἰἰἰἰἰἰ ὀ ἰἰἰἰἰἰἰ*. *ΕἲΟ*, 1955, էջ 17: Գրիբանով Վ.Ա., նշված աշխատությունը., էջ 311: *Ἄδἰἰἰἰἰἰἰἰἰ ἰἰἰἰἰἰ ἰἰἰἰἰἰἰ*. *Ἰ ὀἰ. ὀἰἰ. ἰ ὀἰ ὀ. Ἀ.Ἀ.Νὸὸἰἰἰἰ. 2-ἰ ἰἰἰ. ὀ. 1. Ἰ ., 1998, էջ 430:*

<sup>2</sup> Տե՛ս Բրազինսկի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 492:



ցայտուն օրինակ են վնաս պատճառելու համար կիրառվող պատասխանատվությունը կարգավորող՝ Քաղ. օր.-ի նորմերը: Քաղ. օր. 60 գլուխը վերնագրված է՝ «Վնաս պատճառելու հետևանքով ծագող պարտավորություններ», բայց նրանում գետեղված հոդվածներից ոչ մեկում պարտավորության մասին չի հիշատակվում: Սակայն միայն վերնագրի առկայությունը բավարար է, որ և՛ իրավաբանական գրականության մեջ, և՛ պրակտիկայում ավելի շատ ուշադրություն ցուցաբերվի ոչ թե պատասխանատվությունը կանոնակարգող կանոնների, այլ պարտավորական իրավունքի նորմերի կիրառման վրա: Օրինակ, ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահությունը 1999 թ. մարտի 23-ի N 1139/99 որոշմամբ մատնանշում է. «Այն դեպքում, երբ դատարանը ՌԴ Քաղ. օր. 1082 (ՀՀ Քաղ. օր. 1075) հոդվածին համապատասխան մեղավոր անձի վրա դնում է վնասը հատուցելու պարտականություն, վնաս պատճառող կողմի համար ծագում է որոշակի գումար վճարելու պարտավորություն: Պարտապանի կողմից վճարումը կետանցելու դեպքում, պարտատերն իրավունք ունի, Քաղ. օր 395 (ՀՀ Քաղ. օր. 411) հոդվածի համաձայն, այդ գումարի վրա հաշվարկել տոկոսներ, այն պահից, երբ դատարանի որոշումը մտել է ուժի մեջ, եթե այլ բան օրենքով մատնանշված չէ: Հետաքրքրականն այն է, որ նշված որոշումը որպես քաղաքացիաիրավական պատասխանատվությունը և պարտավորությունը միմյանց խառնելու ակնառու օրինակ վկայակոչող Գ.Վ.Խոխլովան փորձում է հիմնավորել, որ պատասխանատվությունը պարտավորություն է<sup>1</sup>:

Ըստ նրա, գործող Քաղաքացիական օրենսգրքի համակարգում վնաս պատճառելուց բխող պարտավորությունների մասին նորմերը այնպես, ինչպես յուրաքանչյուր հիշատակված պայմանագրերի և կոնդիկցիոն պարտավորությունների մասին կանոնները, առանձնացված են առանձին 59 (ՀՀ Քաղ. օր. 60) գլխում: Կիրառելով համակարգային մեկնաբանություն՝ կարելի է գալ հետևության, որ վնաս պատճառելուց բխող պարտավորությունները հանդիսանում են հենց պարտավորություններ (այնպիսի պարտավորություններ, ինչպիսիք են պայմանագրային և կոնդիկցիոն պարտավորությունները): Հետևաբար, ՌԴ Քաղ. օր.

<sup>1</sup> Տե՛ս Խոխլովա Գ., Նշված աշխատությունը, էջ 79: Նման փորձ Գ.Վ.Խոխլովայից առաջ կատարել են բազմաթիվ հեղինակներ: Նշված կարծիքն է մեջ բերվում այն պատճառով, որ հիմնավորումը աչքի է ընկնում օրիգինալությամբ և արվում է կատարված օրենսդրական փոփոխությունների պարագայում:

գլուխ 25-ը (ՀՀ Քաղ. օր. 26-ը), ենթակա է կիրառման վնաս պատճառելուց բխող պարտավորությունների նկատմամբ, այսինքն, վնասը հատուցելու «պարտականությունների» չկատարման համար անձը պետք է պատասխանատվություն կրի ՌԴ Քաղ. օր. 25 գլխի նորմերի համաձայն<sup>1</sup>:

Ինչպես վնաս պատճառելու համար պատասխանատվությանը քաղաքացիական օրենսգրքում տրվող ձևակերպումները, այնպես էլ դրա ցանկացած մեկնաբանման հիման վրա արտահայտված այն կարծիքները, որոնք պատասխանատվությունը համարում են պարտավորություն, մեզ համար ընդունելի չեն: Պարտավորությունները և պատասխանատվությունը միմյանցից էապես տարբերվող ինքնուրույն կատեգորիաներ են: Վնաս պատճառելուց բխող պատասխանատվությունը քաղաքացիաիրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է (արտապայմանագրային պատասխանատվություն), որը կիրառվում է տուժողի հետ պարտավորական հարաբերությունների մեջ չգտնվող անձի գործողությամբ (իրավախախտմամբ) տուժողի կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը փոխհատուցելու նպատակով: Քաղաքացիաիրավական այդ հարաբերության հիմք է ոչ թե պայմանագիրը, այլ իրավախախտման փաստը<sup>2</sup>:

Տվյալ դեպքում առկա է ոչ թե պարտավորական հարաբերություն, այլ իրավախախտում, և Քաղ. օր-ը սանկցիա է նախատեսում օրենքին հակասող գործողություններ կատարելու համար: Օրենքին հակառակ առաջացող հասարակական հարաբերությունները պարտավորություն համարել չի կարելի: Այդ դեպքում սանկցիան ուղղված է ոչ թե գոյություն ունեցող հակաօրինական «պարտավորության» պաշտպանությանը, այլ նրա դեմ:

Հետևաբար, այս դեպքում պարտավորական հարաբերությունների մասին խոսելն արդարացված չէ: Ծճարտությունն այն է, որ վնաս պատճառելու դեպքում, դատարանի վճռով (երբեմն նաև առանց դատարանի վճռի) առաջանում է որոշակի հարաբերություն՝ տուժողի կողմից, դատարանի վճռում մատնանշված չափով վնասի փոխհատուցման գումարն ստանալու, վնաս պատճառողի կողմից այդ գումարը վճարելու պարտականություն: Դրանք իրավախախտման փաստի ու-

<sup>1</sup> Տե՛ս Խոխլովա Գ., նշված աշխատությունը, էջ 802:

<sup>2</sup> Տե՛ս Խոխլովա Գ., նշված աշխատությունը, էջ 321:

ժով առաջացող միմյանցից անկախ հարաբերություններ են: Այդ հարաբերությունները ոչ մի պարագայում պարտավորական հարաբերություններ չի կարելի համարել, քանի որ ինչպես մինչև վնաս պատճառելը, այնպես էլ վնաս հատուցելու ժամանակ հնարավոր է, որ տուժողը և վնաս պատճառողը իրար հետ ընդհանրապես առնչություն չունենան, և վճռի կատարումն իրականացնի հարկադիր կատարողը:

Բացի դրանից, որևէ պարտավորական հարաբերության մասին խոսք լինել չի կարող, եթե՝

1. տուժողը չպահանջի իրավախախտման հետևանքով իրեն պատճառված վնասները.

2. վնասը պատճառված լինի օրենքով նախատեսված օրինաչափ գործողություններով (Քաղ. օր. 1058 հոդվ. կետ 3)

3. վնասը պատճառված լինի անհրաժեշտ պաշտպանության (Քաղ. օր. 1060 հոդվ.), երբեմն էլ ծայրահեղ անհրաժեշտության (Քաղ. օր 1061 հոդվ.) վիճակում.

4. վնասը պատճառված լինի տուժողի մեղքով.

5. դատարանը մերժի վնասի հատուցման պահանջը:

Վերը շարադրվածը բերում է այն համոզման, որ օրենսդրական ակտերում յուրաքանչյուր տերմին, հասկացություն, կատեգորիա պետք է օգտագործվի իրական նշանակությամբ, քանի որ միայն այդ ճանապարհով է հնարավոր ապահովել դրանց ճիշտ կիրառությունը, բացառել այն անպտուղ տեսական վեճերը, որոնք ծագում են օրենսդրական ձևակերպումների խայտաբղետության պատճառով:

### **1.5. Գույքային պապասխանավորության տեսակները**

1. Հին հռոմեացի իրավաբան Գայը պարտավորությունները բաժանում է երկու կատեգորիայի՝ *obligationes quasi ex contractu* և *obligationes quasi ex delicto* և դրան էլ համապատասխան գույքային պատասխանատվության երկու տեսակ՝ պայմանագրային և դեյլիկտային:

Այդ դասակարգումը փոխանցվեց նաև VI դարում կայսր Հուստինիանոսի կարգադրությամբ ստեղծված իրավունքի տարրական դասագիրք՝ *institutiones*, իսկ այդտեղից փոխառվեց նոր յուրիսպրոդենցիայի կողմից<sup>1</sup>: Հռոմեական իրավունքը ռեցեպցիայի ենթարկված Եվրոպան, հավատարիմ մնալով հռոմեական ավանդույթներին, տարանջատեց և

<sup>1</sup> Տե՛ս Խոխլովա Գ., նշված աշխատությունը, էջ 321:

առանձնակի կարգավորեց գույքային պատասխանատվության երկու տեսակ՝ պայմանագրային և արտապայմանագրային (դեյլիկտային)<sup>1</sup>:

Այդ պատասխանատվությունները կոչված են բավարարելու տարբեր սոցիալ-տնտեսական պահանջմունքներ: Դեյլիկտային պատասխանատվության հիմնական խնդիրը *status guo*-ի պաշտպանությունն է: Այն կոչված է ապահովելու և ամրապնդելու իրերի գոյություն ունեցող վիճակը, գույքային և անձնական բարիքները: Պայմանագրային պատասխանատվության խնդիրը ոչ թե *status guo* պահպանությունն է, այլ բարիքների և ծառայությունների փոխանցման գործընթացի անխաթար իրականացման ապահովումը: Բացի դրանից, եթե դեյլիկտային պատասխանատվությունը կոչված է ապահովելու գույքային հարաբերությունների անշահավետ փոփոխությունների կանխումը, ապա պայմանագրային պատասխանատվությունը կոչված է ապահովելու այդպիսի փոփոխությունների իրականացումը: Հետևաբար, քաղաքացիաիրավական պատասխանատվությունը պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության բաժանումը ունի գործնական կարևոր նշանակություն<sup>2</sup>:

Իրավագետները, հիմք ընդունելով օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները, պայմանագրային են համարում պայմանագրերից բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Քաղ. օր. «Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար» 26 գլխում նախատեսված կանոններին համապատասխան կիրառվող պատասխանատվությունը<sup>3</sup>:

<sup>1</sup> Անգլո-ամերիկյան իրավունքում պայմանագրային պատասխանատվություն, որպես պատասխանատվության ընդհանուր տեսության մասնավոր դրսևորում, երբեք չի ձևավորվել, քանի որ բացակայում էր պարտավորության ընդհանուր հասկացությունը:

<sup>2</sup> Նշված բաժանումը, այսպես կոչված՝ ունիտար քաղաքացիաիրավական պատասխանատվության կողմնակիցների կողմից, բազմիցս ենթարկվել է քննադատության: Սակայն այդ բաժանումը բխում է պետությունների մեծ մասում, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությունից: Իհարկե, կան նաև պետություններ, որոնց օրենսդրությամբ մեծան դասակարգում նախատեսված չէ, օրինակ, Ավստրիան:

<sup>3</sup> Տե՛ս օրինակ, *Áðáæááíñéíá íðááí. Ó+ááíéé. Á 2-ó ó. Í íá ðáá. Á.Á. Ñóóáííáá. Õ.1. Í ., 1993, էջ 173: Áðáæááíñéíá íðááí. Ó+ááíéé. Í íá ðáá. Բ.Է. Օíéñóíáí, Á.Í. Ñáðáááá. ×áñóó 1. 1996, էջ 485: Ááðáííáá Á.Á. Í íýðéá, áéáú è óíðí à áðáæááíñéí-íðááíáí é íðááðñóááííñòé. Á éí.: Áéðóáéúí úá íðíáéáí ú áðáæááíñéíáí íðááá. Áúíóñé óáñóí é. 2003, էջ 299 և այլն: Այդ կարծիքին ենթ մաս մենք (Տե՛ս Տ. Բարսեղյան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Եր., 2004, էջ 482):*

Այդ պատասխանատվությունը կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության և դիսպոզիտիվության սկզբունքների վրա հիմնված իրավահավասար սուբյեկտների կամահայտնությամբ կիրառվող գույքային պատասխանատվություն է: Դրա նպատակը ոչ թե մեղավոր կողմին պատժելն է, այլ նրա հաշվին տուժողի մոտ առաջացած կորուստները փոխհատուցելը: Այդ պատասխանատվությունն ունի երկրորդային բնույթ. կարծեք թե այն ուղեկցում է պայմանագրային պարտավորությունը և սկսում է գործել միայն պարտավորությունը խախտելու դեպքում: Եթե պարտավորությունը պատշաճ կատարվում է, պատասխանատվության հարց չի ծագում, պատասխանատվությունը հանդես չի գալիս:

Անհրաժեշտ է նկատել, որ «պայմանագրային պատասխանատվություն» տերմինն այնքան էլ ճիշտ չի արտացոլում փաստացի վիճակը, քանի որ պայմանագրային պատասխանատվության հատկանիշներ ունեն մաս վարչական ակտերից, միակողմ գործարքներից և այլ հիմքերից ծագող պարտավորությունների խախտման համար կիրառվող պատասխանատվությունները: Սակայն այդ տերմինի օգտագործումն ընդունելի է, քանի որ ընդգծում է կողմերի կամահայտնությամբ առաջացող պարտականությունների խախտման համար կիրառվելու հանգամանքը և ցույց է տալիս, որ դեպքերի մեծամասնությունում պատասխանատվությունը կիրառվում է մինչև իրավախախտումը ձևավորված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Պատասխանատվության բաժանումը պայմանագրային և արտապայմանագրային ընդունված է մաս ընդհանուր իրավունքի համակարգում: Բայց անգլո-ամերիկյան իրավունքում կիրառվող պայմանագրային պատասխանատվությունն իր առանձնահատկություններով տարբերվում է մայրցամաքային իրավունքով, բնականաբար մաս՝ վերջինիս սկզբունքներով կառուցված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքով կարգավորվող պայմանագրային պատասխանատվությունից:

Ընդհանուր իրավունքի երկրների դատարաններում դեռևս XVII դարում ձևակերպվեց «բացարձակ պատասխանատվության սկզբունքը», որի համաձայն պայմանագրերը պետք է կատարվեն ցանկացած պայմաններում: Դա նշանակում է, որ պայմանագրով պարտավորություն ստանձնած անձը չի կարող դրա կատարումից հրաժարվել կա-

տարման անհնարինությունը վկայակոչելով<sup>1</sup>: Այդ սկզբունքը տրամաբանորեն բխում է անգլիական իրավունքում պայմանագրի էության և բովանդակության ըմբռնումից: Բանն այն է, որ ընդհանուր իրավունքում պայմանագիրը պարտավորությունները հարկադիր կատարելու հիմք չի հանդիսանում<sup>2</sup>: Այն դիտարկվում է որպես պարտապանի կողմից տրվող խոստում, (երաշխիք), որով նա երաշխավորում է ոչ թե պայմանագրի ռեալ կատարումը, այլ որոշակի դրամական գումար պարտադիր ունեցվածք մուտք լինելը<sup>3</sup>:

Հարկ է նկատել, որ XIX դարի վերջում անգլիական դատարանները «բացարձակ» պատասխանատվության սկզբունքից սկսեցին կատարել բացառություններ: Մասնավորապես, պարտապաններին պատասխանատվությունից ազատում էին պայմանագրի առարկա հանդիսացող անհատապես որոշվող իրը ոչնչանալու, ծառայություններ մատուցողի մահվան կամ հիվանդության, արգելող օրենք ընդունվելու և մի շարք այլ դեպքերում: Իսկ Առաջին Համաշխարհային պատերազմից հետո պարտապաններին պատասխանատվությունից ազատում էին անգամ պարտավորությունները ծայրահեղ դժվարությունների առկայության պարագաներում չկատարելու դեպքում: Սակայն նշված բացառություններն ըստ էության չսասանեցին «բացարձակ» պատասխանատվության սկզբունքը և այն ներկայումս էլ հանդիսանում է ընդհանուր իրավունքի հիմնական սկզբունքներից մեկը:

Անգլո-ամերիկյան իրավունքում կիրառվող պայմանագրային պատասխանատվության հաջորդ առանձնահատկությունն այն է, որ ունի բացառապես փոխհատուցողական նշանակություն: Այդ պատասխանատվության փոխհատուցողական գործառույթի ուժեղացման հետևանքով պատասխանատվության տնտեսական և բարոյաէթիկական բովանդակությունը վերջնականապես դուրս է մղվել և փոխհատուցողական գործառույթին, որպես գործարարական ռիսկի բաշխման ե-

<sup>1</sup> Տե՛ս *Ādāæāāī nēī ā è òī ðāī āī ā ī ðāāī èāī èòāèèñòè-āñèèò āī ñóāāðñòā. Ī ., 1993, էջ 290:*

<sup>2</sup> Տե՛ս *Ōāāèāāðò Ē., Ēāòò Ō. Āāāāāī èā ā ñðāāī èòāèūī īā ī ðāāī āāāāī èā ā ñòāðā ÷āñòī īāī ī ðāāā. Ō. 2, Ī ., 1998, էջ 210:*

<sup>3</sup> Տե՛ս *Ādāæāāī nēī ā è òī ðāī āī ā ī ðāāī èāī èòāèèñòè-āñèèò āī ñóāāðñòā. Ī ., 1993, էջ 290:*

ղանակի, ցուցաբերվում է առավել մեծ ուշադրություն<sup>1</sup>: Այդ պատասխանատվության հիմնական նպատակը դրամական փոխհատուցման, այսպես կոչված՝ «դրական պայմանագրային շահի», բավարարումն է, մինչդեռ մայրցամաքային իրավունքում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում (Քաղ. օր. 411 հոդվ.), նախապատվությունը, որպես կանոն, տրվում է բնեղենով կատարմանը, և պարտապանին սկզբունքորեն միշտ կարելի է պարտադրել պատշաճ կատարում, եթե պարտատերը նման ցանկություն հայտնի<sup>2</sup>:

Իրավագետներն ընդհանուր իրավունքի համակարգում կիրառվող պատասխանատվության առանձնահատկություն են համարում նաև նոմինալ վնասների ինստիտուտի առկայությունը: Ըստ այդ ինստիտուտի, այն դեպքերում, երբ տուժող կողմը, ըստ էության ճիշտ լինելով, բարեխիղճ փորձեր է կատարել, բայց այնուհանդերձ չի կարողացել ապացուցել իր վնասների իրական չափը, նրա օգտին որոշվում է նոմինալ վնասների հատուցում<sup>3</sup>: Այդ դեպքում պարտապանին պարտադրում են վճարել պարզապես նոմինալ (սիմվոլիկ) գումար (որպես կանոն 1 դոլլար՝ ԱՄՆ-ում, 2 ֆունտ ստեռլինգ՝ Անգլիայում)<sup>4</sup>:

Անգլո-ամերիկյան դոկտրինայում տարբերում են պաշտպանության ենթակա պայմանագրային երկու տիպի շահ՝ դրական և բացասական: «Դրական պայմանագրային շահը» արտահայտվում է նրանում, որ վնասների հատուցմամբ տուժող կողմը պետք է դրվի այնպիսի վիճակում, որպիսի վիճակում կգտնվեր պայմանագիրը կատարվելու դեպքում: «Բացասական պայմանագրային շահ» ասելով՝ հասկանում են տուժողի իրավունքը՝ ստանալու իր կրած ծախսերի հատուցում, կոնտրագենտի կողմից պարտականությունները կատարված լինելու հաշվարկից ելնելով<sup>5</sup>: Օրենսդրությամբ և գործնականում, որպես կանոն, ապահովվում է դրական պայմանագրային շահի պաշտպանությունը, որն էլ կանխորոշում է վնասների հատուցման նպատակը: Այդ մասին է վկայում մասնավորապես, ԱՄՆ-ի Առևտրական միասնականացված օ-

<sup>1</sup> Տե՛ս *Ētī ādīā Ā.Ñ. Ī dāādñōāāīīīñōū ā ēīīī ād-āñēīī īáīđīōā. Ī ., 1991, 35-36 էջեր:*

<sup>2</sup> Տե՛ս *Āđāēāāīñēīā è òīđāīāīā īđāāī ēāīēdāēēñōē-āñēēō āīñōāāđñōā. Ī ., 1993, էջ 279:*

<sup>3</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 526:

<sup>4</sup> Տե՛ս *Āđāēāāīñēīā è òīđāīāīā īđāāī ēāīēdāēēñōē-āñēēō āīñōāāđñōā. Ī ., 1993, էջ 283:*

<sup>5</sup> Տե՛ս Կոմարով Ա.Ս., նշված աշխատությունը, էջ 108:

րենսգրքի 1-106 հոդվածը: Ըստ այդ հոդվածի, իրավական պաշտպանության միջոցները պետք է կիրառվեն ազատորեն, այնպես, որ տուժող կողմի համար ապահովվի այն վիճակը, որում նա կգտնվեր, եթե մյուս կողմը լրիվ կատարեր իր պարտավորությունը, բայց ո՛չ անուղղակի, ո՛չ տուգանային տուժանքը չի կարող գանձվել, եթե այլ բան նախատեսված չէ ԱՄՆ օրենքներում կամ իրավունքի այլ նորմում<sup>1</sup>:

Անգլո-ամերիկյան իրավունքին հատուկ է նաև վնասների հատուցման չափի որոշման և ապացուցման նկատմամբ բավականին կարծր մոտեցում, որն ըստ էության սահմանափակում է այդ սանկցիայի կիրառման հնարավորությունները: Ըստ ընդհանուր կարգի, պարտավորության խախտման համար գանձվող վնասների չափը որոշելիս պարտատերը պետք է ղեկավարվի անխուսափելիության, անմիջականության (կանխատեսելիության) և արժանահավատության պահանջներով: Այսինքն, անկախ նրանից՝ տուժող կողմը վնասները նվազեցնող որևէ գործողություն կատարել է, թե՛ ոչ, նա իրավունք ունի պահանջել միայն այն վնասը, որը չէր կարող կանխել բնականոն գործողություններով:

**Արդապայմանագրային** է համարվում այն պատասխանատվությունը, որը կիրառվում է միմյանց հետ պարտավորական հարաբերությունների մեջ չգտնվող անձանց կողմից իրավախախտումներ թույլ տալու դեպքում: Այսինքն, մինչև իրավախախտման պահն այդ անձանց միջև որևէ հարաբերություն, այդ թվում նաև պարտավորական հարաբերություն, գոյություն չունի: Նրանց միջև իրավահարաբերություն, ընդ որում՝ իրավախախտման հետևանքները վերացնելուն ուղղված իրավահարաբերություն, առաջանում է միայն իրավախախտման փաստի ուժով: Օրենսդրությունը և դրան էլ համապատասխան իրավագետների ճնշող մեծամասնությունը այդ հարաբերությունները համարում են վնաս պատճառելուց բխող պարտավորություն: Սակայն, մեր համոզմամբ, այս դեպքում պարտավորական հարաբերության մասին խոսելն արդարացված չէ: Ճիշտ է, վնաս պատճառելու հետևանքով տուժողի և վնաս պատճառողի միջև առաջանում է որոշակի հարաբերություն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով հատուցելու պարտականություն, բայց այդ պարտականությունը բխում է ոչ թե պարտավորությունից, այլ իրավախախտման համար կիրառվող պատասխանատ-

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 527:

վորությունից: Այդ պատճառով էլ մենք գտնում ենք, որ Քաղ. օր. 60-րդ գլուխը պետք է վերնագրվեր ոչ թե «Վնաս պատճառելու հետևանքով ծագող պարտավորություններ», այլ «Պատասխանատվությունը վնաս պատճառելու համար»:

Բնական է, որ պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունները միմյանցից տարբերվում են ոչ միայն իրենց ծագման հիմքերով, այլև իրավական ռեժիմներով: Պայմանագրային պատասխանատվության դեպքում իրավախախտողի մեղքը ենթադրվում է «մեղավորության կանխավարկած», մինչդեռ արտապայմանագրային պատասխանատվության դեպքում վնաս պատճառողի մեղավորությունը, որպես կանոն, պետք է ապացուցի տուժողը<sup>1</sup> (բացառությամբ առավել վտանգի աղբյուրով վնաս պատճառելու դեպքերի):

Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունների միջև գոյություն ունեն նաև այլ տարբերություններ: Մասնավորապես, իրավագիտության մեջ ընդունված է պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունների հիմնական տարբերությունը համարել այն, որ պայմանագրային պատասխանատվությունն առաջանում է ոչ միայն օրենքով, այլև պայմանագրով նախատեսված դեպքերում, իսկ արտապայմանագրային պատասխանատվությունն առաջանում է միայն օրենքով նախատեսված դեպքերում: Ընդ որում, որոշ հեղինակներ, նման տեսակետը հիմնավորելիս, վկայակոչում են այն հանգամանքը, որ պայմանագրի կողմերն իրավունք ունեն ոչ միայն պատասխանատվությունը բարձրացնել օրենքով նախատեսվածի համեմատությամբ, այլև սահմանել պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման օրենքով չսահմանված պատասխանատվության միջոցներ<sup>2</sup>:

Նման հիմնավորումը, մեր կարծիքով, անընդունելի է այն պարզ պատճառով, որ օրենսդրորեն կողմերին իրավունք է վերապահվում փոփոխել վնասների հատուցման (Քաղ. օր. հոդվ. 17) և տուժանքի չափերը (Քաղ. օր. հոդվ. 371, 372), ինչպես նաև տուժանք սահմանել այն պարտականությունների չկատարման համար, որոնց համար այդպիսիք սահմանված չեն: Այսինքն, պայմանագրի կողմերն իրավունք ունեն

<sup>1</sup> Տե՛ս *Εὐεῖαῖ ἰ .Ἐ. Ἐϕάδαι ἰ ὐά ὀδῶῦ. ἰ .*, 1997, էջ 285:

<sup>2</sup> Տե՛ս *Բրազիլիայի Մ.Ի.*, Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 504: *Ἄδᾶᾶᾶἰ ἰ ἰῆἰᾶ ἰ ὀδᾶἰ. Ὄ=ᾶἰ ἠῠ. ἰ ἰ ᾶᾶ. Թ.Ἐ. Ὀἰ ἠῠἰ ᾶἰ, Ἀ.ἰ .ἰ.Ἄδᾶᾶᾶᾶ. ×ᾶἠῠἰ 1. ἰ .*, 1998, էջ 556:

փոփոխել ոչ թե պատասխանատվությունը, այլ պատասխանատվության միջոց հանդիսացող գույքային սանկցիաների չափերը:

Պայմանագրային պատասխանատվության դեպքում կիրառվող սանկցիաները կարող են սահմանվել և փոփոխվել ինչպես օրենքով, այնպես էլ՝ պայմանագրով, մինչդեռ արտապայմանագրային պատասխանատվության դեպքում հնարավոր է կիրառել միայն օրենքով նախատեսված սանկցիաներ:

Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունների տարբերությունները հիմնավորելիս իրավագետների մի մասը վկայակոչում է Օ.Ս. Իոֆֆեի կարծիքն այն մասին, որ արտապայմանագրային պատասխանատվությունն իրականացվում է կողմերի միջև հատուկ՝ վնասի հատուցման պարտավորություն սահմանելու միջոցով, իսկ պայմանագրային պատասխանատվությունը հատուկ պարտավորություն չի առաջացնում, այլ իրականացվում է կողմերի միջև գոյություն ունեցող պարտավորության մեջ նոր պարտականություն մտցնելու միջոցով<sup>1</sup>: Օրինակ, Ա.Ի. Չագորովկոն, վնաս պատճառելու հետևանքով առաջացող իրավահարաբերությունները համարելով պաշտպանողական բնույթի պարտավորություններ, գտնում է, որ դրանք պարտավորության այնպիսի տեսակ են, որոնք ուղղված են խախտված իրավունքների վերականգնմանը<sup>2</sup>: Վնաս պատճառելուց բխող իրավահարաբերությունները պարտավորական է համարում նաև պրոֆ. Գ.Ղարախանյանը, գտնելով, որ «Վնաս պատճառելու հետևանքով ծագող պարտավորություններն արտապայմանագրային պարտավորություններ են, որոնք առաջանում են տուժողի բացարձակ բնույթ կրող գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների խախտման հետևանքով և կոչված են ապահովելու այդ իրավունքների առավել լրիվ վերականգնումը վնաս պատճառողի հաշվին կամ այն անձանց հաշվին, որոնց վրա օրենքով դրված է վնասը հատուցելու պարտականություն»<sup>3</sup>:

Նման մոտեցումը, մանավանդ Քաղ. օր-ում կատարված փոփոխություններից հետո, չի արտացոլում իրերի իրական վիճակը: Բանն

<sup>1</sup> Տե՛ս *Բրազիլիայի Մ.Ի.*, Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 504:

<sup>2</sup> Տե՛ս *Շᾶἰ ὀῠῠἰ Ἀ.Ἐ. ἰ ᾶϕᾶὀᾶῠἠὀᾶἰ ἰ ἰ ᾶἰ ᾶἰ ᾶἰ ἠῠ ᾶἰᾶᾶ. Ὄᾶὀῠἠᾶ, 1996, 8-9 էջեր:*

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, Եր., 2001, էջ 601:



այն է, որ գործող օրենսդրությամբ, պարտավորությունը չկատարելու դեպքում վնասը հատուցելը և տուժանք վճարելը պարտապահին ազատում են պարտավորությունը բնեղենով կատարելու պարտականությունից: Հետևաբար, պարտականությունը չկատարելու դեպքում կողմերի միջև գոյություն ունեցող պարտավորությունը դադարում է և գոյություն չունեցող պարտավորությանը հատուկ պարտավորություն միացվել չի կարող:

Այն դեպքերում էլ, երբ պատասխանատվությունը կիրառվում է պարտականությունը ոչ պատշաճ կատարելու համար, գոյություն ունեցող պարտավորությանը նոր՝ հատուկ պարտավորություն միացնելու մասին խոսելը արդարացված չէ, քանի որ իրավախախտման համար գույքային սանկցիաների կիրառությունն առաջացնում է ոչ թե պարտավորական հարաբերություն (այդ հասկացության իրական իմաստով), այլ պատասխանատվության հարաբերություններ: Ազատ կամահայտնությամբ հարաբերությունները դադարում են՝ իրենց տեղը զիջելով հարկադրվածության հարաբերության, որը իրագործվում է ոչ թե պարտավորության կանոններով և սկզբունքներով, այլ կիրառման ուրույն մեխանիզմներով:

Ընդհանրապես, պատասխանատվության իրավահարաբերությունները պարտավորական հարաբերություններով բացատրելը, բացի բարդությամբ առաջացնելուց, որևէ չափով չի նպաստում գույքային պատասխանատվության, որպես մասնավոր հարաբերություններում կիրառվող ինքնուրույն ինստիտուտի, էության և առանձնահատկությունների պարզաբանմանը: Մեր կարծիքով, պարտավորությունների խախտման համար, ինչպես նաև դեյիկտային գործողություններով անձին կամ նրա գույքին պատճառված վնասի համար կիրառվող պատասխանատվությունն ինքնուրույն հարաբերություն է և պարտավորություններով բացատրվել չի կարող:

Ելնելով վերը շարադրվածից և գույքային պատասխանատվության նշված տեսակների բնույթից՝ գտնում ենք, որ պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունները միմյանցից սահմանազատվում են հետևյալ առանձնահատկություններով.

1. Ծագման հիմքերով. պայմանագրային պատասխանատվության ծագման հիմք է պայմանագիրը կամ կողմերի կամահայտնությամբ առաջացող այլ գործարքը, իսկ արտապայմանագրային պատասխանատվությունն առաջանում է ուրիշի անձին կամ գույքին վնաս պատ-

ճառելու կամ անհիմն հարստանալու հետևանքով:

2. Պայմանագրային պատասխանատվության ձևը և ծավալը կարող է սահմանվել, ինչպես նաև փոփոխվել թե՛ օրենքով, թե՛ կողմերի համաձայնությամբ, մինչդեռ արտապայմանագրային պատասխանատվության բոլոր կանոնները սահմանվում են միայն օրենքով:

3. Պայմանագիր կնքելիս՝ կողմերն իրավասու են սանկցիաներ նախատեսել այնպիսի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար, որոնց համար օրենքով սահմանված չեն, իսկ արտապայմանագրային պատասխանատվության սուբյեկտները նման իրավունքից չեն օգտվում:

4. Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունների կիրառման համար օտագործվում են տարբեր կանոններ: Պարտավորությունների չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ պատճառված վնասի հատուցման հարցերը կարգավորվում են պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմերով (Քաղ.օր. 408-422 հոդվ.), տվյալ պարտավորական հարաբերությունը կարգավորող նորմերով կամ պայմանագրի կանոններով: Իսկ արտապայմանագրային պատասխանատվության հարցերը կարգավորվում են քաղաքացիաիրավական պատասխանատվությունը կարգավորող ընդհանուր նորմերով և ուրիշի անձին կամ գույքին պատճառված վնասի հատուցման հատուկ նորմերով (Քաղ.օր. 1053-1091 հոդվ.):

Արտապայմանագրային պատասխանատվությունը կարող է կիրառվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և իմպերատիվ նորմերով սահմանված չափերով ու պայմաններով<sup>1</sup>: Հետևաբար, դա պատասխանատվության ավելի խիստ տեսակ է: Արտապայմանագրային պատասխանատվությունը ծագում է տուժողի անձին կամ գույքին վնաս պատճառելու հետևանքով, այն կապված չէ պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ: Այսինքն, եթե վնասը պատճառվել է պայմանագրային պարտավորության խախտման հետևանքով, ապա այն փոխհատուցվում է ոչ թե արտապայմանագրային պատասխանատվության նորմերով սահմանված կանոններով, այլ պայմանագրային պատասխանատվության

<sup>1</sup> Տե՛ս *Ādāæāi fēi ā i dāāi. Ó=āái èè. Ī óā. dāā. Ā.Ā. Nōdāi i ā. Ò. 1. Ī ., 2000, էջ 434:*

խախտման համար սահմանված կանոններով կամ կողմերի միջև կնքված պայմանագրով: Սակայն պետք է նկատի ունենալ, որ որպես ընդհանուր կանոնից բացառություն, օրենքը պահանջում է արտապայմանագրային պատասխանատվության կանոններով ղեկավարվել այն դեպքերում, երբ պայմանագրային պարտավորությունների չկատարմամբ վնաս է պատճառվել քաղաքացու կյանքին կամ առողջությանը: Օրինակ, փոխադրողի պատասխանատվությունն ուղևորի կյանքին կամ առողջության պատճառված վնասի համար, ըստ Քաղ.օր. 868 հոդվածի, որոշվում է վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների համար Քաղ. օր. 60-րդ գլխում սահմանված կանոններով, եթե փոխադրողի խստացված պատասխանատվությունն նախատեսված չէ օրենքով կամ փոխադրման պայմանագրով: Նույն կանոններով է լուծվում նաև այլ պայմանագրային պարտավորությունները կամ այլ պարտականությունները կատարելիս քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ այն դեպքերում, երբ անձը պատասխանատվության է ենթարկվում իր ստանձնած կամ օրենքով իր վրա դրված պարտականությունների խախտման համար, ապա այդպիսի պատասխանատվությունը պետք է համարել պայմանագրային և պատասխանատվության հարցերը լուծել «Պատասխանատվությունը պարտավորությունը խախտելու համար» Քաղ. օր. 26-րդ գլխի կանոններով: Իսկ եթե սուբյեկտիվ իրավունքների խախտումը չի բխում պարտավորական հարաբերություններից կամ անմիջական կապ չունի պայմանագրի կատարման գործառույթի հետ (անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնաս), ապա այդպիսի պատասխանատվությունը հանդիսանում է արտապայմանագրային և կիրառվում են «Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ» Քաղ. օր. 60-րդ գլխի կանոնները:

Ի տարբերություն նշված տեսակետի, որ մեր կարծիքով իրական վիճակի ճշմարտացի արտացոլումն է, որոշ իրավագետներ քննադատում են քաղաքացիաիրավական պատասխանատվության տարաբաժանումը պայմանագրայինի և արտապայմանագրայինի այն հիմքով, որ նման բաժանումը հիմնավորվում է միայն պայմանականորեն: Օրինակ, Ֆրանսիայի ցիվիլիստ Պոլիանիոլը իրավական պատճառներ չի տեսնում պատասխանատվությունը սկզբունքորեն պայմանագրայինի և արտապայմանագրայինի բաժանելու համար, քանի որ ըստ նրա,

պարտականության ծագման հիմքը իրավական էության համար նշանակություն չունի, և պատասխանատվության իրականացման ու ապացուցման ծանրության բաշխման տարբերություն պետք է չլինի<sup>1</sup>: Պայմանագրային և դեղիկտային պատասխանատվության միասնությունն իր արտահայտությունն է գտել նաև Ավստրիայի 1811 թ. քաղաքացիական օրենսգրքում, որտեղ ամրապնդված է ընդհանուր քաղաքացիաիրավական պատասխանատվություն<sup>2</sup>:

Իրոք, իրավական հիմքերի և պայմանների տեսանկյունից, քաղաքացիաիրավական պատասխանատվությունը միասնական է: Դրա հետ միասին մենք գտնում ենք, որ պայմանագրային և արտապայմանագրային պահանջ ներկայացնելու հարցերը լուծելիս, պետք է թույլատրվի ազատ մրցակցություն և տուժողին իրավունք վերապահվի պարտավորական հայցով, վնասը գանձելու դժվարությունների դեպքում, օգտվել արտապայմանագրային պահանջից կամ հակառակը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը նման հնարավորություն նախատեսում է: Բայց նման իրավունք վերապահում է ոչ թե բոլոր իրավահարաբերությունների մասնակիցներին, այլ այն իրավահարաբերությունների մասնակիցներին, որոնք կարգավորված են Քաղ. օր. 1077 և 1088 հոդվածներով: Ընդ որում քաղ. օր 1077 հոդվածը թույլատրում է «Վնաս պատճառելու հետևանքով ծագող պարտավորությունների» կանոնների փոխարեն կիրառել «Պատասխանատվությունը, պարտավորությունները խախտելու համար» գլխի կանոնները, եթե պատասխանատվության ավելի բարձր չափ նախատեսված է օրենքով կամ պայմանագրով, իսկ 1088 հոդվածը սպառողական նպատակներով ձեռք բերված ապրանքների մասին ոչ ճիշտ տեղեկատվություն տալու հետևանքով պատճառված վնասը թույլատրում է պահանջել ապրանքը վաճառողից կամ արտադրողից, աշխատանքը կատարողից կամ ծառայությունները մատուցողից, անկախ նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից: Այսինքն, առաջինը թույլատրում է պայմանագրային և դեղիկտային հայցերի մրցակցության պատասխանատվության ծավալի տարբերության դեպքում, իսկ երկրորդը օբյեկտի օգտագործման նպատակային նշանակությունից ելնելով:

<sup>1</sup> Տե՛ս Սմիրնովա Մ.Ա., նշված աշխատությունը, 171-172 էջեր:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 172:

Նման մոտեցումն ինքնին արդարացի է և նպաստում է տուժողների շահերի պաշտպանությանը, բայց առավել ճիշտ կլիներ պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունների մրցակցություն թույլատրել ոչ թե առանձին դեպքերում, այլ վնաս պատճառելու բոլոր դեպքերում, Քաղ. օր. 17 հոդվածում նախատեսելով, որ սուբյեկտը իր անձին կամ գույքին պատճառված վնասը, անկախ առաջացման հիմքից, իր ընտրությամբ կարող է պահանջել ինչպես պայմանագրային պարտավորությունների խախտումից բխող հայցով, այնպես էլ արտապայմանագրային պատասխանատվության կանոններով:

Նման մոտեցումը, մեր կարծիքով, ճիշտ է այն պատճառով, որ պայմանագրային հարաբերությունների դեպքում էլ վնաս պատճառելն առաջացնում է ինքնուրույն դեյիկտային իրավահարաբերություններ: Արդյունքում պայմանագրի կողմերը մասնակցում են առանձին պահանջները պարունակող երկու հարաբերություններում<sup>1</sup>:

2. Ըստ իրավախախտում թույլ տված պարտապանների միջև պատասխանատվությունը բաշխելու եղանակի, օրենսդրորեն՝ պատասխանատվությունը լինում է **բաժնային, համապարփ և լրացուցիչ**: Եվ քանի որ պատասխանատվության այդ տեսակներն օրենսդրորեն առավել հանգամանորեն կարգավորված են, այդ պատճառով էլ վիճարկելի տեսակետներ չեն արտահայտվել:

**Բաժնային պատասխանատվությունն** անձանց բազմաթվությամբ պարտավորությունները խախտելու դեպքում կիրառվող պատասխանատվության հիմնական տեսակն է: Բաժնային պատասխանատվության դեպքում պարտավորությանը մասնակցող յուրաքանչյուր պարտապան պատասխանատու է պարտավորության իր բաժինը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Նման պատասխանատվություն չի կիրառվում միայն այն դեպքերում, երբ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված է համապարտ կամ լրացուցիչ պատասխանատվություն: Նման հետևությունը բխում է Քաղ. օր. 360 հոդվածի բովանդակությունից, որը անձանց բազմաթվությամբ պարտավորությունների կատարման համար, որպես ընդհանուր սկզբունք, նախատեսում է, որ պարտապաններից յուրաքանչյուրը պարտավոր է պարտավորությունը կատարել մյուսներին հավասար բաժնով, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից

<sup>1</sup> Տե՛ս Սմիթնոլա Մ.Ա., նշված հոդվածը, էջ 176:

կամ պարտավորության պայմաններից: Այդ նույն հոդվածից բխում է նաև, որ բաժնային պատասխանատվության դեպքում պարտապաններից յուրաքանչյուրը պատասխանատու է մյուսներին հավասար բաժիններով, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ պայմանագրի պայմաններից:

**Համապարփ պատասխանատվությունը** ծագում է, երկու դեպքում՝ առաջին, համատեղ վնաս պատճառելու դեպքում (Քաղ. օր. 1073 հոդված), երկրորդ, եթե պարտավորության համապարտությունը կամ պահանջի համիրավությունը նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես, երբ անբաժանելի է պարտավորության առարկան (Քաղ. օր. 361, կետ 1): Այդ դեպքում հայցվորն իրավունք ունի պահանջ ներկայացնել ինչպես բոլոր պարտապաններին համատեղ, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրին, ինչպես պատճառված վնասի ամբողջ ծավալով, այնպես էլ՝ մի մասով: Բացի դրանից, համապարտ պարտապաններից մեկից լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապաններից (Քաղ. օր. հոդվ. 362, մաս 2):

Ինչպես բխում է Քաղ. օր. 360, 361 հոդվածներից, համապարտ պատասխանատվությունն անձանց բազմաթվությամբ պարտավորությունների խախտման համար կիրառվող պատասխանատվության հիմնական տեսակից՝ բաժնային պատասխանատվությունից կատարվող բացառություն է: Սակայն ՀՀ Քաղ. օրենսգիրքը ոչ միայն պարունակում է համապարտ պատասխանատվություն սահմանող բավականին շատ նորմեր, այլև Քաղ. օր. 361 հոդվածը գործարարական գործունեության հետ կապված անձանց բազմաթվությամբ պարտավորությունների խախտման համար, որպես ընդհանուր սկզբունք, նախատեսում է համապարտ պատասխանատվություն: Ըստ էության, ստացվում է, որ բացառությունը գրեթե վերաձվում է ընդհանուր կանոնի<sup>1</sup>: Դա բացատրվում է նրանով, որ համապարտ պատասխանատվությունն առավել արդյունավետ է ապահովում խախտված սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը:

Համապարտ պատասխանատվությունը, ի տարբերություն բաժնայինի, պարտատիրոջ համար ապահովում է կրած վնասները փոխ-

<sup>1</sup> Տե՛ս նաև Բրազինսկի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 506:

հատուցելու ավելի լայն հնարավորություն ոչ միայն այն բանի հետևանքով, որ տուժողի առջև պատասխանատու են բոլոր պարտապանները, այլև նրանով, որ հնարավորություն է ընձեռում պահանջ ներկայացնել այն պարտապանին, ով ի վիճակի է փոխհատուցել նրա կրած վնասները: Դրա հետ միասին անհրաժեշտ է նկատել, որ օրենքը թույլ է տալիս համապարտ պատասխանատվության փոխարեն կիրառել բաժնային պատասխանատվություն: Օրինակ, Քաղ. օր. 1073 հոդվածի համաձայն՝ տուժողի դիմումի հիման վրա և հօգուտ նրա, դատարանն իրավունք ունի համատեղ վնաս պատճառած անձանց վրա պատասխանատվություն դնել մասերով՝ այդ վնասը պատճառողների մեղքի աստիճանին համապատասխանող չափերով: Մեղքի աստիճանը որոշելու անհնարինության դեպքում բաժինները ճանաչվում են հավասար:

Լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվությունը կիրառելի է այն դեպքերում, երբ պարտավորությանը մասնակցում են երկու պարտապան՝ հիմնական և լրացուցիչ: Ընդ որում, լրացուցիչ պարտապանը պարտատիրոջ հանդեպ կրում է հիմնական պարտապանի համեմատությամբ՝ լրացուցիչ պատասխանատվություն: Օրինակ, երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի չկատարելու համար: Այդ պայմանագրի օգնությամբ պարտատերն իր համար ապահովում է պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու հետևանքները դնել ոչ միայն պարտապանից, այլև որոշակի պայմաններում նաև այլ անձից՝ պահանջելու հնարավորություն<sup>1</sup>:

Լրացուցիչ պարտապանին պատասխանատվության կանչելու համար պարտատերը պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նախ պետք է պահանջ ներկայացնի հիմնական պարտապանին: Եթե հիմնական պարտապանը հրաժարվի պարտատիրոջ պահանջը բավարարելուց կամ պարտատիրոջ պահանջին չպատասխանի, ապա պահանջը կարող է ներկայացվել լրացուցիչ պատասխանատվություն կրող անձին:

Հիշյալ կանոնից բխում է, որ, ըստ գործող օրենսդրության, լրացու-

<sup>1</sup> Տե՛ս *Ááēīá Ā.Ā. Ī īđó=ēōāēūñōāī. Ī ī ūō òāī đāđē=āñēī é ēī ī ñōđōēōēē è ī āī áúāí ēý āđāēōđāæīī é ĩ đāēōēēē. Ī ., 1998, էջ 29:*

ցիչ պարտապանին պատասխանատվության կանչելու համար պարտադիր չէ, որ հիմնական պարտապանն ի վիճակի չլինի բավարարելու պարտատիրոջ պահանջը: Բավական է պարտապանի հրաժարվելը կամ պահանջն անպատասխան թողնելը: Նկատենք, որ մինչև ՀՀ գործող Քաղաքացիական օրենսգրքի ընդունումը պարտատերն իր պահանջները լրացուցիչ պատասխանատվություն կրող պարտապանին ներկայացնելու իրական հնարավորություն չուներ, քանի որ պարտատերն իր պահանջը նախ պետք է ներկայացներ հիմնական պարտապանին և միայն նրա կողմից պարտքը մարելու անկարողության դեպքում, հայց հարուցել լրացուցիչ պարտապանի դեմ: Եվ քանի որ պարտապանը, որպես ընդհանուր կանոն, պատասխանատու էր իր ամբողջ գույքով, ապա մինչև այդ գույքի վրա բռնագանձում տարածելը և այն իրացնելը պարտատերը չէր կարող պատասխանատվության կանչել լրացուցիչ պարտապանին: Ավելին, պարտատիրոջ գործողությունները սահմանափակված էին հայցային վաղեմության ժամկետով՝ (կես տարի) պարտավորությունը խախտելու պահից: Այդ ժամկետի ընթացքում իրական չէր պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը և այդ գույքն իրացնելը: Այսպիսով, լրացուցիչ պատասխանատվությունը փաստորեն վերածվում էր ֆիկցիայի<sup>1</sup>: Ի տարբերություն նախկին օրենսդրության, գործող օրենսդրությամբ վերացվել են լրացուցիչ պարտապանին պատասխանատվության ենթարկելու իրավական խոչնդոտները: Թերևս միակ բացթողումն այն է, որ օրենքում ուղղակի սահմանված չէ լրացուցիչ պատասխանատվության ծավալին վերաբերող դրույթներ: Սակայն նման բացթողումը լրացուցիչ պարտապանին պատասխանատվության ենթարկելու խոչընդոտ չէ, քանի որ վնասների լրիվ հատուցման սկզբունքի կիրառման պարագայում իշխող է այն տեսակետը, որ լրացուցիչ պարտապանը պարտավոր է հատուցել վնասները, տուժանքը, իսկ դրամական պարտավորություններով նաև դրամական միջոցների ապօրինի օգտագործման համար տոկոսները, բայց պարտավոր չէ պարտավորությունը կատարել բնեղենով: Եվ դա միանգամայն տրամաբանական է, քանի որ օբյեկտիվ պատճառներով լրացուցիչ պարտապանը միշտ չէ, որ ի վիճակի է կատարել հիմնական պարտապանի պարտավորությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Բարանովա Ե.Վ., նշված աշխատությունը, էջ 303:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 304:

Բացի դրանից, պարտատերն իրավունք չունի հիմնական պարտապահին ուղղված իր պահանջի բավարարումը պահանջել լրացուցիչ պատասխանատվություն կրող անձից, եթե այն կարող է բավարարել հիմնական պարտապահի դեմ ուղղված հակընդդեմ պահանջի հաշվանցումով (Քաղ. օր. հոդվ. 415, մաս 3):

Օրենքը, ելնելով լրացուցիչ պատասխանատվություն կրող անձի շահերից, պահանջում է, որ մինչև պարտատիրոջ կողմից ներկայացված պահանջը բավարարելը, լրացուցիչ պարտապահն այդ մասին գգուշացնի հիմնական պարտապահին, իսկ եթե իր դեմ հայց է հարուցվել, վերջինիս մասնակից դարձնի գործին: Հակառակ դեպքում հիմնական պարտապահն իրավունք ունի սուբսիդիար պատասխանատվություն կրող անձի հետադարձ պահանջի դեմ անել այնպիսի առարկություններ, որոնք նա ունեցել է պարտատիրոջ հանդեպ (Քաղ. օր. հոդվ. 415, մաս 4):

Լրացուցիչ պատասխանատվության ինստիտուտը գործում է նաև արտապայմանագրային պատասխանատվություն կիրառելիս: Սակայն, ի տարբերություն պայմանագրային պատասխանատվության, արտապայմանագրային պատասխանատվության դեպքում լրացուցիչ պատասխանատվություն կիրառվում է միայն այն դեպքում, երբ պատասխանողը չունի համապատասխան միջոցներ կամ դրանք անբավարար են պարտատիրոջ պահանջները բավարարելու համար: Օրինակ, այն դեպքերում, երբ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը վնասը հատուցելու համար չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք, վնասը լրիվ կամ պակաս մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուները, եթե չապացուցեն, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել: Այդ սկզբունքով պետք է ղեկավարվել նաև դուստր ընկերության սնանկության դեպքում հիմնական ընկերության լրացուցիչ պատասխանատվության (Քաղ. օր. Հոդվ. 75), լիակատար ընկերակցության մասնակիցների լրացուցիչ պատասխանատվության (Քաղ. օր. հոդվ 83), արտադրական կոոպերատիվի անդամների համապարտ լրացուցիչ պատասխանատվության հարցերը լուծելիս և այլ դեպքերում: Ընդհանրապես, մենք գտնում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ իրավաբանական անձի անվճարունակությունը (սնանկությունը) առաջացրել է հիմնախնդիրներ, մասնակիցները կամ այն անձինք, որոնք իրավունք ունեն իրավաբանական անձին պարտադիր ցուցումներ տալ կամ այլ ձևով ուղղորդել նրա գործունեությունը,

պետք է լրացուցիչ պատասխանատվություն կրեն պատասխանողի գույքի բացակայության կամ անբավարարության դեպքում<sup>1</sup>:

Լրացուցիչ պատասխանատվությունից անհրաժեշտ է տարբերել պարտապահի պատասխանատվությունը երրորդ անձանց գործողությունների համար: Այն դեպքում, երբ օրենքով թույլատրվող հիմքերով և կարգով պարտապահը պարտավորության կատարումը դնում է երրորդ անձի վրա (Քաղ. օր. հոդվ. 351), նա պատասխանատվություն է կրում այդ անձի կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Պարտավորությունն անմիջական կատարող երրորդ անձը պատասխանատվություն է կրում միայն օրենքով նախատեսված դեպքերում (Քաղ. օր. հոդվ. 419): Օրինակ, մատակարարը կարող է գնորդին ապրանքներ մատակարարելու պարտականությունը հանձնարարել ապրանքն արտադրողին, իսկ գնորդն ապրանքի դիմաց վճարումը՝ անմիջականորեն ապրանքը ստացողին: Ե՛վ ապրանքը արտադրողը, և՛ ապրանքը ստացողը մատակարարի և գնորդի միջև կնքված պայմանագրի մասնակիցներ չեն և, ի տարբերություն լրացուցիչ պարտապահի, պարտատիրոջ հետ քաղաքացիական իրավահարաբերությամբ կապված չեն: Այդ պատճառով պարտապահը պարտավորության չկատարումից կամ ոչ պատշաճ կատարումից բխող պահանջները կարող է ներկայացնել ոչ թե պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած երրորդ անձին, այլ իր պարտապահին:

Նման կարգը բխում է երրորդ անձանց մասնակցությամբ կատարվող պարտավորություններում պարտապահի գործունեության բնույթից և իրավասություններից: Նման պարտավորական հարաբերություններում իր պարտականության կատարումը հանձնարարելով երրորդ անձի՝ պարտապահը ստանձնում է նրա կողմից պարտավորությունը կատարելու և դրա համար պատասխանատվություն կրելու ռիսկը: Նա իրավասու է հետադարձ պահանջ ներկայացնել երրորդ անձին և նրանից գանձել այն, ինչ վերջինիս մեղքով վճարել է պարտատիրոջը:

<sup>1</sup> Նման կարգ նախատեսված է ԱՊՀ երկրների «Մոդելային քաղաքացիական օրենսգրքի» 69 և ՌԴ Քաղ. օր. 56 հոդվածներում:

## 1.6. Պարտավորության բնեղենով կատարման և պատասխանատվության փոխհարաբերակցությունը

Պարտավորական հարաբերության մեջ մտնող յուրաքանչյուր սուբյեկտ հետապնդում է որոշակի նպատակ: Եթե պարտավորության առարկան որոշակի նյութական բարիք է, ապա ձգտում է ստանալ այդ նյութական բարիքն իր պահանջմունքները բավարարող բնեղեն վիճակում: Եթե պարտավորությունը ձևավորվել է աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման նկատմամբ, պարտատերը ձգտում է ստանալ իր պահանջմունքները բավարարող արդյունք: Այդ պատճառով ցանկացած իրավական համակարգում պարտավորությունների բնեղենով կատարման նկատմամբ ցուցաբերվում է առանձնակի հոգատարություն: Մայրցամաքային իրավական համակարգի երկրներում, քանի որ իրավունքի ընդհանուր սկզբունքների մշակմանը ավելի քիչ ուշադրություն են դարձնում, քան իրավական կարգավորման գործնական հարցերին, գերադասում են ձևակերպել ոչ թե ընդհանուր սկզբունք, այլ պարտավորությունների առանձին տեսակների բնեղենով կատարում ապահովող իրավական նորմեր և դրանցից բխող դատական պրակտիկա:

Օրինակ, Ֆրանսիական քաղաքացիական օրենսգրքի 1610 հոդվածի համաձայն գնորդն իրեն ապրանքներ չմատակարարելու դեպքում կարող է պայմանագիրը չլուծել և պահանջել որպեսզի վաճառողը իրեն դարձնի իր կողմից գնված, բայց իրեն չմատակարարված ապրանքների սեփականատեր: Ճիշտ նույն ձևով պարտատերը կարող է դատարանից պահանջել, որպեսզի որոշում կայացվի պարտապանի կողմից իր վրա վերցրած պարտականությունների կատարման մասին: Ավելին, ֆրանսիական դատական պրակտիկան պարտապանի կողմից պարտավորության բնեղենով կատարումն ապահովելու համար մշակել է սանկցիաների հատուկ ինստիտուտ, այսպես կոչված՝ *astreinte* (տույժ): Պարտավորությունը բնեղենով կատարելու մասին որոշում ընդունելու դեպքում դատարանը կարող է միաժամանակ սահմանել կատարումը ուղացրած յուրաքանչյուր օրվա համար պարտատիրոջը, որ-

պես տույժ վճարվող որոշակի գումար<sup>1</sup>: Գերմանական կողմնորոշման երկրներում էլ պարտատերն իրավասու է դատարան դիմել պարտավորությունը բնեղենով կատարելու պահանջով: Սակայն պարտապանին բնեղենով կատարելուն հարկադրող որոշում դատարանը կարող է ընդունել միայն այն դեպքում, երբ պարտապանն ի վիճակի է պարտավորությունը բնեղենով կատարել: Եթե պարտապանը խախտի այդ որոշումը, ապա դատարանը կարող է պարտատիրոջ պահանջով պարտապանին պատժել պետության օգտին գանձվող դրամական տուգանքով<sup>2</sup>:

Պարտավորությունների բնեղենով կատարման սկզբունքն առավել հետևողականորեն իր ամրապնդումն է գտել Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքում (այսուհետև՝ ԳՔՕ): Ըստ ԳՔՕ 241 պարագրաֆի պարտատերը պարտապանից կարող է պահանջել ներկայացնել (հանձնել) պայմանավորվածը, որը կարող է լինել նաև գործողություններից ձեռնպահ մնալը: Ինչ վերաբերում է վնասների հատուցմանը (պատասխանատվության կիրառմանը), ապա այդ միջոցը կիրառվում է, եթե բնեղենով կատարումն անհնարին կամ անբավարար է լրիվ հատուցման համար (ԳՔՕ պ. 251): Ավելին, դրամական փոխհատուցում ստանալու ցանկություն ունեցող պարտատերը պետք է նշանակի կատարման ժամկետ և միայն այդ ժամկետն անցնելուց հետո, եթե պարտավորությունը բնեղենով չի կատարվի, կարող է պահանջել դրամական փոխհատուցում և հրաժարվել ռեալ կատարումն ընդունելուց (ԳՔՕ պ. 250, 283, 326):

Պարտավորությունների բնեղենով կատարման հարցերը համանման է կարգավորում նաև շվեյցարական իրավունքը<sup>3</sup>:

Ինչպես տեսնում ենք, մայրցամաքային իրավունքի երկրներում պարտավորությունների ռեալ կատարման սկզբունքի կիրառությունը, անկախ ձևակերպումների տարբերությունից, կասկած չի հարուցում և, ինչպես արդարացի նկատում է Գ.Ա.Կարապետովը, լռելյայն ճանաչվել և ճանաչվում է իրավունքի մայրցամաքային համակարգի բոլոր երկր-

<sup>1</sup> Տե՛ս *Öâæááðð Ë. Êáðð Õ. Áááááí èá á ñðááí èðáëüí íá ÿ ðáááí ááááí èá á ñááðá ±âñðí íáí ÿ ðááá. Õ.2. Î ., 2000, 205-206 էջեր:*

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 527:

ներում<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է ընդհանուր իրավունքի երկրներին, ապա դրանցում որպես խախտված իրավունքների պաշտպանության հիմնական միջոց, կիրառվում է դրամական փոխհատուցումը: Պարտավորությունը բնեղենով կատարելուն հարկադրելը կիրառվում է այն դեպքերում, երբ դրամական փոխհատուցմամբ պարտատիրոջ շահերը չեն բավարարվում: Սակայն այդ երկրներում էլ պայմանագրի պատշաճ կատարմանը և անձեռնմխելիությանը տրվում է առաջնակարգ նշանակություն, որից ելնելով էլ այն դեպքերում, երբ դրամական փոխհատուցումը տուժողին չի բավարարում կամ պարտավորության առարկան այնպիսի իր է, որն այլ տեղից ձեռք բերելն անհնարին է, դատարանները պարտապաններին հարկադրում են պարտավորությունը կատարել բնեղենով<sup>2</sup>: Բացի դրանից, ժամանակակից ամերիկյան օրենսդրությունում կարելի է գտնել նաև նորմեր, որոնք նախատեսում են բնեղենով կատարում (ԱՄՆ-ի Առևտրական միասնականացված օրենսգիրք, հոդվ. 2-711, կետ 2)<sup>3</sup>: Սակայն նկատի ունենալով օրենսդրության հիմնական ուղղվածությունը և դատական պրակտիկան, կարելի է ասել, որ անգլո-ամերիկյան իրավունքով պարտատիրոջը պաշտպանելու հիմնական միջոց հանդիսանում է պատճառված վնասների փոխհատուցումը, որը պարտատերը միշտ կարող է ստանալ պայմանագիրը խախտվելու դեպքում<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է միջազգային ակտերին, ապա դրանք, հիմք ունենալով պայմանագրի պարտադրության ընդհանուր սկզբունքը, պայմանագրի՝ բնեղենով կատարումը (ռեալ կատարման սկզբունք) ճանաչում են որոշակի վերապահումներով: Օրինակ, Ապրանքների միջազգային առուծախի մասին Վիեննայի 1980թ. կոնվենցիայի 46 հոդվածի համաձայն՝ «գնորդն իրավունք ունի վաճառողից պահանջել պարտավորությունների կատարում, եթե չի ձեռնարկել այդ պահանջի հետ անհամատեղելի պաշտպանության միջոցներ: Միջազգային առևտրային

պայմանագրերի սկզբունքների ՈՒՆԻԴՐՈՒԱ 7.2.2 հոդվածի համաձայն, եթե կողմը, որի պարտավորությունը դրամ վճարելը չէ, չի կատարում այն, մյուս կողմը կարող է պահանջել կատարում, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա) կատարումն անհնարին է իրավաբանորեն կամ փաստացի,

բ) կատարումը կամ համապատասխան դեպքերում հարկադիր կատարումը հանդիսանում է անբնական ծանրաբեռնող կամ բարձրարժեք,

գ) կատարում պահանջելու իրավունք ունեցող կողմը կարող է բանական կատարում ստանալ այլ աղբյուրից,

դ) կատարումը կրում է բացառապես անձնական բնույթ,

ե) կատարում պահանջելու իրավունք ունեցող կողմը այն բանից հետո, երբ իմացել կամ պարտավոր էր իմանալ չկատարման մասին, բնականոն ժամկետում կատարում չի պահանջում<sup>1</sup>:

Ընդ որում, ըստ Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքների 7.2.4. հոդվածի՝ եթե դատարանը կողմին պարտավորեցնում է պարտավորության կատարում, կարող է նաև պարտավորեցնել տուգանքի վճարում՝ դատարանի որոշումը չկատարելու համար<sup>2</sup>:

Շարադրվածը մեզ բերում է այն համոզման, որ և՛ ընդհանուր, և՛ մայրցամաքային իրավական համակարգերում, և միջազգային տնտեսական հարաբերություններում գործում է պայմանագրի պատշաճ կատարման սկզբունքը, որի շրջանակներում նախապատվությունը տրվում է պայմանագրի՝ բնեղենով կատարմանը: Բայց երկրների մի մասում (որտեղ որպես ինքնուրույն սկզբունք գործում է ռեալ կատարման սկզբունքը) պարտապանը չի կարող դրամի վճարմամբ ազատվել ռեալ կատարումից, իսկ այլ երկրներում (որտեղ այդ սկզբունքն ինքնուրույն սկզբունք չի համարվում) պարտապանը դրամի վճարմամբ կարող է ազատվել պարտավորության ռեալ կատարումից:

Հայաստանի Հանրապետությունը, չնայած Էկոնոմիկայի կառավարման բնագավառում վերջին տարիներին տեղի ունեցած փոփոխություններին, շարունակում է մնալ իրավունքի մայրցամաքային համակարգում, որին բնութագրական է պարտատիրոջը պարտավորության հարկադիր կատարում պահանջելու հնարավորության վերապա-

<sup>1</sup> Տե՛ս *Ēādāiāōīā Ā.Ā. Nīīōīīōāīēā īdēīōēīā dāāēūīīāī ēñīīēīāīēy ē īāđ āđāēāīīēī-īđāāīāīē īōāōñōāāīīīñōē. Ā ēī.: Āēōōāēūīūā īđīāēāī ū āđāēāīīēīāī īđāāā. Ī ., 2003, էջ 311.*

<sup>2</sup> Նման կանոն՝ անհատապես որոշվող իրը հանձնելու պարտականությունը չկատարելու համար նախատեսված է նաև ՀՀ քաղ. օր. 414 հոդվածում:

<sup>3</sup> Այնուհետև կօգտագործվի ԱՄՕ:

<sup>4</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի. Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 527:

<sup>1</sup> Տե՛ս *Ī dēīōēīū ī āēāōīāđīāīūō ēīī ī āđ-āñēōē āīāīāīđīā. Ī ., 2003, 191-192 էջեր:*

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 198:

հումը: Այդ պատճառով էլ օրենսդիրն այդ սկզբունքը ամրապնդել է Քաղ.օր. 14, 412, 414 և այլ հոդվածներում:

Հարկ է նշել, որ պարտավորությունների ռեալ կատարման սկզբունքը, որպես պարտավորությունների կատարման առանձին և հիմնական սկզբունքներից մեկը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունում իր ամրապնդումն է ստացել դեռևս 1923 թվականին: 1923թ. Քաղ. օր. հոդվ. 120-ով պարտատիրոջը իրավունք էր վերապահված դատարանով պահանջելու, որ անհատապես որոշվող իրը օգտագործման համար իրեն հանձնելու պարտականությունը պարտապանի կողմից չկատարելու դեպքում այդ իրը նրանից վերցվի և հանձնվի իրեն: Ինչ վերաբերում էր այն պարտավորություններին, որոնց առարկան գործողությունների կատարումն էր, սպա դրանց ռեալ կատարումն ապահովված չէր: Ինչպես նշում էր Ն.Ի.Կրասնովը, նկատի ունենալով նույն հարցը կարգավորող ՌՍՖՍՀ օրենսդրությունը, «այդ պարտավորություններով, բացի դրամական սանկցիաներ (տուժանք, վնասներ) գանձելուց, ռեալ կատարումն ապահովող այլ միջոցներ օրենսդրությունը չէր նախատեսում»<sup>1</sup>:

Պարտավորությունների ռեալ կատարման սկզբունքն իր ամրապնդումն ստացավ նաև Հայաստանի Խորհրդային Հանրապետության 1964թ. քաղաքացիական օրենսգրքում (հոդվ. 222), որն, ի տարբերություն 1923 թ. օրենսգրքի, սահմանեց, որ անհատապես որոշվող իրը պարտատիրոջ սեփականությանը, օպերատիվ կառավարմանը կամ օգտագործմանը հանձնելու պարտականությունը չկատարելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու, որ այդ իրը վերցվի պարտապանից և հանձնվի իրեն: Այսինքն, 1964 թ. Քաղ. օր. 222 հոդվածը ընդարձակեց անհատապես որոշվող իրը պահանջելու հնարավորությունները: Բացի դրանից, նույն օրենսգրքի 221 հոդվածը սահմանեց, որ պարտավորության կատարումն ուշացնելու կամ այն ոչ պատշաճ կերպով կատարելու այլ դեպքերի համար սահմանված տուժանքի (տուգանքի, տույժի) վճարումը և պարտականությունը ոչ պատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների հատուցումը պարտապանին չեն ազատում պարտավորությունը բնեղենով կատարելուց, բացի այն դեպքերից, երբ ուժը կորցրել է պլանային այն առաջադրանքը, որի

<sup>1</sup> Ств. Эдәһиәтә І. Է. Өәәүиә әһиәиәиә әиәиәиәиә иәүәәәәиә. І ., 1996, էջ 62:

վրա հիմնված է պարտականությունը սոցիալիստական կազմակերպությունների միջև: Այսինքն, 1964 թ. Քաղ օր-ը պարտավորության ռեալ կատարումը բարձրացրեց սկզբունքի մակարդակի՝ ապահովելով դրա պահպանման պարտադրությունը գրեթե բոլոր պարտավորական հարաբերություններում:

Ռեալ կատարման սկզբունքի նկատմամբ 1964 թ. Քաղ. օրի որդեգրած վերաբերմունքը պահպանեց նաև 1998 թ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը: Այդ օրենսգրքի 414՝ «Անհատապես որոշվող գույքը հանձնելու պարտականությունը չկատարելու հետևանքները» և 412 «Պատասխանատվությունը և պարտավորությունը բնեղենով կատարելը» հոդվածները ռեալ կատարման, որպես պարտավորությունների կատարման ինքնուրույն և հիմնական սկզբունքի, հարցը լուծում են ճիշտ նույն եղանակով: Այսինքն, նրա կիրառությունը պարտադիր են համարում ցանկացած պարտավորության և պարտականության կատարման ժամանակ: Միակ տարբերությունը թերևս այն է, որ գործող օրենսգիրքը, ի տարբերություն արևմտաեվրոպական օրենսդրության և 1964 թ. Քաղ. օր-ի, բնեղենով կատարման և գույքային պատասխանատվության փոխհարաբերության հարցերը լուծում է կամքի ինքնավարության սկզբունքի դիրքերից: Այսինքն, եթե նախկին օրենսդրությամբ, Արևմտյան Եվրոպայի երկրների նման, առաջնությունն անկախ իրավախախտման բնույթից (չկատարում, կամ ոչ պատշաճ կատարում) անվերապահորեն վերապահվում էր բնեղենով կատարմանը, սպա գործող օրենսգիրքը խախտված իրավունքի պաշտպանության եղանակի ընտրությունը կանխորոշում է պարտավորության խախտման բնույթով: Քաղ. օր. 412 հոդվածը ուղղակի սահմանում է, որ պարտավորությունը չկատարելու դեպքում վնասները հատուցելը, տուժանք վճարելը պարտապանին ազատում են պարտավորությունը բնեղենով կատարելուց, իսկ պարտավորությունը ոչ պատշաճ կատարելու դեպքում տուժանքը վճարելը և վնասները հատուցելը պարտապանին չի ազատում պարտավորությունը բնեղենով կատարելուց, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (ինչպես

<sup>1</sup> Ств. Аәдеиәә А.А. Иийәә, әәәи ә өиди и әдәәәиәиәиәиә иәәәиәиәиәиәиәиә. А еи.: Аәдәәиәиә иәиәиәиәиә иәдәәәиәиәиә иәдәә. Аүиәиә өәиәиә е. І ., 2003, էջ 292:



նան Ռ-Գ քաղ. օր.-ը) ապահովում է սուբյեկտիվ իրավունքների իրականացման եղանակների ընտրության առավել լայն հնարավորություն, պարտատիրոջն իրավունք վերապահելով ընտրություն կատարել ռեալ կատարման և պատասխանատվության կիրառման միջոցների միջև, ինչպես նաև կողմերին հնարավորություն ընձեռելով համաձայնություն կայացնել պարտավորությունների ռեալ կատարման և չկատարելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու մասին: Նման մոտեցումը, մեր խորին համոզմամբ, բխում է շուկայական հարաբերություններ կանոնակարգող մասնավոր իրավունքի բնույթից և հիմնարար սկզբունքներից, առավել առաջադեմ և ազատական է, քան ընդհանուր իրավունքի երկրներում կիրառվող «դրական պայմանագրային շահի» բավարարման սկզբունքը:

ՀՀ քաղ. օր.-ի ձևակերպումները այն դեպքերում, երբ պարտավորության ռեալ կատարումը կողմերից մեկի համար ունի կենսական նշանակություն հնարավորություն են տալիս, պայմանագրով նախատեսել և ռեալ կատարում, և վնասների փոխհատուցում: Օրինակ, «Նոյան Տապան» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել տնտեսական դատարան՝ խնդրելով «Արարատսերվիս» ՍՊԸ-ին պարտավորեցնել բնեղենով կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները և փոխհատուցել այդ պարտավորությունների չկատարման հետևանքով պատճառված վնասները: Ըստ պայմանագրի՝ «Նոյան-Տապան» հեռուստածրագրի համատեղ ստեղծման նպատակով պատասխանողը պարտավորվել էր համատեղ գործունեության համար տրամադրել եթեր, իսկ «Նոյան Տապան» ՍՊԸ-ն պարտավորվել էր ներդնել իր հեռուստատեսային սարքավորումները, հեռուստատեսային տարածքը, մասնագետներին, լրատվական հոսքերը, տեսաարխիվները և այլ միջոցներ: Պայմանագիրը կնքվել էր երեք տարի ժամկետով և կարող էր լուծվել յուրաքանչյուր կողմի ցանկությամբ՝ մյուս կողմին վեց ամիս առաջ տեղյակ պահելու պայմանով: 2001 թ. սեպտեմբերի 14-ին «Արարատսերվիս» ՍՊԸ-ի «Լոտոս» հեռուստաընկերությունը դիմել է «Նոյան Տապան» ՍՊԸ-ին սեփական արտադրանքը եթերից հանելու և պայմանագրում էական փոփոխություններ կատարելու պահանջով: Պահանջվող անհիմն փոփոխությունների կատարումից «Նոյան Տապան» ՍՊԸ-ի հրաժարվելուց հետո «Արարատսերվիս» ՍՊԸ-ի «Լոտոս» հեռուստաընկերությունն անջատել էր հեռուստատեսային աշտարակում գտնվող հաղորդակը՝ հայցվորին զրկելով հեռուստածրագր-

րերը հեռարձակելու հնարավորությունից:

Դատարանն, ապացուցված համարելով, որ պայմանագրի դադարեցումը չի կատարվել պայմանագրով սահմանված կարգին համաձայն, որ պայմանագրի ապօրինի դադարեցման հետևանքով հայցվորը կրել է նյութական վնասներ, վճռել է.

«Արարատսերվիս» ՍՊԸ-ից, ի օգուտ «Նոյան Տապան»-ի, բռնագանձել ինչպես պայմանագիրը միակողմանի լուծելու հետևանքով պատճառված վնասը, այնպես էլ պարտավորեցնել նրան անհապաղ վերականգնել «Նոյան Տապան» հեռուստածրագրի հեռարձակումը և կատարել կողմերի միջև կնքված պայմանագրով ստանձնած մյուս պարտավորությունները<sup>1</sup>:

Նման վճիռը բխում է կողմերի միջև կնքված պայմանագրի, պահանջներից, արդարացի է և հիմնավորված: Այն կոչված է ապահովելու շուկայական հարաբերության մասնակիցների իրավունքներն ու շահերը, քանի որ եթե կիրառվեր «կան վնասներ, կան բնեղենով կատարում» սկզբունքը, էականորեն կտուժեին «Նոյան Տապան» ՍՊԸ-ի շահերը:

Վերը մատնանշված փաստարկները և բերված օրինակը ցույց են տալիս, որ ժամանակավրեպ են այն իրավագետների կարծիքները, որոնք գտնում են, որ էկոնոմիկայի և քաղաքացիական հասարակության զարգացման ներկա էտապում ժամանակն է հրաժարվել ռեալ կատարման սկզբունքից, ծայրահեղ դեպքում՝ այդ սկզբունքը որպես ընդհանուր կանոն կիրառելուց և ծագող բոլոր պրոբլեմները լուծել, ինչպես ընդհանուր իրավունքի երկրներում է՝ վնասը փոխհատուցելով<sup>2</sup>:

Նման կարծիքն ընդունելի չէ նախ այն պատճառով, որ սահմանափակում է բնեղենով կատարման և վնասների հատուցման միջև իրավագոր անձի ընտրության իրավունքը:

Երկրորդ, այն պատճառով, որ վնասների հաշվարկման և ապացուցման գոյություն ունեցող բարդությունների պայմաններում պարտատերերը շատ դեպքերում կզրկվեն իրենց շահերն արդյունավետ պաշտպանելու հնարավորությունից, իսկ իրավախախտողները կմնան

<sup>1</sup> Տե՛ս Քաղաքացիական գործ թիվ Ս-452, 2002 թ. Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, Եր., 2002, 337-340 էջեր:

<sup>2</sup> Տե՛ս Բարանովա Ե.Վ., նշված հոդվածը, էջ 293:

«անպատիժ»<sup>1</sup>:

Երրորդ, այն պատճառով, որ քաղաքացիական իրավունքում բավականին մեծ թիվ են կազմում ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման այնպիսի հարաբերությունները, որոնցում պարտավորությունների ռեալ կատարումն ունի կենսական նշանակություն, և ոչ մի փոխհատուցում ռեալ կատարմանը փոխարինել չի կարող:

Վերջապես այն պատճառով, որ իրավունքի միջազգային իրավական զարգացման միտումներն ուղղված են ռեալ կատարման սկզբունքի դերի բարձրացման և նրա կիրառման օպտիմալ նախապայմանների ձևակերպմանը<sup>2</sup>:

Մասնավորապես, այդ սկզբունքը թեկուզ և ընդհանուր ձևակերպումների համատեքստում, ամրապնդվել է նաև միջազգային մասնավոր իրավական հարաբերություններ կարգավորող Վիեննայի կոնվենցիայում, ՌԻՆԻԳՐՈՒՄ սկզբունքներում: Ընդ որում, ինչպես արձանագրված է ՌԻՆԻԳՐՈՒՄ սկզբունքների 7.2.2. հոդվածի պաշտոնական մեկնաբանություններում՝ «հետևելով Վիեննայի կոնվենցիային (հոդվ. 46)՝ այդ հոդվածը ճանաչում է բնեղենով (ռեալ) կատարման սկզբունքը որոշակի վերապահումներով»<sup>3</sup>:

Ռեալ կատարման սկզբունքի համաձայն, պարտավորությունը համարվում է կատարված, երբ պարտապանը պարտավորության կատարման առարկան հանձնում է պարտատիրոջը՝ բնեղենով: Պարտավորությունը բնեղենով կատարելու փոխարեն դրամական փոխհատուցում տալ, որպես կանոն, չի թույլատրվում, քանի որ դա ըստ էության, նշանակում է պարտավորության կատարումից միակողմ հրաժարվել, որը թույլատրվում է միայն օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում: Բացի դրանից, ըստ Քաղ. օր. 412 հոդվածի տուժանքը վճարելը և վնասները հատուցելը պարտապանին չեն ազատում պարտավորությունը բնեղենով կատարելուց, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Այսինքն, ռեալ կատարման սկզբունքի տակ առաջին հերթին հասկացվում է պայմանագրային պայմանների պարտադրության այն բարձրագույն աստիճանը, որը պարտատիրոջը

հնարավորություն է տալիս, ըստ ընդհանուր կանոնի, պարտապանին հարկադրել կատարելու իր ստանձնած պարտավորությունը բնեղենով, զրկելով վերջինիս սեփական հայեցողությամբ պայմանագրի կատարումից միակողմ հրաժարվելու և պարտատիրոջը կատարման սուռուզատ՝ դրամական փոխհատուցում տրամադրելու իրավունքից<sup>1</sup>: Այսպիսով, ռեալ կատարման սկզբունքը ցույց է տալիս, որ պարտավորության առարկան պարտապանը կամայականորեն չի կարող փոխել դրամով, այն անփոփոխ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտատերը չի համաձայնվի պայմանագիրը լուծելու և կատարման առարկայի փոխարեն դրամական սուռուզատը ստանալու հետ, կամ պարտավորության առարկան չի գանձի դատարանով, որի համար, ըստ ընդհանուր կանոնի, նա ունի համապատասխան իրավունքներ<sup>2</sup>:

Այդ սկզբունքը կարևոր նշանակություն է ձեռք բերում հատկապես երկկողմանի այն պարտավորական հարաբերությունների դեպքում, որոնցում պարտավորության մասնակիցներից մեկի կողմից գործողությունների կատարումը կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալը կարող է իրականացվել միայն պարտավորության մյուս մասնակցի կողմից իր ստանձնած պարտականությունները կատարելու դեպքում: Այդպիսի դեպքերում մյուս կողմից կատարում ստանալու միակ եղանակը, եթե նա չի ցանկանում կամովին կատարել, հանդիսանում է հարկադիր կատարումը:

Մեր կարծիքով, պարտավորության ռեալ կատարման սկզբունքից երբևէ հրաժարվել չի կարելի, այդ սկզբունքն ամրագրում է պայմանագրային պայմանների պարտադրության առավելագույն աստիճանը, որը պարտատիրոջն իրավունք է վերապահում, որպես ընդհանուր կանոն, հարկադրել պարտապանին բնեղենով կատարել իր ստանձնած պարտավորությունը վերջինիս զրկելով սեփական հայեցողությամբ պայմանագրից հրաժարվելու և պարտատիրոջը դրամական փոխհատուցում տրամադրելու իրավունքից: Այս դիրքերից ելնելով՝ անհրաժեշտ է արձանագրել, որ գործող Քաղ. օր-ը բնեղենով կատարման և վնասների փոխհատուցման կիրառության ընտրության հարցում ցուցաբերել է ճիշտ և հավասարակշռված մոտեցում:

Մեր կարծիքով, օրենսդիրը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ

<sup>1</sup> Տե՛ս *Ēādāi ādī ā Ā.Ā. Nīīōīī ōāīēā īđēīōēī ū ēñīīēīāī ēy ē ī āđ īđāāđñōāīīīñōē. Ā ēī.: Āēōōāēūī ūā īđīāēāī ū āđāēāīñēīāī īđāāā. Āūīōñē ōāñōīē. Ī ., 2003, էջ 329:*

<sup>2</sup> *Ī đēīōēī ū ī āēāōīāđīāī ūō ēīī ī āđ-āñēēō āīāīāīđīā. Ī ., 2003, հո. 7.2.2, 7.2.3.*

<sup>3</sup> Տե՛ս *Ī đēīōēī ū ī āēāōīāđīāī ūō ēīī ī āđ-āñēēō āīāīāīđīā. Ī ., 2003, էջ 192:*

<sup>1</sup> Տե՛ս Կարապետով Ա.Գ., նշված աշխատությունը, էջ 313:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

պարտավորությունը բնեղենով կատարելուն հարկադրելը, սանկցիա լինելով հանդերձ, պատասխանատվության միջոց չէ, և նրա վրա պատասխանատվության կանոնները տարածել չի կարելի<sup>1</sup>: Պարտավորությունը բնեղենով կատարելուն հարկադրելը պարտատիրոջ համար իրավախախտման հետևանքով առաջացող նոր սուբյեկտիվ իրավունք չէ, իսկ պարտապանի համար որևէ լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի առաջացնում: Եթե իրավախախտման հետևանքները սահմանափակվեին միայն բնեղենով կատարմամբ, դա հավասարազոր կլիներ անպատասխանատվության, քանի որ իրավախախտողը, ինչպես մինչև իրավախախտումը, այնպես էլ դրանից հետո, կկրեր նույն պատասխանատվությունը՝ կատարել իր վրա վերցրած պարտավորությունը<sup>2</sup>: Քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներն այլ սանկցիաներից տարբերվում են նաև նրանով, որ իրավախախտման համար սանկցիա հանդիսանալու հետ միաժամանակ դրանք նաև պարտատիրոջ և պարտապանի գույքային ոլորտի վրա ճնշում գործադրելու պարտականություն ունեցող մարմնի հարաբերությունները կարգավորող դիսպոզիցիա են<sup>3</sup>: Պատասխանատվությունն, ի տարբերություն պարտավորությունը բնեղենով կատարելուն հարկադրելուց, ունի ոչ միայն մասնավոր, այլև հանրային բնույթ և միշտ ապահովված է պետական հարկադրանքով: Պարտավորության բնեղենով կատարումը և քաղաքացիաիրավական պատասխանատվությունը կարգավորվում են տարբեր կանոններով: Քանի դեռ գոյություն ունի պարտավորության ռեալ կատարման հնարավորություն, պատասխանատվություն կիրառվել չի կարող: Եվ հակառակը պատասխանատվության կիրառությունը բացառում է պարտավորության ռեալ կատարումը<sup>4</sup>: Այդ պատճառով անհրաժեշտ է հստակ սահմանազատել պատապանի այն պարտականությունները, որոնք հանդիսանում են պայմանագրի բնորոշ հատկանիշ, այն պարտականություններից, որոնք ծագում են որպես պայմանագրի խախտման հետևանք: Առաջինը, ինչպես նշում էր

<sup>1</sup> Երբեմն իրավագետները, քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակ են համարում նաև խախտված պարտավորության հարկադիր կատարումը: Տե՛ս *Éaéñò Ì.Ý. Ñáíéòèè á ñíááðñéíí íðááá. Ì ., 1962*, էջ 27, *Áðáðóñí Ñ.Í. Ð ðeáè-áñeáý í ðááðñóááí í íñóü è çáeí í í ñóü. Ì ., 1976*, էջ 69:

<sup>2</sup> Տե՛ս *Ëí ÕÕá Ì.Ñ. Ì áýçáðáeüñóááí í í á í ðááí. Ì ., 1975*, էջ 97:

<sup>3</sup> Տե՛ս Խոխլովա Վ.Ս., նշված աշխատությունը, էջ 77:

<sup>4</sup> Ըստ Քաղ. օր. 412 հոդվածի՝ պարտավորությունը չկատարելու դեպքում վնասներ հատուցելը և տուժանք վճարելը ազատում են պատասխանատվությունից, իսկ ոչ պատշաճ կատարելը չի ազատում պատասխանատվությունից:

Օ.Ս. Իոֆֆեն, անմիջականորեն բխում է պարտավորությունից և հանդիսանում է ստանձնած պարտավորության կատարման պարտականություն<sup>1</sup>: Ռեալ կատարումը շարունակում է քաղաքացիաիրավական պարտականություն մնալ նաև խախտվելուց հետո: Ընդ որում, պարտատիրոջ ռեալ կատարում ստանալու իրավունքն ապահովվում է բնեղենով կատարում պահանջելու մասին հայցի հարուցմամբ: Հայց, որով պարտատերը ոչինչ ավելին չի պահանջում նրանից, ինչը ստանալու իրավունք ուներ, իսկ պարտապանն էլ ոչինչ ավելին չի կատարում, ինչ պարտավոր էր կատարել պայմանագրով<sup>2</sup>:

Հետևաբար, պարտավորությունը բնեղենով կատարելու պահանջի վրա չի կարելի տարածել բնեղենով չկատարելու համար կիրառվող պատասխանատվության կանոնները: Պարտավորությունը բնեղենով կատարելուն հարկադրելը, ըստ Քաղ.օր 14 հոդվածի, քաղաքացիական իրավունքների պաշտպանության ինքնուրույն եղանակ է, որը կիրառվում է պարտապանին ռեալ կատարման հարկադրելու նպատակով:

Քաղ. օր. 412 հոդվածը կանխորոշում է պարտավորությունը բնեղենով կատարելու և վնասների հատուցման փոխհարաբերությունը՝ սահմանելով, որ պարտավորությունը ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտապանը չի ազատվում պարտավորությունը բնեղենով կատարելուց, իսկ պարտավորությունը չկատարելու դեպքում, որպես կանոն, վնասները հատուցելը և տուժանքը վճարելը պարտապանին ազատում են պարտավորությունը բնեղենով կատարելուց: Այսինքն, հոդվածը, ընդգծելով բնեղենով կատարման առաջնայնությունը, պատատիրոջն իրավունք է վերապահում բնեղենով կատարում պահանջելու իրավունքից հրաժարվել միայն մի դեպքում, երբ պարտավորությունը չի կատարվել, այն էլ այն պարագայում, երբ այդ իրավունքը սահմանափակված չէ օրենքով կամ պայմանագրով<sup>3</sup>: Հետևաբար պատասխանատվության և բնեղենով կատարման փոխհարաբերության հարցը լուծելիս օրենսդիրն առաջնությունը վերապահում է բնեղենով (ռեալ) կատարմանը: Սակայն, ի տարբերություն նախկին օրենսդրության (1964թ. Քաղ. օր. հոդվ. 221), ըստ որի՝ ռեալ կատարման սկզբունքն ուներ բա-

<sup>1</sup> Տե՛ս *Ëí ÕÕá Ì.Ñ. Ì áýçáðáeüñóááí í í á í ðááí. Ì ., 1975*, էջ 97:

<sup>2</sup> Տե՛ս Կարապետով Ա.Գ. նշված աշխատությունը, 314-315 էջեր:

<sup>3</sup> Օրինակ՝ վաճառողի կողմից մանրածախ առուժախի պայմանագրով պարտավորությունը չկատարելու դեպքում վնասներ հատուցելը և տուժանք վճարելը վաճառողին չեն ազատում պարտավորությունը բնեղենով կատարելու պարտականությունից (Քաղ.օր հոդվ. 520):



կարող են իրավախախտողի կողմից կամովին վերացվել՝ առանց դատական կամ այլ մարմինների միջամտության<sup>1</sup>: Բայց դրանից չի բխում, որ իրավախախտողն իրավասու է նախորդ իրավախախտման հետևանքները վերացնել՝ նոր իրավախախտման (պայմանագրի կատարումից անհիմն հրաժարվելու) միջոցով:

Բացի դրանից պարտապանի կողմից սեփական նախաձեռնությամբ վնասները հատուցելը կամ տուժանքը վճարելը պարտատիրոջ կողմից պարտավորություն բնեղենով կատարում չպահանջելու հիմք չի համարվում: Օրենքը թե՛ բնեղենով կատարում պահանջելու իրավունքը, թե՛ բնեղենով չկատարելու համար պատասխանատվության ենթարկելու իրավունքը վերապահել է պարտատիրոջը:

Բնական է, որ այն դեպքերում, երբ պարտատիրոջ համար կարևոր նշանակություն ունի բնեղենով կատարումը, ապա նա կհատուցի բնեղենով կատարմանը պարտադրելու հայց: Միայն այն դեպքում, երբ պարտավորության բնեղենով կատարումը կորցնի իր նշանակությունը կամ դառնա անհնարին, նա կարող է պահանջել վնասի հատուցում կամ տուժանքի վճարում: Օրինակ, «Արոսա քոմունիքեյշնս» ՍՊԸ և «ԱրմենՏել» ՀՉ ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրով «ԱրմենՏել» ՀՉ ՓԲԸ-ն պարտավորվել էր մատուցել հեռահաղորդակցության ծառայություններ՝ X թվով հեռախոսահամարներով: Խախտելով պայմանագրով ստանձնած պարտավորությունները, «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, առանց ընկերությանը տեղյակ պահելու, անջատել էր այդ հեռախոսահամարները, անհնարին դարձնելով «Արոսա քոմունիքեյշնս» ՍՊԸ-ի կողմից տվյալների փոխանցման ծառայությունների իրականացումը: Այդ կապակցությամբ «Արոսա քոմունիքեյշնս» ՍՊԸ-ն դատարանից խնդրում էր պարտավորեցնել «ԱրմենՏել» ՀՉ ՓԲԸ-ին կատարելու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունները:

Չնայած պատասխանողի այն առարկություններին, որ հայցվորը, խախտելով պայմանագրի 3.2.4 կետը, օգտվել է «ԱրմենՏել» ՀՉ ՓԲԸ-ի բացառիկ իրավունքը հանդիսացող հաղորդակցության ծառայություններից, ժամանակին վճարումներ չկատարելու հետևանքով խախտել է նաև պայմանագրի 4.2 կետի պահանջները, դատարանը հայցը բավարարել է, «ԱրմենՏել» ՀՉ ՓԲԸ-ին պարտավորեցնելով մատուցել հեռահաղորդակցության ծառայություններ, իր վճիռը հիմնավորելով Քաղ.

<sup>1</sup> Տե՛ս ԷՒՕԺԱ Ի .Ն. ԷՇձձձՐ Ի ըձ ձձձձ. Ծ.1. ՈՒՅՁ, էջ 197:

օր. 347 հոդվածով: Ըստ այդ հոդվածի՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պահանջների և պայմանների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան: Չնայած այն բանին, որ դատարանը կայացրած վճիռն հիմքում չի դրել Քաղ. օր. 412 հոդվածը, այդուհանդերձ կայացրել է օրինական և արդարացի վճիռ՝ պարտավորեցնելով ռեալ կատարել ստանձնած պարտավորությունը<sup>1</sup>: Ինքնին հասկանալի է, որ վճիռն առարկա պարտավորության բնույթն այնպիսին էր, որ վնասների հատուցման պահանջ ներկայացվելու դեպքում կամ խախտման հետևանքով առաջացած վնասների հատուցմամբ պայմանագիրը դադարելու դեպքում «Արոսա քոմունիքեյշնս» ՍՊԸ-ն կզրկվեր իր գործունեությունը բնականոն իրականացնելու հնարավորությունից: Այդ պատճառով, մեզ թվում է, որ ճիշտ չեն այն հեղինակները, որոնք գտնում են, որ պարտավորությունների պատշաճ կատարման նկատմամբ քաղաքացիական օրենսդրության մոտեցումը տառապում է բարեխիղճ կողմին իր խախտված իրավունքների պաշտպանության համար նույնական հնարավորություններ տրամադրելու անբավարար ունիվերսալությամբ՝ պարտատիրոջը զրկելով պաշտպանության առավել արդյունավետ միջոցներ կիրառելու հնարավորությունից այն հիմքով, որ պարտապանը ընդհանրապես պարտավորությունը չի կատարել<sup>2</sup>: Ինչպես արդեն նշել ենք, եթե պարտատերը շահագրգռված է կատարմամբ, ապա նա հնարավորություն ունի բնեղենով կատարում պարտադրելու միջոցով ապահովել պարտավորության կատարումը:

Բոլոր դեպքերում բնեղենով կատարում պահանջելու կամ տուժանք գանձելու, վնասներ պահանջելու իրավունքը պատկանում է պարտատիրոջը: Պարտապանը չի կարող, առանց պարտատիրոջ համաձայնության, տուժանք վճարելով կամ վնասները հատուցելով, ազատվել հիմնական պարտավորության կատարումից: Աշխարհի հիմնական իրավական համակարգերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ որպես ընդհանուր կանոն, տու-

<sup>1</sup> Տե՛ս Քաղաքացիական գործ Տ-688, 2002թ. Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, Եր., 2002, 358-360 էջեր:

<sup>2</sup> Տե՛ս Կարապետով Ա.Գ., նշված աշխատությունը, էջ 329:

ժանքի մասին պայմանը այլընտրանքային պարտավորություն չի առաջացնում, այսինքն՝ պարտապանը չի կարող տուժանքի վճարմամբ կամայականորեն իրեն ազատել հիմնական պարտավորությունից<sup>1</sup>: Ինքնին հասկանալի է, որ վնասների փոխհատուցման պարագայում ընդհանրապես այլընտրանքային պարտավորության մասին խոսք չի կարող, քանի որ վնասների հատուցումը, որպես պատասխանատվության ընդհանուր միջոց, նախատեսվում է օրենքով և կիրառվում է՝ անկախ պարտապանի ցանկությունից և համաձայնությունից:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա Քաղ. օր. 11 հոդվածի 1-ին մասը ուղղակի սահմանում է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը իրականացնում են սեփական հայեցողությամբ, իսկ 2-րդ կետը նախատեսում է, որ քաղաքացիների և իրավաբանական անձանց հրաժարվելն իրենց իրավունքներն իրականացնելուց չի հանգեցնում այդ իրավունքների դադարման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հետևաբար, օրենսդրությունից ուղղակի բխում է, որ պարտապանը, առանց պարտատիրոջ պահանջի և համաձայնության, չի կարող տուժանք վճարելու կամ վնասները փոխհատուցելու միջոցով ինքն իրեն ազատել պարտականության կատարումից: Նման բան տեղի ունենալ չի կարող նաև այն պատճառով, որ կխախտվեն պարտավորության կատարումից միակողմ հրաժարվելու մասին Քաղ. օր. 348 հոդվածով սահմանված կանոնները: Այդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունների կատարումից միակողմ հրաժարվել և դրա պայմանները միակողմ փոփոխել չի թույլատրվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ եթե կողմերը գործարարությամբ զբաղվող սուբյեկտներ են, ապա պայմանագրով նախատեսված դեպքերի, եթե այլ բան չի բխում օրենքից կամ պարտավորության էությունից:

Պարտապանի ցանկությամբ՝ պայմանագրի դադարեցումը, թեկուզև տուժանք վճարելու և վնասները կամովին փոխհատուցելու պարագայում, կխաթարի տնտեսական կայունությունը և կհանդիսանա պայմանագրի կատարումից միակողմ հրաժարվելու արգելքի կոպիտ խախտում, քանի որ կողմերից մեկի նախաձեռնությամբ պարտավորությունը դադարեցնել թույլատրվում է միայն օրենքով կամ պայմանագրի կողմերից մեկի պահանջով կարող է լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում: Այսինքն՝ մատնանշված նորմը ուղղակի արգելում է պայմանագրի կողմերից մեկի ցանկությամբ (առավել ևս պարտապանի միակողմանի ցանկությամբ) պայմանագիրը դադարեցնելը կամ, այլ խոսքով ասած, չկատարելը:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 340:

րությունը դադարեցնել թույլատրվում է միայն օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում (Քաղ. օր. հոդվ. 423, մաս 2):

Իսկ Քաղ.օր. 466 հոդվածը նախատեսում է, որ պայմանագիրը կողմերից մեկի պահանջով կարող է լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում: Այսինքն՝ մատնանշված նորմը ուղղակի արգելում է պայմանագրի կողմերից մեկի ցանկությամբ (առավել ևս պարտապանի միակողմանի ցանկությամբ) պայմանագիրը դադարեցնելը կամ, այլ խոսքով ասած, չկատարելը:

Անժխտելի է, որ պարտապանին, արգելելով իրավախախտման հետևանքով պատճառված վնասները (տուժանքը) կամովին վճարել, դնում ենք անշահավետ դրության մեջ: Ծիշտ են այն հեղինակները, որոնք գտնում են, որ մինչև պարտատիրոջ կողմից վնասները կամ տուժանքը պահանջելը կամ մինչև վճիռը կայացնելը դրանց չափը կարող է մեծանալ<sup>1</sup>: Բայց անվիճելի է նաև այն, որ պարտավորություն ստանձնած պարտապանը պարտավոր է ձեռնարկել իրենից կախված բոլոր միջոցները պարտավորությունը բնեղենով պատշաճ կատարելու համար: Միայն նա կարող է գիտենալ՝ պարտավորությունը ժամանակին և պատշաճ կկատարի<sup>2</sup>, թե՞ ոչ: Բնական է, որ պարտավորության կատարման անհաղթահարելի խոչընդոտներ առաջանալու դեպքում նա ոչ թե պետք է սպասի մինչև կատարման ժամկետի վրա հասնելը, այլ պետք է միջոցներ ձեռնարկի պարտավորությունը դադարեցնելու համար (Քաղ. օր. 432 հոդվ.): Եթե պարտապանը միջոցներ ձեռնարկելու փոխարեն սպասել է մինչև կատարման ժամկետի լրանալը, ակնկալելով, որ վնասների հատուցմամբ կամ տուժանքը վճարելով կազատվի պարտավորության կատարումից, ուրեմն պետք է կրի նաև իր պատվության հետևանքները:

Բնական է, որ այն դեպքերում, երբ պարտավորությունը ժամանակին չի կատարվում, պարտատիրոջ վարքագիծը կախված է այն տեղեկատվությունից, որը իրեն հայտնի է: Եթե պարտատերը տեղյակ չէ պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու ցանկության մասին, նա կսպասի մինչև կատարման ժամկետի լրանալը, որից հետո

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս Բարանովա Ե.Վ., նշված հոդվածը, էջ 28:

կընդունի իր որոշումը: Եթե կետանցման պարագայում, պարտավորության բնեղենով կատարումը պարտատիրոջ համար չի կորցրել իր նշանակությունը, նա կձգտի ստանալ բնեղենով կատարում:

Այդ պատճառով մենք պնդում ենք, որ իրավախախտմամբ իր պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած պարտապանը իրավունք չունի առանց պարտատիրոջ համաձայնության տուժանք վճարել կամ վնասներ փոխհատուցել: Առանց պարտատիրոջ համաձայնության, սեփական նախաձեռնությամբ, վնասների կամ տուժանքի գումարը պարտատիրոջը փոխանցելիս պարտապանն իր վրա ռիսկ է վերցնում, քանի որ պարտատերն է որոշելու ընդունել այդ գումարները, թե հրաժարվել դրանցից: Գումարներն ընդունելով, պարտատերը փաստորեն համաձայնվում է պայմանագիրը դադարեցնելու մասին պարտապանի առաջարկության հետ, և կարելի է համարել, որ պայմանագիրը դադարում է կողմերի համաձայնությամբ, կամ ավելի ճիշտ այն բանի հետևանքով, որ կատարումը պարտատիրոջ համար կորցրել է իր հետաքրքրությունը, և նա հրաժարվում է կատարում պահանջելուց (Քաղ. օր. հոդվ. 421): Հետևաբար պարտապանի կողմից վճարված գումարները, անկախ նրանից՝ դրանք պարտատիրոջը պատճառված վնասների գումար են, թե՞ տուժանքի գումար, կհամարվի պայմանագրի դադարման հրաժարագին, (Քաղ.օր.հոդվ.425), քանի որ միայն որպես հրաժարագին սահմանված տուժանքի կամովին վճարումն է դադարեցնում պարտավորությունը(Քաղ. օր. հոդվ. 412, կետ 3):

Ինչ վերաբերում է պարտատիրոջ կողմից պարտապանի կամովին վճարած վնասների կամ տուժանքի գումարը չընդունելուն, ապա դա նրա անկապտելի իրավունքն է (Քաղ.օր.հոդվ.11), և այդ իրավունքը նա կարող է իրականացնել փոխանցված գումարները հետ վերադարձնելու և պարտավորությունը բնեղենով կատարելու պահանջով հայց հարուցելու միջոցով:

Պարտավորության ռեալ կատարման և պատասխանատվության փոխկապակցվածության օրենսդրական կարգավորվածության մասին խոսելիս, թերևս հարկ է մատնանշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը տառապում է մեկ այլ թերությամբ, այն է՝ չի սահմանում ներգործության միջոցներ այն դեպքերի համար, երբ պարտավորությունը բնեղենով կատարելու մասին վճիռն իրավախախտողը չի կատարում: Ինչպես սկզբում նշեցինք, մայրցամաքային որոշ երկրներում նման վերա-

բերմունքը կանխելու համար դատարաններին իրավունք է վերապահվում սահմանել դրամական տուգանք: Նույնպիսի իրավունք դատարաններին վերապահում է նաև Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքների 7.2.4 հոդվածը, ըստ որի, եթե դատարանը կողմին պարտավորեցնում է պարտավորությունը կատարել, կարող է նաև նրան պարտավորեցնել տուգանք վճարել իր որոշումը չկատարելու դեպքում: Ընդ որում, ըստ այդ հոդվածի՝ տուգանքի վճարումը պարտատիրոջը չի զրկում վնասները պահանջելու իրավունքից: Ցավոք, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը նման նորմ չի պարունակում: Մեր կարծիքով, օրենսգիրքն անհրաժեշտ է լրացնել նման նորմով՝ սահմանելով, որ բնեղենով կատարելու մասին որոշումը չկատարելու համար սահմանված տուժանքը բռնագանձվում է հօգուտ պետական բյուջե:

## ԳԼՈՒԽ 2.

### ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 2.1. Իրավախախտումների համար կիրառվող սանկցիաների հասկացությունը և գործառույթները

1. Պատասխանատվության զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ իրավահարաբերությունների փոփոխությունները անվերապահորեն առաջացնում են դրանց անխաթար իրականացումն ապահովող սանկցիաների և ապա դրանց կիրառման կառուցակարգերի փոփոխություն: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ գույքային պատասխանատվությունը ի սկզբանե ձևավորվեց որպես փրկագին գանձելու իրավունք: Ընդ որում, մինչև դրանք համընդհանուր վճարման միջոց ճանաչելը, փրկագինը գանձվում էր տարբեր առարկաներով և ապրանքներով: Դրանք համընդհանուր վճարման միջոց ճանաչվելուց հետո փրկագինը սկսեց վճարվել նաև դրամով: Ապրանքադրամական հարաբերությունների արդյունք հանդիսացավ այն, որ փրկագինը, որպես պատժամիջոց, ժամանակակից, տերմինաբանությամբ արտահայտված, սկսեց կիրառվել միայն որպես հանցագործությունների նյութական հետևանքները վերացնելու միջոց, իսկ գույքային հարաբերություններում այն փոխարինվեց տուժողի կրած վնասների հատուցմամբ: Մի քանի հարյուրամյակներ վնասների փոխհատուցումը գույքային և անձնական ոչ գույքային սուբյեկտիվ իրավունքների խախտման համար մասնավոր հարաբերություններում կիրառվող միակ ներգործության միջոցն էր: Սակայն տնտեսավարման փոփոխությունները, տնտեսական կապերի ընդլայնումն առաջադրում էին առավել օպերատիվ միջոցների կիրառման պահանջ և վնասների կողքին, ինչ-որ տեղ նաև՝ դրա փոխարեն, գույքային իրավունքների խախտման համար իրավական ակտերում, որպես սանկցիա, նախատեսվում է տուգանք գանձելու իրավունք<sup>1</sup>: Ընդ որում, ի սկզբանե տուգանքի դիֆերենցիացիա կամ այլ

տեսակների կիրառություն չէր նախատեսվում: Բայց պայմանագրային կապերի զարգացումը, պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեմ (հատկապես կետանցումների դեմ) պայքարի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, օրենսդրությանը առաջադրեց նոր պահանջներ և կայուն դրամական գումարով հաշվարկվող տուգանքի կողքին կիրառման իրավունք նվաճեցին տոկոսներով հաշվարկվող տուժանքը և տույժը: Բացի դրանից, որոշ երկրների օրենսդրությամբ, XX դարի վերջում, թույլատրվեց պայմանագրում նախատեսել «համաձայնեցված փոխհատուցում», որը իրավախախտման դեպքում գանձվում է առանց վնասների չափը պարզելու<sup>1</sup>: Այդ նույն ժամանակահատվածում փոփոխություն կրեցին նաև տուժանքի հաշվարկման եղանակները՝ եթե ի սկզբանե տուգանքի հաշվարկը որևէ կապ չուներ պայմանագրի գումարի, խախտման բնույթի և այլ հանգամանքների հետ, ապա տուժանքի և տույժի կիրառմամբ սանկցիաների հաշվարկումը սկսվեց կատարվել և կայուն դրամական գումարով, և չկատարված կամ ոչ պատշաճ կատարված պարտավորության գումարը հիմք ընդունելով, իսկ XX դարի վերջին, որոշ երկրներում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում) տուժանքի հաշվարկման միավոր ճանաչվեց նաև նվազագույն աշխատավարձը, և որոշ իրավախախտումների համար տուժանքը սկսվեց հաշվարկվել նվազագույն աշխատավարձի պատիկներով:

Ինչպես տեսնում ենք, պատմական զարգացման ընթացքում իրավախախտի նկատմամբ կիրառվող ներգործության միջոցները, պարբերաբար ենթարկվելով փոփոխությունների, ձեռք բերեցին կարևոր նշանակություն:

Անհրաժեշտություն առաջացավ պարզել ներգործության միջոցների էությունը, նրանց կապը ներգործության մյուս միջոցների հետ, պարզել գույքային սանկցիաների կիրառման առանձնահատկություններն ու բնույթը:

Այդ հարցերի պարզաբանումը իր վրա բեռեց և իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի մասնագետների ուշադրութ-

<sup>1</sup> Տե՛ս *Ädäæäáíñēīá çàēíííáäöäēüñöäí Ēçðäēēý. ÑĪ á, 2003*, էջ 298: ԽՍՀՄ Մի-նիստրների խորհրդի կողմից 1988 թ. հաստատված «Արտադրատնտեսական արտադրանքի և ժողովրդական սպառման ապրանքների մատակարարման կանոնադրությունները» իրավունք վերապահեցին պայմանագրերում նախատեսել ոչ պատշաճ կատարման համար կայուն գումարով վնասների փոխհատուցում:

<sup>1</sup> Օրինակ Մխիթար Գոշի դատաստանագիրքը նախատեսում է և՛ ահապատիժ, և՛ մարմնական պատիժներ (անդամահատում), և՛ փրկագին, և՛ վնասների հատուցում, և՛ տուգանք (Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, Եր., 2001թ. Գլուխ ԻԷ, Գլուխ ԻԸ, Գլուխ ԿԲ, Գլուխ Զ, Գլուխ ԶԵ և այլն):





կերպման համար կարող է հիմք ընդունվել այն ռացիոնալը, որը տեղ է գտել սանկցիայի, որպես իրավանորմի կառուցվածքային տարրի, մեր կարծիքով ընդհանուր ճանաչում գտած, բնորոշման մեջ: Ըստ այդ բնորոշման **սանկցիա է համարվում իրավանորմի այն տարրը, որում նախատեսված են նյութական, ֆիզիկական, հոգեկան և այլ բնույթի անցանկալի հետևանքներ, որոնք վրա են հասնում իրավական նորմի դիսպոզիցիան խախտող կողմի համար՝**

Այս բնորոշման մեջ ռացիոնալն այն է, որ սանկցիա են համարվում նյութական, ֆիզիկական, հոգեկան և այլ բնույթի անցանկալի հետևանքները: Այսինքն ներգործության ցանկացած միջոց: Բայց ընդունելի չէ, որ այդ միջոցները պետք է նախատեսվեն միայն իրավանորմում և վրա հասնեն միայն իրավանորմի դիսպոզիցիան խախտող կողմի համար: Ինչպես նշեցինք, սանկցիաներ նախատեսվում են ոչ միայն իրավական նորմերով այլև պայմանագրերով, գործարար շրջանառության սովորույթներով: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է սանկցիա համարել իրավահարաբերության մասնակիցների համար պարտադիր վարքագծի խախտման համար ցանկացած նորմատիվ ակտով և պայմանագրով նախատեսված նյութական, ֆիզիկական, հոգեկան և այլ բնույթի անցանկալի հետևանքները, եթե դրանց կիրառությունը չի հակասում օրենքին:

Իրավունքի տեսությունում սանկցիայի մասն հասկացության ձևակերպումը, մեր կարծիքով, վերջ կդնի սանկցիա հասկացության տարաբնույթ մեկնաբանություններին, սանկցիա և պատասխանատվություն հասկացությունների շուրջ ծավալված վեճին, հնարավորություն կընձեռնի իրավունքի յուրաքանչյուր ճյուղի առանձնահատկությունների հաշվառմամբ բնութագրել այդ ճյուղում կիրառվող սանկցիաների էությունը և տարբերիչ գծերը: Մասնավորապես, քաղաքացիաիրավական սանկցիայի էության բացահայտման համար հարկավոր է հիմք ընդունել . 1) քաղաքացիաիրավական սանկցիաներ նախատեսվում են ոչ միայն օրենքով, այլև պայմանագրով. 2) քաղաքացիաիրավական սանկցիաները ֆիզիկական, հոգեկան, անձնական բնույթի անցանկալի հետևանքներ չեն առաջացնում. 3) այդ սանկցիաները կիրառվում են այլ անձանց սուբյեկտիվ իրավունքները և շահերը խախտելու դեպքում:

<sup>1</sup> Տե՛ս Օա՛իճե՛յ ա՛ի ո՞ոաճոճոճա՛ է իճաճա՛. Էճոճ՛ էաճեճե՛. Ի՛ իճաճա՛. Ի՛ .Է՛. Ի՛ ձոճիճա՛ է Ա.Ա՛. Ի՛ ձե՛յե՛ի. Ի՛ .: Էճա՛-ա՛ի "Ք՛ ձե՛նո՛ւ", 1997, էջ 321:

4) սանկցիայի կիրառման իրավական հիմք է հանդիսանում անձի կողմից նրա վրա օրենքով կամ պայմանագրով դրված պարտականության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը: Նշված առանձնահատկությունների հաշվառմամբ, մեզ թվում է, որ.

**Քաղաքացիաիրավական սանկցիա ստելով ճիշտ կլիներ հասկանալ իրավահարաբերության մասնակիցների կողմից իրավունքների և պարտականությունների խախտման համար պարտադիր կանոններով նախատեսված նյութական և կազմակերպա-տնտեսական ներգործության միջոցները:**

Նման հասկացությունը, մեր կարծիքով, բխում է մեր կողմից տրված սանկցիայի ընդհանուր հասկացությունից, քաղաքացիական իրավահարաբերությունների բնութագրական առանձնահատկությունից, ճիշտ է բնութագրում քաղաքացիաիրավական սանկցիայի էությունն ու նշանակությունը:

Հանրահայտ է, որ քաղաքացիական իրավահարաբերություններն իրավունքների և պարտականությունների այնպիսի միասնություն են, որոնցում իրավունքների իրականացումը սերտորեն միահյուսված է պարտականությունների կատարման հետ: Այդ պատճառով, երբ իրավունքի նորմը կամ պայմանագիրը պարունակում են այս կամ այն գործողությունները կատարելու կամ դրանցից ձեռնպահ մնալու ցուցում, այդ պահանջների կատարումը հանդիսանում է այն անձանց իրավական պարտականությունը, որոնց հասցեագրված է: Այդ պարտականության չկատարման համար սահմանված հետևանքները բոլոր դեպքերում պետք է համարվեն սանկցիաներ, այն պարզ պատճառով, որ դրանք կիրառվում են խախտված իրավունքների վերականգնումն ապահովելու (Քաղ. օր. հոդվ. 3), մինչև իրավունքների խախտումը եղած դրությունը վերականգնելու, իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելու (Քաղ. օր. հոդվ. 14), իրավախախտման հետևանքով առաջացած կորուստները փոխհատուցելու նպատակով:

Օրենսդրությամբ քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար սահմանված՝ նշված հիմնադրույթները, ինչպես նաև այն հանգամանքը, որ պաշտպանության եղանակների մեջ առանձնահատուկ մատնանշված են վնասների հատուցումը և տուժանք գանձելը, հիմք են տալիս եզրակացնել, որ քաղաքացիաիրավական սանկցիաներ են հանդիսանում արտադրանքում (աշխատանքներում) տեղ գտած թե-

րությունների վերացում պահանջելը, ապրանքի փոխարինում պահանջելը, կատարված աշխատանքի դիմաց վճարելուց հրաժարվելը, ապրանքն ընդունելուց հրաժարվելը, հաշվարկի ակրեդիտիվային ձևի փոխադրելը, վնասների հատուցում պահանջելը, տուժանք (տուգանք, տույժ) գանձելը, դրամական միջոցների անօրինական օգտագործման համար տոկոսներ գանձելը և այլն:

Նշված սանկցիաների մի մասն ունի տնտեսա-կազմակերպական բնույթ, դրանց կիրառման հնարավորությունը բխում է պայմանագրային պարտավորության բովանդակությունից, մյուսները (տուժանք, վնասներ և այլն), որպես ներգործության լրացուցիչ միջոցներ, կարող են կիրառվել միայն օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում:

Չնայած քաղաքացիաիրավական սանկցիաների միջև գոյություն ունեցող տարբերություններին, դրանք կազմում են միասնական համակարգ, կոչված են ապահովել քաղաքացիաիրավական պարտականությունների ռեալ և պատշաճ կատարումը, կիրառվում են իրավախախտման դեպքում իրավախախտողի գործողությունները (անգործությունը) կանխելու և խախտված իրավունքները վերականգնելու նպատակով: Քաղաքացիաիրավական սանկցիաները ապրիորի չեն սահմանվում: Դրանք, բացի ընդհանուր սոցիալ-տնտեսական գործոններից, իրենց վրա կրում են նաև տնտեսավարման բնագավառում իրականացվող քաղաքականության և իրավախախտումների տարածվածության դեմ պայքարի ազդեցությունը: Այդ պատճառով օրենսդիրը հասարակության զարգացման յուրաքանչյուր փուլում, ելնելով իրավախախտումների բնույթից, վտանգավորությունից և տարածվածությունից, իրավական սանկցիաների համակարգում կատարում է համապատասխան փոփոխություններ, սահմանում է նոր սանկցիաներ, ավելացնում կամ պակասեցնում է սանկցիաների չափերը, փոփոխում է դրանց կիրառման կարգը:

Օրինակ, անցումը շուկայական հարաբերություններին նշանավորվեց ոչ միայն տնտեսավարման հարաբերությունների արմատական փոփոխությամբ, այլև գույքային հարաբերություններում կիրառվող սանկցիաների համակարգի վերանայմամբ: Ի տարբերություն խորհրդային օրենսդրության, որը գրեթե յուրաքանչյուր խախտման համար նախատեսում էր սանկցիաներ, նոր օրենսդրությունը հրաժարվեց նման կարգավորումից, առանձնահատուկ սանկցիաների սահմանման իրա-

վունքը վերապահելով իրավահարաբերությունների մասնակիցներին: Իհարկե, նման մոտեցումն ունի որոշակի առավելություններ, բայց, ինչպես ցույց տվեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կիրառման պրակտիկան, սանկցիաների սահմանման նկատմամբ նման «ժողովրդավարական» մոտեցումը ժամանակավրեպ էր և անբավարար՝ անցումային ժամանակաշրջանում իրավախախտումների (հատկապես՝ տնտեսական իրավախախտումների) դեմ արդյունավետ պայքարելու և դրանց դինամիկան էականորեն փոփոխելու համար: Մեր կարծիքով, դա է նաև այն պատճառներից մեկը, որ վերջին տարիներին նկատվում է ոչ միայն տնտեսական իրավախախտումների ընդհանուր քանակի, այլև այնպիսի իրավախախտումների աճ, որոնք վնաս են պատճառում թե՛ իրավահարաբերության մասնակիցներին, թե՛ սպառողներին: Բանն այն է, որ վերջին տարիներին պարբերաբար ավելացել է ոչ պատշաճ որակի ապրանքների արտադրության և ներմուծման քանակը:

Դատական վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գույքային պատասխանատվության կանոնակարգմանն ուղղված ընդհանուր միջոցառումները որակական փոփոխություններ առաջացնել չեն կարող: Լավագույն դեպքում դրանք պետք է հիմք ծառայեն առանձին իրավահարաբերությունների խախտման համար կիրառվող սանկցիաների համակարգը լրկալ իրավական ակտերով կարգավորելու համար:

Մեր կարծիքով, տնտեսավարման հարաբերությունների բնականոն ընթացքի պահպանության համար նախատեսված սանկցիաների ընդհանուր համակարգը պետք է հիմք ծառայի առանձին (առավել կարևոր) տնտեսական հարաբերությունների կենսագործունեությունն ապահովող սանկցիաների ամբողջական համակարգերի մշակման, դրանց անկասելի կիրառության ապահովման, գույքային պատասխանատվության դերի բարձրացման համար: Սանկցիաների համակարգն ամիրաժեշտ է դիտարկել ոչ միայն իրավունքի սուբյեկտների միջև ապրանքադրամական հարաբերությունների կատարելագործման, այլև շուկայական հարաբերությունների կառավարման տեսանկյունից: Վերջինս անհրաժեշտաբար պահանջում է, դեկավարվելով համաշխարհային ճանաչում ստացած սկզբունքներով, միջազգային ակտերով ամրագրված չափանիշներով, իրավախախտման յուրաքանչյուր տեսակի (միաբնույթ խմբի) համար օրենսդրորեն սահմանել տարաբնույթ սանկցիաներ: Այդպիսի սանկցիաներ սահմանելը և դրանց անկասելի

կիրառությունն ապահովելն իրավախախտողների դեմ պայքարի և պատասխանատվության բարձրացման կարևոր երաշխիք է: Սակայն հիշյալ խնդիրների լուծման համար սոսկ իրավական նորմեր ընդունելը բավարար չէ: Սանկցիա սահմանող նորմերը պետք է լինեն կենսունակ, գիտականորեն հիմնավորված, ապահովված կիրառման հնարավորությամբ և տրամաբանորեն փոխկապակցված՝ տնտեսավարման գործընթացի խախտման համար նախատեսված սանկցիաների ողջ համակարգի հետ:

Իրավախախտումների դեմ պայքարի հաջողությունը նշանակալի չափով կախված է այն բանից, թե որքանով է սանկցիայի բովանդակությունը (հարկադրման միջոցը) համապատասխանում իրավակարգի պահպանության ընդհանուր խնդիրներին ու կոնկրետ եղանակներին<sup>1</sup>: Ուստի սանկցիան պետք է լինի այնպիսին, որ դրա կիրառությունը սպառնիչ կերպով լուծի կոնկրետ իրավախախտման իրավական գնահատման հարցը: Իրավակարգի պահպանության ապահովումը ենթադրում է սանկցիայի բովանդակության համապատասխանություն այն իրավախախտման բնույթին, որի համար պետք է կիրառվի<sup>2</sup>: Սահմանված նորմը կարող է արդյունավետ գործել, եթե դրա առկայությունը սանկցիաների համակարգում պատահական չէ, բխում է համակարգի կենսունակությունից և առանց դրա տվյալ տեսակի իրավախախտումների համար նախատեսված սանկցիաների համակարգը կկորցնի իր արդյունավետությունը: Այս առումով նախ և առաջ անհրաժեշտ է ապահովել տնտեսավարման հարաբերությունների բնագավառում կիրառվող սանկցիաների համակարգի ամբողջականությունը, առանձին օղակների միավորման միջոցով վերացնել դրանում տեղ գտած բացթողումները, կատարելագործել ոչ միայն առանձին սանկցիաները, այլև, ելնելով միասնական սկզբունքներից, սանկցիաների ողջ համակարգը:

2. Ցանկացած սուբյեկտիվ իրավունք ենթակա է օրենսդրական պաշտպանության, իսկ այդ իրավունքը կրողը պետք է օժտված լինի օրենքով նախատեսված միջոցներով, այն պաշտպանելու իրավագործությամբ: Այդ իրավագործությունը հանդիսանում է սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքի տարրերից մեկը, որը դրսևորվում է միայն այն իրավիճակներում, երբ ինչ-որ մեկը վիճարկում, ոտնձգում կամ խախ-

<sup>1</sup> Տե՛ս Էսեռո Ի.Մ. Նաիեօե է իժաժոժաի ի նոսի ի նի ձաժոժե ի ն օ իժաժ. Ի ., 1981, էջ 50:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

տում է սուբյեկտիվ իրավունքը<sup>1</sup>:

Իրավական սանկցիայի դերակատարությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ դրա օգնությամբ իրավահարաբերության մասնակիցը ներգործում է իրավահարաբերության մյուս մասնակցի վրա, երբ վերջինս շեղվում է օրինաչափ վարքագծից: Այդ ներգործությունը, անկախ կիրառվող սանկցիայի բնույթից, ապահովվում է պետական հարկադրանքով: Բայց ասվածից չի կարելի եզրակացնել, որ սանկցիան մարդու վարքագծի վրա ազդում է միայն կիրառության պարագայում: Մենք ելնում ենք այն հիմնադրույթից, որ անհրաժեշտ է կարգավորիչ ստատիկ ներգործությունը տարբերել իրական ներգործությունից: Սանկցիայի «հիպոթեթիկ» ներգործությունը և դրանց ռեալ իրականացման ներգործությունը տարբեր բաներ են: Դրանցից յուրաքանչյուրին հատուկ են ուրույն ֆունկցիաներ: Հետևաբար մեզ համար ընդունելի չէ ինչպես այն պնդումը, որ ֆունկցիաներով օժտված են միայն պետական հարկադրանքի միջոցները<sup>2</sup>, այնպես էլ այն կարծիքը, որ ֆունկցիաները հատուկ են միայն պատասխանատվությանը<sup>3</sup>: Իրավական սանկցիաներին հատուկ է նրանց բովանդակությամբ, էությամբ և սոցիալական նշանակությամբ կանխորոշված որոշակի գործառնություններ, որոնց միջոցով ներգործում են մարդկանց վարքագծի, իրավագիտակցության, բարքերի, վերջին հաշվով՝ իրավական մշակույթի վրա: Իրավական սանկցիաների գործառնությունները (ֆունկցիաները) պայմանավորված են հասարակական հարաբերությունների կարգավորման բնագավառում նրանց վերապահված ծառայական դերակատարությամբ, այն նպատակներով ու խնդիրներով, որոնք իրենց առջև դնում են հասարակությունն ու պետությունը: Այդ գործառնությունների տարրերից գծերն են՝ ա) պայմանավորվածությունը հասարակական հարաբերությունների զարգացման օրինաչափություններով, բ) նպատակային բնույթը, գ) ներգործության ուղղվածությունը:

Նշված հատկանիշներից ելնելով մենք գտնում ենք, որ իրավական սանկցիաներն իրականացնում են նախականիսիչ (պրեվենտիվ),

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիսկի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 626:  
<sup>2</sup> Տե՛ս Աժեաի ի Ա. Նի ի նի սն է իժաի էժաօե ի ի նա Օ ի ժի ն ի ժաի աի աի ժաօե ժի աի էյ ա նի օեաե ռոնօե-աիե ի ն սն աի ռոնա. Ի ., 1972, էջ 96:  
<sup>3</sup> Տե՛ս Էբիե ի նեե Ա.Ա. Ի ժի աեաի ն ի ժեաե-աիե ի ի ժաի ռոնա. Նի ա, 2004, 84-85 էջեր:

դաստիարակչական, վերականգնող-կարգավորիչ, փոխհատուցման, պաշտպանական և պատժիչ գործառնություններ: Իրավական սանկցիաներին նախ և առաջ հատուկ է նախականիսիչ (պրեվենտիվ) գործառնություն: Նախականիսիչ ներգործություն իրականացնում է որոշակի վարքագծի դրսևորման համար անշահավետ հետևանքի նախատեսումը և այդ հետևանքը կիրառելու հնարավորությունը: Այդ գործառնությունը գոյություն ունի անկախ նրանից՝ պատասխանատվությունը կկիրառվի<sup>1</sup>, թե՞ ոչ: Սանկցիայի ազդեցությունը մարդկանց գիտակցության և կամքի վրա ծագում է իրավահարաբերության մեջ մտնելու պահից: Իրավունքի սուբյեկտը, գիտենալով թե ինչպիսի իրավական հետևանքներ կարող են առաջանալ իր կողմից իրավախախտում թույլ տրվելու դեպքում, պարտականություններ ստանձնելու պահից հարկադրված է գնահատել իր ուժերն ու հնարավորությունները: Այսինքն առաջնակարգ նշանակություն ունի ոչ թե սանկցիայի կիրառությունը, այլ կիրառման սպառնալիքը<sup>2</sup>: Այդ հանգամանքն առավել մեծ ուժով է ներգործում արդեն իրավահարաբերությունների մեջ գտնվող անձանց վրա, քանի որ սպառնալիքը վերացականի բնագավառից անցում է կատարում կոնկրետ հնարավորության բնագավառ<sup>3</sup>: Այսինքն, ցանկացած սանկցիա հանդիսանում է երկու հակադրությունների՝ համոզման և հարկադրման միասնություն: Ընդ որում, իրավահարաբերության զարգացման տարբեր փուլերում այդ միասնության գլխավոր կողմը կարող է լինել ինչպես համոզումը, այնպես էլ հարկադրանքը<sup>3</sup>, բայց բոլոր պարագաներում հարկադրանքի սպառնալիքը հանդիսանում է և՛ համոզելու, և՛ դաստիարակելու եղանակ: Այսինքն, սանկցիայի առկայությունն արդեն իսկ, իր նախականիսիչ (պրեվենտիվ) նշանակությամբ, ապահովում է պարտականությունների պատշաճ կատարումը:

Իրավական սանկցիաներին հատուկ է նաև դաստիարակչական գործառնություն, քանի որ դրանց կիրառման սպառնալիքն օժանդակում է գործարարական շրջանառության սովորությունների ձևավորմանը, բարեխղճության, շրջահայացության, հոգատարության դաստիարակմանը, իսկ կիրառությունը գույքային կորուստների առաջացմամբ հարկադրում է խուսափել հակաօրինական վարքագիծ դրսևորելուց: Հարկ

<sup>1</sup> Տե՛ս *Æððéíñéèé Ð.Ñ. Náièöèý ííðì ù ñí ááòñéíáí ãðáæääíñéíáí íðááá. Áíðí íáæ, 1968, էջ 27:*

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

է նկատել, որ քաղաքացիաիրավական սանկցիաների դաստիարակչական ներգործության մեխանիզմի էական տարբերությունը քրեական և վարչական սանկցիաներից, կայանում է նրանում, որ դրանց գործառնությանի ապահովման համար իրավասու մարմինների (հանցագործների և զանցանք կատարողների նկատմամբ կիրառվող) հատուկ դաստիարակչական գործընթաց չի կիրառվում:

Քաղաքացիաիրավական սանկցիաներին հատուկ են նաև վերականգնման և փոխհատուցման գործառնություններ: Այդ գործառնությունների սահմագատման հիմք է ծառայում ներգործության արդյունքները: Քաղաքացիաիրավական այն սանկցիաները, որոնք սահմանում են անորակ, անկոմպլեկտ կամ այլ թերություններ ունեցող արտադրանքի փոխարինում, թերությունների վերացում և այլն, օժտված են վերականգնող գործառնություններով: Այդ սանկցիաները կիրառվում են իրավախախտման վնասակար հետևանքների վերացման նպատակով: Այն սանկցիաները, որոնք նախատեսում են վնասների հատուցում, տուժանք, տուգանք և այլն կոչված են իրականացնել ոչ թե վերականգնման, այլ փոխհատուցման գործառնություն: Նշված սանկցիաները կիրառվում են, ճնշող մեծամասնությամբ, այն դեպքում, երբ վերականգնման գործառնություն իրականացնող սանկցիաների կիրառությունը ցանկալի արդյունք չի տալիս կամ այդպիսի կիրառել հնարավոր չէ: Այդ պատճառով մեզ համար ընդունելի չէ Մ.Պ.Տրոֆիմովի և նրա տեսակետը բաժանող մյուս հեղինակների այն կարծիքը, որ փոխհատուցումը, իրավավերականգնումը, ռեստիտուցիան հանդիսանում են ընդհանրական՝ վերականգնում հասկացության տարատեսակները<sup>1</sup>:

Վերջապես իրավական պատասխանատվության միջոց հանդիսացող սանկցիաներին (տուժանք, վնասների հատուցում և այլն) հատուկ է նաև պատժողական գործառնություն: Օրենսդրորեն նման սանկցիաները նախատեսվում են ոչ միայն մասնավոր շահերի, այլև հանրային իրավական շահերի պահպանության համար: Հանրային իրավական շահը ներառում է և տուժողի խախտված իրավունքների պաշտպանության ապահովումը և օրինականության, իրավակարգի, սոցիալական արդարության, պետական իշխանության հեղինակության և օրենքի հեղինակության պաշտպանությունը: Դա իրականացվում է ոչ թե

<sup>1</sup> Տե՛ս *Ëèíèíñéèé Ä.Ä. Ý ðí æèì ù ìðèæè-áñèí è íòááñòááí í íñòè. N'í á, 2004, 94-95 էջեր:*

ուղղակիորեն, այլ վնասների փոխհատուցում հարկադրելով, իրավախախտողին գույքային կորուստներ պատճառելու, նրա գույքային իրավունքները սահմանափակելու, ցուցաբերած հակաիրավական վարքագիծը «դատապարտելու», «պարսավելու» միջոցով:

3. Իրավունքների պաշտպանության համար օրենսդրությամբ նախատեսված են բազմաթիվ սանկցիաներ: Դրանցից յուրաքանչյուրը որոշակի նպատակի իրագործման համար կիրառվում է ինքնուրույն: Սակայն միշտ չէ, որ մեկ սանկցիայի կամ սանկցիաների մեկ տեսակի կիրառությունն ապահովում է իրավախախտումից տուժած անձի սուբյեկտիվ իրավունքների և շահերի պահպանությունը: Այդ պատճառով, նկատի ունենալով իրավախախտման բնույթը, վնասակարությունը, իրավահարաբերության մասնակիցների և հանրության շահերը, օրենսդրորեն պետք է սահմանվեն տարաբնույթ սանկցիաներ:

Այդ սանկցիաների ամբողջությունը պետք է կազմի տրամաբանորեն միմյանց հետ կապված, մեկը մյուսին լրացնող և սուբյեկտիվ իրավունքների համապարփակ պաշտպանությունն ապահովող միասնական համակարգ, որի կազմի մեջ մտնող յուրաքանչյուր սանկցիա, ունենալով հարաբերական ինքնուրույնություն, առաջացնելով ուրույն հետևանքներ, չպետք է բացառի նույն խախտման համար այլ սանկցիաների կիրառությունը: Սանկցիաների համակարգի կառուցման հիմքում պետք է դրվի այն գաղափարը, որ ներգործության՝ տրամաբանորեն համատեղելի բոլոր միջոցները կարող են կիրառվել և՛ միասին, և՛ առանձին-առանձին: Բնական է, որ սանկցիաների՝ առանձին կամ միասին կիրառման իրավունքը պատկանում է այն սուբյեկտին, որի իրավունքը խախտվել է: Իրավախախտումից տուժող կողմն ինքը պետք է ընտրի իրավախախտողի նկատմամբ օրենքով նախատեսված տնտեսա-կազմակերպական կամ նյութական ներգործության միջոցներից մեկը կամ դրանց համակցությունը:

Ընդ որում, օրենսդրությամբ անհրաժեշտ է հստակ սահմանազատել (ինչը գործող օրենսդրությամբ արված չէ) պատասխանատվության միջոց հանդիսացող սանկցիաներն այն սանկցիաներից, որոնք կիրառվում են որպես իրավախախտման հետևանք, բայց պատասխանատվության միջոցներ չեն հանդիսանում: Օրինակ, եթե առուծախի պայմանագրերի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքներ նախատեսող նորմերում պատասխանատվության միջոց չհանդիսացող իրավական հետևանքները սահմանազատված են պատասխանատվության միջոցներ համարվող սանկցիաներից և համարվում են իրա-

վախախտման հետևանքներ (տե՛ս օրինակ, Քաղ.օր. 491, 496, 533, 534 հհ.), ապա կապալի պայմանագրի խախտման համար նույնպիսի հետևանքների կիրառությունը համարվում է պատասխանատվություն (Քաղ.օր. հոդվ. 721):

Բնական է, որ օրենսդրությունում տեղ գտած նման ձևակերպումներն անհարկի բարդացնում են և՛ պատասխանատվության միջոց հանդիսացող սանկցիաների սահմանազատումը հարկադրման այլ միջոցներից, և՛ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության սանկցիաների ամբողջական (համապարփակ) համակարգ մշակելու ձեռնարկումները: Չնայած օրենսգրքում տեղ գտած անհետևողականության դրսևորումներին, նրա նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սուբյեկտիվ իրավունքների խախտումների համար, որպես հարկադրական ներգործության միջոցներ, օրենսգիրքը նախատեսում է ոչ միայն գույքային սանկցիաներ, որոնք իրավագետներն անվանում են պատասխանատվության միջոցներ, այլև այլ բնույթի ներգործության միջոցներ: Վերջինները կարող են օգտագործվել կա՛մ պարտականությունների պատշաճ կատարմանը հարկադրելու, կա՛մ տեղ գտած թերությունները վերացնելու, կա՛մ թերությունների վերացման համար կատարված ծախսերը ստանալու, կա՛մ խախտված իրավահարաբերությունը միակողմանի դադարեցնելու նպատակով: Օրինակ, Քաղ. օր. 491 հոդվածը ոչ պատշաճ որակի ապրանք հանձնելու դեպքում գնորդին իրավունք է վերապահում վաճառողից, իր ընտրությամբ, պահանջել՝

1. համաչափ պակասեցնել ապրանքի գինը.
2. բնականոն<sup>1</sup> ժամկետում անհատույց վերացնել ապրանքի թերությունները.
3. հատուցել ապրանքի թերությունները՝ վերացնելու համար իր կրած ծախսերը:

Ապրանքի որակին առաջադրվող էական խախտումների դեպքում (չվերացվող թերությունների, ինչպես նաև այնպիսի թերությունների, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո, և նման բնույթի այլ թերություններ), գնորդն իրավունք ունի իր ընտրությամբ՝

<sup>1</sup> Մեր կարծիքով օրենսգրքում «ողջամիտ» տերմինի օգտագործումը սխալ բարգվանության հետևանք է: «Ողջամիտ» նշանակում է *çāḍāāī ī nīēyūēē, ā-ēāāī ḍāçōī ī ūē: "Ḍāçōī ī ūē nīdī ē"*-ը պետք է թարգմանվեր «բնականոն», «բանական» կամ «խելամիտ» ժամկետ: Տե՛ս Հայ-ռուսերեն բառարան, Եր., 1984թ:

1. հրաժարվել առուծախի<sup>1</sup> պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել ապրանքի համար վճարված գումարը.

2. պահանջել փոխարինել ոչ պատշաճ<sup>2</sup> որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով:

Վաճառողի վրա ներգործելու՝ վերը նշված միջոցները բխում են պայմանագրային պարտավորության բովանդակությունից, կիրառվում են վաճառողի կողմից համապատասխան պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում և կոչված են ապահովել պարտականությունների պատշաճ կատարումը: Բայց նշված սանկցիաներից ցանկացածը կիրառելու դեպքում, կամ առանց դրանք կիրառելու, գնորդն իրավունք ունի նաև վաճառողից պահանջել իրավախախտմամբ իրեն պատճառած վնասները, իսկ եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսված է տուժանք (տուգանք, տույժ), պահանջել նաև դրանք: Այսինքն, պարտականությունները խախտող վաճառողի նկատմամբ կիրառվում են երկու տիպի սանկցիաներ. սանկցիաներ, որոնք հարկադրում են շտկել թույլ տրված խախտումները, և սանկցիաներ, որոնք առաջացնում են լրացուցիչ պարտականություններ, պատժվածության վիճակ՝ պատասխանատվություն: Հետևաբար, ռեալ և պատշաճ կատարմանը հարկադրելու միջոցները, սանկցիա լինելով հանդերձ, պատասխանատվության միջոցներ չեն: Դրանք սուբյեկտիվ պարտականությունները պատշաճ կատարելուն հարկադրելու միջոցներ են: Իսկ պատասխանատվության միջոցներ համարվող սանկցիաները (տուժանք, վնասներ և այլն) սուբյեկտիվ իրավունքների խախտման փաստի ուժով իրավագոր անձի համար առաջացնում են լրացուցիչ իրավագորություններ, լրացուցիչ սուբյեկտիվ իրավունք:

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սուբյեկտիվ իրավունքների խախտման դեպքում իրավագոր անձի համար կարևոր է ոչ

<sup>1</sup> ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքով առուծախի փոխարեն օգտագործվում է «առուվաճառքի» պայմանագիր: Նման սխալ տերմինափոխությունը ոչնչով արդարացված չէ: Եթե վաղ ավատատիրական ժամանակներից հայ իրավունքում օգտագործվող տերմինն անհրաժեշտ էր ձևակերպել ժամանակակից հայերենով, ապա պայմանագիրը պետք է անվավեր ոչ թե «առուվաճառքի», այլ «Վաճառքի և գնման» պայմանագիր:

<sup>2</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրքում «ոչ պատշաճ» արտահայտության փոխարեն «անպատշաճ» օգտագործելը ճիշտ չէ: Անպատշաճը անձի բարոյական գնահատականը բացահայտող արտահայտություն է և չի կարելի օգտագործել պարտավորության ոչ պատշաճ կատարումը բնութագրելու համար:

միայն ներգործության կոնկրետ միջոցի (միջոցների համակցության) ընտրությունը, այլև ընտրված միջոցի կիրառման հետևանքների հաշվառումը: Բանն այն է, որ թույլ տրված խախտումները շտկելու համար նախատեսված սանկցիաները կիրառելու դեպքում իրավագոր անձը պահպանում է տուժանք գանձելու և վնասների փոխհատուցում պահանջելու իրավունք: Մինչդեռ վնասների փոխհատուցման մասին հայց հարուցելու դեպքում զրկվում է հետագայում որևէ պահանջ ներկայացնելու հնարավորությունից: Նշանակում է իրավագոր անձի համար պաշտպանության լավագույն ձևի ընտրության չափանիշներ պետք է ծառայեն թույլ տրված խախտման բնույթը և կոնկրետ իրավիճակում շահերի պաշտպանության համապատասխան միջոցների կիրառման հնարավոր հետևանքները:

Բանն այն է, որ իրավական պատասխանատվությունն իրավունքը խախտողի վրա պետա-հարկադրական ներգործության առավել լուրջ ձև է: Ինչպես նշում է Վ.Պ.Գրիբանովը, «Քաղաքացիաիրավական պատասխանատվության հետ միասին, քաղաքացիական իրավունքին բնորոշ են մարդկանց վարքագծի վրա ազդելու նաև այլ ձևեր և միջոցներ»<sup>1</sup>: Վերջիններս կիրառվում են իրավահարաբերության մասնակցի կողմից, առանց իրավասու մարմիններին դիմելու միայն օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում, դրանց կիրառությունը պարտավոր անձին չի զրկում կիրառման ճշմարտացիությունը դատական կարգով վիճարկելու իրավունքից<sup>2</sup>:

Այդ իրավունքի հիմնական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ օգտագործում է առանց պետական հարկադրական ապարատի անմիջական ներգործության հասարակական արտադրության մասնակիցների տնտեսական շահերի վրա ներազդելու, հասարակական արտադրության կազմակերպման, կարգ ու կանոնի ապահովման՝ դարբերով մշակված յուրատիպ մեթոդների: Պետական հարկադրանքն օգտագործվում է միայն այն դեպքում, երբ իրավունքի պահպանության կամ վերականգնման համար օրենսդրությամբ սահմանված կամ կողմների համաձայնությամբ նախատեսված միջոցները ցանկալի արդյունք չեն տալիս: Այդ է պատճառը, որ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսվում են սուբյեկտիվ իրավունքների պահպանության և այդ

<sup>1</sup> Տե՛ս Ἀθεοῖσι ἄ Ἄ. Ἰ ὁἀἀὸἀἀἰἰἰἰὸὸὶ çà ἰἀδὸῶαἰἕἁ ἀδᾶæἰἰἕἕῶ ἰδᾶἁ. Ἰ ., 1973, 38-39 էջեր:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 164:

իրավունքները խախտողի վրա ներգործելու տարաբնույթ հարկադրական միջոցների միասնական ամբողջություն, որի մեջ մտնող սանկցիաների բազմազանությունը պահանջում է դրանք ենթարկել որոշակի դասակարգման:

3. Իրավական հարաբերություններին մասնակցող անձանց սուբյեկտիվ իրավունքների պահպանության համար կիրառվող սանկցիաները կարելի է դասակարգել տարբեր հիմքերով՝ ըստ կիրառման եղանակի, ներգործության առանձնահատկության, իրավական բնույթի և այլն: Օրինակ, ըստ կիրառման եղանակի կարելի է արտադատական կարգով կիրառվող սանկցիաներն առանձնացնել դատական կարգով կիրառվող սանկցիաներից, ըստ ներգործության բնույթի՝ տարանջատել գույքային և ոչ գույքային սանկցիաներ: Սակայն մեզ թվում է, որ սուբյեկտիվ իրավունքների պահպանության միջոց ծառայող սանկցիաների դասակարգման համար առավել նպատակահարմար է հիմք ընդունել հատկանիշների նույնաբնույթությունը, նպատակաուղղվածությունը, ինչպես նաև ներգործության այն եղանակը, որով նրանք ապահովում են իրավակարգի պահպանությունը, այսինքն, այն հիմքերը, որոնք բնութագրում են սանկցիաների սոցիալական դերը և ֆունկցիան (գործառույթը)<sup>1</sup>: Նշված հատկանիշները հիմք ընդունելու դեպքում, մեր կարծիքով, կարելի է սանկցիաները բաժանել երկու խմբի՝ *օպերատիվ-կարգավորիչ* (կամ տնտեսակազմակերպական), որոնք նախատեսվում են թերազումների շտկման, իրավունքների վերականգնման, հետագա խախտումները դադարեցնելու համար, և *գույքային սանկցիաներ*, որոնք, որպես պատասխանատվության միջոցներ, կիրառվում են տուժողի կորուստների փոխհատուցման համար:

Եթե հարկադրման միջոցը, նախատեսված է պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու, կատարման ընթացքում թույլ տրված թերազումները շտկելու, իրավունքների այլ խախտումներից և հնարավոր անշահավետ հետևանքներից խուսափելու համար (սպորանքից հրաժարվել, պայմանագրի կատարումից հրաժարվել և այլն), ապա գործ ունենք բացառապես կարգավորիչ գործառույթ իրականացնող պաշտպանական միջոցների (սանկցիաների) հետ: Դրանք իրավա-

<sup>1</sup> Տե՛ս *Ēaéno Ī.Y Náiéōèè è îôââññôââííîññü îî ñîââññéîî ó îðââó. Ī ., 1981, էջ 62*: Հարկ է նկատել, որ մատնանշված հիմքերով Օ.Է. Լեյստը տարբերակում է իրավավերականգնող և պատժողական սանկցիաներ, որպիսի դասակարգումը մեր համար ընդունելի չէ:

պաշտպանական բնույթի այնպիսի միջոցներ են, որոնք իրավունքները խախտողների նկատմամբ կիրառվում են իրավահարաբերության մասնակցի կողմից, առանց իրավունքների պաշտպանության համար պետական իրավասու մարմիններին դիմելու<sup>1</sup>: Այդպիսի սանկցիաները մենք համարում ենք օպերատիվ-կարգավորիչ սանկցիաներ:

Որոշ հեղինակներ մեր կողմից օպերատիվ-կարգավորիչ համարվող սանկցիաների համար միասնական անվանում չեն օգտագործում: Նրանք, կիրառման նպատակներից ելնելով, այդ տիպի սանկցիաները, բաժանում են պարտավորությունների պատշաճ կատարում հարկադրելու միջոցների և օպերատիվ ներգործության միջոցների<sup>2</sup>: Օրինակ, Վ.Վ. Վիտրյանսկին գույքային պատասխանատվության միջոցներ չհամարվող սանկցիաները բաժանում է հինգ խմբի: Ըստ նրանց, առաջին խմբում պետք է դասվեն այն միջոցները, որոնք պարտապանին պարտավորեցնում են բնեղենով կատարել պարտավորությունը: Երկրորդ խմբում այն սանկցիաները, որոնք պարտատիրոջն իրավունք են վերապահում լուծել կամ փոփոխել պայմանագիրը: Երրորդ խմբում այն սանկցիաները, որոնք պարտատիրոջը վերապահում են պարտավորությամբ չնախատեսված իրավունքներ (օրինակ գնի պակասեցում): Չորրորդ խմբում վաղաժամկետ կատարում պահանջելու իրավունքը: Հինգերորդ խմբում Քաղ. օր-ով. նախատեսված տարաբնույթ օպերատիվ ներգործության միջոցներ՝ պայմանագրի փոփոխելուն կամ լուծելուն ուղղված պարտատիրոջ միակողմ գործողությունները<sup>3</sup>:

Նշված բաժանումը, մեր կարծիքով ընդունելի չէ, քանի որ հեղինակն ինքը առաջին խումբ սանկցիաների տարանջատումը հիմնավորելիս ցույց է տալիս, որ դրանք միմյանց հետ սերտորեն կապված միկրոհամակարգի բաղադրատարրեր են, որոնք կարող են կիրառել միայն որոշակի հաջորդականությամբ: Նախորդի կիրառման անհնարինության դեպքում: Մասնավորապես Վ.Վ. Վիտրյանսկին գույքային պատասխանատվության միջոցներ չհամարվող սանկցիաների առաջին խմբում դասում է այն միջոցները, որոնք պարտապանին պարտավորացնում են պարտավորությունը կատարել բնեղենով: Ինչպես նշում է

<sup>1</sup> Տե՛ս *Áaðáííáá Á.Á. Ī ííyðeá, æeáü è òíðì ü äðææáí ñéí-íðááíáí é íôââññôââí-ííñèè. Á éí.: Áeðóàeüí úá íðíáeáí ü äðææáí ñéí áí íðááá. Ī ., 2003, էջ 294*:

<sup>2</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 496:

<sup>3</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, 561-564 էջեր:



հեղինակը, Ռ-Դ Քաղ. օր.-ը սահմանում է ընդհանուր դրույթ, ըստ որի, պարտապանի կողմից գույքը պատրաստելու և պարտատիրոջ սեփականությանը կամ օգտագործմանը հանձնելու, կամ նրա համար որոշակի աշխատանք կատարելու, կամ ծառայություն մատուցելու պարտականությունը չկատարելու դեպքում պարտատերն իրավունք ունի բանական ժամկետում և բանական գնով՝ պարտավորության կատարումը հանձնարարել երրորդ անձանց, կամ այն կատարել իր ուժերով և պարտապանից պահանջել հատուցել իր կրած անհրաժեշտ ծախսերը և այլ վնասները: Եվ, ինչպես արդարացի նկատում է Վ.Վ.Վիտրյանսկին, նշված հետևանքները շատ հաճախ կոնկրետացվում են առանձին պարտավորական հարաբերություններ կարգավորող նորմերում: Օրինակ, առուծախի պայմանագրով, այլ իրավագործությունների հետ միասին, եթե վաճառողը գնորդին ոչ պատշաճ որակի ապրանք է հանձնում, գնորդն իրավունք ունի պահանջել բնականոն ժամկետում անհատույց վերացնել ապրանքի թերությունները, հատուցել ապրանքի թերությունները վերացնելու համար իր կրած ծախսերը, իսկ ապրանքի որակի էական խախտումների դեպքում պահանջել փոխարինել ապրանքը՝ պայմանագրին համապատասխանող այլ ապրանքով (Քաղ. օր. հոդվ. 491): Գնորդին անկոմպլեկտ ապրանք հանձնելու դեպքում իրավունք է վերապահվում պահանջել ապրանքի կոմպլեկտավորում, իսկ ապրանքի կոմպլեկտավորման պահանջը բնականոն ժամկետում չկատարելու դեպքում՝ պահանջել անկոմպլեկտ ապրանքը փոխարինել կոմպլեկտավորված ապրանքով: Չխորանալով Վ.Վ.Վիտրյանսկու կողմից առաջարկվող բաժանման մանրամասներում՝ նշենք, որ բերված օրինակները բավարար են եզրակացնելու, որ օպերատիվ-կարգավորիչ սանկցիաների նմանօրինակ տարանջատումը գործնական կարևոր նշանակություն չունի: Հենց հեղինակի կողմից վկայակոչվող հոդվածների դրույթներից բխում է, որ գնորդին (վարձակալին, պատվիրատուին) վերապահված այդ իրավունքները, բացահայտված խախտումներն օպերատիվ կարգով արագորեն շտկելու և դրանց հետևանքով առաջացող կամ առաջանալիք կորուստները կանխելու համար կիրառվող միջոցներ են: Այդ միջոցներն իրենց բնույթով և կիրառման առանձնահատկությամբ կարգավորիչ միջոցներ են, քանի որ հետապնդում են պատշաճ կատարումն ապահովելու նպատակ, կիրառվում են պարտավորական հարաբերության մասնակցի նախաձեռնությամբ, առանց իրավասու մարմինների օժանդակությանը դիմելու: Իհարկե, ասվածը չի նշա-

նակում, որ օպերատիվ-կարգավորիչ սանկցիաներից յուրաքանչյուրը (կամ համակցությունը) չունի առանձնահատուկ դրսևորումներ, հակառակը, ցանկացած սանկցիա ունի կիրառման կոնկրետ նպատակ և առանձնահատկություններ, բայց դա չի նշանակում, որ դադարում է արագ հարկադրման և կարգավորման միջոց հանդիսանալուց: Վերջապես, նույն հեղինակի կողմից իրավական հետևանքներ առաջացնող միակողմանի այլ գործողություններն օպերատիվ միջոցներ համարելն արդեն իսկ կասկածի տակ է դնում նրա կողմից առաջարկվող դասակարգման նպատակահարմարությունը: Ըստ էության, պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կիրառվող վերը նշված ներգործության բոլոր միջոցներն էլ հարաբերությունների կարգավորման համար կիրառվող օպերատիվ սանկցիաներ են և ճիշտը մեկ՝ օպերատիվ-կարգավորիչ տերմին օգտագործելն է:

Օպերատիվ-կարգավորիչ սանկցիաները կիրառման բնույթով և նպատակաուղղվածությամբ հանդիսանում են իրավական կարգավորման առանձնահատուկ միջոցներ և պետք է սահմանազատվեն գույքային պատասխանատվության միջոցներից<sup>1</sup>: Այդ սանկցիաների գլխավոր ֆունկցիան պարտավորությունների պատշաճ կատարումը խթանելն է: Դրանց կիրառությունն իրավախախտի համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն, անմիջական «գույքային» կորուստներ, ինչպես նաև ցանկալի արդյունքի ձեռք բերման դեպքում պատասխանատվության միջոցների կիրառման անհրաժեշտություն չի առաջացնում: Ի տարբերություն օպերատիվ-կարգավորիչ միջոցների, այլ սանկցիաները (տուժանք, վնասներ, անօրինական ստացած եկամուտները գանձելը, դրամական փոխհատուցումը՝ հեղինակային իրավունքում և այլն), որպես կանոն, կիրառվում են այն դեպքերում, երբ օպերատիվ-կարգավորիչ սանկցիաների կիրառությունը չի դադարեցնում իրավախախտումը, և առաջանում է իրավախախտման հետևանքով պատճառված կորուստները վերականգնելու անհրաժեշտություն: Այդ պատճառով էլ մենք գտնում ենք, որ եթե սանկցիան կիրառվում է որպես իրավախախտման հետևանք, և դրա կիրառությունը իրավախախտողի համար առաջացնում է լրացուցիչ ծանրաբեռնվածություն, գույքային կորուստներ կամ զրկում է իրավունքից, ապա գործ ունենք պատասխանատ-

<sup>1</sup> Ствѹ Аѳеааііа А.І. І ѳааеѳѳ і ѳеі аіаіеѳ і аѳ і іаѳаѳеаііаі ѳаѳаеѳаѳа і ѳе і і ѳааеѳѳ і ѳі аѳеѳѳе // Њіааѳѳеаѳ і ѳѳѳѳѳѳ, 1968, <sup>1</sup> 7, тѳ 4:

վության միջոցի հետ: Այդ դիրքերից ելնելով, օպերատիվ-կարգավորիչ սանկցիաներ պետք է համարել՝ խախտված իրավունքների վերականգնմանը, իրավունքները խախտող կամ խախտման վտանգ ստեղծող գործողությունների կանխման, գործարքը անվավեր ճանաչելու, պարտավորությունները բնեղենով կատարելուն հարկադրելու համար կիրառվող միջոցները, իսկ պատասխանատվության միջոցներ պետք է համարել վնասների փոխհատուցումը, տուժանք գանձելը, դրամական հատուցումը (հեղինակային իրավունքում)<sup>1</sup>, դրամական միջոցների անօրինական օգտագործման համար տոկոսներ գանձելը (Քաղ. օր. 411 հոդվ.):

Վերը մատնանշված բոլոր սանկցիաների համար ընդհանուրն այն է, որ բոլորն էլ իրավունքների պաշտպանության միջոցներ են, կազմում են միասնական համակարգ (Քաղ. օր. 14 հոդվ.) և կազմակերպատնտեսական անշահավետ հետևանքներ առաջացնելու սպառնալիքով ապահովում են իրավահարաբերության մասնակիցների իրավունքների և շահերի պահպանությունը: Բայց նշված ընդհանրությամբ հանդերձ, համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր սանկցիա (սանկցիաների յուրաքանչյուր խումբ) մյուսից տարբերվում է կիրառման եղանակով, ներգործության յուրահատկությամբ և նպատակաուղղվածությամբ: Օպերատիվ ներգործության միջոցները կիրառվում են իրավախախտման այն էտապում, երբ իրավագոր անձի կարծիքով՝ վիճակը դեռևս հնարավոր է շտկել, պատասխանատվության միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը դեռևս չի առաջացել կամ ինչ-ինչ պատճառներով իրավագոր անձը չի ցանկանում իրավունքների պաշտպանության համար դիմել դատական մարմինների<sup>2</sup>:

Օպերատիվ-կարգավորիչ սանկցիաների կիրառությունը նպատակ է հետապնդում թույլ տրված թերությունների (խախտումների) վերացման միջոցով ապահովել ստանձնած պարտականությունների պատշաճ կատարումը, թերացումների վերացումը կամ իրավունքների հետագա խախտումների կանխումը: Այդ սանկցիաներին հատուկ է վերա-

<sup>1</sup> Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին 1999 ղեկտեմբերի 8-ի ՀՀ օրենքի 43 հոդվածի «դ» կետը հեղինակային իրավունքի իրավատիրոջն իրավունք է վերապահում վնասի կամ բաց թողնված օգուտի փոխարեն պահանջել դրամական փոխհատուցում: Նշված դրամական փոխհատուցման չափը, խախտման բնույթից և հետևանքներից ելնելով, սահմանում է դատարանը:

<sup>2</sup> Տե՛ս Բարանովա Ե.Վ., նշված աշխատությունը, էջ 245:

կանգնողական գործառույթ: Դրանց նպատակն է թույլ տրված թերացումները (չկատարում, ոչ պատշաճ կատարում) շտկելու միջոցով ապահովել պարտավորությունների պատշաճ կատարումը, որի պատճառով էլ կիրառվում են միայն պարտավորական հարաբերությունների խախտման դեպքում:

Պատասխանատվության միջոց հանդիսացող սանկցիաները (գույքային սանկցիաներ), պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման նպատակով օպերատիվ-կարգավորիչ սանկցիաների պահանջների կատարումն ապահովող, դրանց լրացնող կամ փոխարինող, իսկ այլ հարաբերություններում, որպես ներգործության միակ միջոց կիրառվող սանկցիաներ են:

Եթե օպերատիվ-կարգավորիչ սանկցիաներին հատուկ է վերականգնողական գործառույթ, ապա պատասխանատվության միջոցներն ունեն փոխհատուցողական գործառույթ, նրանց նպատակն է ապահովել իրավախախտմամբ պատճառված վնասներին համարժեք կամ պակաս դրամական փոխհատուցում: Հետևաբար՝ գույքային սանկցիաներ են հանդիսանում օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով որպես իրավախախտման հետևանք նախատեսված նյութական ներգործության այն միջոցները, որոնց առկայությունը խթանում է պարտականությունների պատշաճ կատարումը, իսկ կիրառությունն ապահովում է իրավախախտողի հաշվին տուժողի գույքային ոլորտում առաջացած (առաջանալիք) կորուստների փոխհատուցումը:

Գույքային սանկցիաներն ունեն լրացուցիչ և ապահովող բնույթ, ապահովված են պետական հարկադրանքով և, որպես կանոն, կիրառվում են վեճեր լուծող մարմինների կողմից: Այդպիսի սանկցիաներ են վնասների փոխհատուցումը, տուժանքը (տուգանքը, տույժը), ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, օգտագործելու դեպքում գանձվող տոկոսները, դրամական միջոցների գանձումը: Դրանց տարբերությունը օպերատիվ սանկցիաներից այն է, որ ունեն գույքային բնույթ, իրավախախտողի համար առաջացնում են սանկցիայի, որպես պատասխանատվության միջոցի, էությունից անմիջականորեն բխող անշահավետ հետևանքներ, կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ առկա է ոչ միայն իրավախախտման փաստը և դրա համար պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայմանները:

Իրավաբանական գրականության մեջ այդ սանկցիաները երբեմն անվանվել են տնտեսական սանկցիաներ՝ հիմք ընդունելով այն հան-

գամանքը, որ դրանք անմիջականորեն ապահովում են տնտեսության հիմնական օղակի (ձեռնարկության) իրավունքները և շահերը, ունեն տնտեսական բնույթ<sup>1</sup>: Որոշ հեղինակներ դրանք համարում են տնտեսական սանկցիաների տարատեսակ<sup>2</sup>: Նման տեսակետները, մեր կարծիքով, անընդունելի են, քանի որ այդ սանկցիաները կիրառվում են ոչ միայն տնտեսական կազմակերպությունների, այլև դրանց և քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիների հարաբերություններում: Մեր կարծիքով, կիրառման առանձնահատկությունների և ներգործության բնույթի տեսանկյունից որևէ տարբերություն չկա կազմակերպությունների հարաբերություններում կիրառվող վնասի հատուցման և դրանց ու քաղաքացիների կամ քաղաքացիների հարաբերություններում կիրառվող վնասների հատուցման միջև: Բացի դրանից, դրանք այնպիսի սանկցիաներ են, որ նախատեսվում են իրավունքի գրեթե բոլոր ճյուղերով կարգավորվող հարաբերությունների պաշտպանության համար: Իրավահարաբերությունների անխաթար իրականացումն ապահովելու համար նախատեսված սանկցիաները, անկախ ճյուղային պատկանելությունից, հարաբերությունների բնույթից (տնտեսական, վարչական, աշխատանքային, քաղաքացիական և այլն), մասնակիցների կազմից (կազմակերպություններ, քաղաքացիներ) կարող են լինել կամ գույքային, կամ ոչ գույքային: Ուստի մույն կատեգորիաները բնութագրելու համար տարբեր տերմինների օգտագործումն, ուսումնասիրությունների համար ավելորդ խոչընդոտներ հարուցելուց զատ, այլ արդյունքի հանգեցնել չի կարող: Այդ պատճառով էլ խառնաշփոթ չառաջացնելու համար առավել նպատակահարմար է օգտագործել ավանդաբար ձևավորված և հանրնդիանուր ճանաչում գտած այն տերմինաբանությունը, որը բխում է կարգավորող հարաբերությունների բնույթից և արտացոլում է հարաբերության էությունը: Քանի որ քաղաքացիական իրավունքը կարգավորում է գույքային և ոչ գույքային հարաբերություններ, ուստի այդ հարաբերությունների խախտման համար կիրառվող սանկցիաներն էլ կարող են լինել կամ գույքային, կամ ոչ գույքային: Նույն բնույթն ունեն սանկցիաները նաև քրեական իրավունքում և իրավունքի

<sup>1</sup> Տե՛ս *Î áííðéí Á.Î. Áíñóáðñóááíáÿ äèñòèíèèíà á íàðíáíí òíçÿéñóáá. Î ., 1970, 1971, էջ 95, Î àí óóíá Á.Ë. Ñíááððáíñóáíááíèà ñèñòáí ù ýéíííí è-áñèèò ñáí èðèé // Ñíááðñèíá áíñóáðñóáí è í ðááí, <sup>1</sup> 5, էջ 87:*

<sup>2</sup> Տե՛ս *Õíí áíèí Á.Í. Í óááðñóááííñóá á òíçÿéñóááí í ù òííí òáí èÿð. Èèáá, 1975, էջ 91:*

այլ ճյուղերում:

Գույքային սանկցիաներին հատուկ է երկակի դեր: Առաջին՝ դրանց առկայությունը և կիրառման սպառնալիքն իրավահարաբերության մասնակցին ստիպում է լուրջ մոտեցում ցուցաբերել պարտականությունների կատարման նկատմամբ և խուսափել դրանց կիրառությունից: Երկրորդ, իրավագոր անձի համար գույքային սանկցիաների առկայությունը երաշխիք է այն բանի, որ իր սուբյեկտիվ իրավունքները խախտվելու դեպքում, դրանց կիրառմամբ կվերացնի կամ կնվազեցնի իր տնտեսական ոլորտում առաջացած անշահավետ հետևանքները:

Օպերատիվ-կարգավորիչ և գույքային սանկցիաների տարբերությունների տեսանկյունից կարևոր գործնական նշանակություն է ստանում օպերատիվ-կարգավորիչ և գույքային սանկցիաների բնույթի մանրակրկիտ ուսումնասիրությունը, մանավանդ որ Քաղ. օր.-ում պարտավորությունների հանդիպակաց կատարման մասին նորմերի նախատեսմամբ և դրանք պարտավորությունների կատարման կասեցման կամ կատարումից հրաժարվելու հետ զուգակցելու թույլատրմամբ (հոդվ. 367) , գույքային շրջանառության կարգավորման գործում օպերատիվ-կարգավորիչ սանկցիաների դերն աննախադեպ բարձրանում է<sup>1</sup>:

### 2.2. Օպերատիվ-կարգավորիչ սանկցիաների յուրահատկությունը

Օպերատիվ-կարգավորիչ սանկցիաներ են ճանաչվում իրավախախտման համար, առանց իրավապաշտպան մարմիններին դիմելու, իրավագոր անձի կողմից իրավախախտողի նկատմամբ կիրառվող ինքնապաշտպանական բնույթի ներգործության միջոցները<sup>2</sup>: Օպերատիվ-կարգավորիչ (այսուհետև կօգտագործենք օպերատիվ) միջոցներն իրավական արձագանքման, թերությունների շտկման ինքնատիպ միջոցներ են, որոնք էապես տարբերվում են պատասխանատվության մի-

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 500:

<sup>2</sup> Մույն աշխատությունում օպերատիվ-կարգավորիչ սանկցիաների առանձնահատկությունները պարզաբանվում են այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իրավական սանկցիաների համակարգի մասին ամբողջական պատկերացում ապահովելու համար: Մեր կարծիքով այդ սանկցիաների առանձնահատուկ դերը, պետք է դառնան քաղաքացիագետների ուսումնասիրության ինքնուրույն առարկա:

ջոցներից: Օպերատիվ միջոցների կիրառությունը, ինչպես իրավացիորեն նշում է Բ.Ի. Պուզինսկին, իրավահարաբերության մասնակիցների համար, որպես կանոն, չի ստեղծում նոր, խախտվածին լրացուցիչ իրավահարաբերություն: Այդ միջոցների կիրառությունը ենթադրում է կողմերի միջև պայմանագրի առկայություն, այն դեպքում, երբ գույքային պատասխանատվությունը (պատասխանատվության միջոցները) կարող է կիրառվել անկախ պայմանագրային հարաբերությունների գոյությունից<sup>1</sup>: Դրա հետ միասին Բ.Ի. Պուզինսկին այդ միջոցները սանկցիաներ չի համարում՝ գտնելով, որ դրանք թեկուզ և հանդիսանում են իրավախախտման նկատմամբ ռեակցիա, չեն պահանջում պետական հարկադրանքի օգտագործում: Ըստ նրա՝ օպերատիվ ներգործության միջոցների կիրառմամբ պարտավորության մասնակիցները միմյանց նկատմամբ ներգործությունն իրականացնում են անմիջականորեն՝ առանց դիմելու իրավապաշտպան մարմինների այն դեպքում, երբ սանկցիաների կիրառությունը չի կարող իրականացվել առանց այդպիսի մարմինների գործունեության<sup>2</sup>:

Բ.Ի. Պուզինսկու նման եզրակացությունը մեզ համար անընդունելի է այն պարզ պատճառով, որ պետական հարկադրանքի օգտագործումը սանկցիայի կիրառման անհրաժեշտ ատրիբուտ չէ, և այդ հիմքով իրավախախտման նկատմամբ դրսևորվող ռեակցիան (հարկադրման միջոցների կիրառությունը) չի կարելի բացառել սանկցիաների համակարգից: Հանրահայտ է, որ պատասխանատու սուբյեկտը, չսպասելով իր նկատմամբ հարկադրման միջոցների կիրառությանը, կարող է կատարել իրավախախտման հետևանքով ծագած պարտականությունը<sup>3</sup>, այսինքն՝ վճարել տուժանք փոխհատուցել վնասները, բայց այդ հանգամանքը հարկադրման նշված միջոցները սանկցիա չհամարելու հիմք չէ: Անկախ նրանից՝ հարկադրման միջոցների կիրառությունն ապահովված է պետական հարկադրանքով, թե ոչ, այդ միջոցը պետք է համարվի սանկցիա, եթե նախատեսված է իրավախախտումից տուժող անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար:

Ի տարբերություն Բ.Ի. Պուզինսկու և նրա տեսակետը բաժանող

<sup>1</sup> Ств І оаеінееé А.Е. Адаааінеі-ідааіааа ндааааа а оісыеаааііао іоііоаіеѳ. І ., 1984, 143-144 էջեր:

<sup>2</sup> Ств նույն տեղում, էջ 144:

<sup>3</sup> Ств І аеаеі І .Н. Еі оаааааііаѳ іоааааааіііао а оісыеаааііао іоііоаіеѳ. І ., 1968, էջ 17:

հեղինակների, այլ իրավաբաններ օպերատիվ ներգործության միջոցները ոչ միայն համարում են սանկցիաներ, այլև գտնում են, որ դրանք իրավախախտողի վրա ունեցած ներգործության բնույթով պատասխանատվության միջոցներից գրեթե չեն տարբերվում: Օրինակ, Վ.Մ. Օգրիկովը, բնութագրելով օպերատիվ ներգործության միջոցները որպես «օպերատիվ սանկցիաներ», դրանց տարբերությունը դրամական սանկցիաներից տեսնում է միայն նրանում, որ դրանք հնարավոր է միակողմանի (պարտավորության մասնակիցների սեփական գործողությամբ) կիրառել<sup>1</sup>:

Համաձայնվելով նշված հեղինակի այն հետևության հետ, որ օպերատիվ ներգործության միջոցները քաղաքացիաիրավական սանկցիաներ են, չենք կարող համաձայնվել այն եզրակացության հետ, որ դրանք իրենց բնույթով գույքային պատասխանատվությունից չեն տարբերվում: Մենք գտնում ենք, որ օպերատիվ-կարգավորիչ սանկցիաները պատասխանատվության միջոցներից տարբերվում են ինչպես կիրառման առանձնահատկություններով, այնպես էլ ներգործության բնույթով: Քաղաքացիական իրավունքում կիրառվող օպերատիվ-ներգործության միջոցների և պատասխանատվության միջոցների էական տարբերությունները պայմանավորված են քաղաքացիաիրավական կարգավորման առարկայի և մեթոդի առանձնահատկություններով: Քաղաքացիական իրավունքով կարգավորվում են ինքնուրույն և իրավահավասար սուբյեկտների ազատ կամահայտնությամբ ձևավորվող այն հարաբերությունները, որոնց մասնակից նրանք դառնում են՝ սեփական շահից ելնելով իրավունքներ ձեռք բերելու համար: Այդ պատճառով էլ քաղաքացիաիրավական սանկցիաների հիմնական ուղղվածությունն իրավագոր անձի ոտնահարված իրավունքների և շահերի վերականգնումն է, որի համար բոլոր դեպքերում չէ, որ անհրաժեշտ է իշխանության լիազորություններով օժտված պետական մարմինների միջամտություն կամ, այլ կերպ արտահայտված, պետական հարկադրանքի կիրառություն: Շատ դեպքերում հարաբերության բնույթը և դրանից ակնկալվող շահը պարտադրում է կամովին վերացնել իրավախախտման հետևանքները, որպեսզի չտուժեն սեփական շահերը: Այդ պատճառով քաղաքացիաիրավական սանկցիաների մեծամասնություն-

<sup>1</sup> Ств І адүсείа А.І ., І даааеü ідеіаіаіеѳ іаѳ ііададеаііаі дадаеада іде ііаааеаѳ ідіаеөеө // Ніааоөеаѳ Р нөеөөѳ, 1968, No 7, էջ 4:

նը նախատեսվում է, որպես խախտված իրավահարաբերությունը վերականգնելուն ուղղված որոշակի գործողություններ կատարելու պարտականություն<sup>1</sup>: Եվ միայն այդ պարտականության կատարումից խուսափելու դեպքում գործի է դրվում պետության հարկադրական ուժը, որի կիրառման սպառնալիքը կազմում է սանկցիայի բնութագրական կողմերից մեկը<sup>2</sup>:

Օպերատիվ-կարգավորիչ սանկցիաների կիրառման հետևանքով ծագող պարտականությունների կատարման կամավորությունը բխում է Քաղ. օր.-ով պարտավորությունների կատարմանը ներկայացվող ինչպես ընդհանուր պահանջներից, այնպես էլ առանձին պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտատիրոջը վերապահված իրավասությունների բնույթից: Մասնավորապես, Քաղ.օր. 347 հոդվածը, որպես ընդհանուր սկզբունք, սահմանում է, որ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պահանջների ու պայմանների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող պահանջներին համապատասխան: Իսկ Քաղ.օր. 348 հոդվածը կողմերին արգելում է պարտավորություն կատարելուց միակողմ հրաժարվել և դրա պայմանները միակողմ փոփոխել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այդ ընդհանուր նորմերին համապատասխան՝ պարտավորական առանձին հարաբերությունները կարգավորող նորմերն իրավագոր անձին իրավունք են վերապահում պարտավոր անձից նախ և առաջ պահանջել բնեղենով և պատշաճ կատարման սկզբունքներից թույլ տրված շեղումների, թերացումների շտկում և միայն այդ պահանջը կամովին չկատարելու դեպքում պահանջել հարկադիր կատարում, տուժանքի վճարում, վնասների փոխհատուցում:

Սանկցիաների բնույթից բխող կամովին կիրառման հնարավորության նորմատիվ ամրապնդումը և այդ հնարավորությանը իրավական պարտավորության կարգավիճակ վերապահելը, բացի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության օպերատիվությունն ապահովելուց, հետապնդում է նաև այլ սուբյեկտների իրավունքների և շահերի պահ-

<sup>1</sup> Տե՛ս Ժիցինսկի Յու.Ս., նշված աշխատությունը, էջ 67:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

պանման նկատմամբ հարգանք դաստիարակելու, ինչպես նաև սեփական պարտավորությունների կատարման նկատմամբ պատշաճ հոգատարություն և հոգածություն ցուցաբերելու նպատակ:

Օպերատիվ սանկցիաների առանձնահատկությունն այն է, որ դրանց կիրառությունը, որպես կանոն, լրացուցիչ պարտականություններ չի առաջացնում: Դրանց կիրառությունը սոսկ պարտավորեցնում է շտկել պարտականությունների, կատարման ընթացքում թույլ տրված թերացումները, կամ վերացնել դրանով առաջացած (առաջանալիք) կոռուստները:

Վերջապես, դրանք ներգործության այնպիսի միջոցներ են, որոնք իրավահարաբերության մասնակիցները կիրառում են միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավախախտումները կանխելու, վնասակար հետևանքները նվազեցնելու, պարտավորությունների բնեղենով և պատշաճ կատարումն ապահովելու նպատակով: Այդ սանկցիաները կազմակերպականխարգելիչ և կարգավորիչ բնույթի հարկադրանքի միջոցներ են, որոնցով ապահովվում է տնտեսավարման սահմանված կարգի, դրանով իսկ՝ իրավակարգի պահպանությունը: Իրավական այս միջոցների էական հատկանիշն այն է, որ դրանց օգնությամբ ապահովվում է անմիջական ներգործություն, իրավախախտողի համար առաջանում են կազմակերպական և նյութական անշահավետ հետևանքներ, և շատ հաճախ վերանում է գույքային սանկցիաների կիրառման (պատասխանատվության) անհրաժեշտությունը: Դրանց մեծամասնությունը գուրկ է նյութական բովանդակությունից: Օպերատիվ-կարգավորիչ ներգործության միջոցների կիրառման դեպքում գույքային հետևանքներն առաջանում են որպես ուղեկցող արդյունք<sup>1</sup>:

Օպերատիվ-կարգավորիչ միջոցներ են համարվում՝ **անորակ ապրանքից հրաժարվելը, վճարված գումարները հեղ պահանջելը, թերությունների վերացում պահանջելը, կատարված աշխատանքը չընդունելը, ապրանքի (աշխատանքի) դիմաց չվճարելը, հաշվարկի ակրեդիտիվային չև կիրառելը, գերաժախտի կամ ոչ նպատակային օգտագործման համար (էներգիա, զագ, ջուր) մատակարարումը դադարեցնելը, պարտավորության կատարումից կամ պայմանագրից միակողմ հրաժարվելը** և այլն: Մատնանշված օպերատիվ սանկցիաների

<sup>1</sup> Տե՛ս Áañeí Բ.Á., Áeááiéí Á.Á. Áeñöeíèeíèðóþúáá çíá+áíeá ííáðaoèáí úó ñáí èöèé // Ñíáðöñéíá ãí ñóááðñóáí è í ðááí. 1983, No 4, էջ 52:

մեծ մասը իրավական բնույթով պարտավորությունը պատշաճ կատարելուն հարկադրելու միջոցներ են և բխում են պարտավորության բովանդակությունից: Այդ միջոցների կիրառման անհրաժեշտությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ պարտավոր անձը խախտում է պարտավորությունների ռեալ կամ պատշաճ կատարման սկզբունքների պահանջները: Ճիշտ է՝ Վ.Կ. Ռայխերի և նրա տեսակետը բաժանող մյուս հեղինակների կարծիքով՝ նման պարագայում անհրաժեշտ է խոսել ոչ թե սանկցիայի, այլ նախկինում չկատարված պարտավորության հասարակ «լրացման» (խախտված վիճակի վերականգնման) մասին<sup>1</sup>, իսկ ըստ Ա. Ն. Բրատուսի<sup>2</sup> և Ի.Ս. Սամոչչենկոյի<sup>3</sup> տեսակետի՝ սուկ պայմանագրի պատշաճ կատարումն ապահովող գործողությունների շղթայի օղակներից մեկը հանդիսացող իրավագործությունների մասին: Սակայն նման կարծիքների հետ դժվար է համաձայնվել, քանի որ, առաջին, պարտավորական հարաբերություններում կիրառվող սանկցիաների (թե՛ օպերատիվ, թե՛ գույքային) նպատակը խախտման վերացումն է, բնականոն վիճակի վերականգնումը: Այդ սանկցիաների միջոցով է իրագործվում պարտավորությունը պատշաճ կատարելուն հարկադրելու հնարավորությունը:

Երկրորդ, եթե հիմք ընդունենք երկկողմանի պայմանագիրը (ինչպես վարվում է Ա.Ն. Բրատուսը), ապա պետք է ընդունենք, որ օպերատիվ-կարգավորիչ սանկցիաները պայմանագրի բովանդակությունից չեն բխում: Պայմանագրերում նման իրավագործություններ երբեք չեն սահմանվում: Դրանք պայմանագրից բխող պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար օրենքով նախատեսված ներգործության միջոցներ են:

Երրորդ, օպերատիվ-կարգավորիչ սանկցիաները կարող են կիրառվել միայն օրենքով թույլատրված դեպքերում: Օրինակ, առուծախի պայմանագիրը կատարելուց՝ գնորդը միակողմ կարող է հրաժարվել միայն ապրանքի որակի չվերացվող թերություններ, կամ վերացման համար անհամաչափ ծախսեր կամ ժամանակ պահանջող թերությունների, կամ վերացնելուց հետո կրկին կամ բազմիցս ի հայտ եկող և

<sup>1</sup> Տե՛ս *Daëoád Ā.Ē. Ī ðaāīāúá āīīđīñú āīāīāīđīīé äēñöēīēēīú ā ÑÑÑĐ. Ēçā-āī ĒĀÓ. 1958, 71-72* էջեր:

<sup>2</sup> Տե՛ս *Áðaðóñú Ñ.Í. Բ ðeäē-āñeāy īðāāðñóááííñóú è çāēīííñóú, Ī ., 1976, էջ 128:*

<sup>3</sup> Տե՛ս *Ñāī ī úaíēī Ē.Ñ. Ī ððāīā ðāæēī ā çāēīííñóè ñī āaðñēēī īðāāī. Ī ., 1960, էջ 73:*

նման բնույթի այլ թերությունների առկայության դեպքում (Քաղ.օր. հոդվ. 491):

Վերջապես, եթե ընդունում ենք, որ վնասների հատուցումը և՛ պաշտպանության, և՛ պատասխանատվության միջոց հանդիսացող սանկցիա է, ապա անհետևողական է պաշտպանության այլ միջոցները սանկցիա չհամարելը այն նկատառումից ելնելով, որ դրանք պատասխանատվության միջոցներ չեն: Իրավախախտման հետևանքների վերացման համար օրենսդրորեն նախատեսված ցանկացած ներգործության միջոց, եթե այն ուղղված է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը, հանդիսանում է սանկցիա՝ անկախ ներգործության բնույթից և կիրառման առանձնահատկությունից:

Ի դեպ, անհրաժեշտ է նաև ընդգծել, որ երբեմն օպերատիվ-կարգավորիչ սանկցիաներից օգտվելն ավելի բարդ է ու դժվար, քան գույքային սանկցիաներից օգտվելը, քանի որ դրանց կիրառման համար օրենսդրորեն նախատեսվում են առանձնահատուկ հիմքեր և բարդ արարողակարգ: Օրինակ, պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար անհրաժեշտ է պայմանագրի կնքման ժամանակ գոյություն ունեցած հանգամանքների էական փոփոխություն և Քաղ. օր. 467 հոդվածում նախատեսված պայմանների միաժամանակյա առկայություն: Ըստ այդ հոդվածի, եթե կողմերը համաձայնության չեն հասել պայմանագիրը էականորեն փոփոխված հանգամանքներին համապատասխանեցնելու կամ պայմանագրի լուծման հարցում, պայմանագիրը կարող է դատական կարգով փոփոխվել կամ լուծվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ՝

- 1) պայմանագիրը կնքելու պահին կողմերը ելել են այն բանից, որ հանգամանքների նման փոփոխություն տեղի չի ունենա,
  - 2) հանգամանքների փոփոխությունն առաջացել է այնպիսի պատճառներով, որոնք շահագրգիռ կողմը չի կարող հաղթահարել դրանք ծագելուց հետո պայմանագրի բնույթով և շրջանառության պայմաններով նրանից պահանջվող հոգատարությամբ և շրջահայացությամբ,
  - 3) պայմանագրի կատարումն առանց դրա պայմանների փոփոխման այնքան կխախտեր կողմերի՝ պայմանագրին համապատասխանող գույքային շահերի հարաբերակցությունը և շահագրգիռ կողմին այնպիսի վնաս կպատճառեր, որը նրան զգալի չափով կզրկեր այն բանից, որին իրավունք ուներ հավակնել պայմանագիրը կնքելիս:
- Դժվար չէ նկատել, որ այդ հոդվածում նախատեսված պայման-



հետևանքներին: Օրինակ, Քաղ. օր. 535 հոդվածի 3-րդ մասի համաձայն, գնորդը (ստացողը) իրավունք ունի հրաժարվել ոչ պատշաճ որակի և անկոմպլեկտ ապրանքների համար վճարելուց: Դա նշանակում է, որ մատակարարը որոշակի ժամանակ զրկվում է արտադրանքի արժեքը կազմող շրջանառու միջոցներից, հետևաբար և՛ այդ շրջանառու միջոցների շրջապտույտի հետևանքով առաջացող օգուտներից: Իսկ այն դեպքերում, երբ գնորդը վաճառողից (մատակարարից) պահանջում է վերացնել անորակ արտադրանքի (ապրանքի) թերությունները, անբարեխիղճ վաճառողի (մատակարարի) համար առաջանում են գույքային անշահավետ հետևանքներ ինչպես արտադրանքի արժեքը չստանալու (շրջանառու միջոցներից չստացած շահույթ) հետևանքով, այնպես էլ թերությունների վերացման համար կատարված ծախսերի հետևանքով: Ընդ որում, կախված թերությունների բնույթից, նրանց վերացման տեղից, գույքային անշահավետ հետևանքների ծավալը կարող է ավելանալ կամ պակասել: Այն դեպքերում, երբ մատակարարը թերությունները վերացնում է գնորդի պահեստում, ոչ շահավետ գույքային հետևանքները ձևավորվում են աշխատողների գործուղման, պահեստամասերի փոխադրման և թերությունների շտկման համար կատարված այլ ծախսերից, իսկ արտադրանքը մատակարարին վերադարձնելու դեպքում, բացի անմիջական թերությունների վերացման ծախսերից, մատակարարը կատարում է նաև փոխադրման ծախսերը: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ ցանկացած օպերատիվ-կարգավորիչ սանկցիայի կիրառությունն պարտավորությունը չկատարող կամ ոչ պատշաճ կատարող պարտապանի համար առաջացնում է գույքային անշահավետ հետևանքներ: Անգամ այն դեպքերում, երբ գնորդը հրաժարվում է մատակարարի հանձնած ապրանքից, և մատակարարը ստիպված է կատարել ապրանքը հետ տանելու կամ տնօրինելու հետ կապված ծախսերը, հատուցել պատասխանատու պահառության ընդունելու, այն իրացնելու կամ վաճառողին վերադարձնելու հետ կապված՝ գնորդի կատարած անհրաժեշտ ծախսերը, կամ, երբ մատակարարը պարտավոր է լրացնել թերմատակարարումը, չի կարելի ասել, որ բացառված է գույքային ոչ շահավետ հետևանքների առաջացում, քանի որ, նախ՝ մատակարարի վրա է ընկնում պատահական կորստի ռիսկը, երկրորդ, գնորդը կարող է հրաժարվել ուշացումով մատակարարված արտադրանքն ընդունելուց, և այդ դեպքում կառաջանան այն գույքային հետևանքները, որոնց մասին խոսվեց վերևում:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ շատ հաճախ օպերատիվ-կարգավորիչ սանկցիաների կիրառման դեպքում կատարվող ծախսումները չեն զիջում, իսկ որոշ դեպքերում անգամ գերազանցում են իրավախախտման համար գանձվող գույքային սանկցիաների գումարը<sup>1</sup>: Չնայած դրան, այդ սանկցիաների դերը, նշանակությունը, դրանց կարգավորիչ և գույքային ներգործության հարցերը մինչև օրս տնտեսագետների պատշաճ ուսումնասիրությանը չեն արժանացել: Նման վերաբերմունքին, մեր կարծիքով, նպաստում է այն հանգամանքը, որ այդ սանկցիաների կիրառման դեպքում կատարված ծախսերն առանձին չեն հաշվառվում: Դրանք կա՛ն որպես արտադրական ծախսեր մտնում են արտադրանքի ինքնարժեքի մեջ, կա՛ն տարալուծվում են կազմակերպության ոչ արտադրական և այլ ծախսերի մեջ (աշխատավարձ, գործուղման ծախսեր և այլն) և իրավախախտողի տնտեսական գործունեության գնահատման համար իրավական արժեքավորում չեն ստանում: Մինչդեռ ճիշտ կլիներ, որ դրանք առևտրային կազմակերպությունների հաշվեկշռում և հաշվետվություններում արտացոլվեին առանձին տողով, որպես իրավախախտման հետևանքով առաջացած ոչ արտադրական ծախսեր, ավելացվեին շահույթի գումարին որպես հարկման օբյեկտ:

Բացի դրանից, նկատի ունենալով սանկցիաների որոշ տեսակների կիրառության դժվարությունները, նպատակահարմար է վերանայել այն նորմերը, որոնք իրավախախտման համար նախատեսում են բացառապես օպերատիվ սանկցիաների կիրառություն: Մեր կարծիքով, դրանց կիրառության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտություն է, որպես այլընտրանքային միջոց, կոնկրետ հարաբերություններ կարգավորող իրավական ակտերում նախատեսել նաև տուժանքի (տուգանքի, տույժի) օգտագործման հնարավորություն: Օրինակ, սահմանել, որ մատակարարված ապրանքի թերությունները որոշակի ժամկետում չշտկելու դեպքում, մատակարարը պարտավոր է գնորդին վճարել տուժանք: Իհարկե, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը պետք է սահմանվեն ոչ թե կամայականորեն, այլ ելնելով խախտման բնույթից, տևողությունից, վնասակարությունից, թերությունների շտկման ծախսատարությունից, աշխատատարությունից և

<sup>1</sup> Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. Տնտեսական կազմակերպությունների հարաբերություններում կիրառվող գույքային պատասխանատվության արդյունավետությունը, Եր., 1988, 64-65 էջեր:



այլ գործոցներին, այսինքն, նախատեսվեն հիմնավորված չափեր:

### **2.3. Վնասների հապուցումը որպես պայտասխանապվության հիմնական միջոց**

Պատասխանատվության միջոցներ հանդիսացող սանկցիաների մեջ առաջնակարգ դերը պատկանում է վնասների հատուցմանը: Այդ սանկցիան որպես իրավունքների պաշտպանության ընդհանուր միջոց կիրառվում է ցանկացած իրավախախտմամբ առաջացած գույքային (որոշ դեպքերում նաև՝ անձնական ոչ գույքային) կորուստները փոխհատուցելու համար: Բացի դրանից, իրավունքում կիրառվող և պատասխանատվության միջոց հանդիսացող այլ սանկցիաները՝ տուժանք, դրամական պարտավորությունների խախտման համար գանձվող տոկոսներ, վնասների հատուցման համեմատությամբ սահմանափակ կիրառություն ունեցող և վնասների հետ կապված ու վնասները լրացնող միջոցներ են:

Բանն այն է, որ գույքային պատասխանատվության ծավալը որոշվում է ոչ թե գանձվող տուժանքի կամ տոկոսների գումարով այլ վնասների հատուցվածության մակարդակով: Եթե այդ սանկցիաների կիրառման պարագայում վնասները լրիվ ծավալով չեն հատուցվում, իրավագործ անձն իրավունք ունի պահանջելու նաև վնասների չհատուցված մասը: Բացի դրանից, գույքային պատասխանատվության այլ միջոցներից (սանկցիաներից), վնասների փոխհատուցումը տարբերվում է առավել լայն կիրառությամբ: Պատասխանատվության այլ միջոցները (տուժանք, տոկոսներ) կարող են կիրառվել միայն կոնկրետ իրավախախտման համար օրենքով կամ պայմանագրով նախատեսված լինելու պարագայում, իսկ վնասների հատուցումը, որպես պատասխանատվության ունիվերսալ միջոց, Քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր նորմերի ուժով կիրառվում է յուրաքանչյուր իրավախախտման դեպքում, անկախ նրանից տվյալ խախտման համար դրա կիրառությունը իրավական հատուկ նորմով կամ պայմանագրով նախատեսված է, թե՛ ոչ: Նման մոտեցումը պայմանավորված է այն իրողությամբ, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության կարգավորման բնագավառում օրենսդիրն իր գլխավոր խնդիրն է համարում փոխհատուցողական

գործառույթի կանոնակարգումը<sup>1</sup>: Քաղաքացիաիրավական (գույքային) պատասխանատվության խնդիրների լուծման նկատմամբ օրենսդրի մասն մոտեցումը արդարացի և հիմնավորված է, քանի որ այդ պատասխանատվության հիմնական նպատակն է ապահովել վնասների լրիվ կամ, ծայրահեղ դեպքում, մասնակի փոխհատուցում<sup>2</sup>:

Ընդ որում, վնասների հատուցման, որպես իրավախախտման համար կիրառվող գույքային պատասխանատվության միջոցի, մասին խոսելիս՝ պետք է նկատի ունենալ, որ այդ կատեգորիան ունի բազմաբնույթ կիրառություն: Մի դեպքում՝ վնասների հատուցում ասելով, անպայմանորեն անհրաժեշտ է նկատի ունենալ դրանց առկայությունը որպես գույքային պատասխանատվության առաջացման պայման՝ իրավաբանական փաստ, երկրորդ դեպքում՝ որպես իրավախախտման կազմի տարր կամ իրավախախտման հետևանք, իսկ երրորդ դեպքում՝ որպես պատասխանատվության միջոց (սանկցիա): Այդ պատճառով, յուրաքանչյուր անգամ «վնասներ», «վնասների հատուցում» արտահայտություններն օգտագործելիս անհրաժեշտ է ոչ միայն բացատրել, այլև ընդգծել օգտագործվող կատեգորիայի իրավական նշանակությունը: Իհարկե, ճիշտ կլիներ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում «վնաս» տերմինի փոխարեն օգտագործել մեկ այլ անվանում: Սակայն օրենսդրության մեջ ավանդաբար օգտագործվել և շարունակվում է օգտագործվել մեկ տերմին՝ «վնասներ»<sup>3</sup>:

Քանի որ քննարկվող պարագայում խոսքը հիմնականում վերաբերում է գույքային պատասխանատվության միջոց համարվող սանկցիայի առանձնահատկություններին, ուստի վնասներ ասելով՝ հասկանում ենք **պայտասխանապվության միջոց հանդիսացող գույքային այն սանկցիան, որն օգտագործվում է իրավախախտման հետևանքով առաջացած, դրամական զնահարման ենթակա կորուստները հապուցելու համար:**

Այդ սանկցիայի կիրառությամբ ապահովվում է երկու խնդիր:

<sup>1</sup> Տե՛ս *Äadeaēi Äeoi ēüä. Ī ā īdāadōōāāī īīnōē īī ādāēāāīnēī īō īdāāō. Ī ., 1978, 30-31 էջեր:*

<sup>2</sup> Տե՛ս նույն աշխատությունը, էջ 31:

<sup>3</sup> Մեզ թվում է, որ որպես վնասների բաղկացուցիչ մասի անվանում՝ «իրական վնասներ» փոխարեն կարելի է օգտագործել «իրական կորուստներ» տերմինը: Որպես գույքային սանկցիայի անվանում՝ «վնասների փոխհատուցում», իսկ որպես իրավախախտման կազմի տարր՝ «վնասներ» տերմինները:

Նախ՝ իրավախախտումից տուժած սուբյեկտը հնարավորություն է ստանում փոխհատուցել իր գույքի կորուստը, կատարած ծախսերը և լրացնել իրավախախտման հետևանքով չստացած եկամուտները, ապա՝ նվազեցնում է իրավախախտողի եկամուտները դրանից բխող բոլոր հետևանքներով:

Չնայած այն բանին, որ «վնասների հատուցում» կատեգորիայի մասին խոսելիս, իրավագետները նկատի ունեն նույն երևույթի օգտագործումը, վերը մատնանշված առումներով, այնուհանդերձ, վնասների բնույթի արտահայտման համար օգտագործվում են տարբեր հասկացություններ: Որոշ հեղինակներ, վնասներ ասելով, հասկանում են, որ մեկ անձի ոչ իրավաչափ գործողություններով, մեկ այլ անձի գույքին պտճառված կորուստների դրամական գնահատականը<sup>1</sup>: Վնասներն իրոք այդպիսի բնույթ են կրում, երբ ոչնչանում, փչանում կամ վնասվում է ուրիշի գույքը: Բայց այդ հասկացությամբ չեն ընդգրկվում այն դեպքերը, երբ պարտավորության մասնակցի անբարեխղճության հետևանքով մյուս կողմը շահույթ չի ստանում, կամ երբ խոսքը վերաբերում է բարոյական վնասի հատուցմանը: Բնական է, որ նշված դեպքերում տուժողի գույքին վնաս չի պատճառվում: Հետևաբար, որպեսզի ընդհանուր հասկացությունն ընդգրկի վնասների ամբողջ բազմազանությունը, անհրաժեշտ է հրաժարվել դրանք միայն նյութական կորուստ համարելուց<sup>2</sup>:

Այլ հեղինակներ, հակառակ նշված տեսակետի, վնասների տակ հասկանում են ոչ միայն գույքի փչացումը, ոչնչացումը, վնասվելը, այլև իրավախախտման ցանկացած բացասական սոցիալական հետևանք: Եվ դրանից հետևություն են անում, որ պարտավորության չկատարման հետևանքով պատճառված վնասը, դրամական կամ այլ կորուստների ձևով արտահայտված գույքային շահերի խախտվածությունն է<sup>3</sup>: Այս տեսակետը նույնպես անտեսում է այն իրողությունը, որ կորուստներ կարող են առաջանալ ոչ միայն գույքային շահերի, այլև անձնական ոչ գույքային իրավունքների խախտման դեպքում և չի կարելի ընդհանուր կիրառություն ունեցող պատասխանատվության այդ միջոցի էությունը սահմանափակել գույքային ոլորտն ընդգրկող խախտումներով:

<sup>1</sup> Տե՛ս *Í îæðëéé È.Á., Èóí ò È.Á. Í áùáá ó-áí èà íá íáÿçàðàëüñòáá. Í ., 1950, էջ 365:*

<sup>2</sup> Տե՛ս *Èí Õðá Í .Ն. Í áÿçàðàëüñòáá í íá í ðááí. Í ., 1975, էջ 99:*

<sup>3</sup> Տե՛ս *Í àèàéí Í .Ն. Èí òùáñòáá í áÿ í òááðñòáá í í ñòù á òí çÿèñòáá í í òó í òí í òáí èÿò. Í ., 1968, էջ 91:*

Վնասների հատուցման հասկացության ձևակերպման հարցում ավելի ընդգրկուն մոտեցում է ցուցաբերում Օ.Ս.Իռֆֆեն՝ վնաս համարելով ոչ թե ցանկացած, այլ միայն այն բացասական հետևանքները, որը մեկ անձը կրում է մեկ ուրիշի ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով<sup>4</sup>: Բայց այս բնորոշումն էլ ըստ էության չի բացահայտում բացասական հետևանքների բնույթը, չի ընդգծում դրանց կապը տուժողի կորուստների հետ: Թերևս դա է պատճառը, որ այդ տեսակետն էլ համընդհանուր ճանաչման չարժանացավ:

Հանրահայտ է, որ բացասական հետևանքները կարող են առաջանալ ինչպես գույքային իրավունքների խաթարման, այնպես էլ անձնական ոչ գույքային իրավունքների ոտնահարման դեպքում: Հետևաբար, վնասների հատուցումը միայն բացասական հետևանքներով բացատրելը, առանց իրավախախտման ոլորտի և սանկցիայի բնույթի մատնանշման, անբավարար է: Այդ պատճառով էլ, հիմք ընդունելով Ե.Ա. Ֆլեյշիցի, Ա.Ս.Բելյակովայի, Գ.Հ.Ղարախանյանի կողմից տրված բնորոշումները<sup>2</sup> մենք գտնում ենք, որ ***վնասները տուժողի համար առաջացող այն անբարենպաստ բացասական հետևանքներն են (դրամական գնահատման ենթակա կորուստներ և չարացած եկամուտներ), որոնք առաջանում են օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում:***

Նման հետևությունը համահունչ է ոչ միայն «վնաս» կատեգորիայի քաղաքացիաիրավական կարգավորմանը, այլև բխում է վնասների փոխհատուցման միջազգային իրավական ակտերով կարգավորվածության բնույթից<sup>3</sup>: Մասնավորապես՝ Միջազգային առևտրական պայմանագրի սկզբունքների 7.4.2. հոդվածը վնասներ է համարում տուժողի մոտ իրավախախտման հետևանքով առաջացած ցանկացած կորուստ և չստուգված եկամուտ<sup>4</sup>: Իսկ Քաղ. օր. 17 հոդվածը սահմանում է, որ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որը նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու հա-

<sup>1</sup> Տե՛ս *Èí Õðá Í .Ն. Í áÿçàðàëüñòáá í íá í ðááí. Í ., 1975, էջ 99:*

<sup>2</sup> Տե՛ս *Õèàéøèò Á.Á. Í áÿçàðàëüñòáá í íá í ðááí. Í ., 1979, էջ 7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, Եր., 2001, էջ 603:*

<sup>3</sup> Տե՛ս Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքներ, հոդվ. 7.4.2, *Í ðéí òéí ù í àèáóí àðí áí ùó áí áí áí ðí á. Í ., 2003, 217-218 էջեր:*

<sup>4</sup> Տե՛ս *Í ðéí òéí ù í àèáóí àðí áí ùó éí ù í àð-áñèèò áí áí áí ðí á. Í ., 2003, էջ 217:*

մար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս)<sup>1</sup>, ինչպես նաև չստացած այն եկամուտները, որն այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Ինչպես երևում է շարադրվածից, վնասների բնութագրման ժամանակակից մոտեցումներն ըստ էության տարբերվում են հռոմեական իրավունքի ռեցեպցիայի վրա հիմնված և գործնականում իր կենսունակությունն ապացուցած մայրցամաքային երկրների իրավական համակարգերում վնասներին տրվող բնութագրությունից: Բայց դրա հետ միասին գործող Քաղ. օր.-ը, ի տարբերություն 1964 թ. Հայկ. ՄՍՀ քաղաքացիական օրենսգրքի, պարունակում է որոշակի նորամուծություններ:

Առաջին, գործող օրենսգիրքը վնասների հատուցում սահմանող նորմը գետեղել է ոչ միայն «Պատասխանատվությունը պարտավորությունների խախտման համար» գլխում, այլ նաև «Ընդհանուր դրույթներում», դրանով իսկ ընդգծելով, որ վնասների հատուցումը պատասխանատվության ընդհանուր միջոց է և կիրառվում է ցանկացած սուբյեկտիվ իրավունքի խախտման դեպքում, եթե այդ խախտմամբ պատճառվել են վնասներ:

Երկրորդ, Քաղ. օր. 17 հոդվածում խոսվում է ոչ թե պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով պատճառված, այլ իրավունքի խախտմամբ պատճառված վնասների հատուցման մասին: Այսինքն, ընդգծում է, որ վնասների հատուցումը կիրառելի է քաղաքացիաիրավական ցանկացած խախտման դեպքում:

Երրորդ, իրական վնասները հաշվարկելիս, հիմք են ընդունվում ոչ միայն այն ծախսերը, որը տուժողը կատարել է, այլև այն ծախսերը, որը նա պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար: Այսինքն, նախատեսված է ապագայում կատարվելիք ծախսերը փոխհատուցելու հնարավորություն: Այդպիսի մոտեցումը հետապնդում է վնասների լրիվ հատուցումն ապահովելու նպատակ և համապատաս-

<sup>1</sup> Ինչպես տեսնում ենք, Քաղ. օր. 17 հոդվածը վնասների մի մասը անվանում է «իրական վնասներ», այն դեպքում, երբ հնարավոր է վնասների այն մասը, որը կազմված է կատարված կամ կատարվելիք ծախսերից, գույքի փչացումից, կորուստից, վնասվածքից, անվանել իրական (կամ գույքային) կորուստներ: Մանավանդ որ կորուստ արտահայտությունը միջազգային իրավական ակտերում օգտագործվում է հենց «իրական վնասների» իմաստով: Տե՛ս Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքները, հոդվ. 7.4.2:

խանում է միջազգային մասնավոր իրավունքի զարգացման միտումներին<sup>1</sup>: Մասնավորապես, Միջազգային առևտրական պայմանագրերի սկզբունքները նախատեսում են (հոդվ. 7.4.3), որ փոխհատուցման ենթակա է այն վնասը, որ ապացուցված է բանական աստիճանի ճշմարտացիությամբ: Վերջին դրույթը հիմք է տալիս ենթադրելու, որ խախտված իրավունքները վերականգնելու նպատակն է կատարվելիք ծախսերի չափի հաշվարկման համար հիմք պետք է ընդունվեն միայն անհրաժեշտ այն ծախսերը, որոնք տուժողը կկատարի իր իրավունքները խախտելուց հետո բնականոն ժամանակահատվածում և բանական գնով: Որպես այդ ծախսերի հիմնավորում, կարող են ներկայացվել նախահաշիվ, թերությունների վերացման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկ, պարտավորությունների համար պատասխանատվության չափ սահմանող պայմանագիր և այլն: Այդ առումով մեզ թվում է, որ ապագայում կատարվելիք ծախսերի հաշվարկման համար կարելի է դեկավարվել մատակարարման պայմանագիրը լուծելու դեպքում վնասները հաշվարկելու համար Քաղ. օր. 539 հոդվածով սահմանված կանոններով:

Չորրորդ, Քաղաքացիական օրենսգիրքը սահմանել է հատուցվող վնասների նվազագույն չափը այն դեպքերում, երբ իրավունքը խախտված անձը դրա հետևանքով ստացել է եկամուտներ: Այդ դեպքում, անձը, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին բաց թողնված օգուտների պահանջի իրավունք ունի՝ այդ եկամուտներից ոչ պակաս չափով (Քաղ.օր. հոդվ 17, կետ 3):

Վերջապես, գործող օրենսդրությամբ վնասների հատուցման ինստիտուտում նախատեսված հաջորդ նորույթն այն է, որ Քաղ. օր. 17 հոդվածի 1-ի կետն ուղղակի սահմանում է, որ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել վնասի լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ սահմանված չէ օրենքով կամ պայմանագրով: Բնական է, որ նման ընդհանուր կանոնի հստակ ձևակերպումը կոչված է ապահովելու վնասների լրիվ հատուցման կիրառության գերակայությունը: Ինչպես ժամանակին նշում էր Օ.Ս. Իռֆֆեն, միայն վնասների լրիվ հատուցման սկզբունքով ղեկավարվելով, կարելի է վերականգնել այն վիճակը, որը գոյություն ուներ մինչև իրավա-

<sup>1</sup> Տե՛ս *Áðáæéíñééé Ì .È., Áeððýíñééé Á.Á. Áíáíáíðíá íðááí. Ì áùèà ííèíæáíèý. Èçá-áí “Ñðàðóó”. Ì ., 1997 էջ 525:*

խախտման պահը, միայն այդ սկզբունքի շնորհիվ են ապահովվում այն անձանց շահերը, որոնք վնասներ են կրում իրենց կոնտրագենտների անբարեխղճության հետևանքով, միայն այդ սկզբունքին հետամուտ լինելով է հնարավոր առաջացած վնասները ամբողջությամբ ծախսագրել դրանք պատճառողի հաշվին<sup>1</sup>: Ասվածին ցանկանում ենք միայն ավելացնել, որ վնասների լրիվ հատուցումն այլ անձի սուբյեկտիվ իրավունքները խախտողին պատճառելով համարժեք գույքային կորուստներ տուժողի համար ապահովում է լիարժեք բավարարում և դադարեցնում է իրավախախտման հետևանքով առաջացած վեճը:

Այսինքն, վնասների հատուցման արդյունքում տուժողը պետք է հայտնվի այնպիսի վիճակում, որում կգտնվեր սուբյեկտիվ իրավունքները չխախտվելու դեպքում: Այստեղից ակնհայտ է մեկ այլ հետևություն՝ հատուցումը պետք է լինի հավասարաբեռ: Տուժողն իր խախտված իրավունքները վերականգնելու ծավալն ապահովող միջոցներից ավել ոչինչ չպետք է ստանա<sup>2</sup>: Դրանից հետևում է, որ վնասների չափը չի կարող գերազանցել առաջացած կորուստների և չստացված եկամուտների իրական ծավալը: Ի հակադրություն եվրոպական օրենսդրության, վնասների և դրանց չափի ապացուցման նկատմամբ անգլո-ամերիկյան իրավունքը ցուցաբերում է ավելի կոշտ մոտեցում: Այդ երկրների օրենսդրությունն, ըստ էության, սահմանափակում է վնասների հատուցման, որպես քաղաքացիաիրավական սանկցիայի, կիրառությունը՝ վնասների փոխհատուցմանը ներկայացնելով անխուսափելիության, կանխատեսելիության, անմիջականության և արժանահավատության պահանջներ: Այլ խոսքով պահանջվում է, որ վնասների հատուցում պահանջողը հիմնավորի, որ դրանք ծագել են կամ առաջանալու են թույլ տրված իրավախախտման հետևանքով, առաջացել են հենց այն չափով, որքանով ինքը փոխհատուցում է պահանջում: Բայց նշված հանգամանքների ապացուցվածության դեպքում էլ պահանջը կարող է բավարարվել, եթե կհաստատվի, որ պայմանագիրը կնքելիս կոնտրագենտը կանխատեսել կամ կարող էր կանխատեսել իրավախախտման դեպքում մնան վնասներ առաջանալու հնարավորությունը: Այդ նույն երկրների օրենսդրությամբ որոշակի իրավախախտումների դեպքում էլ սահմանվում են վնասների հատուցման կոնկրետ չափեր:

<sup>1</sup> Տե՛ս *Ēī ōōā Ī .N̄. Ī áyçāōēūnoāāī í í ā í ðāāī, Ī ., 1975, էջ 103:*  
<sup>2</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Բ. Վիտրյանսկի Վ.Վ. նշված աշխատությունը, էջ 518:

Օրինակ, ԱՄՆ-ի և Կանադայի հեղինակային իրավունքների մասին օրենսդրությամբ վնասի հաշվարկման հիմք է ճանաչվում նաև այսպես կոչված ստատուտային վնասը: Դրա համաձայն՝ ԱՄՆ-ում դատարանը կարող է սահմանել վնասի հատուցման գումար մինչև 20 հազար, իսկ բացառիկ դեպքերում՝ մինչև 100 հազար դոլար, եթե պատճառված վնասն ակնհայտորեն գերազանցում է սահմանված չափերը, բայց իրական չափը որոշել անհնարին է<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է ժամանակակից միջազգային մասնավոր իրավունքին, ապա հարկ է նկատել, որ միջազգային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերը թեպետ վնասների փոխհատուցմանն այնպիսի խիստ պահանջներ չեն ներկայացնում, ինչպիսին ներկայացնում է անգլո-ամերիկյան իրավունքը, այդուհանդերձ, պայմանագրային պարտավորությունների խախտում թույլ տվողների պատասխանատվության ծավալը սահմանափակում են այն հետևանքներով, որը նա կարող էր կամ պետք է կանխատեսել պայմանագիրը կնքելու պահին: Օրինակ, Վիեննայի կոնվենցիայի 74 հոդվածի համաձայն՝ պայմանագրի խախտմամբ պատճառված կորուստները չեն կարող գերազանցել այն վնասները, որոնք պայմանագիրը խախտող կողմը կանխատեսել կամ պարտավոր էր կանխատեսել պայմանագիրը կնքելու պահին որպես իր իրավախախտման հետևանք, հաշվի առնելով այն հանգամանքները, որոնց մասին նա այդ ժամանակ գիտեր կամ պարտավոր էր գիտենալ: Նման նորմ է պարունակում նաև «Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքները»: Համաձայն այդ սկզբունքների 7.4.4. հոդվածի՝ պայմանագիրը չկատարող կողմը պատասխանատու է միայն այն վնասների համար, որոնք նա կանխատեսել է կամ կարող էր կանխատեսել պայմանագիրը կնքելիս, որպես դրա չկատարման հավանական հետևանքներ: Ըստ պաշտոնական մեկնաբանությունների, կանխատեսումը վերաբերում է ոչ թե վնասների չափին, այլ բնույթին և տեսակին: Այն ճկուն կոնցեպցիա է, որը լայն հնարավորություններ է ընձեռում դատավորների հայեցողության համար<sup>2</sup>: Կանխատեսման չափանիշ է սովորական ջանասեր անձի կողմից, իրերի սովորական ընթացքի դեպքում և կոնկրետ պայմանագրի հստակ պայմաններից ելնելով, իր ունեցած տեղեկատվության կամ նախկին

<sup>1</sup> Տե՛ս *Ēāçāēīā P .Ā. Çāūēōā ēī ōāēēāēōōāēūī í ē nī ānoāāī í í noē. Ī ., 2002, էջ 26:*  
<sup>2</sup> Տե՛ս *Ī ðēī ðēī ū í āæāōī āðī āī ūō ēī ū í āð-āñēēō āī āī āī ðī ā. Ī ., էջ 223:*

գործարքներից ելնելով, պարտականությունը չկատարելու հետևանքները կանխատեսելու կարողությունը: Այսինքն, կանխատեսման չափանիշ է ծառայում ջանասեր գործարարի վնասների ծավալը որոշելու սուբյեկտիվ հնարավորությունը: Մեր օրենսդրությունը վնասների չափի որոշման այդ տեսանկյունը, որպես գուտ սուբյեկտիվ մոտեցում, հաշվի չի առնում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, ի տարբերություն վերը մատնանշված նորմատիվ ակտերի և իրավունքի այլ ճյուղերում կիրառվող կանոնների, քաղաքացիաիրավական պատասխանատվության ծավալը որոշում է իրավախախտմամբ տուժողի մոտ առաջացած հետևանքների հանրագումարից, այսինքն՝ պատճառված կորուստների և չստացված եկամուտների ծավալից ելնելով: Նման մոտեցումը պատահական չէ: Ի տարբերություն քրեական կամ վարչական իրավունքի, որտեղ սանկցիաներն ունեն պատժաչափի ավել կամ պակաս որոշակիություն, քաղաքացիաիրավական սանկցիաների չափը հիմնականում կախված է իրավագոր անձի կորուստներից կամ չկատարված պարտավորության արժեքից կամ տուժողի իրավագորությունների (շահերի Տ.Բ.) խախտվածությունից<sup>1</sup>: Շատ դեպքերում դրամական համարժեքով արտահայտված խախտված սուբյեկտիվ իրավունքը հանդիսանում է չափման այն միավորը, որի միջոցով սահմանվում է քաղաքացիաիրավական պատասխանատվության չափը:

Իրավունքի խնդիրն է ոչ միայն իրավախախտումների դեմ պայքարը, այլև շուկայական հարաբերությունների բնականոն գործընթացին և տնտեսավարման հարաբերությունների դինամիկ զարգացմանը նպաստելը: Դրանից ելնելով էլ պետությունը իրավունքի նորմերի միջոցով ապահովում է այնպիսի նախադրյալներ, որոնց շնորհիվ շուկայական հարաբերությունների մասնակիցների տնտեսավարման գործունեությունն իրականացվում է անընդհատ և իրավաչափ: Իսկ եթե առանձին սուբյեկտներ խախտում են իրենց պարտականությունները, խախտում են այն հարաբերությունները, որոնց մասնակիցն են, իրավունքի նորմերը պետք է ապահովեն տուժողի շահերի պաշտպանությունը, պատճառված վնասները լրիվ հատուցելու միջոցով: Դա հնարավոր է այն դեպքում, երբ իրավախախտողի պատասխանատվության

<sup>1</sup> Տե՛ս Ժիլինսկի Յու.Ս., նշված աշխատությունը, 79-80 էջեր:

ծավալը համապատասխանի տուժողի մոտ առաջացած վնասների հանրագումարին: Նշված հանգամանքը հիմք ընդունելով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է վնասների հատուցման ծավալի որոշման ընդհանուր կարգ՝ համարելով, որ վերջնական ծավալը հնարավոր է որոշել միայն իրականում առաջացած կորուստները, չստացված եկամուտները և կատարվելիք ծախսերը պարզելուց հետո: Այդ պատճառով քաղաքացիաիրավական պատասխանատվության չափորոշիչ, ի տարբերություն քրեական իրավունքի, հանդիսանում է ոչ թե մեղքը, այլ իրավախախտմամբ վնասների ծավալը: Քաղաքացիական իրավունքում հիշյալ չափորոշիչին տրվում է այնքան մեծ կարևորություն, որ օրենսդիրը քաղաքացիաիրավական պատասխանատվության իրական սահմանների որոշման համար հղում է կատարում ոչ թե այլ օրենքին, ինչպես դա անում են սովորական հղում պարունակող սանկցիաները, այլ օբյեկտիվորեն վրա հասած արդյունքին: Նման մոտեցումը հետևանքն է այն բանի, որ վնասների փոխհատուցումը կարծեք թե կատարում է ռեստիտուցիայի յուրատիպ գործառույթ՝ ապահովելով իրավախախտման հետևանքով վնասներ կրած սուբյեկտի նյութական կամ ֆինանսական միջոցների վերականգնումը:

Գործող Քաղ.օր.-ը լրիվ վնասների հատուցման սկզբունքն ամրագրել է ինչպես 17, այնպես էլ 409 և 1058 հոդվածներում, դրանով իսկ սահմանելով, որ վնասների փոխհատուցումը կիրառվում է ինչպես պայմանագրային, այնպես էլ արտապայմանագրային պատասխանատվության դեպքում: Սակայն, եթե նկատի ունենանք, որ իրավունքի գրեթե բոլոր ճյուղերում գույքային պատասխանատվություն կիրառելիս հիմք է ընդունվում վնասների հատուցման քաղաքացիաիրավական մոտեցումները, ապա կարող ենք արձանագրել որ վնասների լրիվ հատուցման սկզբունքը կիրառվում է նաև իրավունքի այլ ճյուղերում: Այդ սկզբունքը թելադրված է իրավախախտումից տուժող կողմի կորուստների լիարժեք փոխհատուցման անհրաժեշտությամբ:

Վնասների լրիվ հատուցման սկզբունքը ավանդույթի ուժով նախատեսվել է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի նոր քաղաքացիական օրենսդրությամբ: Այն թելադրվել է տուժող կողմի իրավունքների վերականգնման անհրաժեշտությամբ: Այդ պատճառով էլ իրավագետները, մատնանշելով վնասների լրիվ հատուցման սկզբունքի նշանակությունը, ընդգծում են, որ միայն այդ սկզբունքով առաջնորդվելու դեպքում է հնարավոր վերականգնել այն վիճակը, որը գոյություն ու-

ներ իրավախախտման պահին, միայն այդ սկզբունքի շնորհիվ է ապահովվում այն անձանց շահերի համակողմանի պահպանությունը, որոնք վնասներ են կրում<sup>1</sup>:

Չնայած նշված տեսակետի լայն տարածվածությանը, խորհրդային ժամանակաշրջանի իրավագետների կողմից արտահայտվել են նաև վնասների լրիվ հատուցման սկզբունքի հետևողական կիրառությունից հրաժարվելու (Ա. Վ. Վենեդիկտով) և պատասխանատվությունն ըստ մեղքի սկզբունքի դիֆերենցելու առաջարկներ: Այդ տեսակետները ժամանակին հիմնավորապես և, մեր կարծիքով, միանգամայն ճիշտ, քննադատվել են իրավագետների կողմից<sup>2</sup>: Չանդրադառնալով այդ տեսակետների վերլուծությանը՝ հարկ ենք համարում նշել, որ վնասների լրիվ հատուցման սկզբունքից հրաժարվել հնարավոր չէ, իսկ գույքային պատասխանատվությունը, մեղքի սկզբունքով դիֆերենցելն անհնաստ է, քանի որ պատասխանատվության ծավալը, անկախ կիրառվող սանկցիայի տեսակից, կախված է ոչ թե մեղքի աստիճանից, այլ տուժողի կորուստների և չստացած եկամուտների չափից:

Ինչպես նշվեց, և՛ օրենսդիրը, և՛ իրավագիտությունը վնասների լրիվ հատուցման սկզբունքը համարում են իրավական պատասխանատվության կարևոր հիմնադրույթներից մեկը, բայց և՛ գործող օրենսդրությունը, և՛ Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկան այդ սկզբունքի լիարժեք կիրառությունը չեն ապահովում: Մասնավորապես կարգապահության պահպանության վրա քաղաքացիաիրավական պատասխանատվության այդ միջոցի ներգործության արդյունավետության վերլուծությունը ցույց է տալիս, որ գործնականում այդ սանկցիան լիարժեք չի օգտագործվում: Առավել մտահոգիչ է այն փաստը, որ տուժողներն իրենք իրավախախտումների դեմ անհրաժեշտ ակտիվությամբ չեն պայքարում: Կյանքը ցույց է տալիս, որ տուժողների ցածր ակտիվությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գույքային պատասխանատվությունը, որպես կանոն, չի փոխհատուցում իրավախախտման հետևանքով առաջացած բոլոր կորուստները, չի նպաստում պարտավորությունների կատարմանը, պահանջում է իրա-

<sup>1</sup> Տե՛ս՝ օրինակ, ԷՆՕԾՁ Ի.Ն. Ի áÿçàðàèóñîáíííá í ðàáí. Ի ., 1975, էջ 103:  
<sup>2</sup> Տե՛ս՝ ԷՆՕԾՁ Ի.Ն. Ի ðàáñîááíííñîó íí ñíáàðñèíí ó äðàèááíéíèí ù í ðàáó. Ȃ éí.: Ȃçáðáí í ùá ððóáú. T.1. M., 2003, 488-493 էջեր:

կանացման տևական մեծածավալ և ծախսարար ընթացակարգ<sup>1</sup>: Բացի դրանից, արժանին մատուցելով վնասների լրիվ հատուցման լիարժեք կիրառությունն ապահովելու ուղղությամբ կատարված օրենսդրական լուրջ փոփոխություններին՝ հարկադրված ենք նաև մատնանշելու, որի տարբերություն նախորդ օրենսդրության, ՀՀ Քաղ. օր.-ը էապես սահմանափակել է վնասների լրիվ հատուցման կիրառման ոլորտը: Ինչպես ցույց է տալիս առանձին ինստիտուտներում վնասների փոխհատուցում նախատեսող նորմերի ուսումնասիրությունը, վնասների լրիվ հատուցման սկզբունքի կիրառությունն այնքան է սահմանափակված, որ վնասների լրիվ հատուցումը, ընդհանուր կանոն լինելով հանդերձ, կարծեք թե հանդիսանում է սահմանափակումներից դուրս գոյություն ունեցող բացառություն, իսկ վնասների լրիվ հատուցման անհրաժեշտության և հիմնավորվածության մասին արվող դատողությունները, առկա սահմանափակումների պայմաններում, մնում են սոսկ բարի ցանկություն: Բանն այն է, որ տարբեր իրավական ակտերով նախատեսվում են թե՛ վնասների փոխհատուցման չափի, թե՛ պատճառված վնասների ծավալի որոշման սահմանափակումներ: Օրինակ, փոխհատուցման չափի սահմանափակումներ են նախատեսվում ատոմային սարքի խափանման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման, օդային և ծովային փոխադրումների ժամանակ առաջացած վնասների փոխհատուցման հարաբերությունները կարգավորող միջազգային ակտերով: Մասնավորապես, միջազգային օդային փոխադրումների կարգավորմանը նվիրված «Վարչական կոնվենցիան» սահմանափակում է յուրաքանչյուր ուղևորի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի, ինչպես նաև փոխադրման հանձնված բեռի և ուղեբեռի կորստի, փչանալու և վնասվելու համար փոխադրողի պատասխանատվության չափը, սահմանելով այն առավելագույն գումարները, որոնց սահմաններում փոխադրողը պարտավոր է հատուցել վնասները (հոդվ. 22), իսկ 28 մայիսի 1999թ. Մոնրեալի կոնվենցիային միացող պետություններին իրավունք է վերապահվում փոխադրողի պատասխանատվության չափը սահմանել ոչ ավել, քան 1.500.000 արժույթային միավոր՝ յուրաքանչյուր ուղևորի համար:

<sup>1</sup> Տե՛ս՝ Ȑáàðèíá Ȃ.Ȃ. Ȃ ðèí áíáí èá íðááñîááí ííñòè çà íáððóáí èá áíáíáí ðíí é àèñòè-í èèí ú. Ȃ ñá.: Ȑ ðèàè-áñèèá èèòá. Ȃ ðááñîááí ííñîó çà íáððóáí èá íáÿçàðàèóñîáá. Ȃ ., Ȃ Ȑ-Ȃ ðȂÑÑ. 2004, էջ 215:

Ուղևորին կամ բեռին պատճառված վնասի փոխհատուցման առավելագույն չափ (պատասխանատվության չափի սահմանափակում) նախատեսում են նաև Բրյուսելի «Կոնոսամենտի որոշ կանոնների ունիֆիկացման մասին» 1924թ. օգոստոսի 25-ի կոնվենցիան, «Ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրման պայմանագրերի մասին» Ժնևյան կոնվենցիան և այլ միջազգային իրավական ակտեր:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նույնպես նախատեսվում է տարբեր կատեգորիայի անձանց կողմից պատճառված վնասի կամ աշխատանքների կատարման թերացումների համար նախատեսված պատասխանատվության չափի սահմանափակումներ: Օրինակ, «Ձինձառայողների նյութական պատասխանատվության մասին» 2003թ. դեկտեմբերի 13-ի օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ զինձառայողները ծառայական պարտականությունները կատարելիս անզգուշաբար հասցված վնասը հատուցում են դրա չափով, բայց ոչ ավելի, քան ամսական դրամական բավարարման՝

1. կրկնապատիկը, եթե նշված չափը գերազանցում է ամսական դրամական բավարարման կրկնապատիկը, սակայն չի գերազանցում եռապատիկը.

2. եռապատիկը, եթե նշված չափը գերազանցում է ամսական դրամական բավարարման եռապատիկը, սակայն չի գերազանցում հնգապատիկը.

3. հնգապատիկը, եթե նշված չափը գերազանցել է ամսական դրամական բավարարման հնգապատիկը:

Այսինքն, օրենքը սահմանում է, որ զինձառայողների ծառայական պարտականությունները կատարելիս անզգուշաբար պատճառված վնասի համար պատասխանատվության չափը չի կարող գերազանցել ամսական դրամական բավարարման հնգապատիկը:

Այդ նույն օրենքի համաձայն գորամասի և այլ անձանց միջև քաղաքացիական պայմանագրերի շրջանակներում գորամասի վճարած տույժերի և տուգանքների համար մեղավոր զինձառայողների նյութական պատասխանատվությունը չի կարող ավելի լինել, քան ամսական դրամական բավարարման կրկնապատիկը:

Քաղաքացիական օրենսգիրքը պատասխանատվության չափի սահմանափակում է նախատեսում գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտորական ու տեխնոլոգիական աշխատանքներ կատարողների համար՝ սահմանելով, որ նրանք պարտավոր են հատուցել

պատվիրատուին պատճառված վնասները այն աշխատանքի արժեքի սահմաններում, որոնցում ի հայտ են եկել թերությունները, եթե պայմանագրով նախատեսված չէ, որ դրանք ենթակա են հատուցման աշխատանքի ընդհանուր արժեքի սահմաններում (Քաղ.օր.հոդվ. 775):

Բացի դրանից, Քաղ. օր.-ը և այլ իրավական ակտերը մեծամասնությամբ իրավախախտումից տուժած սուբյեկտներին թույլատրում են պահանջել միայն վնասների մի մասը՝ իրական վնասները: Այդպիսի սահմանափակում է նախատեսված գործարքներն անվավեր ճանաչելու դեպքում (307-318 հհ.), պարտավորությունների պայմանների մեծամասնության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար: Ընդ որում, տարբեր պարտավորություններում սահմանափակումները դրսևորվում են տարբեր ձևերով: Օրինակ, էներգամատակարարման պայմանագրով պարտավորությունը խախտած կողմը պարտավոր է մյուս կողմին հատուցել միայն իրական վնասները (Քաղ. օր. հոդվ. 547): Գիտահետազոտական ու տեխնոլոգիական աշխատանքներ կատարողը պարտավոր է իրական վնասները հատուցել այն աշխատանքի շրջանակներում, որոնցում ի հայտ են եկել թերությունները, եթե պայմանագրով նախատեսված չէ, որ դրանք ենթակա են հատուցման աշխատանքների ընդհանուր արժեքի սահմաններում (Քաղ. օր. հոդվ. 775, մաս 2): Տարբերությամբ սահմանափակումներ են նախատեսվում փոխադրման պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար (Օրինակ, Քաղ. օր. 865, 866 հհ):

Եթե նշված սահմանափակումներին էլ ավելացնենք, որ կրած վնասները զանձելու համար հայցվորը պետք է ապացույցներ ներկայացնի.

1) իրավախախտման և վնասների միջև գոյություն ունեցող պատճառական կապի, 2) վնասների ստույգ չափի, 3) վնասներից խուսափելու կամ դրանց չափը նվազեցնելու համար իր կողմից ձեռնարկված միջոցների մասին, ապա ստիպված ենք արձանագրել (իրականում էլ այդպես է), որ վնասների լրիվ հատուցում հնարավոր է ստանալ միայն բացառիկ դեպքերում, այն էլ՝ մեծ դժվարությամբ: Ստիպված ենք նաև մատնանշել, որ օրենսդիրը, որպես կանոն, թույլատրում է օգտվել վնասների լրիվ հատուցման իրավունքից այն դեպքում, երբ իրավախախտում են թույլ տալիս արտադրող կամ մատակարարող կազմակերպությունները:

Ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան, վնասների հա-





ման մեթոդական ցուցումներ<sup>1</sup>: Վնասների փոխհատուցման ձեռնարկներ<sup>2</sup>: Անգամ ԽՍՀՄ Սինիստրների խորհրդին առընթեր պետական արքիտրաժն ընդունեց «Մատակարարման պայմանագրի խախտմամբ պատճառված վնասների հատուցման վերաբերյալ վեճերի լուծման մասին» հատուկ հրահանգչական ցուցում<sup>3</sup>, որի հիմնական նպատակը պարտավորությունների չկատարման հետևանքով պատճառված վնասների, այդ թվում՝ բաց թողնված օգուտների գանձումն ապահովելն էր:

Չնայած նշված ջանքերին, բաց թողնված օգուտների մասին հայցեր չէին հարուցվում, որովհետև իրավաբանական անձանց բաց թողած օգուտների գումարը, որպես կանոն, սահմանափակվում էր պլանային շահույթի չափով<sup>4</sup>, և, բացի բաց թողնված օգուտների չափը հաշվարկելուց ու հիմնավորելուց, անհրաժեշտ էր նաև ապացուցել չստացված եկամուտների և իրավախախտման միջև պատճառական կապի առկայությունը, հայցվորի կողմից իրավախախտման հետևանքով առաջացած վնասները կանխելու կամ նվազեցնելու համար ձեռնարկված միջոցների ադեկվատությունը:

Ավելին, բաց թողնված եկամուտների գանձման համար սահմանված կարգը բացառում էր այդպիսիք գանձելու շահագրգռվածությունը: Բանն այն է, որ ըստ սահմանված կարգի՝ գանձված չստացված եկամուտների գումարը հետագայում կարող էր վերադարձվել իրավախախտողին և հարաբերություններ «փչացնելուց» բացի այլ արդյունք չէր տալիս: Օրինակ, «Մատակարարման պայմանագրով պարտավորությունների խախտմամբ պատճառված վնասների հատուցման կապակցությամբ վեճերի լուծման մասին» ԽՍՀՄ պետական արքիտրաժի 1974 թ. № Ի-1-33 հրահանգչական ցուցումը մի կողմից նախատեսում էր, որ չստացված պլանային շահույթը (չստացված եկամուտները) ենթակա է գանձման՝ անկախ այն բանից՝ հայցվորը կատարել, թե գերա-

կատարել է շահույթի պլանը, մյուս կողմից, սահմանում էր, որ հայցվորի չստացած պլանային շահույթը, ինչպես նաև առևտրական զեղչը, մատակարարման-իրացման վերադրերը գանձման ենթակա չեն, եթե պատասխանողը հետագայում կկատարի պարտավորությունը բնեղենով, և հայցվորն այդ արտադրանքի իրացումից կստանա շահույթ, զեղչ կամ վերադիր:

Հանրահայտ է, որ պլանային տնտեսության պայմաններում կազմակերպությունը, բացի այն մատակարարից, որին պլան է իջեցված, այլ տեղից հույժ, նյութեր, սարքավորումներ, ապրանքներ ստանալ չէր կարող: Մատակարար կազմակերպությունն էլ հարկադրված էր վաղ թե ուշ կատարել պլանը, որովհետև տուժանքի վճարումը և վնասների փոխհատուցումը նրան չէր ազատում պարտավորությունը բնեղենով կատարելու պարտականությունից (Արտադրանքի մատակարարման կանոնադրություն, կետ 104): Ուրեմն, ի՞նչ իմաստ ուներ շահութաբեր աշխատանքի պայմաններում «վատթարացնել հարաբերությունները» կոնտրագենտի առանձին թերացումների համար: Քաղաքացիների հարաբերություններում ևս չստացված եկամուտները պահանջելու առանձնակի ձգտում չէր դրսևորվում, քանի որ չստացված եկամուտներ համարվում էին միայն «աշխատանքային» եկամուտները, այսինքն, վարձատրության, վճարի օրենքով նախատեսված չափերը: Օրինակ, ամառանոցային տարածքի չվճարված վարձավճարը կարող էր գանձվել միայն պատշաճ կարգով հաստատված կոպարի սահմաններում<sup>1</sup>:

Ներկայումս էլ, չնայած օրենսդրորեն կատարված հիմնարար փոփոխություններին, բաց թողնված եկամուտները հաշվարկելը և ապացուցելը չափազանց բարդ խնդիր է: Գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքը (հոդվ. 17) բաց թողնված օգուտների գանձման համար սահմանել է երկու նորույթ, 1) անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել չստացած եկամուտները, որոնք կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), 2) եթե իրավունքը խախտված անձը դրա հետևանքով ստացել է եկամուտներ, ապա անձը, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին բաց թողնված օգուտի հատուցման պահանջի իրավունք ունի՝ այդ եկամուտներից ոչ պակաս չափով:

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 517:

<sup>1</sup> Մեթոդական ցուցումների մասին տե՛ս *Աիճի անաիեա օանձեիա իօ իաձօթաիեե իայճաօթեւնօա իինօթաեե իձիթօթօթե. Աիիթօթե, 1970, 15-50 էջեր:*

<sup>2</sup> Տե՛ս *Աինօթաձոթաի իւե Էի թօթ ՆՆՆՊ ի ի անթեթեւի թօթի Է-անեի յ յ նի անթաի Էթ, Օի ԷԷՊ ԿԷի Ն. Ի ինի Էթ Էթ Էի ճի անթօթ օանթօթե, Անիթե 6., Ի ի ան ձա. Օիձա Է.Ի ., Ի ., 1990.*

<sup>3</sup> Տե՛ս *Նեթօթի անթեթի անի իւե անիթի Էե Էինթօթօթեի ան օթաթի Էե Աինթաձոթաի իինի անթօթաթա իձե Նինթօթ Ի Էի Էնթօթի ՆՆՆՊ. Ի ., 1983, էջ 84:*

<sup>4</sup> Տե՛ս *Նեթօթի անթեթի անի իւե անիթի Էե Էինթօթօթեի ան օթաթի Էե Աինթաձօթաթա, էջ 84:*

Չնայած այդ և Քաղ. օր-ում կատարված այլ փոփոխություններին, վնասների լրիվ ծավալով փոխհատուցման (հատկապես բաց թողնված օգուտների պահանջի մասին) գործեր դատարաններում սակավ են հանդիպում: Այդ երևույթի պատճառների բացահայտման նպատակով մի քանի ձեռնարկություններում կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վնասների լրիվ հատուցման պահանջներ չներկայացնելը պայմանավորված է երկու հանգամանքով: Առաջին՝ արտադրող ձեռնարկությունները առավելապես շահագրգռված են բնեղեն ցուցանիշների (ապրանքային արտադրանքի թողարկում, արտադրանքի իրացում) ապահովմամբ, քան դրամական արտահայտությամբ վնասների գանձմամբ և պարտապանների կողմից պարտավորությունների խախտման դեպքում փնտրում են արտադրանք թողարկելու այլ հնարավորություններ, դրանով իսկ կանխելով վնասների առաջացումը: Երկրորդ՝ բաց թողնված եկամուտների ապացուցման դժվարություններով, ինչպես նաև փոխհատուցման համարժեքությանը, հաշվարկման գների ընտրությանը, ինֆլյացիայի հաշվառմանը և բուն վնասների ծավալի հաշվարկման առանձնահատկություններին ներկայացվող այլ պահանջներով: Օրինակ, գործող օրենսդրությունը պարտավորության կատարման կետանցում թույլ տալուց հետո տեղի ունեցած ինֆլյացիայի հետևանքով պատճառված վնասների հաշվարկ և դրանք իրավախախտման հետևանքով տուժողի վնասների գումարին ավելացնելու կարգ և հնարավորություն չի նախատեսում, մինչդեռ պահանջում է, որ հայցվորն ապացույցներ ներկայացնի իր վնասների և պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքների հավասարության (համարժեքության) մասին, կամ այն մասին, որ ինքը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները դրանք կանխելու կամ դրանց չափը նվազեցնելու համար: Այսինքն, օրենսդիրը ոչ թե իրավախախտողից, այլ տուժողից է պահանջում միջոցներ ձեռնարկել իրավախախտման հետևանքները կանխելու կամ նվազեցնելու համար: Այլ խոսքով ասած՝ վնասների հատուցումը կախվածության մեջ է դնում իրավախախտողի կողմից պատճառված վնասների ծավալի կրճատմանը տուժողի օժանդակելու կամ չօժանդակելու հանգամանքից:

Նման մոտեցումը, մեր կարծիքով, լրիվ հատուցման սկզբունքի կիրառման ամենալուրջ խոչընդոտներից մեկն է և պետք է վերացվի: Իհարկե դա չի նշանակում, որ տուժողին կարելի է թույլ տալ պահանջելու ցանկացած վնաս, այդ թվում՝ նաև այն վնասը, որի ծավալի ավե-

լացման մեջ կա նաև իր մեղավորությունը: Բայց նաև արդարացի չէ նրանից պահանջել այն, ինչ ինքն անել պարտավոր չէ:

Բնականաբար, վնասների փոխհատուցումը ծառայում է իր նպատակին, երբ սանկցիայի կիրառման արդյունքում տուժողի գույքային վիճակը բարելավվում է մինչև այն աստիճան, որում նա կգտնվեր, եթե նրա իրավունքները չխախտվեին: Այսինքն, հատուցումը պետք է լինի համարժեք, ապահովի իրական փոխհատուցում: Այն չի կարող ավելին լինել այն կորուստներից և չստացած եկամուտներից, որոնք առաջացել են իրավախախտման հետևանքով: Վնասների փոխհատուցում պահանջողը պարտավոր է ամենայն մանրամասնությամբ և ճշգրիտ հաշվարկել իրավախախտման հետևանքով կրած վնասների և դրանց վերացման համար կատարվելիք ծախսերի ծավալը: Բայց քանի որ սահմանված չեն վնասները ճշգրտությամբ հաշվարկելու և հիմնավորելու մեխանիզմներ, վնասների ստույգ չափի հաշվարկումը դառնում է չափից ավելի աշխատատար, դժվարին, շատ դեպքերում նաև՝ արդյունք չտվող գործ: Բանն այն է, որ դրանց հաշվարկումը և չափի ապացուցումն առավելագույնս դժվարանում է գների անընդհատ փոփոխության, ինֆլյացիայի, բանկային տոկոսների փոփոխման և շուկայական կոնյուկտուրայի այլ գործոնների փոփոխման կապակցությամբ: Ի լրումն դրանց, օրենքը պահանջում է, որ բաց թողնված օգուտները հաշվարկելիս հաշվի առնվեն դրանք ստանալու համար պարտատիրոջ ձեռնարկած միջոցները և այդ նպատակով կատարված նախապատրաստությունները (Քաղ. օր. հոդված 409, մաս 4): Բնական է, որ նման պայմաններում քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցները հնարավորինս խուսափում են վնասների (առավելապես՝ բաց թողնված օգուտների) փոխհատուցման մասին հայցեր ներկայացնելուց:

Վնասների հատուցման վերաբերյալ հայցերի հարուցման գործում գոյություն ունեցող պրոբլեմները կարելի է լուծել վնասների չափի հաշվարկման և դրանց ապացուցման մեխանիզմներն օրենսդրորեն մանրամասն կարգավորելու ճանապարհով: Ընդ որում, այդ ուղղությամբ առաջին քայլերը Քաղ. օր-ը արդեն կատարել է: Նախ՝ սահմանել է, որ եթե իրավունքը խախտած անձը դրա հետևանքով ստացել է եկամուտներ, ապա անձը, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին բաց թողնված օգուտի պահանջի իրավունք ունի՝ այդ եկամուտներից ոչ պակաս չափով (Քաղ. օր. հոդված 17), ապա նախատե-

սել է, որ վնասները որոշելիս նկատի են առնվում պարտապանի կողմից պարտատիրոջ պահանջը կանոնված բավարարելու օրն այն վայրում գոյություն ունեցող գները, որտեղ պարտավորությունը պետք է կատարվեր, իսկ եթե պահանջը կանոնված չի բավարարվել, ապա՝ դատարանի վճռի կայացման օրը գոյություն ունեցող գները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով (Քաղ. օր. հոդված 409, մաս 3):

Մեր կարծիքով, կատարված նորամուծություններն ինչ-որ չափով նպաստում են բաց թողնված օգուտների մասին համապատասխան պահանջներ ներկայացնելու գործընթացի աշխուժացմանը, բայց բավարար չեն դրանց հատուցումն ապահովելու համար: Այդ խնդիրը կարելի է լուծել, եթե ՀՀ Քաղ. օրենսգիրք ներմուծվի «Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքների» 7.4.3 հոդվածի 3 կետը: Ըստ այդ կետի՝ «եթե վնասների չափը չի կարող որոշվել բանական աստիճանի հավաստիությամբ, դրա չափի որոշումը կատարվում է դատարանի հայեցողությամբ»: Նման կանոն նախատեսելն անվերապահորեն կօժանդակի ոչ միայն իրական վնասների, այլև բաց թողնված օգուտների պահանջով հայցերի հատուցմանը, քանի որ նշված կանոնը վերաբերում է ոչ միայն վնասների առկայության, այլև դրանց չափի ապացուցմանը: Այդ պատճառով էլ, եթե վնասների գումարն անհրաժեշտ հավաստիությամբ (որոշակիությամբ) որոշված չէ կամ չի կարող որոշվել, «դատարանը, փոխանակ մերժի փոխհատուցումը կամ որոշի նոմինալ վնասների փոխհատուցում, իրավունք կունենա որոշել կրած վնասների արդարացի չափ»<sup>1</sup>:

Իհարկե առաջարկված փոփոխությունների կատարումը մեծապես կնպաստի վնասների լրիվ հատուցման սկզբունքի լիարժեք կիրառությունն ապահովելուն, սակայն դա չի նշանակում, որ գործող օրենսդրության պարագայում հնարավոր չէ վնասների փոխհատուցում պահանջել և դրանց չափն ապացուցել: Այն պարագայում, երբ թույլատրվում է բաց թողնված եկամուտները հաշվարկել՝ հիմք ընդունելով քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում ստացվող եկամուտները, դրանց հաշվարկները և ապացուցելը միանգամայն հնարավոր է, և արդեն պրակտիկայում նման հայցեր հարուցվում են:

<sup>1</sup> Տե՛ս Ի ծեփօեփն ի աաաօփաճփափնօ օփն ի աժ-աճեօօ փփափաճփա. Ի ., 2003, 221-222 էջեր:

Օրինակ «Նոյան Տապան» ՍՊԸ-ն հայցադիմում էր ներկայացրել ՀՀ տնտեսական դատարան՝ խնդրելով «Արարատ սերվիս» ՍՊԸ-ին պարտավորեցնել բնեղենով կատարելու պայմանագրով ստանձնած պարտավորությունները և փոխհատուցել պարտավորությունների չկատարման հետևանքով վնասները՝ կազմված հետևյալ բաղադրիչներից՝ 1.486.479 դրամ՝ պատասխանողի անփութության հետևանքով կատարված ծախսեր և 1 մլն. դրամ՝ չստացված եկամուտները:

Պատասխանողը, ընդունելով իրական վնասները, առարկում էր բաց թողնված եկամուտների պահանջի դեմ՝ գտնելով, որ բաց թողնված եկամուտների համար ինքը կարող է պատասխանատվություն կրել մինչև 2001թ. նոյեմբերի 1-ը, քանի որ նոյեմբերի 1-ից «TV-6» ալիքի հեռարձակումը դադարեցվել է, և գովազդ չտալու հետևանքով եկամուտներ չեն ստացվել:

Տնտեսական դատարանը, դատաքննության ընթացքում պարզելով, որ հայցվորի պահանջը հիմնավորված է, և դեկավարվելով Քաղ. օր. 409 հոդվածի 4-րդ մասով («բաց թողնված օգուտը որոշելիս հաշվի են առնվում ստանալու համար պարտատիրոջ ձեռնարկած միջոցները և այդ նպատակով կատարված նախապատրաստությունները»), ինչպես նաև 17 հոդվածի 3-րդ մասով՝ («եթե իրավունքը խախտած անձը դրա հետևանքով ստացել է եկամուտներ, ապա անձը, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին բաց թողնված օգուտների հատուցման պահանջի իրավունք ունի՝ այդ պահանջից ոչ պակաս չափով»), որոշել է բաց թողնված օգուտների մասով հայցը բավարարել և 14.09 2001-31.12.2001թթ. ընկած ժամանակահատվածի համար գանձել 700.000 դրամ<sup>1</sup>:

Բերված և դատական պրակտիկայում հանդիպող այլ օրինակները (տես Քաղաքացիական գործ թիվ ՏՎ-30, 2002թ.) ցույց են տալիս, որ բաց թողնված օգուտների վերաբերյալ հայցերը կարող են բավարարվել, եթե գործարարությամբ զբաղվող սուբյեկտները սովորեն հաշվառել այն կոնկրետ կորուստները, որոնք առաջանում են իրավախախտման հետևանքով և տնտեսագիտորեն հիմնավորեն այդ վնասները: Նման աշխատանք կատարելու համար պետք է ապահովել ոչ միայն գործարարների շահագրգռվածությունը, որը կարծեք թե սկսում է կենսագործ-

<sup>1</sup> Տե՛ս Քաղաքացիական գործ թիվ Տ-452, 2002թ. Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, Եր. 2002, 337-340 էջեր:

վել, այլև օրենսդրորեն նախատեսել համապատասխան արդյունք ապահովող իրավական երաշխիքներ: Մեր կարծիքով, անհրաժեշտ է, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր գործարար աշխատում է իր ռիսկով, պարբերաբար շահույթ ստանալու նպատակով, քննարկման առարկա չդարձնել եկամուտներ չստանալու և իրավախախտման միջև պատճառական կապի առկայության և տուժողի կողմից իրավախախտման հետևանքով առաջացած վնասները կանխելու կամ նվազեցնելու համար ձեռնարկված միջոցների հարցը: Նման մոտեցումն ընդունելի և արդարացված է նախ այն պատճառով, որ ըստ Քաղ. օր. 417 հոդվածի, գործարարական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում գործարարական ռիսկի համար, այսինքն, անկախ մեղքից, որն էլ երկրորդական է դարձնում պատճառական կապի ապացուցման անհրաժեշտությունը, երկրորդ, այն պատճառով, որ շրջանառության սովորական պայմաններում ստացվող շահույթը կոնկրետ իրավահարաբերության հետևանքով առաջացող դրամական գնահատություն ունեցող, հաշվարկման ենթակա և տվյալ փուլում բացահայտվող չստացած եկամուտ է, որը գրեթե չի արտացոլում գործարարական գործունեության (առավել մեծ չափով արտադրական) ռիսկի խախտման հետևանքով առաջացող իրական կորուստները և այդ պատճառով առաջացող իրական չստացած եկամուտները: Այդպիսի չհաշվարկվող կորուստներ առաջանում են տեխնոլոգիական պրոցեսների խախտման, սարքավորումների պարապուրդի, նոր տեխնիկա ժամանակին չներդնելու, արտադրողականության աճի տեմպերն արհեստականորեն դանդաղեցնելու, արտաժամյա աշխատանքներ կազմակերպելու, մրցակցության կոնյուկտուրայի փոփոխության, ինֆլյացիայի, գների նվազման և շատ ու շատ այնպիսի գործոնների հետևանքով, որոնք երբևէ չեն հաշվարկվում և չեն փոխհատուցվում քաղաքացիական շրջանառության սովորական պայմանների համար հաշվարկվող եկամուտների մեջ:

Մեր կարծիքով, չստացված եկամուտները (բաց թողնված օգուտ, գնազեղչ, առևտրական վերադիր, նախատեսվող գուտ եկամուտ և այլն), պետք է իրավախախտողից գանձվեն առանց որևէ նախապայմանի՝ անկախ տուժողի ձեռնարկված միջոցներից: Ինքնաձախսածածկման և իրական տնտեսաշարժի կիրարկման ներկա ժամանակաշրջանում, երբ անհամեմատ բարձրացել է գործարար սուբյեկտների շա-

հագրգռվածությունը, յուրաքանչյուր լուծայի արդյունավետ օգտագործման համար, անհրաժեշտ է նոր վերաբերմունք դրսևորել չստացված եկամուտների գանձման նկատմամբ: Անհրաժեշտ է դատավարական օրենսդրությամբ տնտեսական դատարաններին իրավունք վերապահել բաց թողնված եկամուտների մասին հիմնավորված հայցերը բավարարել՝ անկախ դրանց առաջացումը կանխելու կամ չափը նվազեցնելու համար տուժողի կողմից ձեռնարկված միջոցառումներից և անկախ իրավախախտման և չստացված եկամուտների միջև գոյություն ունեցող պատճառական կապի առկայությունը հիմնավորելու ունակությունից: Պետք է նկատի ունենալ, որ գործարարությամբ զբաղվող յուրաքանչյուր սուբյեկտի գոյատևման և արդյունավետ գործունեության հիմնական նախապայմանը շահութաբեր աշխատանքն է, որի համար նա ձեռնարկում է իրենից կախված բոլոր միջոցները՝ ակնկալիքով, որ նման գործելակերպ կդրսևորեն բոլոր գործարարները: Եվ, եթե իր կոնտրագենտներից որևէ մեկը դրսևորում է անբարեխղճություն, ապա նա էլ պետք է կրի այդ անբարեխղճության բոլոր հետևանքները:

Այդ առումով, թերևս կարելի է ընդօրինակել վնասների հատուցման ամերիկյան դոկտրինայի որոշ սկզբունքներ: Վնասների արժանահավատության ամերիկյան դոկտրինայի սկզբունքներ, ինչպես նշում է Ա.Ս. Կոմարովը, ընդունված է համարել հետևյալները՝

- ա) եթե կորուստների փաստը ստույգ ապացուցված է, դրա ծավալը և գումարը կարող են լինել բանական ենթադրության առարկա,
- բ) վնասների չափը որոշելու դժվարությունները դրանք փոխհատուցելու խոչընդոտներ չեն հանդիսանում,
- գ) վնասների կոնկրետ չափը որոշելիս մաթեմատիկական ճշգրտություն չի պահանջվում,
- դ) բավարար է, եթե ներկայացված է ամենահավանգիչ վկայություն (best evidence), որը թույլ է տալիս իրավիճակը,
- ե) հայցվորը կարող է փոխհատուցել պայմանագրի սպասվող շահույթներով կանխորոշված «արժեքը»,
- ը) «շահույթները», եթե նրանց կորուստը հատուցել հնարավոր չէ, երբեմն կարող են, այնուհանդերձ, ծառայել որպես կորուստների ապացույց<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս *Էնի օձի Թ.Ն. Ի օձաձոձաձի ձոն օ օնի օձ-օնի ձի օձի օձ. Ի ., 1991, էջ 131: Թձաձի օնե՞ Ի .Ի. Թեօծյի օնե՞ Թ.Թ. Թի օնի օնի օձաձի. Ի օնե՞ օնի օնի օնի. Ի ., 1997, էջ 532:*

Դժվար չէ նկատել, որ նշված սկզբունքներից առաջին չորսը հաջորդությամբ կարող են կիրառել նաև Հայաստանի Հանրապետության դատարանները:

Ինչ վերաբերում է վնասների չափի որոշմանը, ապա ճիշտ կլինի մինչև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելը ղեկավարվել «Միջազգային առևտրային պայմանագրի սկզբունքներ»-ի 7.4.2. և 7.4.3. հոդվածների կանոններով: 7.4.2 հոդվածը նախատեսում է, որ տուժող կողմը չկատարման հետևանքով առաջացած վնասների լրիվ փոխհատուցման իրավունք ունի: Այդ վնասը ներառում է կողմից կրած ցանկացած կորուստները և ամեն մի օգուտ, որից նա զրկվել է, հաշվի առնելով տուժողի՝ ծախսերից և կորուստներից խուսափելու հետևանքով ստացած ցանկացած օգուտ: Ինչպես պարզաբանվում է պաշտոնական մեկնաբանություններում. 1) նշված հոդվածը, հենվելով Վիեննայի կոնվենցիայի 74 հոդվածում նախատեսված նորմի վրա, սահմանում է, որ տուժող կողմն ունի ոչ միայն կատարած ծախսերի, այլև չկատարման հետևանքով չստացած շահույթի փոխհատուցման իրավունք, 2) վնասների փոխհատուցումը տուժողին չպետք է հարստացնի, որի համար անհրաժեշտ է հաշվի առնել չկատարման հետևանքով տուժողի մոտ առաջացած ամեն մի օգուտ, անկախ նրանից՝ դրանք արտահայտվում են չկատարված ծախսերի ձևով (օրինակ, նա չի վճարել չժամանած դերասանի հյուրանոցի վարձը), թե այնպիսի ծախսերի ձևով, որոնց կատարումից խուսափել է (օրինակ, չկատարելով այն, ինչն իր համար կորսված գործարք է)<sup>1</sup>: Այսինքն, նշված հոդվածը, սահմանելով վնասների լրիվ փոխհատուցման իրավունքը, պահանջում է, որ բաց թողնված օգուտների հաշվարկը կատարվի այն խելամիտ (ընդունելի) ծախսերի հաշվառմամբ, որպիսիք պարտատերը կկատարեր, եթե պարտավորությունը ժամանակին և պատշաճ կատարվեր: Օրինակ, հումքի չմատակարարման հետևանքով չստացած եկամուտների հաշվարկը կարելի է կատարել, ելնելով պատրաստի արտադրանքի իրացման այն գնից, որը կնքվել է գնորդի հետ պատրաստի արտադրանքի իրացման համար, դրանից հանելով չմատակարարված հումքի արժեքը, չվճարված տրանսպորտային և պատրաստի արտադրանքի արտադրության համար նախա-

<sup>1</sup> Ств І дѣі оѣі џ і ааѣі а дѣі а і џ і і а д=аѣѣѣ а і а і а і д і а ., 2003, 217-219 էջեր:

տեսված, բայց չկատարված այլ ծախսերը:

Ինչ վերաբերում է 7.4.3. հոդվածին, ապա այդ հոդվածը, սահմանելով, որ փոխհատուցման ենթակա է միայն այն վնասը (ներառյալ ապագա վնասը), որը որոշված է բանական աստիճանի հավաստիությամբ (արժանահավատությամբ), դատարաններին իրավունք է վերապահում այն դեպքերում, երբ վնասների չափը բանական աստիճանի արժանահավատությամբ որոշել հնարավոր չէ, վնասների չափը որոշել սեփական հայեցողությամբ: Այսինքն՝ հոդվածը, մեկ անգամ ևս հավաստելով վնասների արժանահավատության (ճշգրտության) մասին հանրահայտ պահանջը, սահմանում է, որ «չկատարող կողմը չպետք է փոխհատուցի այն վնասը, որը չի առաջացել և չի կարող երբեք առաջանալ», թույլատրելի է համարում փոխհատուցել նաև առաջանալիք վնասը, եթե այն բավականաչափ արժանահավատ է: Դրա հետ միասին այդ հոդվածի 3-րդ կետը, այն դեպքում, երբ վնասների չափը ստույգ հաշվարկել (բավարար արժանահավատությամբ, ճշգրտորեն) հնարավոր չէ, դատարաններին իրավունք է վերապահվում փոխհատուցումը մերժելու կամ նվազագույն վնասների հատուցում սահմանելու փոխարեն, որոշել կրած վնասների արդարացի չափ<sup>1</sup>:

Հարկ է նկատել, որ գրեթե նման իրավունք Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը նախատեսել է հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության համար: Մասնավորապես, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը իրավունք է վերապահում վնասի կամ բաց թողնված օգուտի հատուցման փոխարեն վճարել դրամական փոխհատուցում: Նշված դրամական փոխհատուցման չափը, խախտման բնույթից և հետևանքներից ելնելով, սահմանում է դատարանը:

Նշվածը սուկ մասնավոր դեպք է, մինչդեռ պրակտիկական կշահեր, եթե «Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունք»-ների 7.4.3. հոդվածի կանոնն, իր տեղը գտներ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր դրույթներում: Բայց թվում է, որ նման կանոնի բացակայությունը պրակտիկայի ձևավորման մեծ խոչընդոտ չէ: Մեր կարծիքով, այդ կանոնի կիրառման հետևաբար նաև դատական պրակտիկայի փոփոխման լեզալ հիմք կարող են ծառայել

<sup>1</sup> Ств І дѣі оѣі џ і ааѣі а дѣі а і џ і і а д=аѣѣѣ а і а і а і д і а ., 2003, 221-222 էջեր:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև Քաղ. օր. 6 և 9-ը հողվածները: Այդ հողվածներից առաջինն ընդգծում է միջազգային պայմանագրերի անմիջական կիրառությունը, իսկ երկրորդը՝ իրավունք է վերապահում օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում կողմերի իրավունքները և պարտականությունները որոշել՝ ելնելով քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից (իրավունքի անալոգիա) և բարեխղճության, բանականության և արդարացիության պահանջներից<sup>1</sup>:

Արված եզրակացության ճշմարտության մասին է վկայում այն հանգամանքը, որ այլ երկրներում օրենսդրության անկատարությունը, ավելին՝ օրենսդրությամբ վնասների լրիվ հատուցման սկզբունքի «սահմանափակումները» դատարանների համար վնասների լրիվ հատուցման մասին պահանջները մերժելու հիմք չեն համարվում: Դատարանները, կողմերից առաջանալու պարագայում, դեկլարվում են ոչ թե ներպետական օրենսդրությամբ, այլ միջազգային իրավական նորմերի կանոններով: Այս առումով բավականին ուսանելի է Ռուսաստանի Դաշնության դատարանների փորձի և այդ կապակցությամբ քաղաքացիագետների կատարած վերլուծությունների ուսումնասիրությունը: Թե՛ Հայաստանի Հանրապետության, թե՛ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրությամբ տրանսպորտային կազմակերպությունները պարտավոր են ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռներ, ուղևորներ և ուղեբեռներ փոխադրել ցանկացած քաղաքացու կամ իրավաբանական անձի պահանջով: Ընդհանուր օգտագործման տրանսպորտով փոխադրման պայմանագիրը հրապարակային պայմանագիր է (Քաղ. օր. հողված 859): Այդ պայմանագրերի մասսայական բնույթի պայմաններում տրանսպորտային կազմակերպությունները հնարավորություն չունեն յուրաքանչյուր պայմանագրի կոնկրետ պայմանները քննարկելու, որի պատճառով էլ մշակում են ընդհանուր կանոններ տրանսպորտային ծառայություններից բոլոր օգտվողներ համար: Ընդունել, թե չընդունել տրանսպորտային կազմակերպության կողմից առաջարկվող պայմանները, թողնված է հաճախորդի հայեցողությանը: Նա կարող է միանալ տրանսպորտային կազմակերպության

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Բ., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 524: Ավելորդ չենք համարում նշել, որ ՀՀ քաղ. օր. 9-րդ հողվածը բարեխղճության, բանականության և արդարացիության պահանջները, որպես իրավունքների և պարտականությունների որոշման անհրաժեշտ պայմաններ, չի նախատեսում:

առաջարկած պայմաններին կամ հրաժարվել նրա ծառայություններից: Հետևաբար, հրապարակային պայմանագիրը դառնում է նաև այսպես կոչված՝ ֆորմուլյար իրավունքի շրջանակներում գոյություն ունեցող միանալու պայմանագիր<sup>1</sup>:

Այդ պայմանագրով՝ փոխադրողը պարտավորվում է բեռը, ուղևորին և ուղեբեռը նշանակման վայր հասցնել պայմանագրով նախատեսված ժամկետներում, իսկ այդպիսի ժամկետների բացակայության դեպքում՝ բնականոն ժամկետներում (Քաղ. օր. հող. 862): Եթե փոխադրողը խախտում է այդ պարտականությունը, պետք է կրի նորմատիվ ակտերով նախատեսված պատասխանատվություն: Սակայն օգտվելով փոխադրման կանոններ ընդունելու իրավունքից, փոխադրողները ձգտում են առավելագույնս սահմանափակել փոխադրումն ուղացնելու համար իրենց պատասխանատվությունը: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության օդային փոխադրման կանոնները նախատեսում են, որ չվացուցակը կարող է փոփոխվել առանց նախագուշացման: Փոխադրողը, եթե այդպես են պահանջում հանգամանքները, կարող է փոխել երթուղին, չվացուցակում նշված վայրում վայրէջք չկատարել, առանց զգուշացման փոխել, ընդհատել, հետսձգել ցանկացած չվերթ և այլն<sup>2</sup>: Իսկ Ռուսաստանի Դաշնության օդային օրենսգրքի 120 հողվածը ուղևորին տեղ հասցնելն ուղացնելու համար սահմանում է տուգանք դաշնային օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի 25% չափով՝ ուղացրած յուրաքանչյուր օրվա համար, բայց ոչ ավելի՝ ուղեվարձի 50%-ից<sup>3</sup>: Այդ օրենսգրքը ուղևորին տեղ հասցնելն ուղացնելու համար վնասները հատուցելու մասին դրույթ չի պարունակում: Բայց նման հանգամանքը արգելք չի հանդիսանում, որպեսզի ուղևորները պահանջեն և ստանան ոչ միայն օրենքով նախատեսված տուգանքը, այլև իրենց կրած վնասները:

Օրինակ, քաղաքացի Գ.-ն հայց էր հարուցել «Սախալինի ավիատուրիներ» ընկերության դեմ՝ նյութական և բարոյական վնասի փոխհա-

<sup>1</sup> Տե՛ս Çaëãñëë Ā. Ī òããòãããããããã òðãããããããã ìðãããããããã ìðãããããããã çã ìðãããããããã ãëãããããããã ìããããããããã // Õï çÿëñòãã ì ì ðããããã. 2004, No 3, էջ 117:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետությունը «Օդային փոխադրման կանոնները» դեռևս չունի, բայց առանց «օրինական հիմքի» ընդօրինակել է նման վարվելաձև:

<sup>3</sup> Քանի որ Հայաստանի Հանրապետությունն օդային օրենսգրք չունի, բնականաբար նաև տրանսպորտային կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման խախտումների համար ՀՀ օրենսդրությամբ որևէ պատասխանատվություն չի սահմանել:

տուցման պահանջով: Նա հենվում էր այն բանի վրա, որ 1996թ. հունիսի 22-ին, ավիաընկերության դրամարկղում ձեռք բերելով տոմսեր, ընտանիքի հետ թռել է ք. Պուսան: 1996թ. հունիսի 26-ին Հարավային Սախալին հետադարձ թռիչքի համար մեկնել է օդանավակայան և իմացել, որ չվերթը հանվել է: Քաղաքացի Գ-ն կարողացել է Հարավային Սախալինսկ թռնել միայն 1996թ. հուլիսի 2-ին Սեուլ քաղաքից, որտեղ ինքը հասել է տաքսիով:

Չնայած այն բանին, որ տոմսի վրա «Ուղեբեռի և բեռների փոխադրման» Ռ-Գ 1996թ. կանոնների 10.1.1. և 10.1.2 կետերի բովանդակությունը վերարտադրված էր (դրանք փոխադրողին իրավունք են վերապահում հանել չվերթն առանց ուղևորին նախագուշացնելու), Գ-ն գտնում է, որ իրեն պատճառվել է նյութական վնաս (ավիաընկերության չմատուցած ծառայության արժեքը, ք. Պուսանից ք. Սեուլ մեկնելու արժեքը և կատարած այլ ծախսերը), որը պետք է հատուցի ավիաընկերությունը: Գործը տարբեր առյուծներում քննվելուց հետո Ռ-Գ Գերագույն դատարանի քաղաքացիական գործերով դատական կոլեգիան ոչ միայն բավարարել է հայցը, այլև իր որոշման մեջ մատնանշել, որ Ռ-Գ Քաղ. օր. 151 հոդվածի ուժով՝ եթե քաղաքացուն պատճառվել է բարոյական վնաս<sup>1</sup> (ֆիզիկական և բարոյական տանջանքներ), նրա անձնական ոչ գույքային իրավունքները խախտող գործողություններով կամ քաղաքացուն պատկանող այլ ոչ նյութական բարիքների նկատմամբ ոտնձգելու միջոցով, դատարանը կարող է իրավախախտողի վրա դնել վնասը հատուցելու պարտականություն:

Մեկ այլ գործով՝ քաղաքացի Ջ-ի հայցով ընդդեմ «ԱԷԲՈՖ-ԼՈՏ»-ի, ՏՈՒ-402 26.06.98թ. չվերթը չորս ժամ ուշացնելու համար տուգանք գանձելու և բարոյական վնասը փոխհատուցելու մասին վեճի վերաբերյալ վերջնական որոշումը կայացրել է Մոսկվայի քաղաքային դատարանի քաղաքացիական գործերով կոլեգիան 2003 թ. հուլիսի 14-ին:

Դատական կոլեգիայի որոշման մեջ նշվում էր, որ փոխադրման պայմանագրով պատասխանողը, իր վրա պարտականություն է վերցրել ապահովել սարքին տրանսպորտային միջոցի չվացուցակում նախատեսված ժամկետին մեկնումը և ուղևորին նշանակման վայրը պայ-

<sup>1</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրքը բարոյական վնասի փոխհատուցում չի նախատեսում:

մանագրով նախատեսված ժամկետում հասցնելը: Պատասխանողն առարկում էր հայցի դեմ, պատճառաբանելով, որ տրանսպորտային միջոցը ժամանակին չտրամադրելը կապված է եղել օդանավի՝ ուղևորների կյանքին և առողջությանը սպառնացող անսարքությունները վերացնելու հետ: Դատարանն անսարքությունների վրա հիմնվելը ճանաչել է անհիմն, քանի որ պայմանագրով այդ փոխադրումը կատարելու համար կոնկրետ օդանավ չի նախատեսվել, իսկ փոխադրողն էլ պարտավոր է ապացուցել առաջացած անսարքություններում իր մեղքի բացակայությունը:

Դատական կոլեգիան չընդունեց նաև փոխադրողի կողմից Սիջազգային օդային փոխադրումների կանոնների» 10.1.1 և 10.1.2 կետերը վկայակոչելը, որոնց համաձայն՝ տոմսում, չվացուցակում կամ այլ փաստաթղթում նշված մեկնման և ժամանման ժամկետները չեն երաշխավորվում և չեն համարվում փոխադրման պայմանագրի պայմաններ:

Դատական կոլեգիայի կարծիքով այդ փաստարկը հիմնագուրկ է (несостоятелен), քանի որ Ռ-Գ Սահմանադրության 15 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքները և միջազգային իրավունքի նորմերը և Ռ-Գ միջազգային պայմանագրերը հանդիսանում են իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Համաձայն 1929թ. Վարշավայի կոնվենցիայի 19 հոդվածի փոխադրողը պատասխանատվություն է կրում ուղևորներին, ուղեբեռին, բեռների ուշացման հետևանքով պատճառած վնասի համար, իսկ համաձայն նույն կոնվենցիայի 23 հոդվածի՝ փոխադրողին պատասխանատվությունից ազատող կամ կոնվենցիայով սահմանված պատասխանատվությունից ավելի ցածր պատասխանատվություն նախատեսող ցանկացած վերապահում անվավեր է և որևէ հետևանք չի առաջացնում: Մոսկվայի քաղաքային դատարանի քաղաքացիական գործերով կոլեգիայի որոշմամբ «ԱԷԲՈՖԼՈՏ»-ին պարտավորեցվեց ուղևորին վճարել տեղ հասցնելն ուշացնելու համար տուգանքը (Ռ-Գ Օդային օրենսգրքի 120 հոդվ.) և փոխհատուցել բարոյական վնասը<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, Ռուսաստանի Դաշնության դատարանները ելնում են այն սկզբունքից, որ պայմանագրի խախտմամբ պատճառված վնասները, անկախ ներքին օրենսդրությամբ նախատեսված սահ-

<sup>1</sup> Տե՛ս Ջալենսկի Բ., նշված հոդվածը, էջ 121:

մանափակումներից, ենթակա են հատուցման, քանի որ ըստ Սահմանադրության Ռուսաստանի Դաշնության օրենսդրության մասը կազմող և ուղղակի գործող նորմեր պարունակող միջազգային պայմանագիր, տվյալ դեպքում՝ Վարչավայի կոնվենցիայի 19 հոդվածը, միանշանակ սահմանում է, որ փոխադրողը պատասխանատվություն է կրում ուղևորի, ուղեբեռի կամ բեռի փոխադրումն ուղացնելու հետևանքով առաջացած վնասների համար: Ընդ որում, ըստ այդ կոնվենցիայի՝ ամեն մի վերապահում, որն ուղղված է փոխադրողին պատասխանատվությունից ազատելուն կամ կոնվենցիայով սահմանված ավելի պակաս պատասխանատվություն սահմանելուն, անվավեր է և ոչ մի հետևանք չի առաջացնում<sup>1</sup>:

Մենք բաժանում ենք պրոֆեսոր Բ. Չալեսկու այն կարծիքը, որ ուղևորների մասսայական փոխադրումներ իրականացնող առևտրային կազմակերպությունների գործունեությունը սեփական ռիսկով իրականացվող առևտրային գործունեություն է, նրանք կրում են բարձրացված պատասխանատվություն և, ըստ Քաղ. օր. 417 հոդվածի, պատասխանատվությունից կարող են ազատվել միայն, եթե ապացուցեն, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով<sup>2</sup>: Ասվածին ցանկանում ենք ավելացնել նաև, որ գործարարական գործունեությամբ զբաղվող փոխադրողին պայմանագրով այլ բան նախատեսելու իրավունք վերապահելը (Քաղ. օր. 417 հոդվ.) չի նշանակում, որ օրենսդիրը կամ տրանսպորտային կազմակերպությունն իրավունք են ստանում սահմանափակելու փոխադրման հարաբերությունների խախտման համար պատասխանատվությունը: Քաղ. օր. 417 հոդվածի «եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ» վերապահումը նշանակում է, որ գործարարական ռիսկի համար պատասխանատվության փոխարեն իրավունք է վերապահվում նախատեսելու պատասխանատվություն փոխադրողի մեղավորության դեպքում:

Շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ տրանսպորտային հարաբերությունների կարգավորմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման ժամանակ անհրաժեշտ է ոչ միայն ղեկավարվել այդ հարաբերությունները կանոնակարգող միջազգային ակտերով, այլև հաշվի առնել այդ հարաբերությունների կարգավորման բնագավառում այլ երկրների կուտակված փորձը, պատասխա-

<sup>1</sup> Այդ կոնվենցիան գործում է նաև Հայաստանի Հանրապետությունում:

<sup>2</sup> Տե՛ս Չալեսկի Բ., նշված աշխատությունը, էջ 122:

նատվության կիրառման դատական պրակտիկան և ստեղծել այնպիսի օրենսդրություն, որը կբացառի տարաբնույթ մեկնաբանությունները և կամայական կիրառությունը:

Այս իմաստով կարևորում ենք նաև բարոյական վնասի հատուցումն ապահովելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքում համապատասխան լրացում կատարելու անհրաժեշտությունը: Հանրահայտ է, որ անձնական ոչ գույքային իրավունքների խախտումը կարող է առաջացնել և նյութական, և ոչ նյութական (բարոյական) վնաս: Նյութական վնաս առաջանալու դեպքում վնասի հատուցումն օգտագործվում է որպես նյութական գրկանքների դրամական փոխհատուցում: Այդ վնասը հատուցվում է Քաղ. օր. իններորդ՝ «Վնաս պատճառելու հետևանքով ծագող պարտավորություններ» բաժնի ընդհանուր կանոններով, եթե օրենքով պատասխանատվության ավելի բարձր չափ նախատեսված չէ (Քաղ. օր. 1077 հոդվ.):

Ինչ վերաբերում է անձնական ոչ գույքային իրավունքների խախտման հետևանքով առաջացած բարոյական վնասին, ապա ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքը, ի տարբերություն ՀՀ նախկին քաղաքացիական օրենսգրքի և շատ երկրների օրենսդրության, բարոյական վնասի հատուցում չի նախատեսում<sup>1</sup>: Բարոյական վնասի փոխհատուցում նախատեսված չէր նաև խորհրդային օրենսդրությամբ: Այդպիսի վնասի փոխհատուցման խնդիրը խորհրդային իրավագիտության փիճեղի հարցերից մեկն էր: Բարոյական վնասի փոխհատուցման հակառակորդները մի դեպքում պնդում էին, որ բարոյական վնասի փոխհատուցմամբ դրամական գնահատման ենք ենթարկում խորհրդային հասարակության մտածելակերպին և անձի նկատմամբ նրանց ունեցած բարձր հարգանքին անհարիր այնպիսի բարիքներ, ինչպիսիք են կյանքը, առողջությունը, պատիվը, ստեղծագործական նվաճումները և այլն<sup>2</sup>: Մեկ այլ դեպքում գտնում էին, որ ոչ գույքային վնասը չի կարող գնահատվել և դրամով փոխհատուցվել<sup>3</sup>: Երրորդները մտավախություն

<sup>1</sup> Տե՛ս օրինակ, Ռ.Գ. քաղ. օր. 151, 1099-1101 հոդվածները:

<sup>2</sup> Տե՛ս Օթթեթթ Ն.Ն. *Ի պրոպոզիցիայի մասին իմաստների մասին* ընդհանուր կանոններով, 1951, էջ 24:

<sup>3</sup> Տե՛ս Աճառնի Ն.Ի. *Ի մասին մտածելակերպի մասին* ընդհանուր կանոններով, 1936, էջ 75: Հետագայում Բրատսկը գտնում էր, որ անհրաժեշտ է բարոյական վնաս պատճառելու համար նախատեսել քաղաքացիաիրավական պատասխանատվություն: Տե՛ս նույն հեղինակի *Ք ժեճե-անեյ իճառնոճաճի ինոսի ը չեճի ինոսի*. Ի ., 1976, էջ 202:



էին ապրում, որ բարոյական վնասի փոխհատուցում թույլատրելը կառաջացնի դրանից եկամտու ստանալու ընչաքաղցություն, և դատարանը միշտ չէ, որ կկարողանա դրան արժանիորեն դիմակայել<sup>1</sup>:

Ի հակակշիռ նման տեսակետների, խորհրդային իրավագետներից շատերը համարում էին, որ բարոյական վնասի պատճառը իրավախախտում է՝ «օբյեկտիվ իրավունքի նորմերին հակասող, քաղաքացիների, իրավաբանական անձանց սուբյեկտիվ իրավունքները, պետության շահերը վնասող, հանրորեն վտանգավոր, վնասաբեր գործողությունը», և պետք է փոխհատուցվի<sup>2</sup>:

Հայաստանի Հանրապետության իրավաբանների ջանքերով հաղթահարվեցին բարոյական վնասի ինստիտուտի «բուրժուական բնույթի» վերաբերյալ թյուր պատկերացումները, և 1977 թվականին ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարված լրացմամբ, նախատեսվեց բարոյական վնասի հատուցում: Հայ քաղաքացիագետները, հիմք ունենալով այն իրողությունը, որ անձի իրավունքները և ազատությունները բարձրացվել են սահմանադրական մակարդակի, պետական քաղաքականությանը առաջնություն է վերապահվում համամարդկային արժեքներին, գտնում էին, որ անձին (քաղաքացի, իրավաբանական անձ) ոչ իրավաչափ գործողություններով վնաս պատճառելը, լինի դա նյութական, թե բարոյական, հանդիսանում է իրավախախտում՝ օբյեկտիվ իրավունքի նորմերին հակասող, քաղաքացիների, իրավաբանական անձանց սուբյեկտիվ իրավունքները, պետության շահերը վնասող հանրորեն վտանգավոր, վնասաբեր գործողություն<sup>3</sup>: Հետևաբար, իրավախախտը պետք է ենթարկվի պատասխանատվության՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավն արատավորելը հաճախ ավելի շատ ապրումներ, վնասակար հետևանքներ է առաջացնում, քան նյութական վնասը: Բոլոր դեպքերում բարոյական վնասն առաջացնում է հոգեկան տառապանքներ, ամոթ, զայրույթ, հուսահատություն և այլն: Ճիշտ է, այդ տառապանքները ոչնչով, առա-

<sup>1</sup> Տե՛ս *Áaðøááñééè È.Ì . Í áýçaðæüñóáá, áíçíèèáþùèà áñéááñóèèà ìðè-èíáíèý äððáí ò áðááá. Í ., 1992, էջեր 43-44:*

<sup>2</sup> Տե՛ս *Ì áèáèí Í.Ñ. Í ì ìðáèüíí ì áðááá // Ñíááðñéíá áí ñóááðñóáí è ì ðááí. 1993, No 3, էջ 32:*

<sup>3</sup> Տե՛ս Մալեին Ն.Ս. նույն տեղը: Տե՛ս նաև Գ. Ղարախանյան, Բարոյական վնասի հատուցման հարցի շուրջ // Իրավաբանական թերթ, 1992, թիվ 5:

վել ևս՝ դրամական փոխհատուցմամբ չես վերականգնի, բայց դա չի նշանակում, որ բարոյական վնասն ընդհանրապես չպետք է փոխհատուցվի:

Իրավախախտից գանձվող գումարը, իհարկե, չի կարող փոխհատուցել պատճառված բարոյական վնասը, բայց միաժամանակ չի բացառվում այն հնարավորությունը, որ այդպիսի փոխհատուցումը կարող է ամոքիչ ազդեցություն ունենալ:

Այն հնարավորություն կտա ինչ-որ չափով հարթել իրավախախտման անշահավետ հետևանքները, բարերար ազդեցություն կունենա տուժողի հոգեկան վիճակի վրա: Արդարացի են այն հեղինակները, որոնք գտնում են, որ բարոյական վնասի հատուցման ինստիտուտը կատարում է բարոյական, սոցիալական գործառույթ՝ անձի անձեռնմխելիության պահպանություն, այսինքն՝ սոցիալական պաշտպանության գործառույթ<sup>1</sup>:

Հասկանալի է, որ գործնականում հնարավոր չէ ճիշտ հաշվարկել բարոյական վնասի չափը, բայց այդպիսի հաշվարկի անհրաժեշտություն չկա, քանի որ նման դեպքերում համարժեքության մասին խոսք լինել չի կարող: Այդ վնասի մոտավոր հաշվարկը կարող է կատարել դատարանը, ելնելով գործի յուրահատկություններից, վրա հասած հետևանքների ծանրությունից, տուժողի սոցիալ-տնտեսական պայմաններից, ճշմարտությանը չհամապատասխանող տեղեկությունների տարածման շրջանակից, կողմերի նյութական վիճակից և այլ հանգամանքներից:

Մեր կարծիքով, բարոյական վնասի հատուցման փոխհատույց բնույթի մասին դատողություններ անելիս անհրաժեշտ է ելակետ ընդունել այն իրողությունը, որ իրավական պատասխանատվությանը միշտ չէ, որ վնասները փոխհատուցվում են լրիվ ծավալով (օրինակ՝ բացառիկ տուժանք՝ իրական վնասներ գանձելու դեպքում): Բայց դրանցից իրավական պատասխանատվության բնույթը չի փոփոխվում, այն չի կորցնում իր նախականիսի և ռեպրեսիվ բնույթը:

Անկախ նրանից՝ իրավական պատասխանատվությանը վնասները գանձվում են լրիվ ծավալով, թե որոշակի մասով, այդ պատասխանատվությունը մնում է հատուկ իրավահարաբերություն՝ վնաս պատ-

<sup>1</sup> Տե՛ս օրինակ, *Áí èñèì íá À.È. ×áñòü, áí ñòì èí ñóáí, ááèíááý ðáí óðáèèý: áðáæááí ñéí-ì ðááí ááý çàùèòè. Í ., 1994, էջ 57:*

ճառողի և տուժողի միջև, որի նպատակը ոչ այնքան փոխհատուցումն է, որքան իրավախախտողին «պատժելը»: Բարոյական վնասի փոխհատուցման պարագայում առավել կարևոր է, որ իրավախախտը պարտավորված է լինելու ոչ միայն հերքում տալու, այլև դրամական փոխհատուցման անշահավետ հետևանքները ճաշակելով՝ քավել իր արարքի հետևանքները: Մյուս կողմից, դրամական փոխհատուցումն ունի նախականիսիչ (պրեվենտիվ) նշանակություն և արգելք է այլ անձանց պատիվն ու արժանապատվությունը «անպատիժ» արատավորելու հակում ունեցողների համար:

Այդ պատճառով, մեր խորին համոզմամբ, բարոյական վնասի հատուցում չնախատեսելը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի էական թերություններից մեկն է:

Ընդ որում, այդ թերությունը նոր օրենսգրքում տեղ է գտնում այն դեպքում, երբ 1997թ. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության նախկին քաղաքացիական օրենսգրքում կատարեց ոչ միայն փոփոխություններ, այլև այն լրացրեց <sup>71</sup> հոդվածով՝ «Բարոյական վնասի հատուցումը», որում սահմանված էր. «Եթե քաղաքացուն պատճառվել է բարոյական վնաս (ֆիզիկական կամ բարոյական տառապանք), նրա անձնական ոչ նյութական իրավունքները խախտող կամ քաղաքացուն պատկանող այլ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող գործողություններով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում, ապա դատարանը կարող է խախտողի վրա դնել նշված վնասի դրամական հատուցման պարտականություն: Բարոյական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանն ուշադրություն է դարձնում խախտողի մեղքի աստիճանի և ուշադրության արժանի այլ հանգամանքների վրա: Դատարանը պետք է հաշվի առնի նաև վնաս կրած անձի անհատական առանձնահատկությունների հետ կապված ֆիզիկական և բարոյական տառապանքների աստիճանը»:

Թվում էր, թե նոր քաղաքացիական օրենսգրքում պետք է տեղ գտներ ոչ միայն հիշյալ հոդվածը, այլև, ելնելով ԱՊՀ նմուշային օրենսգրքից, սահմանվեին բարոյական վնասի հատուցումն ապահովող կառուցակարգեր: Մակայն ՀՀ օրենսդիրը գնաց հակառակ ուղղությամբ՝ «չկա օրենք, չկա պաշտպանություն»:

Պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության իրավական կարգավորման օրենսդրական հաջորդ բացթողումը կամ սխալը

վճռի կատարմանը հարկադրելու հարցում դատարանի իրավունքների սահմանափակումն է:

Հայաստանի Հանրապետության նախկին քաղաքացիական օրենսգրքով, եթե պատիվն ու արժանապատվությունը հերքելու մասին դատարանի վճիռը չէր կատարվում, դատարանն իրավունք ուներ խախտողին տուգանել՝ բռնագանձում կատարելով պետության օգտին: Տուգանքի վճարումը խախտողին չէր ազատում դատարանի վճիռը կատարելու պարտականությունից: Այս կանոնը, որը ամրագրված է թե՛ ԱՊՀ նմուշային քաղաքացիական օրենսգրքում, թե՛ Ռուսաստանի Դաշնության և այլ պետությունների օրենսգրքերում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում նախատեսված չէ:

Ելնելով վերոհիշյալից և նկատի ունենալով, որ աշխարհի գրեթե բոլոր զարգացած երկրները նախատեսում են բարոյական վնասի հատուցում, գտնում ենք, որ ՀՀ Քաղ. օր. համապատասխան փոփոխությունների կատարմամբ անհրաժեշտ է ապահովել բարոյական վնասի հատուցման կիրառությունը: Փոփոխությունների կատարման համար ելակետ կարող են ծառայել ԱՊՀ երկրների նմուշային քաղաքացիական օրենսգրքի և ՌԴ քաղաքացիական օրենսգրքերի կանոնները (150-152, 1099-1101 հոդվածներ):

Կարծում ենք, հարկ չկա ապացուցելու, որ առանց բարոյական վնասի հատուցման կիրառության անձի սուբյեկտիվ իրավունքների լիարժեք պաշտպանությունն իրականացնելը անհնար է:

## ***2.4. Տուժանքը որպես պապասխանաբարության ընդհանուր միջոց***

Տուժանքը իրավախախտումների համար կիրառվող ամենատարածված պատասխանատվության միջոցն է: Այդ սանկցիայի տարածվածությունը բացատրվում է նրանով, որ այն իրենից ներկայացնում է կորուստների փոխհատուցման համար դյուրին կիրառվող միջոց: Այդ առումով տուժանքին բնութագրական են հետևյալ առանձնահատկությունները՝ պատասխանատվության չափի վաղորոք կանխորոշվածությունը, իրավախախտման փաստի համար (առանց վնասների առկայությունն ապացուցելու) գանձելու հնարավորություն, իրենց հայեցողությամբ տուժանք նախատեսելու կամ օրենքով սահմանված չափն ա-

վելացնելու իրավահարաբերության մասնակիցներին վերապված հնարավորություն<sup>1</sup>:

Այդ առանձնահատկությունների մեջ ամենակարևորն այն է, որ տուժանքի կիրառման համար բավական է ապացուցել միայն օրենքով արգելված արարքի կատարման փաստը: Այդ արարքով առաջացած հետևանքներին անդրադառնալու անհրաժեշտություն չկա<sup>2</sup>:

Տուժանքի, որպես պատասխանատվության միջոցի, տարածվածությունը արդյունք է նաև այն բանի, որ այդ սանկցիան կիրառվում է նաև իրավունքի այլ ճյուղերում (վարչական, ֆինանսական, աշխատանքային, բնապահպանական և այլն):

Չնայած տուժանքի տարածվածությանը, Քաղ. օր.-ը այն բնորոշում է որպես միայն պարտավորությունների խախտման համար կիրառվող պատասխանատվության միջոց: Ըստ Քաղ. օր. 369 հոդվածի՝ **սուժանք** (տուգանք, տույժ) է համարվում այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում: Սակայն, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, տուժանքի նման բնորոշումը չի համապատասխանում ոչ միայն Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում նրա խաղացած դերին, այլև քաղաքացիական իրավունքում տուժանքի կիրառության բնույթին: Բանն այն է, որ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը (այդ թվում նաև՝ տուժանքին վերաբերող կանոնները) հանդիսանում է քաղաքացիական իրավունքի ընդհանուր մասի ինստիտուտ, որի գործողությունը, ըստ ընդհանուր կանոնի, տարածվում է քաղաքացիական իրավահարաբերությունների բոլոր տեսակների վրա:

Քաղ.օր. 369 հոդվածից նաև հետևում է, որ տուժանքը կարող է նախատեսվել և՛ օրենքով, և՛ պայմանագրով: Օրենքով տուժանք կարող է նախատեսվել ինչպես իմպերատիվ, այնպես էլ դիսպոզիտիվ նորմերով: Իմպերատիվ նորմով նախատեսված տուժանքը կիրառվում է անկախ նրանից՝ կողմերն այդ մասին համաձայնություն կայացրել են, թե ոչ: Դիսպոզիտիվ նորմով նախատեսված տուժանքը նույնպես կիրառվում է կողմերի ցանկությունից անկախ, եթե նրանք տուժանքի չափի վերաբերյալ այլ համաձայնություն չեն կայացրել: Եթե դիսպոզիտիվ

նորմով նախատեսված տուժանքի չափի վերաբերյալ կողմերը կայացրել են այլ համաձայնություն, ապա գործում է այդ համաձայնությունը: Ասվածից հետևում է, որ օրենսդրոսն նախատեսված տուժանքը կիրառվում է անկախ նրանից՝ օրենքի բովանդակությունը պայմանագրում վերարտադրված է, թե ոչ: Ընդ որում, օրենքով նախատեսված տուժանքի չափը իրավահարաբերության մասնակիցները փոքրացնելու իրավունք չունեն: Այդպիսի համաձայնությունը համարվում է առչից: Դրան հակառակ, օրենքով սահմանված տուժանքի չափը, անկախ նրանից՝ սահմանված է իմպերատիվ, թե դիսպոզիտիվ նորմով, կողմերի համաձայնությամբ կարող է մեծացվել (Քաղ. օր. հոդվ. 371, մաս 2)<sup>1</sup>:

Պայմանագրային տուժանքը սահմանվում է կողմերի համաձայնությամբ, և, բնականաբար, նրա չափը, հաշվարկման կարգը և այլն, բացառապես կանխորոշվում են նրանց համաձայնությամբ: Օրենքը նախատեսում է միայն համաձայնության ձևը: Ըստ Քաղ. օր. 370 հոդվածի տուժանքի մասին համաձայնությունը պետք է կնքվի գրավոր անկախ հիմնական պարտավորության ձևից: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է տուժանքի մասին համաձայնության անվավերության:

Տուժանքին, որպես իրավական կատեգորիայի, ՀՀ գործող քաղաքացիական օրենսգիրքը վերապահում է երկակի դերակատարություն: Այն համարվում է պարտավորությունների կատարումն ապահովող միջոց և պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում՝ պատասխանատվության միջոց: Այդ պատճառով տուժանքին վերաբերող կանոնները նախատեսված են «Պարտավորության կատարման ապահովումը» և «Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար» գլուխներում: Ընդ որում, հենց տարբեր գլուխներում զետեղված հոդվածների բովանդակությունից երևում է, որ տուժանքի երկփեղկվածությունը ոչնչով հիմնավորված չէ: Այդ հանգամանքը, ինչպես նաև տուժանքի բնույթն ու գործնական կիրառությունը (որի մասին ավելի մանրամասն կշարադրվի ստորև) հիմք է տալիս նկատելու, որ տուժանքը միաժամանակ ապահովման և պատասխանատվության միջոց համարելը արդարացված չէ: Ո՛չ օրենսդի-

<sup>1</sup> Տե՛ս *Άδααείνέεé Ĩ .É., Άεοοδύίνέεé Á.Á. Άίάίάίόίá íðááí. Ĩ áúεá ííείæáíεý Ĩ ., 1997*, էջ 387:

<sup>2</sup> Տե՛ս *Êĩ Õ Õá Ĩ .Ñ. Ĩ áýçàðáεüñóááí ííá íðááí. Ĩ ., 1975*, էջ 107:

<sup>1</sup> Քաղ. օր.-ը օրենքով սահմանված տուժանքն անվանում է «Օրինական տուժանք» (371 հոդվ.), որը մեր կարծիքով, ճիշտ համարվել չի կարող, օրինական է ոչ միայն օրենքով սահմանված տուժանքը, այլև պայմանագրով սահմանված տուժանքը: Այդ պատճառով առավել ճիշտ է օրենքով սահմանված տուժանքն անվանել «Օրենսդրական», իսկ կողմերի համաձայնությամբ սահմանվածը՝ «Պայմանագրային»:

րը, ո՛չ էլ «տուժանք» կատեգորիայի վերլուծությանը անդրադարձած հեղինակները չեն կարողացել հստակ սահմանագատել ոչ միայն ապահովման միջոց համարվող տուժանքը պատասխանատվության միջոց համարվող տուժանքից, այլև այն հանգամանքը, թե որ պահից է դադարում տուժանքի, որպես ապահովման միջոցի գործնական ներգործությունը, և սկսվում նրա, որպես պատասխանատվության միջոցի, գործառույթը<sup>1</sup>: Այդ պատճառով մեզ թվում է, որ տուժանքի երկփեղկվածությունն արհեստական է: Մեր կարծիքով՝ տուժանքը սուսկ պատասխանատվության միջոց է, և որպես այդպիսին, ինչպես ցանկացած ներգործության կամ պատասխանատվության միջոց, կատարում է նաև ապահովող գործառույթ: Համենայնդեպս՝ Քաղ. օր. 369-372 հոդվածներից (որոնք տեղադրված են «Պարտավորությունների կատարման ապահովումը» գլխում) չի բխում, որ տուժանքը ապահովման միջոց է: Հակառակը, երևում է, որ իր բնույթով, կիրառման առանձնահատկություններով, նախատեսման եղանակով և այլ հատկություններով էապես տարբերվում է այդ գլխում նախատեսված ապահովման (գրավ, երաշխիք, երաշխավորություն, կանխավճար, պահում) միջոցներից:

Օրինակ, Քաղ. օր. 369 հոդվածով սահմանվում է տուժանքի հասկացությունը: Ըստ այդ հոդվածի՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Եթե համեմատում ենք ապահովման միջոցներից ցանկացածի հասկացության հետ, ապա ակնհայտ է դառնում, որ Քաղ. օր. 369 հոդվածում ձևակերպված է տուժանքի ոչ թե ապահովման, այլ պատասխանատվության միջոցի հասկացություն:

Ընդ որում, իրավահարաբերության մասնակիցների կողմից կնքվող պայմանագրերում էլ տուժանքի (տուգանքի, տույժի) վերաբերյալ կայացվող համաձայնությունների բնույթից երևում է, որ դրանք ոչ թե ապահովման միջոցներ են, այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար նախատեսված սանկցիաներ: Օրինակ, «Հեռագրային ապարատների Կալուզա գործարանը» պահանջել էր «Լիպարկաբել» ՍՊԸ-ից ՊՎԿՖ-95-100 տեսակի ապ-

<sup>1</sup> Տե՛ս օրինակ *ԷՆՕԾԱ Ի.Ն. Ի պ̄չ̄ա̄ա̄ե̄ւ̄ո̄ա̄ա̄ի̄ի̄ն̄ Ի̄ժ̄ա̄ա̄ի̄. Ի ., 1975. 158-170 էջեր, Աժ̄ա̄ա̄ե̄ւ̄ո̄ա̄ա̄ի̄ Ի .Է. Ա̄ēōōյ̄ի̄ն̄ēē Ա.Ա. Ա̄ի̄ա̄ի̄ժ̄ի̄ն̄ Ի̄ժ̄ա̄ա̄ի̄. Ի̄ ա̄ւ̄ēā Ի̄ի̄ե̄ի̄ա̄ի̄ēյ̄ Ի ., 1997, 387-394 էջեր:*

րանքի համար իր կողմից փոխանցված գումարը և ապրանքի մատակարարումը 190 օր ուշացնելու համար պայմանագրի 6.1 կետում յուրաքանչյուր օր ուշացնելու համար սահմանված 0.2 տոկոս տույժի գումարը, որը և բավարարվել է տնտեսական դատարանի կողմից<sup>1</sup>:

Բերված օրինակից երևում է, որ պայմանագրով սահմանված տույժը ոչ թե պարտավորության կատարման ապահովման միջոց է, այլ ոչ պատշաճ կատարման համար կիրառվող սանկցիա: Եթե շարադրվածին էլ ավելացնենք, որ ի տարբերություն ապահովման միջոցների, տուժանքը կարող է սահմանվել նաև օրենքով, որը կարող է կիրառվել անկախ այն բանից, կողմերի համաձայնությամբ նախատեսված է այն վճարելու պարտականություն, թե ոչ, ապա ակնհայտ է դառնում, որ տուժանքը ոչ թե ապահովման միջոց է, այլ օրենքով կամ պայմանագրով նախատեսված սանկցիա, որը ի տարբերություն ապահովման միջոցների՝ կարող է կիրառվել միայն իրավախախտման պայմանների առկայության դեպքում: Այդ հանգամանքն ուղղակի մատնանշված է Քաղ. օր. 361 հոդվածի 3-րդ մասում: Ըստ այդ մասի, «Պարտատերն իրավունք չունի պահանջել վճարելու տուժանք, եթե պարտապանը պատասխանատվություն չի կրում պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար»<sup>2</sup>: Բացի դրանից, երբ համեմատում ենք տուժանքի գանձման նախապայման համարվող կանոնը պարտավորությունների ապահովման միջոցների կիրառման պայմանների հետ, ապա ակնհայտ է դառնում, որ այդ միջոցները պատասխանատվության հետ որևէ առնչություն չունեն, նրանք կիրառվում են՝ անկախ կողմերի պատասխանատվությունից:

Տուժանքի հաջորդ առանձնահատկությունն այն է, որ տուժանքը կարող է նախատեսվել օրենքով (ճնշող մեծամասնությամբ այդպես էլ նախատեսվում է), և պարտատերն այդ տուժանքը իրավունք ունի պահանջելու անկախ այն բանից՝ կողմերի համաձայնությամբ նախատեսված է այն վճարելու պարտականություն, թե ոչ (Քաղ.օր.հոդվ. 371): Մինչդեռ պարտավորությունների կատարման իրական ապահովման միջոցները (գրավ, երաշխավորություն և այլն) կարող են կիրառվել

<sup>1</sup> Տե՛ս Քաղաքացիական գործ թիվ Տ-454, 2001թ. Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, Եր., 2002, էջ 213:

<sup>2</sup> «Անպատշաճ» բառը օգտագործում ենք ուղղակի մեջբերման անհրաժեշտությունից ելնելով: Արդեն նշել ենք, որ պետք է օգտագործվեր «ոչ պատշաճ»-ը կամ «պատշաճ չկատարել»-ը:

միայն ապահովման միջոցի վերաբերյալ հատուկ համաձայնություն կայացնելու դեպքում:

Այնուհետև, տուժանքի կիրառման կանոնները նախատեսված են ոչ թե միայն Քաղ. օր. «Պարտավորությունների կատարման ապահովումը» գլխում, այլև «Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար» գլխում (Քաղ. օր. 410-412հհ.), որը վկայում է, որ տուժանքին երկակի դեր վերապահելը արհեստական է, այն կարող է հանդիսանալ կա՛մ ապահովման, կա՛մ պատասխանատվության միջոց: Եվ քանի որ քաղաքացիական իրավունքի զարգացման ողջ պատմությունը վկայում է, որ տուժանքը բոլոր իրավական համակարգերում և իրավունքի տարբեր ճյուղերում կիրառվում է որպես պատասխանատվության միջոց, ուստի մնում է եզրակացնել, որ ՀՀ օրենսդիրը տուրք տալով ավանդույթին և անհարկի ընդօրինակելով ԱՊՀ այլ երկրների օրենսդրությունը, ամրագրել է նախորդ օրենսդրությամբ նախատեսված, բայց գործնականում իրեն չարդարացրած և ոչնչով չհիմնավորված՝ տուժանքի երկակի կիրառության սկզբունքը:

Վերջապես, պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ ինչպես ընդհանուր իրավունքի համակարգում, այնպես էլ արևմտաեվրոպական համակարգի զարգացած պետություններում տուժանքը (տուգանք, տույժ) դիտարկվում և կարգավորվում է որպես պատասխանատվության միջոց:

Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ տուժանքի օրենսդրական կանոնակարգման բնագավառում տեղ գտած թերությունների շտկումն ունի կարևոր գործնական նշանակություն: Մեր կարծիքով, անհրաժեշտ է հրաժարվել տուժանքը որպես ապահովման միջոց դիտարկելու արհեստական մոտեցումից: Հանրահայտ է, որ պարտականությունների պատշաճ կատարմանը հարկադրելու համար կիրառվող ցանկացած ներգործության միջոց, այսպես, թե այնպես, ունի դրանց կատարումն ապահովող նշանակություն: Սակայն, այդ հանգամանքը նկատի ունենալով, ապահովման միջոցներ չեն համարվում վնասների փոխհատուցումը (Քաղ.օր 17, 409 հհ), դրամական պարտավորությունների չկատարման համար գանձվող տոկոսները (հոդվ. 411) և այլն: Այդ պատճառով մենք գտնում ենք, որ տուժանքի վերաբերյալ Քաղ. օր. 369-372 հոդվածներում նախատեսված նորմերը անհրաժեշտ է շարադրել «Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար» գլխում: Նման փոփոխությունը ոչ միայն կբարձրացնի

տուժանքի, որպես պատասխանատվության միջոցի կիրառման արդյունավետությունը, այլև հիմք կձառայի, որպեսզի իրավագիտությունը ձեռքբազատվի տուժանքի որպես ապահովման միջոցի դերը և նշանակությունը բացատրելու մտացածին հիմնավորումներ փնտրելու կամ սանկցիային ներհատուկ գործառույթներ արհեստականորեն ապահովման միջոցին վերագրելու անհրաժեշտությունից: Գիտությունը լրացուցիչ հնարավորություն կստանա իր ողջ ուշադրությունը կենտրոնացնել տուժանքի որպես պատասխանատվության միջոցի էության բացահայտման և կիրառման մեխանիզմների կատարելագործման վրա: Իսկ որ այդ ուղղությամբ լուրջ ուսումնասիրությունների անհրաժեշտություն է զգացվում, վկայում է տուժանքի կիրառման պրակտիկան: Մասնավորապես, տուժանքի կիրառման ներկա պրակտիկան ցույց է տալիս, որ անհրաժեշտ է, ելնելով իրավախախտումների բնույթից, վտանգավորությունից, իրավական հետևանքներից, սահմանել տուժանքի առավելագույն սահմաններ, որպեսզի այդ սանկցիայի կիրառությունը չօգտագործվի որպես անհիմն հարստացման աղբյուր կամ իրավահարաբերության մասնակցին անելանելի վիճակում դնելու միջոց: Օրինակ, նորմալ չի կարող համարվել այն երևույթը, երբ գանձվող տուժանքի գումարը գրեթե հավասարվում է պարտքի գումարին<sup>1</sup>:

Տուժանքի կիրառման պրակտիկան վկայում է նաև, որ տուժանքի բազմաբնույթ կիրառության պարագայում Քաղ. օր.-ը արհեստականորեն սահմանափակել է տուժանքի, որպես պատասխանատվության միջոցի, կիրառման ոլորտը՝ այն համարելով միայն պարտավորությունների չկատարման և ոչ պատշաճ կատարման համար կիրառվող պատասխանատվության միջոց: Սակայն հենց օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման մոտեցումը՝ տուժանքը որպես միայն պարտավորությունների չկատարման և ոչ պատշաճ կատարման համար կիրառվող սանկցիա համարելը, չի արտացոլում իրերի իրական վիճակը և նսեմացնում է տուժանքի նշանակությունը: Բանն այն է, որ տուժանքի միջոցով իրավունքների պաշտպանությունն ապահովվում է ոչ միայն պարտավորական հարաբերություններում: Քաղաքացիաիրավական այլ ակտերը, տնտեսավարման գործընթացը կարգավորող և բնապահպանական ու այլ տիպի հարաբերությունները

<sup>1</sup> Տե՛ս Քաղաքացիական գործ թիվ S-411, 2002թ., Քաղաքացիական գործ թիվ SՎ-26, 2002թ. և այլն:

կարգավորող ակտերը տուժանք են նախատեսում նաև պարտավորական հարաբերություններից չբխող իրավախախտումների համար (օրինակ՝ ստանդարտների, լիցենզիաների, սերտիֆիկատների, բնապահպանական օրենսդրության, ֆինանսական օրենսդրության և այլ խախտումների համար): Սա ցույց է տալիս, որ տուժանքը, որպես սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց, կիրառվում է ինչպես պարտավորական հարաբերությունների մասնակիցների շահերի, այնպես էլ այլ հարաբերությունների մասնակիցների և հանրային շահերի պաշտպանության համար: Նշանակում է, տուժանքի, որպես գույքային պատասխանատվության միջոցի, էությունը կանոնակարգող նորմը (նորմերը) անհրաժեշտ է գետեղել Քաղ. օր. ընդհանուր դրույթներում, անմիջապես վնասի հատուցումը կանոնակարգող հողվածից հետո, իսկ կիրառման առանձնահատկությունները կարգավորող նորմերը «Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար» գլխում և տուժանքը որպես իրավահարաբերությունների խախտման համար պատասխանատվության միջոց նախատեսող այլ ակտերում: Բացի դրանից, անհրաժեշտ է ձևակերպել տուժանքի այնպիսի հասկացություն, որը ճիշտ կարտացոլի տուժանքի բնույթը, նշանակությունը, կիրառման ոլորտը: Ելնելով վերոհիշյալ նկատառումներից և հիմք ունենալով Քաղ. օր. հոդվածների ձևակերպումների բնույթը, անհրաժեշտ է Քաղ. օր.-ի ընդհանուր դրույթներում, «վնասների հատուցում»-ը կարգավորող հոդվածներից (17,18) հետո գետեղել տուժանքի նոր հասկացությունը և նրա կիրառման հիմնահարցերը կարգավորող հոդված: Մեր կարծիքով, այդ հոդվածը կարող է ունենալ հետևյալ ձևակերպումը:

«1. Անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել օրենքով կամ պայմանագրով նախատեսված տուժանք (տուգանք, տույժ).

2. Տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված դրամական գումարը.

3. Օրենքով սահմանված տուժանքի չափը կարող է մեծացվել կողմերի համաձայնությամբ, եթե դա արգելված չէ օրենքով.

4. Եթե վճարման ենթակա տուժանքը ակնհայտորեն անհամաչափ է իրավախախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն»:

Նման ձևակերպումից երևում է, որ տուժանքը պատասխանատվության միջոց է, որը կարող է կիրառվել ցանկացած իրավախախտման դեպքում, նրա կիրառությունն իրավախախտողի համար առաջաց-

նում է լրացուցիչ դրամական կորուստներ, այն կարող է կիրառվել, եթե առկա են իրավական պատասխանատվության ենթարկելու հիմքը և պայմանները, նրա կիրառությունն ապահովված է պետական հարկադրանքով: Այսինքն, կիրառման առանձնահատկություններով, որպես իրավախախտման համար նախատեսված սանկցիա, նման է վնասների փոխհատուցմանը, բայց իր բնույթով, ներգործության եղանակով էապես տարբերվում է վնասների հատուցումից: Նախ՝ ի տարբերություն վնասների հատուցումից, որը, որպես պատասխանատվության ընդհանուր միջոց, կիրառվում է բոլոր իրավախախտումների դեպքում, տուժանքը համարվում է պատասխանատվության հատուկ միջոց, որը կիրառվում է միայն այն իրավախախտումների դեպքում, երբ այդ նպատակի համար հատկապես նախատեսված է օրենքով կամ պայմանագրով, երկրորդ, անկախ նրանից, իրավախախտմամբ վնաս պատճառվել է, թե՛ ոչ, երրորդ, եթե վնասների հատուցումը կոչված է ապահովելու հավասարաժեք փոխհատուցում, տուժանքի չափը կարող է գերազանցել առաջացած վնասները (տուգանային տուժանք) և փոխհատուցել վնասներն ամբողջությամբ կամ մասնակիորեն: Վերջապես, եթե վնասների չափը կախված չէ կողմերի ցանկությունից, իրավախախտողի մեղավորության աստիճանից, ապա տուժանքի չափը կարող է փոփոխվել և՛ կողմերի համաձայնությամբ (Քաղ. օր. հոդվ. 371), և՛ դատարանի որոշմամբ (Քաղ. օր. հոդվ. 372): Բացի վերոհիշյալ տարբերությունից, Օ.Ս. Իռֆֆեն, անդրադառնալով տուժանքի ապահովող դերին, նշում է տուժանքը վնասների գանձումից տարբերող ներգործության հետևյալ առանձնահատկությունները.

Առաջին, վնասները գանձվում են միայն այն դեպքում, երբ իրականում պատճառված են, մինչդեռ, չնայած իրավախախտման առկայությանը, վնասներ կարող են չառաջանալ: Տուժանքի բացակայության դեպքում նման իրավախախտումներ թույլ տվող անձանց համար բացասական հետևանքներ չեն առաջանում: Որպեսզի այդպիսի հետևանքներ այնուհանդերձ առաջանան, նպատակահարմար է պարտավորություններն ապահովել հատուկ ապահովման միջոցներով: Այդ նպատակին է հենց ծառայում տուժանքի մասին պայմանը:

Երկրորդ, վնասների գանձման համար անհրաժեշտ է ապացուցել ոչ միայն դրանց չափը, այլև այն, որ իրավագոր անձը ձեռք է առել դրանք վերացնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Գործնականում դա իրավագոր անձին դնում է դժվարին դրության մեջ և առանձին

դեպքերում կարող է հանգեցնել փաստացի վնաս պատճառողին պատասխանատվությունից ազատելուն: Այդպիսի հետևանքներից խուսափելու համար ցանկալի է իրավագոր անձի համար ապահովել թեկուզև ճշգրիտ հաստատագրված չափի փոխհատուցման գումար: Տուժանքը ծառայում է նաև այդ նպատակին:

Երրորդ, վնասներն անորոշ մեծություն են, դրանք ձևավորում են միայն իրավախախտումից հետո, այն դեպքում, երբ տուժանքը ճշտիվ հաստատագրված, վաղորոք սահմանված և պարտավորության երկու մասնակիցներին վաղորոք հայտնի մեծություն է: Խախտելով պայմանագիրը՝ հնարավոր չէ բավականաչափ վստահ լինել, որ կառաջանան անշահավետ հետևանքներ, քանի որ խոսքը գնում է վնասների ոչ թե անխուսափելիության, այլ հավանականության մասին: Տուժանքի սահմանումը հենց սկզբից մտցնում է պարգույթուն, ծայրահեղ դեպքում՝ վստահություն, որ դրա սահմաններում պատասխանատվությունը կկիրառվի: Հետևաբար, տուժանքը գորեղացնում է քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցների ներգործությունը՝ դրանք դարձնելով բավականաչափ որոշակի, իրավախախտման հետևանքի կիրառությունը դարձնելով անհրաժեշտ, կարելի է ասել՝ անխուսափելի:

Չորրորդ, երբ առաջանում են երկարատև գործող պարտավորական կապեր, դրանց խախտումն առավել հաճախ հանգում է ոչ թե կատարումից ամբողջությամբ հրաժարվելուն, այլ կետանցմամբ, որակական թերություններով կամ այլ ձևով արտահայտված ոչ պատշաճ կատարման: Իրավախախտման պահին վնասները կամ չեն առաջանում, կամ շոշափելի արտահայտվածություն չեն ստանում: Դրանց փոխհատուցման հարցը կարող է դրվել միայն ավել կամ պակաս ժամանակ անցնելուց հետո: Մինչդեռ պարտատերն արդեն իրավախախտման պահին պետք է իր տրամադրության տակ ունենա բավականաչափ օպերատիվ միջոցներ, որպեսզի ստիպի պարտապահին կատարել պարտականությունը, և բավականաչափ շարժունակ լինի, որպեսզի գործի իրավախախտման տևողության ամբողջ ժամանակահատվածում, այլ ոչ թե այն պահին, երբ ի հայտ են գալիս պատճառված վնասները: Այդպիսի միջոց է հանդիսանում տուժանքը, որը իրավագոր անձին թույլ է տալիս վաղորոք ստանալ վնասների հատուցում, չնայած դրանց չափը որոշվում է միայն հետագայում, երբ ծագում է դրանց հատուցումն իրականացնելու իրական հնարավորություն<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Է՛ր օճ Ի .Ն. Ի áÿçàðäëüñòááí í í à ÿ ðäáí. 1975, 159-160 էջեր:

Ասվածին հարկ է ավելացնել, որ իրավախախտողի տեսանկյունից՝ վնասների հատուցման կիրառությունը նշանակում է իրավախախտմամբ պատճառված վնասների լրիվ փոխհատուցում, որը, բնականաբար, պահանջում է ապացուցում, իսկ տուժանքի գանձումն իրավախախտման համար պատասխանատվության անխուսափելիություն, որը կիրառվում է անկախ նրանից, վնասների պատճառման փաստը կապացուցվի, թե՛ ոչ<sup>1</sup>:

Վնասների հատուցման և տուժանքի տարբերությունների մասին իրավագետների հետևությունները վկայում են, որ տուժանքը, որպես սանկցիա, իր կանխարգելիչ, փոխհատուցողական բնույթով և կիրառման դյուրինությամբ շահեկանորեն տարբերվում է վնասների հատուցումից և ամենևին արդարացված չէ այդ սանկցիայի հնարավորությունների օգտագործման նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերաբերմունքը: Հասկանալի է, որ նման մոտեցումն ինչ-որ չափով պայմանավորված է օրենսդրության ձևավորման գործընթացի բարդություններով, տնտեսավարման հարաբերությունների մի գզալի մասի թերի կարգավորվածությամբ: Սակայն այդ հանգամանքը չի կարող արդարացնել առանձին բնագավառների կարգավորման մասին ընդունված ակտերում տուժանքի, որպես պատասխանատվության միջոցի, դերի անտեսումը: Մեզ թվում է, որ հենց տնտեսավարման կոնկրետ հարաբերությունների կարգավորմանն ուղղված ակտերում, անհրաժեշտ է հնարավորինս նախատեսել պարտականությունների չկատարման, իրավունքների չարաշահման կամ սահմանանցման դեպքերում, օրենսդրական տուժանքն օգտագործելու հնարավորություն: Նման մոտեցումը չի կարող գնահատվել որպես մասնավոր հարաբերություններին պետության անհարկի միջամտություն, քանի որ խոսքը վերաբերում է ոչ թե բնականոն հարաբերությունների իրականացմանը միջամտելուն, այլ իրավախախտումների նկատմամբ հանրային իրավական միջամտություն, որը յուրաքանչյուր պետության պարտականությունն է:

Երկրորդ, տուժանքը, ինչպես նաև պատասխանատվության այլ միջոցները, իրավունքների և պարտականությունների իրացման միջոցներ են, իրավական ապահովման միջոցներ, որոնք վեր են ածվում պատասխանատվության միջոցների այն էտապում, երբ դրանցից յուրաքանչյուրի կիրառությունը, կանխատեսված պարտականությունից

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիսկի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 538:





կատարելու համար սահմանված է տուժանք, ապա վնասները հատուցվում են տուժանքով չծածկված մասով:

Օրենքով կամ պայմանագրով կարող են նախատեսվել դեպքեր, երբ՝

1) թույլատրվում է գանձել<sup>1</sup> միայն տուժանքը, սակայն ոչ վնասները:

2) վնասները կարող են գանձվել լրիվ գումարով՝ չհաշված տուժանքը:

3) պարտատիրոջ ընտրությամբ կարող են գանձվել կա՛մ տուժանքը, կա՛մ վնասները:

Քաղ.օր. 410 հոդվածից հետևում է, որ սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության համար հնարավոր է օգտագործել տուժանքի չորս տեսակ՝ հաշվարկային, բացառիկ, տուգանային և այլընտրանքային<sup>2</sup>:

Նշված տեսակներից ամենատարածվածը **հաշվարկային պուժանքն է**: Այդ տուժանքը կիրառվում է բոլոր դեպքերում, երբ տուժանքի այլ տեսակ նախատեսված չէ: Հաշվարկային տուժանքի առանձնահատկությունն այն է, որն իրավագոր կողմին իրավունք է վերապահում իրավախախտողից պահանջել վնասների միայն այն մասը, որը չի ծածկվել տուժանքի գումարով: Այսինքն, հաշվարկային տուժանքը վնասների մասի փոխհատուցման միջոց է, որը իրավագոր անձին չի գրկում վնասների լրիվ հատուցում պահանջելու իրավունքից: Տվյալ դեպքում իրավախախտողը երկակի պատասխանատվության չի ենթարկվում: Օրենսդիրն այս դեպքում հաշվի է առնում, որ վճարելով տուժանքը՝ խախտողը դրանով իսկ հատուցում է վնասների մի մասը: Այսինքն, հարցը տեղափոխվում է հատուցման ենթակա վնասների չափի որոշման հարթություն: Հետևաբար, անգամ այն դեպքերում, երբ իրավախախտողի նկատմամբ միաժամանակ կիրառվում է և՛ հաշվարկային տուժանքը, և՛ վնասները, գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ փաստորեն (և՛ ըստ չափի, և՛ ըստ էության) պարտապանի նկատմամբ

<sup>1</sup> Մեր կարծիքով, Քաղ. օր. 410 հոդվածում տուժանքի «գանձման» փոխարեն «բռնագանձում» տերմինն օգտագործելը նպատակահարմար չէ: Նույն Քաղ. օր.-ը բռնագանձում տերմինն օգտագործում է ուրույն իմաստով և նշանկությամբ (Քաղ. օր. հոդվ. 313 կետ 2):

<sup>2</sup> «Բացառիկ տուժանք», «Հաշվարկային տուժանք» տերմիններն առօրյա գործածության մեջ են մտցվել Վ.Կ.Ռայխերի կողմից 1955 թ., տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 536:

կիրառվում է պատասխանատվության մեկ միջոց՝ վնասների հատուցում<sup>1</sup>:

Երկակի պատասխանատվություն է կիրառվում այն դեպքում, երբ իրավագոր անձին իրավունք է վերապահվում պահանջել և օրենքով կամ պայմանագրով նախատեսված տուժանքը, և վնասները լրիվ ծավալով: Այսինքն, կիրառել **պուժանային պուժանք**:

Տուգանային տուժանքը, որպես կանոն, օգտագործվում է առավել կոպիտ խախտումների համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ մասնավոր շահերի հետ միասին ոտնահարվում են նաև հանրային շահերը: Օրինակ, տուգանային տուժանք են նախատեսում «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (հոդվ. 14), «ՀՀ վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, արտահանումը, և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության 08.12.1995թ. որոշումը և այլ իրավական ակտեր: Ընդ որում, եթե կառավարության որոշման 38 կետի համաձայն, պարտականությունները խախտող իրավաբանական անձինք պարտավոր են Հայաստանի Հանրապետությանը հատուցել պատճառված վնասը, ինչպես նաև մուծել տուգանք, ապա «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքին համապատասխան՝ վնասների և տուժանքի գումարը վճարվում է սպառողին:

Մեզ թվում է, որ նշված խախտումների համար տուգանային տուժանքը գանձելը միանգամայն արդարացված է, սակայն արդարացի չէ սպառողների շահերի պաշտպանության դեպքում վնասների փոխհատուցողական բնույթից կատարված բացառությունը, որն, ըստ էության, անհիմն հարստացման օրենսդրական խրախուսում է: Մեր կարծիքով, այն խախտումների համար, որոնք, բացի մասնավոր շահերը խախտելուց, ոտնահարում են նաև հանրային կարգն ու շահերը, տուգանային տուժանք սահմանելն արդարացի է, սակայն տուժանքը պետք է գանձվի ոչ թե իրավախախտումից տուժած սուբյեկտի օգտին, այլ պետական բյուջե: Հարկ է նկատի ունենալ, որ վնասների լրիվ հատուցմամբ, տուժող սուբյեկտի կորուստները վերականգնվում են և գանձվող տուժանքը դառնում է անհիմն շահառություն: Այդ պատճառով էլ մենք գտնում ենք, որ այն դեպքերում, երբ առանձին խախտումների համար օրենսդրորեն նախատեսվում է տուգանային տուժանք, այն պետք է

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 541:



րդ մասը սահմանում է, որ հարկային մարմնին ներկայացրած տարեկան եկամտների մասին հայտարարագրում սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավելի ցույց տալու դեպքում անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ ավելի ցույց տրված վնասի 20 տոկոսի չափով:

Բնական է, որ երկրորդ դեպքում եթե սանկցիան անվանվեր «տուժանք», դրանից ոչ ոք չէր տուժի: Հակառակը, կշահեր օրենսդրության լեզուն և տերմինաբանությունը: Ընդհանրապես, հարկ ենք համարում նշել, որ օրենսդրությամբ տերմինների, կատեգորիաների կամայական օգտագործումն իրավագիտության զարգացման լուրջ խոչընդոտ է: Մենք արդեն սույն աշխատանքում նշել ենք, որ տերմինները բազմանշանակ օգտագործելու դեպքում իրավական լուրջ կատեգորիաների կիրառման մեխանիզմների կապակցությամբ առաջացող բանավեճերը կարծեք թե վեր են ածվում «տերմինների» կապակցությամբ անպտուղ վեճի:

Նշված երևույթը նորույթ չէ. այն մեխանիկորեն Հայաստանի Հանրապետության օրենսդրություն է փոխանցվել խորհրդային օրենսդրությունից: Բայց եթե դաշնային պետության պարագայում, երբ գոյություն ունեին օրենսդրական և այլ նորմատիվ ակտեր ընդունող «ինքնուրույն» բազմաթիվ մարմիններ, տերմինների, անգամ հասկացությունների, կատեգորիաների սահմանման տարակերպություններն ինչ-որ չափով հասկանալի էր, ապա ունիտար պետության օրենսդիր մարմնի (ինչու չէ՝ նաև բարձրագույն գործադիր մարմնի) նման վերաբերմունքն իրավական լեզվի հստակության և անաղարտության պահպանության նկատմամբ, մեղմ ասած, անհասկանալի է:

Մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետությունում իրականացվող իրավական բարեփոխումները նպատակ են հետապնդում ոչ միայն ապահովել զարգացող շուկայական հարաբերությունների պահանջ-մունքներին բավարարող իրավական հիմք, այլև նպատակ է հայ իրավական մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը: Ներկա իրավիճակում, երբ ինքնիշխան պետության համար ստեղծվել է սեփական իրավական մշակույթ ստեղծելու ամենաբարենպաստ պայմանները, անհրաժեշտ է հրաժարվել ժառանգաբար ստացած իրավական այն բալաստից, որը խոչընդոտում է ժամանակակից և հասարակության զարգացման պահանջմունքներին բավարարող իրավական մշակույթի ձևավորմանը:

Այս տեսանկյունից՝ քննարկվող հարցին մոտենալու պարագայում հարկադրված ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը չի վերացրել այն պատճառները, որոնք գրկում էին խորհրդային իրավաբաններին տուժանք (տուգանք, տույժ) կատեգորիայի սահմանազատման փորձ կատարելու հնարավորությունից, քանի որ անկախության տարիներին ընդունված Հայաստանի Հանրապետության իրավական ակտերում ևս «տուժանք», «տուգանք», «տույժ» անվանումները օգտագործվում են կամայականորեն: Նման հանգամանքը չի նպաստում նշված սանկցիաները միմյանցից հստակ սահմանազատելուն, դրանցից յուրաքանչյուրը որոշակի նշանակությամբ օգտագործելուն, դրանք որպես առանձին սանկցիաներ տարբերակված և համակցությամբ օգտագործելուն:

Ներկայումս, երբ տնտեսական հարաբերությունները կանոնակարգող օրենսդրությունը գտնվում է կայացման գործընթացում, նկատի ունենալով տուժանք, տուգանք, տույժ կատեգորիաները միմյանցից սահմանազահելու և դրանց ճիշտ կիրառումն ապահովելու (յուրաքանչյուրը կոնկրետ նշանակությամբ օգտագործելու) և տեսական ու գործնական կարևոր նշանակությունը, ինչպես նաև իրավական լեզվի և մշակույթի ձևավորման խնդիրները, անհրաժեշտ է այդ սանկցիաների տարանջատման և հասկացությունների ձևավորման հարցում ցուցաբերել նոր մոտեցում:

Մեր կարծիքով, տարբեր տերմինների և դրանց համապատասխանող հասկացությունների օգտագործումը բխում է տուժանքի, որպես պատասխանատվության միջոցի, կիրառությունը ճկուն և արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունից: Կարիք չկա ապացուցել, որ իրավախախտման բնույթին, ծավալին, տևողությանը հավասարաբեք տարբերակված սանկցիաների սահմանում ունի գործնական կարևոր նշանակություն դա կնպաստի պատասխանատվության ինստիտուտի կատարելագործմանը, նրա ներգործության արդյունավետության բարձրացմանը: Այդ պատճառով էլ, մեր կարծիքով, ճիշտ էին այն հեղինակները, որոնք նախկին օրենսդրության խառնիճաղանձության պայմաններում անգամ փորձում էին միմյանցից սահմանազատել հիշյալ գույքային սանկցիաները<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Է՛ր օ՛ժ Ի՛ .Ն. Ի՛ áÿçàðàëüñòááí í í à ı ðàáı. 1975, 161-162 էջեր:

Օրենսդրության ձևավորման ներկա պայմաններում, ճիշտ կլիներ, ելնելով առանձին իրավախախտումների բնույթից, տևողությունից, վնասաբերությունից, վնասների հետ ունեցած փոխկապակցվածություններից, սանկցիայի կիրառման հիմքերից և եղանակից, տան տուժանքի յուրաքանչյուր տեսակի բնորոշումը և դրանով դեկլարվելը պարտադիր համարել իրավաստեղծ գործունեությամբ զբաղվող բոլոր մարմինների և պաշտոնատար անձանց համար:

Մեր կարծիքով, իրավագիտության խնդիրը ոչ միայն գոյություն ունեցող իրավանքների և իրավակիրառ գործունեության ուսումնասիրությունն է, այլև այն իրավական կատեգորիաների, հասկացությունների մշակումը, որոնք կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության ընթացքում: Այդ պատճառով էլ առաջարկում ենք տուժանք (տուգանք, տույժ) համարվող սանկցիաները միմյանցից սահմանազատել՝ հիմք ընդունելով խախտման տևողությունը և դրամական գումարի հաշվարկման եղանակների տարբերությունը: Ուստի դրանից ելնելով էլ մենք առաջարկում ենք.

«*Տուժանք*» անվանել իրավախախտման համար գանձվող, օրենքով կամ պայմանագրով նախատեսված այն դրամական գումարը, որի չափը որոշվում է խախտված պարտավորության արժեքից՝ տոկոսային հարաբերությամբ:

Այդ անվանումն օգտագործել անորակ, անկոմպլեկտ արտադրանքի, թերմատակարարման, շինարարական աշխատանքների թերությունների և նմանատիպ այլ խախտումների համար նախատեսվող գույքային սանկցիաների համար:

«*Տուգանք*» համարել իրավախախտման համար գանձվող այն դրամական գումարը, որի չափը որոշվում է կայուն դրամական գումարով կամ պատիկներով:

Այդ տերմինն օգտագործել բեռն առաքման չտրամադրելու, բեռնաբարձման միջոցներ չտրամադրելու, պարտականությունները չկատարելու, կատարումը չընդունելու և նմանատիպ այլ խախտումների համար նախատեսվող սանկցիաներ սահմանելիս.

«*Տույժ*» համարել այն դրամական գումարը, որը գանձվում է իրավախախտողից՝ իրավախախտման յուրաքանչյուր օրվա համար օրենքով կամ պայմանագրով սահմանված տոկոսներով:

Այդ անվանումն օգտագործել պարտականությունների կատարումն ուշացնելու, վճարումները ձգձգելու և այդ տիպի այլ խախտումների համար:

Տուժանքի յուրաքանչյուր տեսակ, որպես կանոն, պետք է նախատեսվի կոնկրետ խախտումների դեպքում կիրառելու համար, բայց առանձին դեպքերում, նկատի ունենալով իրավախախտումների բնույթը, իրավահարաբերության մասնակիցների շահերի պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունը, ինչու չէ՞ նաև հանրային շահերը, կարելի է սահմանել տուգանքի և տույժի համատեղ կամ հաջորդական կիրառություն: Դրանց օրենսդրորեն տարբերակումը հնարավորություն կտա իրականացնել սանկցիաների դիֆերենցացիա, հաջորդաբար օգտագործել տույժը և տուժանքը հատկապես պարտականությունների կատարման կետանցի դեպքերում: Այդպիսի պրակտիկա կիրառվում էր մինչև գործող օրենսդրությունը, մասնավորապես, Կապիտալ շինարարության կապալի պայմանագրի մասին կանոնները պատվիրատուին իրավունք էին վերապահում շինարարության էտապների հանձնումը կետանցելու դեպքում 30 օրվա ընթացքում գանձել 0.05% տուժանք չկատարած աշխատանքների արժեքից, իսկ 30 օրը անցնելուց հետո դադարեցնել տույժի գանձումը և պահանջել տուժանք չկատարված աշխատանքների արժեքից: Ինչպես վկայում է այն ժամանակվա պրակտիկան, տույժի և տուժանքի այդպիսի կիրառությունը տալիս էր դրական արդյունք:

Բացի դրանից, տուժանք, տուգանք, տույժ կատեգորիաների հստակ սահմանազատումը, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի կիրառման մեխանիզմների սահմանումը կկանխի պրակտիկայում այդ սանկցիաների կիրառման հարցում թույլ տրվող կամայականությունները: Օրինակ, «Կրեդիտ-Երևան բանկ» ԲԲԸ-ի ընդդեմ «Ջերմաբույս» ՍՊԸ-ի՝ պատասխանողից 213.169.025 դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին գործի ուսումնասիրությունից պարզվում է, որ ենթավարկի համաձայնագրում նախատեսվել է յուրաքանչյուր օրացույցային եռամսյակի առաջին ամսվա 15-րդ օրը գումարը չվճարելու համար տուգանք (ժամկետանց տոկոսներ) և պարտքի մարումն ուշացնելու համար՝ տույժ, որի պատճառով էլ պայմանագրի խախտման համար հաշվարկել է 14.130.912 դրամ ժամկետանց տոկոսներ՝ փաստորեն

տուժանք, և բացի դրանից՝ 1.926.863 դրամ տույժ<sup>1</sup>: Ընդ որում, դատարանը, հիմք ընդունելով ենթավարկի պայմանագրի պայմանները, «Ջերմաբույս» ՍՊԸ-ից բռնագանձել է 189.000.000 դրամ հաշվարկված տոկոսները, 14.130.912 դրամ ժամկետանց տոկոսներ, 1.923.836 դրամ տույժ, առանց խորանալու, թե ինչ հիմքով են սահմանվել ժամկետանց տոկոսները և տույժերը, որի հետևանքով դրանց գումարը գրեթե կրկնակի չափով գերազանցում է վարկի համար հաշվարկվող (տարեկան 15 տոկոս) տոկոսների գումարը: Բերված օրինակը ակնհայտ վկայում է օրենսդրության անկատարության և դատարանների կողմից օրենքով նախատեսված իրավասությունների անբավարար օգտագործումը: Մասնավորապես, բերված օրինակում դատարանը պարտավոր էր գոնե ղեկավարվել Քաղ. օր. 372 հոդվածով և պակասեցնել ակնհայտորեն անհամաչափ տուժանքը:

Հայտնի է, որ տուժանքի գանձման նպատակը ոչ թե պարտատիրոջ հարստանալն է, այլ նրա խախտված իրավունքների պաշտպանությունը, կրած կորուստների փոխհատուցումը: Սակայն ինչպես ցույց է տալիս պրակտիկան, պայմանագրերի մեծ մասում (հատկապես վարկային հարաբերություններում) սահմանվում են ողջամտության սահմանը մի քանի անգամ գերազանցող չափերով տուժանքներ: Նման ձևով որոշ անբարեխիղճ գործարարներ տուժանքն օգտագործում են իրենց շահույթների ավելացման համար: Նման վիճակը հետևանք է այն բանի, որ ոչ օրենքով, ոչ պայմանագրով տուժանքի գանձման ավելագույն չափ սահմանված չէ: Ի դեպ, դրանով մեր գործարարների կողմից կնքվող պայմանագրերը շատ ցուցիչ կերպով տարբերվում են արտասահմանյան և արտաքին առևտրային համանման այն պայմանագրերից, որոնցում նախատեսվում են խախտումների համար տուժանք գանձելու պայմաններ: Մասնավորապես, արտասահմանյան համանման պայմանագրերում պարտավորության կատարումը կետանցելու համար սահմանվում է ոչ թե 5 կամ 10 տոկոս տուժանք, այլ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար պարտքի գումարի 0.5 տոկոսը, և սահմանվում է, որ գանձվող տուժանքի գումարը չի կարող գերազանցել պայմանագրի գումարի 20 տոկոսը<sup>2</sup>:

<sup>1</sup> Քաղաքացիական գործ թիվ Տ-442, 2002թ., Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, Եր., 2002, 307-309 էջեր:

<sup>2</sup> *Áðáæááí ñééé éí áæéñ Ðí ññéñéíé Óáááðáðéè. xáñòü í áðááÿ. Êîí î áí òáðéè áÿÿ î ðááí ðéí èí áðáéáé. Ì ., 1999, էջ 498:*

## 2.5. Գրամական պարտավորությունների խախտման համար գանձվող տոկոսները

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը դրամական պարտավորությունների չկատարման համար պատասխանատվությանը վերապահում է առանձնահատուկ դեր, որի պատճառով էլ նախատեսում է հատուկ հոդված: Այդպիսի հոդված նախատեսելը հետապնդում է պարտականությունները բարեխղճորեն կատարողների իրավունքներն ու շահերը իրենց կոնտրագենտների անօրինական, հաճախ նաև՝ խարդախ գործողություններից պաշտպանվելու և նրանց պատճառած կորուստները փոխհատուցելու նպատակ<sup>1</sup>:

Այդ պատասխանատվությունը կիրառվում է ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցմամբ դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքում՝ տոկոսների գանձմամբ: Այդ տոկոսներն անհրաժեշտ է տարբերել ինչպես դրամական միջոցների օրինաչափ օգտագործման համար գանձվող տոկոսներից, այնպես էլ օրենսդրական տուժանքի համար սահմանված տոկոսներից: Օրինակ, Քաղ. օր. 879 հոդվածի համաձայն փոխատու իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառության պայմանագրով սահմանված չափով և հաշվարկման կարգով: Այդ տոկոսները տրամադրված դրամական միջոցները օրինաչափ օգտագործելու համար օրենքով կամ պայմանագրով նախատեսված վճար են<sup>2</sup>: Այդ դեպքում փոխառուն իրավախախտում թույլ չի տալիս, հետևաբար նաև պատասխանատվության մասին խոսք գնալ չի կարող: Գրամական պարտավորությունը չկատարելու համար վճարվող տոկոսների մասին խոսք չի գնում նաև այն դեպքերում, երբ հաճախորդի անունով մուտք եղած դրամական միջոցները նրա հաշվին ժամանակին չմուտքագրելու կամ դրանք բանկի կողմից հաշվից անհիմն դուրս գրելու, ինչպես նաև դրամական միջոցները փոխանցելու կամ դրանք վճարելու մասին հաճախորդի ցուցումները չկատարելու կամ պատշաճ չկատարելու դեպքում բանկը պարտավոր է այդ գումարից տոկոսներ վճարել 411 հոդվա-

<sup>1</sup> Տե՛ս *Áðáæéí ñééé Ì .Ê., Áèððÿí ñééé Á. Áîãáí ðí íá ì ðááí. Ì áúèá ì í éí æáí éÿ. Ì ., 1997, էջ 547:*

<sup>2</sup> Տե՛ս *Áèððÿí ñééé Á.Á. Ì ðí òáí òú çá ì í éüç í ááí éá +óæèì è ááí áæí ùì è ñðááñ òááì è // Õîçÿéñ òáí è ì ðááí. 1998, No 12, էջ 28:*

ծով նախատեսված կարգով և չափով (Քաղ. օր. 924 հոդվ.): Տվյալ դեպքում խոսքը գնում է մատնանշված իրավախախտումների համար գանձվող տուժանքի չափի հաշվարկման կարգի մասին, և այդ տոկոսների նկատմամբ կիրառվում են տուժանքի վերաբերյալ կանոնները:

Ուրիշի դրամական միջոցների օգտագործման համար տոկոսները գանձվում են այն դեպքերում, երբ անձը թույլ է տալիս ստացած ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների համար հատուցման ենթակա գումարների վճարման կետանցում: Օրինակ, «Դվին կոնցեռն» ՓԲԸ-ն, դիմելով դատարան, խնդրել է «Դոդագործ» ԲԲԸ-ից բռնագանձել մի շարք գործարքներով առաջացած հիմնական պարտքի գումարը և գործարքների դիմաց չվճարելու հետևանքով իրեն պատկանող դրամական միջոցներն ապօրինի պահելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված բանկային տոկոսի գումարը:

Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանը, գտնելով, որ հայցապահանջը հիմնավորված է, «Դոդագործ» ԲԲԸ-ից բռնագանձել է ինչպես հիմնական գումարը, այնպես էլ Քաղ. օր 411 հոդվածով նախատեսված բանկային տոկոսի գումարը<sup>1</sup>:

Ինչպես երևում է բերված և դատական պրակտիկայում հանդիպող այլ օրինակներից, ՀՀ տնտեսական դատարանը Քաղ. օր. 411 հոդվածով նախատեսված տոկոսները կիրառում է որպես ոչ դրամական գործարքներով վճարումների կետանցման համար գանձվող սանկցիա: Այդ պատճառով էլ ելնելով և օրենսդրության ձևակերպումներից, և դատական ձևավորվող պրակտիկայից, մենք գտնում ենք, որ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցմամբ դրանք օգտագործելու, ինչպես նաև այլ եղանակներով ուրիշի դրամական միջոցներից օգտվելու համար գանձվող տոկոսները պատասխանատվության միջոց հանդիսացող սանկցիա են:

Հարկ է նկատել, որ արտահայտվածը դրամական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կիրառվող նշված գույքային սանկցիայի վերաբերյալ միակ կարծիքը չէ: Չնայած այն բանին, որ Քաղ. օր. 411 հոդվածը, զետեղված լինելով «Պատաս-

<sup>1</sup> Քաղաքացիական գործ թիվ S-885, 2002թ. Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, Եր., 2002, 391-392 էջեր:

խանատվությունը պարտավորությունները խախտելու համար» գլխում, վերնագրված է «Պատասխանատվությունը դրամական պարտավորությունների խախտման համար», այնուհանդերձ, ուրիշի դրամական միջոցների ապօրինի օգտագործման համար գանձվող տոկոսների էության վերաբերյալ բանավեճը, որը սկսվել էր դեռևս կետանցման ժամանակվա համար գանձվող տարեկան տոկոսի էության պարզաբանման կապակցությամբ» (1927թ.), շարունակվում է նաև մեր օրերում: Իրավաբանների մի մասը գտնում է, որ տոկոսները, ըստ էության, դրամի օգտագործման համար սովորական վճար են, իսկ մյուսները գտնում են, որ 411 (ՌԳ՝ 395 հոդվ.) հոդվածը նախատեսում է դրամական պարտավորությունների չկատարման համար հատուկ սանկցիա<sup>1</sup>:

Օրինակ, Ն.Գ. Վիլկովան տոկոսները համարում է դրամական եկամուտներ, որը պարտապանը ստանում է պարտատիրոջ դրամական միջոցներն ապօրինաբար խնայելու կամ օգտագործելու հետևանքով: Տոկոսները գանձելու համար հիմք են ծառայում պարտապանի հակաօրինական գործողությունները, որոնք դրսևորվում են իր կողմից խնայված դրամական միջոցներից անհիմն եկամուտներ ստանալով<sup>2</sup>: Տարեկան տոկոսները պարտապանին պատկանող դրամական միջոցները օգտագործելու համար վճար են համարում նաև Մ.Գ.Ռոզենբերգը<sup>3</sup>, Ե.Ա.Սուխանովը<sup>4</sup>:

Այլ հեղինակներ գտնում են, որ տոկոսները դրամական պարտավորությունների չկատարման հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման եղանակ են<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս *Êîì àíðàðèé è àðàæàíñèì ó èíààèñó Ðíññèéñèé Óààðàðèè. ×àñòè ìàðàé (ìíñòàðéíùé). Ì ., 1998, էջ 644:*

<sup>2</sup> Տե՛ս *Àèèèíàà Ì.Á. Ì ðìóáíð ãíáíà ì àáíæéù ì ìáçàðàèùñàà ÷ç àíáíð ðà áíáóíð ðàíáé èóíèè-ìðíààæ. Ì àðàðèèè ñàèèè ì ðààá ÕÏ Ì ÑÑÑÐ. Áù. 34. Ì ., 1993, 57-59 էջեր:*

<sup>3</sup> Տե՛ս *Êîì àíðàðèé è àðàæàíñèì ó èíààèñó Ðíññèéñèé Óààðàðèè. Ì ., 1995, 12-13 էջեր:*

<sup>4</sup> Տե՛ս *Àðàæàíñèá ì ðàáí. Á 2-ó ò. Õ 1. Ì ì à ðàá. Á.Á. Ñóóáíáà. Àáòì ð àèàá – Á.Á.Ñóóáíá, 456-457 էջեր:*

<sup>5</sup> Տե՛ս *Ñàèèá Ì.Ì. Ì àáíá-áéá èñíéíáéý áíáóíð ðàíáíá ãíáíð ðà. Õ-ááíá ì ñíáéá. Ì ., 1979, էջեր 5-6: Àðàæàíñèè èíàèñó Ðíññèéñèé Óààðàðèè. ×àñòù ìàðàäý. Ì áó-ìí-ìðàèè-áñèè èíì àíðàðèé. Ì óá. ðàá. Õ.Á. Ááíá, Á.Բ. Èàáèèé, Á.Ì. Ì ì çíèé, Ì ., 1996, էջ 593: Á.Á. Èàáðíá. Ááíáéíá ì áýçàðàèùñàà á Ðíññèéñèì àðàæàíñèì ì ðààá. ÑÏ á., 2001, էջ 116: Àðàæàí ñèíá ì ðàáí. Õ-ááí èè. 6-á èçàáí èá. Ì ., 2002, էջ 658:*

Երրորդները, ուրիշի դրամական միջոցները անօրինական օգտագործելու համար գանձվող տոկոսները համարում են օրենսդրական տուժանք, և, հաշվի առնելով դրանց բնույթը, եզրակացնում են, որ դրանք գանձելիս, կարելի է կիրառել տուժանքը պակասեցնելու կանոնները<sup>1</sup>:

Չորրորդների կարծիքով, դրամական պարտավորությունները չկատարելու համար գանձվող տոկոսները հանդիսանում են գույքային պատասխանատվության հատուկ ոչ տիպական միջոց, որը չի կարելի նույնացնել ո՛չ վնասների, ո՛չ տուժանքի հետ<sup>2</sup>:

Վերջապես, ժամանակակից քաղաքացիագետներից ոմանք ուրիշի միջոցներն անօրինական պահելու, օգտագործելու համար գանձվող տոկոսները համարում են պատասխանատվության բնույթ չունեցող քաղաքացիաիրավական սանկցիա: Առավել փաստարկված այդ տեսակետը պաշտպանում են պրոֆեսոր Տ. Չակուպենը և Ս. Կմիտսը: Այդ հեղինակները, հիմք ընդունելով այն դրույթը, որ այս կամ այն սանկցիան պատասխանատվության միջոց որակելու համար անհրաժեշտ է իրավախախտողի գույքային ոլորտում որոշակի կորստի առկայությունը, և միայն այդ դեպքում պատասխանատվության սպառնալիքն ի վիճակի է կանխել իրավախախտման կատարումը, գտնում են, որ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, օգտագործելու համար գանձվող տոկոսները սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հատուկ եղանակ են<sup>3</sup>:

Ըստ նշված հեղինակների, այդ սանկցիայի համար բնութագրական են հետևյալ հատկանիշները: Առաջին, քաղաքացիական իրավունքի պաշտպանության այդ եղանակը չի կարելի դիտարկել որպես

պատասխանատվության եղանակ, ի տարբերություն, օրինակ, կանխավճարը կորցնելուց կամ այն կրկնակի վերադարձնելուց (ՌԴ Քաղ. օր. 381, ՀՀ Քաղ. օր. 396 հհ.), կամ գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելուց (ՌԴ Քաղ. օր. 394, ՀՀ Քաղ. օր. 249 հհ.): Երկրորդ, ուսումնասիրվող եղանակը կարող է կիրառվել այլ եղանակների, մասնավորապես, վնասների փոխհատուցման և տուժանքի գանձման հետ միասին: Երրորդ, պաշտպանության այդ եղանակը կիրառելի է ուրիշի դրամական միջոցների ցանկացած ապօրինի օգտագործման դեպքում: Չորրորդ, այդ միջոցներն օրենքով սահմանված դեպքերում կարող են կիրառվել նաև պարտապանի կողմից ոչ դրամական պարտավորությունների խախտման դեպքում: Հինգերորդ, քաղաքացիական իրավունքների պաշտպանության այդ միջոցների կիրառությունը հնարավոր է արտադատական կարգով:

Այդ առանձնահատկությունները մատնանշելուց հետո Տ. Չակուպենը և Ս. Կմիտսը եզրակացնում են, որ քննարկվող սանկցիան խնդիր ունի փոխհատուցել պարտատիրոջ այն անհարմարությունները, որոնք նրան պատճառվել են՝ համապատասխան դրամական միջոցներից օգտվելու հնարավորությունից զրկելով: Քանի որ պարտապանի այդ պարտավորությունն օրենքը չի կապում պարտատիրոջ կողմից իր մտառաջացած վնասները հատուցելու պարտականության հետ, նշված տոկոսներն իրենցից ներկայացնում են բացառապես պարտատիրոջ դրամական միջոցներն օգտագործելու համար վճար<sup>1</sup>:

Սեր կարծիքով, նշված եզրակացությունը հիմնավորելու համար վկայակոչված հատկանիշներն ըստ էության ապացուցում են հակառակը, հետևյալ պատճառներով:

1. Ուրիշի միջոցներն ապօրինի օգտագործելու համար գանձվող տոկոսները չի կարելի համեմատել ոչ կանխավճարի և ոչ էլ գրավի հետ, որովհետև առաջինը պատասխանատվության միջոց է, իսկ կանխավճարը և գրավը ապահովման միջոցներ են:

2. Պատասխանատվության ցանկացած միջոց կարող է կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ քաղաքացիաիրավական այլ սանկցիաների համակցությամբ:

3. Պատասխանատվության ցանկացած միջոց դատական հարկադրանքի օժանդակությամբ կիրառվում է միայն այն ժամանակ, երբ

<sup>1</sup> Տե՛ս *ՄժձԵՄՈՒՄՆԻՅԱ ԻԾԱՌԻ. Ի Իձ ԾԱՌ. Ա.Ա. ԷձԵՐԵՂԱ, Ա.Է. Ի ԱՆԵՅԱՅԱ. x. 1. Ի ., 1997, էջ 454: Ի ԻԻԻԱ Ա. Ի ՕձԱՌՈՒՅՈՒՄՆԻՅՈՒ ՇԱ ԻՅՈՒԻԵՂԵՂԱ ԱՐԻԱԵՐԻԱԻ ԻՅՇԱՌԱԵՄՈՒՅԱ // ՕՐՇՅԵՆՈՒԹ Ե ԻԾԱՌԻ. 1997, No 8, էջ 79: ԷձՁԻՂԱ Ա.Ա. ԱՐԻԱԵՐԻԱ ԻՅՇԱՌԱԵՄՈՒՅԱ Ա ԾԻՄՆԵՆԵՐԻ ԱԾԱԵՒՄՆԻՅԱ ԻԾԱՌԱ. ՄԻ Ա., 2001, էջ 127:*

<sup>2</sup> Տե՛ս *Ի ՕձԵՐՈՒՄՆԵՔ Ա.Է. ԱԾԱԵՒՄՆԻՅԱ ԻԾԱՌԱՇԱՆ Ա ՈՇՇՅԵՆՈՒՅԱԻՆԵ ԱՅՅՈՒՄՆԻՅՈՒՅԱ. Ի ., 1984, էջ 140: ԱԾԱԵՐՈՒՄՆԵՔ Ի .Է., ԱԵՈՍԻՆԵՔ Ա., ԱՐԻԱԻԾԻԻԱ ԻԾԱՌԻ. Ի ԱՇՆԱ ԻՆԵՂԵՂԵՅ. Ի ., 1997, էջ 557: Ի ԻՐԻՄԵՐԻԱ Ա.Է. Ի ԻԾԱՌԱՇՈՒՄՆԵՅՈՒՅԱ ԻԾՈՇՈՒՅՅ ԻՐԻՄԵՐԻԱ ԻՅՇԱՌԱԵՄՈՒՅԱ // ԱՆՈՒԵՔ ԱՆՈՒ ԾՈ, 1999, No 3, էջ 68:*

<sup>3</sup> Տե՛ս *ՇձԵՐՈՒՄՆԻՅԱ Օ., ԷՐԵՈՒՄ Մ. Ի ՈՐԻԱԵՐԻԱ ԵՅՅԵՕԵՅՅՈՒՅԱ ԻԾԱՌԱԵՐԻ ԻԾՈՒՅԱ ԻՐ ՈՒ. 395 ԱԷ ԾՈ, ԵՅ Ի ԱԾԱ ԻՕձԱՌՈՒՅՈՒՄՆԻՅՈՒՅԱ // ՕՐՇՅԵՆՈՒԹ Ե ԻԾԱՌԻ. 2004, No 2, էջ 130:*

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը:

իրավախախտողը չի հարթում իր իրավախախտմամբ առաջացած հետևանքները:

Եվ վերջապես, քաղաքացիաիրավական սանկցիաների ճնշող մեծամասնության կիրառությունն օրենքը չի կապում պարտատիրոջ մոտ առաջացած վնասների փոխհատուցման հետ (օրինակ, տուժանք, պայմանագրից հրաժարվել և այլն): Հետևաբար, Քաղ. օր. 411 հոդվածում նախատեսված դեպքերում գանձվող տոկոսները ոչ թե դրամական միջոցներն անօրինական չվերադարձնելու համար վճար են, այլ ապօրինի գործողություններով այլ անձի սուբյեկտիվ իրավունքների խախտման համար կիրառվող պատասխանատվության միջոց հանդիսացող սանկցիա:

Նման հետևությունը բխում է Քաղ. օր. 411 հոդվածի դիսպոզիցիայից, այն պարզ պատճառով, որ տոկոսների գանձում նախատեսված է ոչ միայն ուրիշի դրամական միջոցներն օգտագործելու համար, այլև դրանք պահելու, վերադարձնելուց խուսափելու, անհիմն ստանալու կամ խնայելու համար:

Հարկ է նկատել, որ Քաղ. օր. 411 հոդվածի կարգով գանձվող տոկոսների որակման հարցում տարբեր մոտեցում է ցուցաբերում նաև Ռուսաստանի Դաշնության դատական պրակտիկան: Դատարանները մի դեպքում այն դիտարկում են որպես դրամական պարտավորություններով գանձվող տուժանք<sup>1</sup>, առանձին դեպքերում՝ որպես չստացված եկամուտ<sup>2</sup>, երրորդ դեպքում՝ որպես դրամական միջոցների օգտագործման համար վճար: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ 1995 թ. դեկտեմբերի 1-ին ՌԴ Բարձրագույն արբիտրաժային Դատարանի գիտախորհրդատվական խորհուրդն առաջարկեց ղեկավարվել նրանով, որ ուրիշի դրամական միջոցների օգտագործման համար ՌԴ Քաղ. օր. 395 (ՀՀ Քաղ. օր. 411) հոդվածում նախատեսված տոկոսները հանդիսանում են դրամական միջոցների օգտագործման համար վճար, գույքային շրջանառությունում դրանց արժեքի ինչ-որ համարժեք, իր իրավական բնույթով՝ քաղաքացիաիրավական պատասխանատվության հատուկ միջոց, որը չի կարող համարվել ոչ տուժանք, ոչ վնասների հատուցում: Իսկ ՌԴ Գերագույն դատարանի պլենումի և ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի պլենումի «Ուրիշի դրամական միջոցների

օգտագործման համար Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական օրենսգրքի դրույթների կիրառման պրակտիկայի մասին» 1998 թ. հոկտեմբերի 8-ի № 13/14 համատեղ որոշմամբ<sup>1</sup> Քաղ. օր. 411 հոդվածով նախատեսված տոկոսները որակվեցին որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց, որը իր իրավական հետևանքներով գործնականում նման է տուժանքին: Այսինքն, հստակ սահմանվեց, որ դրամական պարտավորությունները չկատարելու համար գանձվող տոկոսները պատասխանատվության ինքնուրույն միջոց են:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության դատարանների պրակտիկային, ապա դրամական պարտավորությունները չկատարելու համար գանձվող տոկոսները համարվում են քաղաքացիաիրավական պատասխանատվության հատուկ միջոց և կիրառվում են անկախ, իրավախախտումների համար կիրառվող՝ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ սանկցիաներից:

Օրինակ, Հայաստանի Հանրապետության տնտեսական գործերով վերաքննիչ դատարանը, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Ինեկորբանկ» ՓԲԸ-ի ընդդեմ «Հայկապ» Բանկ ՍՊԸ-ի, պարզել է, որ ի խախտումն կողմերի միջև կնքված թղթակցային հաշվի պայմանագրի՝ «Հայկապ» Բանկ ՍՊԸ-ն չի կատարել 53417,72 ԱՄՆ դոլարի փոխանցման վճարման հանձնարարականը: Դրա փոխարեն, պատասխանողը գումարը դուրս է գրել և ապօրինաբար պահել իր մոտ:

Հայցվորը խնդրել էր պատասխանողից բռնագանձել 53417,72 ԱՄՆ դոլար հիմնական պարտքը, 16,02 ԱՄՆ դոլար պայմանագրի 4.1 կետով սահմանված գումարի փոխանցման կետանցի 3 օրվա համար հաշվարկված տույժի գումարը և 4440,12 ԱՄՆ դոլար՝ 924 և 411 հհ. նախատեսված տոկոսները՝ իր դրամական միջոցների օգտագործման ամբողջ ժամանակաշրջանի համար:

Դատարանը, գտնելով, որ հայցվորի պահանջը հիմնավորված է ինչպես հիմնական պարտքի, այնպես էլ տույժի և տոկոսների մասով, վճռել է հայցը բավարարել ամբողջությամբ: «Հայկապ Բանկ» ՍՊԸ-ից հօգուտ «Ինեկորբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել՝ հիմնական պարտքը, գումարը փոխանցելու համար պայմանագրով սահմանված ժամկետը 3 օրով կետանցնելու համար տույժը և ուրիշի դրամական միջոցներն անօ-

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Բ., Վիտորյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 547:

<sup>2</sup> Տե՛ս *Άσπρί εέ Άσπρᾶᾶί Ἀδᾶεῶδᾶεῖ ἰ ᾶί Ἰόᾶᾶ Δῖ Ἰᾶεῖεῖ ἰ ἰ Ὄᾶᾶᾶῶεῖ*. 1993, <sup>1</sup> 9, էջ 104:

<sup>1</sup> *Ὄῖ ḡῖεῖῶᾶῖ ἠ ἰ ḡᾶᾶῖ*. 1988, No 11, էջ 77:



րինական պահելու համար 411 հոդվածով նախատեսված տոկոսների գումարը<sup>1</sup>:

Դատարանը նաև ընգծել է, որ ՀՀ քաղ. օր. 411 հոդվածով նախատեսված տոկոսների բռնագանձման մասով վճիռը կատարելիս տոկոսների հաշվեգրումը շարունակել մինչև հիմնական պարտքի և տույժի մասով փաստացի կատարման օրվա՝ 2001թ. ապրիլի 20-ի դրությամբ սահմանված բանկային տոկոսի հաշվարկման դրույքաչափով (21% տարեկան):

Այսինքն, դատարանը ուրիշի դրամական միջոցները ապօրինի պահելու համար վճարվող տոկոսները անվերապահորեն համարել է պատասխանատվության ինքնուրույն միջոց և մատնանշել է այն մեխանիզմները, որոնց պահպանությունը պարտադիր է այդ յուրատիպ սանկցիան կիրառելու համար:

Քաղ. օր. 411 հոդվածում նախատեսված սանկցիայի կիրառման նկատմամբ նման վերաբերմունք է ցուցաբերել նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանը Հայաստանի Հանրապետությունն ընդդեմ «Հելենիք Թեյեքոյունիքեյշն Օրգանիզեյշն» ընկերության՝ ՀՀ կառավարությանը չփոխանցված դրամական ծախսերի և դրամական պարտավորությունները կետանցելու համար տոկոսների բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործով<sup>2</sup>:

Հանրապետության դատարանների նման դիրքորոշումը ճիշտ է և արդարացված: Այն ուղղակիորեն բխում է Քաղ. օր. 411 հոդվածում սահմանված դրույթներից, մասնավորապես, այն սկզբունքից, որ պարտատիրոջ դրամական միջոցների անօրինական օգտագործմամբ նրան պատճառված վնասները տոկոսների գումարը գերազանցելու դեպքում պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել հատուցելու այդ գումարը գերազանցող վնասները: Այսինքն, Քաղ. օր. 411 հոդվածը, վնասների գերազանցող մասի հատուցումը պայմանավորելով հասանելիք (գանձվող կամ գանձվելիք) տոկոսների գումարով, արդեն իսկ հիմք է ընդունում, որ տոկոսներ գանձելը հանդիսանում է ինքնուրույն սանկցիա՝ պատասխանատվության միջոց: Դա են վկայում նաև Քաղ. օր. այն նորմերը, որոնցում «վնասներ», «տուժանք», «տոկոսներ» հաս-

կացություններն օգտագործվում են որպես առանձին, ինքնուրույն կատեգորիաներ (233, 377, 380, 399 և այլ հոդվածներ)<sup>1</sup>:

Մենք բաժանում ենք Վ.Վ.Վիտրյանսկու այն կարծիքը, որ դրամական պարտավորությունների չկատարման համար գանձվող տոկոսների, որպես գույքային պատասխանատվության, յուրահատկությունները պետք է փնտրել ոչ այնքան դրանց հաշվարկման, ապացուցման, կիրառման յուրահատկություններում, ինչպես դա առկա է վնասների և տուժանքի դեպքում, այլ դրամական պարտավորության յուրահատուկ առարկայի մեջ<sup>2</sup>:

Դրանք, ինչպես հայտնի է, շրջանառության յուրահատուկ օբյեկտ է: Այն միշտ փոխարինելի է, իր հատկությունները չի փոխում, օժտված է բանկային տոկոսի հաշվարկման միջոցով աճելու հատկությամբ, հնարավորություն է ընձեռում հստակ որոշել պարտապանի կողմից դրանք անօրինական օգտագործելու դեպքում առաջացած կորուստների նվազագույն չափը: Այդ պատճառով էլ նշված սանկցիան կիրառելիս Քաղ. օր. 417 հոդվածի 1-ին մասը և 432 հոդվածում նախատեսված ընդհանուր կանոնները կիրառելի չեն: Այսինքն, մեղքը պատասխանատվության պայման չի համարվում, իսկ պարտավորության կատարման անհնարինության հարցը քննարկման առարկա հանդիսանալ չի կարող:

Բացի վերոհիշյալից, Քաղ. օր. 411 հոդվածի բովանդակությունից բխում է, որ դրամական պարտավորությունների չկատարման համար տոկոսներ գանձելը, որպես ինքնատիպ գույքային սանկցիա, աչքի է ընկնում հետևյալ առանձնահատկություններով:

Առաջին, ուրիշի միջոցների օգտագործման համար տոկոսների վճարում սահմանված է դրանց ոչ իրավաչափ պահելու, վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցող դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու, այդ թվում նաև պայմանագրից ծագած պարտավորության բոլոր դեպքերի համար:

Երկրորդ, տոկոսների չափը որոշվում է դրամական պարտավորության կամ դրա համապատասխան մասի կատարման օրվա բանկային տոկոսի հաշվարկային դրույքով, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

<sup>1</sup> Տե՛ս Քաղաքացիական գործ թիվ S-118. 2001 թ., Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, Եր., 2002, 70-72 էջեր:

<sup>2</sup> Տե՛ս Քաղաքացիական գործ ՏՎ-96. 2001 թ., Նույն ժողովածու, 146-151 էջեր:

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 556:

<sup>2</sup> Տե՛ս նույն աշխատությունը, էջ 557:

Երրորդ, ուրիշի դրամական միջոցների օգտագործման համար գանձվող տոկոսները վնասների հետ հարաբերակցությունում կրում են հաշվարկային բնույթ: Պարտապանի կողմից, պարտատիրոջը վնասներ հատուցելու հիմքերի առկայության դեպքում, վնասները վճարվում են միայն ուրիշի դրամական միջոցների օգտագործման համար գանձվող տոկոսների գումարը գերազանցող մասով:

Չորրորդ, ուրիշի միջոցներից օգտվելու համար տոկոսները գանձվում են մինչև այդ միջոցների գումարը պարտատիրոջը վճարելու օրը, եթե պայմանագրով տոկոսների հաշվարկման ավելի կարճ ժամկետ սահմանված չէ:

Հինգերորդ, այդ սանկցիան, որպես պատասխանատվության ինքնուրույն միջոց, կարող է կիրառվել ոչ միայն դրամական պարտավորությունների չկատարման, այլև բոլոր այն իրավախախտումների դեպքում, որոնք կապված են ուրիշի դրամական միջոցների ոչ իրավաչափ օգտագործման հետ: Այդ տոկոսները ենթակա են վճարման՝ անկախ նրանից՝ ուրիշի միջոցներն օգտագործողը դրանք ստացել է պայմանագրին համապատասխան, թե՛ պայմանագրային հարաբերության բացակայության պայմաններում: Սակայն պետք է նկատի ունենալ, որ դրամական պարտավորությունների չկատարումն ինքնին տոկոսների վճարման պարտականություն չի առաջացնում, այդպիսի պատասխանատվության կիրառման համար անհրաժեշտ է, որ դրամական պարտավորության չկատարումը գույքորդի ուրիշի դրամական միջոցների օգտագործման հետ: Վերջինս տեղի ունի ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցմամբ դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում: Բացի դրանից, Քաղ. օր. 411, 417 հոդվածների իմաստից բխում է, որ ուրիշի դրամական միջոցներից անօրինական (ոչ իրավաչափ) օգտվելն առկա է նաև այն դեպքում, երբ պարտապանն ընդհանրապես չունի վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցներ, որի հետևանքով էլ չի կարող կատարել դրամական պարտավորությունը: Այդ պատճառով դրամական միջոցների բացակայությունը, անգամ ֆորս-մաժոր հանգամանքների առկայությունը պարտապանին չի ազատում պարտավորությունների չկատարման համար պատասխանատվությունից: Եթե ուրիշի դրամական միջոցների այդպիսի ոչ իրավաչափ օգտագործում չկա, ապա չկա նաև պարտապանին պատասխանատվության ենթարկելու հիմք: Օրինակ,

եթե պարտապանը հանձնարարել է իրեն սպասարկող բանկին գումարը փոխանցել պարտատիրոջը, իսկ բանկը սխալմամբ գումարը փոխանցել է այլ հասցեով, ապա թեկուզ և պարտատերը գումարը չի ստացել, 411 հոդվածի կիրառման հիմք չկա, քանի որ բացակայում է ուրիշի դրամական միջոցների անօրինական օգտագործումը: Շարադրվածից հետևում է, որ «ուրիշի դրամական միջոցներ» հասկացությունը ներառում է ոչ միայն ուրիշին պատկանող միջոցները, այլև այն միջոցները, որոնք նախատեսված են ապրանքների մատակարարման (հանձնման), աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց վճարելու համար, չնայած այն բանին, որ դրանք ձևականորեն «ուրիշի» միջոցներ չեն հանդիսանում<sup>1</sup>:

Օրինակ, Քաղ. օր. 503 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ վաճառողը չի կատարում նախապես վճարված ապրանքները հանձնելու պարտականությունը, և այլ բան նախատեսված չէ առուծախի պայմանագրով, նախապես վճարված գումարին կարող են հաշվարկվել օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան տոկոսներ՝ սկսած այն օրվանից, երբ պայմանագրով ապրանքը պետք է հանձնվեր մինչև ապրանքը գնորդին հանձնելու կամ նախապես վճարված գումարը նրան վերադարձնելու օրը: Այդ դեպքում վաճառողը հատուկ պատասխանատվություն է կրում ուրիշի դրամական միջոցներն անօրինական օգտագործելու համար: Նույնպիսի պատասխանատվություն է կրում նաև գնորդը, եթե պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարում ապառիկ ձեռք բերած ապրանքի համար, սկսած այն օրվանից, երբ պայմանագրի համաձայն, ապրանքի համար պետք է վճարած լիներ մինչև գնորդի կողմից ապրանքի համար վճարելու օրը (Քաղ. օր. 504 հոդվ., մաս 5): Այսինքն, թեկուզև խախտվում են առուծախի պայմանագրի կատարման պայմանները, մասնակիցների նկատմամբ կիրառվում է դրամական պարտավորությունները չկատարելու համար նախատեսված հատուկ սանկցիա, պարտավորեցնելով տոկոսներ վճարել ուրիշի դրամական միջոցները անօրինական օգտագործելու (վաճառողը) կամ խնայելու (գնորդը) համար:

Դրամական միջոցները ապօրինի օգտագործելու համար տոկոսներ գանձվում են նաև գուտ դրամական պարտավորություններով: Մասնավորապես, Քաղ. օր. 881 հոդվածին համապատասխան, եթե

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 549:

փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարը ենթակա է վճարման միայն Քաղ. օր. 411 հոդվածի 1-ին մասով նախատեսված չափով տոկոսներով, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը: Այդ տոկոսները հաշվարկվում են փոխառության գումարի վրա՝ առանց հաշվի առնելու մինչև վերադարձման օրը հաշվարկված տոկոսները: Ընդ որում, Քաղ. օր. 881 հոդվածն անվավերության սպառնալիքով արգելում է պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնություն կայացնելը:

Այսինքն, Քաղ. օր. 881 հոդվածը դրամական պարտավորությունների կատարումը կետանցելու (փոխառության գումարը չվերադարձնելու) համար սահմանում է հատուկ պատասխանատվություն՝ տոկոսների վճարում: Սակայն այդպիսի պատասխանատվության արդյունավետության հարցը, մեր կարծիքով, պետք է դառնա հատուկ քննարկման առարկա: Բանն այն է, որ ըստ Քաղ. օր. 879 հոդվածի՝ փոխառուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից: Այդ տոկոսների չափը կարող է ավելի լինել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքից, բայց չի կարող գերազանցել այդ դրույքի կրկնապատիկը, իսկ Քաղ. օր. 411 հոդվածին համապատասխան դրամական պարտավորությունները չկատարելու համար դատարանը տոկոսներ գանձելու մասին պարտատիրոջ պահանջը կարող է բավարարել, ելնելով վճռի կատարման օրվա բանկային տոկոսի հաշվարկային դրույքից: Ստացվում է, որ այլ պարտավորություններից (առուծախ, մատակարարում և այլն) բխող դրամական պարտականությունները չկատարելու համար տոկոսների գանձումն օժանդակում է տուժողին փոխհատուցել այդ խախտման հետևանքով իր կրած կորուստները, իսկ փոխառուի կողմից փոխառության գումարը ժամանակին չվերադարձնելու համար տոկոսներ գանձելը կարծեք թե սահմանված է ի նպաստ իրավախախտողի, քանի որ կետանցված ժամանակահատվածի համար արգելվում է պայմանագրով սահմանված տոկոսների գանձումը, երբ դրա չափը եթե ավել չէ, ապա պակաս էլ չէ, որպես սանկցիա գանձվող տոկոսներից: Եթե համարում ենք, որ Քաղ. օր. 411 հոդվածով նախատեսված սանկցիան անհրաժեշտ է կիրառել նաև փոխառության պայ-

մանագրի կատարումը փոխառուի կողմից կետանցելու դեպքում, ապա դրամական պարտավորությունները չկատարելու համար տոկոսները (հոդվ. 411) պետք է գանձվեն ի լրումն պայմանագրով նախատեսված տոկոսների: Հակառակ դեպքում, փոխառուները, եթե պայմանագրով սահմանված տոկոսը հավասար է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսին, ըստ էության պատասխանատվության չեն ենթարկում, այլ վճարում են ուրիշի դրամական միջոցներն օգտագործելու համար որպես հատուցում սահմանված վճարը, իսկ եթե պայմանագրում նախատեսված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսից ավելի, ապա փոխառուն, փաստորեն, ազատվում է ուրիշի միջոցների օգտագործման համար սահմանված հատուցումը ամբողջ ծավալով վճարելուց: Օրինակ, Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանը, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Շոր Օվերգիս Լոուն ընդ Գարանթի» ՄՊԸ-ի ընդդեմ «Չվարթնոց» արտադրական կոոպերատիվի, Վարդան Գրիգորյանի և Մարինե Խաչատրյանի 9.858.65 ԱՄՆ դոլար բռնագանձելու պահանջի մասին հայցը բավարարել է ամբողջությամբ՝ պատասխանողներից բռնագանձելով ինչպես հիմնական պարտքի գումարը, այնպես էլ դրա վրա հաշվարկվող տոկոսները, չվճարված տույժի գումարը և ուրիշի դրամական միջոցներն անօրինական օգտագործելու համար Քաղ. օր. 411 հոդվածով նախատեսված տոկոսները: Ընդ որում, դատարանը վճռում ուղղակի նշել է. «Քանի որ պատասխանողը սահմանված ժամկետում չի վերադարձրել փոխառության գումարը, ուստի հայցվորը իրավացիորեն դադարեցրել է փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը և ՀՀ քաղ. օր. 411 հոդվածի կարգով շարունակել է տոկոսների հաշվարկը: Ընդ որում, հայցվորի կողմից տոկոսների հաշվարկը (377, 65 ԱՄՆ դոլար) կատարվել է ավելի ցածր տոկոսադրույքով (տարեկան 20%), քան նախատեսված էր դրամական պարտավորության կատարման օրվա դրությամբ (տարեկան 22%)»<sup>1</sup>: Այսինքն, տոկոսի հաշվարկային դրույքը նվազելու հետևանքով «Շոր Օվերգիս Լոուն ընդ Գարանթի» ՄՊԸ-ն զրկվել է վարկի գումարներն անօրինական չվերադարձնելու համար հատուցումը լրիվ ստանալու իրավունքից: Պրակտիկայում տե-

<sup>1</sup> Տե՛ս Քաղաքացիական գործ թիվ S-290, 2002 թ. Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, Եր., 2002, 243-245 էջեր:

ղի ունեցող նման երևույթները ցույց են տալիս, որ սուբյեկտիվ իրավունքների լիարժեք պաշտպանության և չստացված եկամտուների լրիվ ծավալով փոխհատուցելու անհրաժեշտությունից ելնելով, Քաղ. օր. 411 հոդվածի 1 մասի երկրորդ պարբերությունը անհրաժեշտ է լրացնել հետևյալ դրույթով, «Եթե այդ դրույթը հավասար կամ ավելի է պայմանագրով նախատեսված տոկոսներից: Եթե պարտավորության կատարման օրվա բանկային տոկոսի հաշվարկման դրույթը ցածր է պայմանագրով նախատեսվածից, ապա շարունակվում են գանձվել պայմանագրով նախատեսված տոկոսները»:

Միանգամայն արդարացի է Լ.Ա. Նովոսյուրովան, երբ նշում է, որ ՌԳ- Քաղ. օր. 395 (Քաղ. օր. 411) հոդվածի տոկոսների հաշվարկման կարգի և չափի մասին դրույթներն այնպես են ձևակերպված, որ տոկոսադրույթների անկայունության և աճի պայմաններում վարկային պարտավորություններով առաջանում է պարտատերերի անհիմն հարստացում՝ բարձր տոկոսադրույթների դեպքում, և կորուստների ոչ լրիվ հատուցում՝ տոկոսադրույթները նվազման դեպքում<sup>1</sup>:

Գաղտնիք չէ, որ ուրիշի դրամական միջոցները, որպես կանոն, անօրինական օգտագործում են այն դեպքերում, երբ իրավախախտողը կարիք ունի դրամական միջոցների: Իհարկե դրամական միջոցներ նա կարող է ստանալ նաև բանկից՝ հաշվարկային դրույթից ավելի տոկոսադրույթով: Բայց քանի որ իրավախախտողի համար շահավետ է բանկից փոխառություն վերցնելու փոխարեն օգտագործել ուրիշի դրամական միջոցները, ուստի Քաղ. օր. 411 հոդվածով նախատեսված տոկոսները պարտավորության պատշաճ կատարումը չեն խթանում:

<sup>1</sup> Տե՛ս *Í íáíñáeíáá Ē.Á. Í ìðááíáóó ìíñeáñóáeýó íáðóóáíeý áíáíáíðííáí íáýçáðáeüñóáá // Ááñóí eè ÁÁÑ ÐÕ 1999, 1 3, էջ 70:*

### **ԳԼՈՒԽ 3. ԳՈՒՅՔԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ**

#### **3.1. Գույքային պատասխանատվության հիմքի և պայմանների հարաբերակցությունը**

Խորհրդային շրջանի իրավագիտության մեջ գերիշխող էր այն կարծիքը, որ գույքային պատասխանատվության հիմք է հանդիսանում «քաղաքացիական իրավախախտման կազմը»<sup>1</sup>: Այդ կարծիքը պաշտպանում են նաև ժամանակակից շատ քաղաքացիագետներ<sup>2</sup>: Օրինակ, Գ.Կ. Մատվենը գտնում է, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության ընդհանուր և միակ հիմքը իրավախախտման կազմն է<sup>3</sup>: Ինչպես Գ.Կ. Մատվենը, այնպես էլ այլ հեղինակներ առանձնացնում են իրավախախտման կազմի չորս տարր՝ հակաիրավական վարքագիծ, վնասակար հետևանքներ, պատճառական կապ հակաիրավական գործողության (անգործության) և առաջացած վնասակար հետևանքների միջև, և իրավախախտողի մեղք<sup>4</sup>: Ինչպես նկատում է Վ.Վ.Վիտրյանսկին՝ իր առաջացմամբ քաղաքացիական իրավախախտման կազմի տեսությունը պարտական է քրեական իրավունքին<sup>5</sup>: Ընդ որում, այդ տեսության կողմնակիցներն իրենք էլ չեն ժխտում քրեական իրավունքից դրա փոխառումը:

Բազմադարյա ավանդույթներ ունեցող ցիվիլիստիկայում ներմուծելով օտար քրեաիրավական տեսություն՝ Գ.Կ.Մատվենը և քաղաքա-

<sup>1</sup> Տե՛ս *Èíðóá Í.Ն. Í áýçáðáeüñóááííá ìðááí. Մ., 1975, 100-108 էջեր, Ì áóááá Á.Ē. Í ñííááíeý áðáeááíñeí-ìðááíáíe ìðááñóááíííñòe. Ì ., 1970, էջ 5, Ì áeáeí Í.Ն. Èì óùáñóááííáý ìðááñóááíííñòù á òíçýñóááííóó ìóííóáíeýó. Ì ., 1968, էջ 22 և այլն:*

<sup>2</sup> Տե՛ս *Áðeááíá Á.Í. Í ñóùáñóáeáíeá è çàùeðá áðáeááíñeéó ìðáá, Ì ., 2000, 317-318 էջեր: Áðáeááíñeíá ìðááí. Ó+ááíeé. Í óá. ðáá. ìðíó Á.Á Նóóáíá. Õ. 1. Ì ., 1998, 438-439 էջեր: Áðáeááíñeíá ìðááí. Ó+ááíeé. Í íá. ðáá. Á.Í. Նáðáááá, Բ.Ē. Õíeñóíáí. x. 1. 2-á eçá. Ì ., 1997, էջ 536:*

<sup>3</sup> Տե՛ս *Ì áóááá Á.Ē. Í ñííááíeý áðáeááíñeí-ìðááíáíe ìðááñóááíííñòe. Ì ., 1970, էջ 5:*

<sup>4</sup> Տե՛ս օրինակ, *Èíðóá Í.Ն. Í áýçáðáeüñóááííá ìðááí. Մ., 1975, էջ 108:*

<sup>5</sup> Տե՛ս *Áðáeáíñeéé Ì . Ē., Áeóðýíñeéé Á.Á. Áíáíáíðííá ìðááí. Í áùeá ìíeíeáíeý. Ì ., 1997, էջ 568:*



րաբերում է վնասների հատուցմանը, պարզվի ոչ միայն իրավախախտման հակաիրավությունը և իրավախախտի մեղքը, այլև հակաիրավական գործողության (անգործության) և առաջացած վնասների միջև պատճառական կապը:

Սակայն այդ պարագաներում էլ օրենսդիրը երբևէ պարտադիր չի համարել պատասխանատվության կիրառման համար «իրավախախտման կազմի» բոլոր տարրերի առկայությունը: Հակառակը, առանձին դեպքերում նախատեսել է պատասխանատվություն «իրավախախտման կազմի» մեկ կամ մի քանի պայմանների բացակայության դեպքում (օրինակ, տուգանք գանձելիս) կամ սահմանել է, որ քաղաքացիական իրավախախտման կազմի մեջ մտնող պայմանները սպառնիչ չեն և օրենքով կամ պայմանագրով կարող են նախատեսվել նաև պատասխանատվության այլ պայմաններ: Օրինակ, կատարման կետանցում թույլ տված պարտապանը պարտատիրոջ առաջ պատասխանատվություն է կրում կետանցումով պատճառված վնասների և կետանցման ժամանակ առաջացած կատարման անհնարինության համար (Քաղ. օր. հոդվ. 421): Այսինքն, կետանցումով առաջացած վնասների փոխհատուցման համար իրավախախտման պայմանների առկայությունն անհրաժեշտ է, իսկ կատարման անհնարինության համար բավարար է միայն կատարման առարկայի պատահական ոչնչանալը:

Տնտեսական կյանքում կատարված փոփոխությունները, տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացումը, մարդու վերահսկողությանն ամբողջությամբ չենթարկվող մեխանիզմների խաթարման հետևանքով պատճառվող վնասների հսկայական չափերը XIX դարի վերջում ստիպեցին փոխել վերաբերմունքն ինչպես գույքային պատասխանատվության բնույթի, այնպես էլ «իրավախախտման կազմի» նկատմամբ: Հետևանքը եղավ այն, որ օրենսդրորեն սահմանվեց առանց մեղքի, առանց պատճառականության առկայության, վնասների բացակայության պարագայում գույքային պատասխանատվություն, ինչպես նաև պատասխանատվություն իրավաչափ վարքագծի առկայության դեպքում<sup>1</sup>:

Մուրյեկտիվ պատասխանատվության սկզբունքի անվերապահ կիրառությունից գործարարական գործունեությանը զբաղվող սուր-

յեկտների համար, հարաբերությունների որոշակի բնագավառներում անցում կատարվեց օբյեկտիվ պատասխանատվության կիրառության:

Նշված փոփոխությունների հետևանքով XIX դարի վերջում գույքային պատասխանատվությունը, որպես մասնավոր հարաբերություններում կիրառվող պաշտպանության միջոց, իր բնույթի, ծագման հիմքի և պատճառների, ինչպես նաև կիրառման առանձնահատկությունների ուժով կրեց էական փոփոխություններ: Հետևանքը եղավ այն, որ պատասխանատվության որոշակի միջոցներ կիրառելիս (օրինակ՝ տուժանք, տոկոսներ, ինչպես նաև որոշակի իրավախախտումների դեպքում աշխատակիցների, երրորդ անձանց գործողություններով պատճառված վնաս և այլն) հակաիրավական վարքագիծը, մեղքը, պատճառական կապը և վնասների առկայությունը դադարեցին իրավախախտման կազմի պարտադիր տարրեր համարվել, և «իրավախախտման կազմը», ի տարբերություն «հանցակազմի», կորցրեց իր վաղեմի նշանակությունը:

Գեռես անցյալ դարի սկզբում ռուս ակադեմիկոս իրավաբան Գ.Ֆ. Շերշենևիչը նշեց, որ քաղաքացիական պատասխանատվությունը կառուցված է քրեականից տարբերվող այլ հիմքերով: Պատիժն անպայման ենթադրում է հանցագործություն, առանց քրեական իրավախախտման չկա քրեական պատասխանատվություն (nulla poena sine crimine): Հակառակը, քաղաքացիական պատասխանատվությունը երբեմն նախատեսվում է իրավախախտման սահմաններից դուրս: Օրենքը կարող է մեկի կողմից պատճառված վնասի հատուցումը դնել մեկ ուրիշի վրա, չնայած այդ վնասը պատճառվել է առաջինի կողմից առանց որևէ մեղքի, ավելին, անգամ այն դեպքում, երբ վնասը նրա կողմից չի պատճառվել»<sup>1</sup>:

Նման մոտեցումը միանգամայն արդարացված է, քանի որ իրականում քաղաքացիաիրավական պատասխանատվություն կարող է կիրառվել նաև ոչ միայն վերը մատնանշված հիմքերից որևէ մեկի բացակայության, այլև բոլոր հիմքերի բացակայության դեպքում: Օրինակ, կետանցման դեպքում օրենքով կամ պայմանագրով նախատեսված տուժանքը գանձելիս վնասների առկայության կամ պատճառական կապի մասին մտածելն ինքնին իմաստագուրկ է, քանի որ նշված հիմ-

<sup>1</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատանքի «Գործարարական ռիսկը որպես պատասխանատվության պայման» պարագրաֆը:

<sup>1</sup> Ст'я Оаdоаíаае+ А.О. Í áùÿÿ оаídеÿ ídааа. Ó:ааííа ííñíаеа. А 2-о о (íí еçааí èр 1910-1912 аа). О. 2. Í ., тç 269:

քերի առկայությունը պարտադիր է միայն վնասների փոխհատուցման ժամանակ, իսկ երբ վարձակալության հանձնված գույքի օգտագործմանը խոչընդոտող թերությունների համար պատասխանատվության է ենթարկվում վարձակալը, այն դեպքում, երբ նույնիսկ պայմանագիրը կնքելիս նա չի իմացել այդ թերությունների մասին (Քաղ. օր. հոդվ. 614), հակաիրավական վարքագծի, մեղքի և պատճառական կապի մասին մտածել իսկ չի կարելի: Նման դեպքերում կարելի է խոսել միայն առարկայի թաքնված թերությունների համար պատասխանատվության մասին, քանի որ վարձատուի գործողություններում բացակայում է հակաիրավությունը, իսկ դրա բացակայության դեպքում մեղքի և պատճառական կապի հարցը ընդհանրապես քննարկման առարկա դառնալ չեն կարող: Վերջապես Քաղ. օր. 417 հոդվածը տնտեսական հարաբերությունների հիմնական սուբյեկտի համար սահմանել է գործարարական ռիսկի համար պատասխանատվություն, որ գործարարը պատասխանատվությունից չի ազատվում անգամ այն դեպքերում, երբ պարտավորությունների կատարմանը խոչընդոտ են հանդիսացել կոնտրագենտների կողմից իր հանդեպ պարտավորությունների չկատարումը, շուկայում անհրաժեշտ ապրանքների բացակայությունը, պարտապահի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը: Եթե սավաճին էլ ավելացնենք, որ վարքագծի հակաիրավության, պատճառական կապի, իրավախախտողի մեղավորության հարցերը քննարկման առարկա դառնալ չեն կարող, երբ խոսքը վերաբերում է երրորդ անձանց գործողությունների համար պատասխանատվությանը, մինչև տասնչորս տարեկան փոքրահասակի պատճառած վնասի համար ծնողների, որդեգրողների, խնամակալների պատասխանատվությանը, ապա ակնհայտ է «իրավախախտման կազմ» ֆենոմենի սնանկությունը: Հետևաբար, անհրաժեշտ է, ոչ թե տուրք տալով սխալ ձևավորված ավանդույթին, շարունակել ելք փնտրել «իրավախախտման կազմը» որպես գույքային պատասխանատվության հիմք ներկայացնելու համար, այլ ելնելով իրականությունից՝ միմյանցից տարանջատել պատասխանատվության հիմք և պատասխանատվության պայման հասկացությունները: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ դեռևս անցյալ դարի 60-ական թվականներին, անդրադառնալով պատասխանատվության հիմքերի ուսումնասիրության հարցերին՝ Ի.Ա.Անտիմոնովն արդարացիորեն նշում էր, որ և իրավաբանական գրականությունում, և պրակտիկայում «պատասխանատվության հիմքեր», «ատասխանատ-

վության պայմաններ», «պատասխանատվության նախադրյալներ» արտահայտություններն օգտագործվում են որպես հոմանիշներ, և գտնում էր, որ նպատակահարմար է դրանց վերապահել տերմինի նշանակություն, այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրն օգտագործել միայն մեկ ճշգրիտ իմաստով<sup>1</sup>:

Ըստ այդ հեղինակի, որի հետ լիովին համաձայն ենք, ***քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմքը դա փաստ կամ փաստերի խումբ է, որոնց առկայության պարագայում օրենքի կամ պայմանագրի (օրենքին չհակասող) ուժով առաջանում է պարտասխանատվություն***<sup>2</sup>:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմքի նման ըմբռնման հետ մենք համաձայն ենք այն պատճառով, որ իրավախախտման հիմք է հանդիսանում ոչ թե «իրավախախտման կազմ» տեսակական կոնստրուկցիան, այլ իրավախախտումը<sup>3</sup>: Իրավախախտման կազմը՝ սոսկ բացահայտում է արարքի «հասարակական վտանգավորությունը», «հակաիրավությունը», «մեղավորությունը» և իրավախախտման գնահատման համար էական ու անհրաժեշտ այլ հատկանիշները: Իրավախախտման կազմը չի կարող հիմք հանդիսանալ մի երևույթի, որը օբյեկտիվորեն գոյություն ունի: Այդ պատճառով էլ մենք գտնում ենք, որ իրավական պատասխանատվության փաստացի հիմքն իրավախախտումն է:

Պատասխանատվության կիրառությունը սուբյեկտիվ իրավունք է, իսկ ըստ Քաղ. օր. 10 հոդվածի, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Ընդ որում, այդ նույն հոդվածը քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք է համարում այլ անձին վնաս պատճառելը (1 մասի 2 պարբերության 6 կետ), անհիմն հարստացումը (1 մասի 2 պարբերությ-

<sup>1</sup> Տե՛ս Αἰδοὶ ἰίίτᾶ Ἄ.Ν. Ἰ ἡίίᾶἰέϋ ἄἰἄἰἄἰδἰίἑ ἰῶᾶῶῶῶἰἰίἰῶῶ ἡἰ ῶῶἑἑἑῶῶ-ἄἡἑῶῶ ἰῶᾶἰἑῶᾶῶῶ. Ἰ ., 1962. էջ 28:

<sup>2</sup> Տե՛ս Անտիմոնով Բ.Ս., նշված աշխատությունը, էջ 28:

<sup>3</sup> Տե՛ս Լիպինսկի Գ.Ա., նշված աշխատությունը, էջ 74:







վնասները պատասխանատվության այն պայմաններն են, որոնք կիրառվում են կոնկրետ իրավախախտման համար՝ դրանց բացահայտման անհրաժեշտությունից ելնելով:

### **3.2. Հակաիրավական վարքագիծը որպես գույքային պարասխանատվության ավանդական պայման**

Իրավագիտությունը իրավական պատասխանատվության առաջին և հիմնական պայման համարում է հակաիրավական վարքագիծը, հիմք ունենալով այն իրողությունը, որ առանց այլ անձի սուբյեկտիվ իրավունքների խախտման, որպես ընդհանուր կանոն, քաղաքացիաիրավական պատասխանատվության հարց դրվել, հետևաբար նաև՝ պատասխանատվության այլ պայմանների հարցը քննարկման առարկա դառնալ չի կարող: Հետևաբար, այլ անձի իրավունքները խախտող հակաիրավական վարքագիծը քաղաքացիաիրավական պատասխանատվության պարտադիր պայման է: Սակայն պետք է նկատի ունենալ նաև, որ օրենքով նախատեսված սահմանափակ դեպքերում քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցների իրավաչափ գործողությունները ևս կարող են հանդիսանալ պատասխանատվության պայման: Օրինակ, ծայրահեղ անհրաժեշտության, այսինքն՝ վնաս պատճառողին կամ այլ անձանց սպառնացող վտանգի պայմաններում պատճառված վնասը, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարող վերացվել այլ միջոցներով, պետք է հատուցի վնաս պատճառող անձը: Նշված և օրենքով նախատեսված մնանօրինակ այլ բացառությունները ոչ միայն չեն սասանում, այլ ընդհակառակը, ապացուցում են ընդհանուր կանոնի հիմնավորվածությունն ու արժանահավատությունը այն փաստը, որ հակաիրավական վարքագիծը հանդիսանում է քաղաքացիաիրավական պատասխանատվության այն պայմանը, առանց որի պատասխանատվություն կիրառվել չի կարող:

Կոնկրետ իրավիճակներում հակաիրավական վարքագիծը կարող է դրսևորվել ինչպես գործողություններով, այնպես էլ անգործությամբ (օրենքով կամ պայմանագրով ուղղակի նախատեսված գործողությունների չկատարմամբ): Անկախ նրանից, հակաիրավական վարքագիծը

դրսևորվել է գործողությամբ, թե անգործությամբ, այդպիսին է ճանաչվում այն վարքագիծը, որը խախտում է օրենքով նախատեսված կանոնները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ քաղաքացիաիրավական նորմերի պահանջներից թույլ տրված ցանկացած ընկրկում (չկատարում) հակաիրավական համարվել չի կարող: Հակաիրավական են համարվում միայն այն շեղումները, որոնք խախտում են ուղղակի արգելքները կամ օրենքի իմպերատիվ կանոնները: Քաղաքացիական իրավունքում կան մեծ թվով դիսպոզիտիվ նորմեր, որոնք իրավահարաբերության մասնակիցներին թույլատրում են փոխադարձ համաձայնությամբ սահմանել իրավունքներ և պարտականություններ: Հետևաբար, մնան դեպքերում հակաօրինական կհամարվեն կողմերի համաձայնությամբ (օրենքին չհակասող) սահմանված արգելքները խախտող գործողությունները կամ անգործությունը:

Բացի դրանից, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ (ՀՀ Քաղ.օր. հոդվ.10): Հետևաբար հակաիրավական պետք է համարվի նաև այն վարքագիծը, որը խախտում է մնան կարգով սահմանված իրավունքները:

Նշված պատճառներից ելնելով՝ հակաիրավական պետք է համարվի այնպիսի վարքագիծը, որը խախտում է իրավունքի իմպերատիվ նորմերը կամ օրենքով սանկցիավորված պայմանագրի, այդ թվում՝ իրավունքով ուղղակի չնախատեսված, բայց և քաղաքացիական իրավունքի սկզբունքներին չհակասող պայմանագրի պայմանները: Ընդ որում, հակաիրավական վարքագիծը կարող է պատասխանատվության պայման հանդիսանալ միայն այն դեպքում, երբ օրենքով կամ պայմանագրով այդպիսի վարքագծի դրսևորման համար սահմանված են անշահավետ հետևանքներ, սանկցիաներ:

Շարադրվածը հակաիրավական վարքագծի վերաբերյալ արտահայտված միակ կարծիքը չէ, այդ հարցի վերաբերյալ քաղաքացիագետներն արտահայտել են տարբեր տեսակետներ: Ըստ առավել տարածված տեսակետի, հակաիրավական է համարվում անձի այն վար-

քազիծը, որը վնաս է պատճառում քաղաքացու անձին կամ գույքին, կամ իրավաբանական անձի գույքին<sup>1</sup>:

Չնայած այդ տեսակետի լայն տարածվածությանը, այն մեզ համար ընդունելի չէ ներքոհիշյալ պատճառներով:

1. Գործող օրենսդրությամբ հակաիրավական է համարվում ոչ միայն քաղաքացիների անձնական բարիքների դեմ ուղղված ոտնձգությունը, այլև իրավաբանական անձի անվան և գործարար համբավի դեմ ուղղված ոտնձգությունները, հետևաբար, հակաիրավական է համարվում ոչ միայն քաղաքացու, այլև իրավաբանական անձի գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների դեմ ոտնձգող գործողությունները (ՀՀ Քաղ.օր. հոդվ. 19, մաս 6):

2. Հակաիրավական են համարվում ոչ միայն այն գործողությունները, որոնք վնաս են պատճառում, այլև այն գործողությունները, որոնք խախտում են այլ անձի սուբյեկտիվ իրավունքները՝ առանց նյութական վնաս պատճառելու: Օրինակ, օրենքով կամ պայմանագրով սահմանված տուժանքը գանձելու համար վնասի առկայությունն ամենևին էլ անհրաժեշտ չէ (ՀՀ Քաղ.օր. հոդվ. 369 մաս 1):

Հետևաբար, մենք գտնում ենք, որ **հակաիրավական պետք է համարել անձի այն վարքագիծը, որով խախտվում են այլ անձի օրենքով պահպանվող սուբյեկտիվ իրավունքները կամ շահերը:**

Քաղաքացիական իրավախախտումը, ինչպես նշում է Շերշենևիչը, նախ և առաջ չթույլատրված գործողություն է, այսինքն, օբյեկտիվ իրավունքով արգելված գործողություն: Այդ պատճառով էլ իրավունքի իրականացում համարվող ցանկացած գործողություն, որը դուրս չի գալիս օրենքով կանխորոշված սուբյեկտիվ իրավունքների սահմաններից, ինչքան էլ վնասակար լինի, ուրիշների համար իրավախախտում չի համարվում: Օրինակ, նախկին խանութի կողքին կամ դրա դիմաց առևտրական հաստատություն բացելն ունակ է նվազեցնելու (подробать) առաջինի առևտուրը, բայց ինչպիսի վնաս էլ որ պատճառի մասն մրցակցությունը, այն նշանակում է միայն իրավունքի իրականացում<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ἀδάεᾱί ἡέίᾱ ἰ ḍᾱᾱί. Ὀ=ᾱᾱί ἔἔ. Ἰ ἰᾱ ḍᾱᾱ. Թ.Ἐ.Ὀἰ ἔἔἔἱ ᾱί, Ἀ.Ἰ. Ἰ ᾱḍᾱᾱᾱᾱ. ×.1. Ἰ ., 1996, էջ 491:

<sup>2</sup> Տե՛ս Ὀᾱḍḍᾱί ᾱᾱἔ= Ἀ.Ὀ. Ὀ=ᾱᾱί ἔἔ ḍḍἡἡἱ ᾱί ᾱḍᾱᾱᾱί ἡέίᾱ ἰ ḍᾱᾱᾱ (ἰ ἰ ἔḍᾱᾱί ἔἔ 1907 ᾱ.), Ἰ ., 1995, էջ 392:

Հետևաբար, քաղաքացիական իրավախախտումն այնպիսի վարքագիծ է, որը խախտում է քաղաքացիական իրավունքի նորմերը, համակեցության կանոնները, բարոյական նորմերը, գործարար շրջանառության սովորույթները: Հակաօրինական է նաև այնպիսի վարքագիծը, որը չնայած չի խախտում իրավական նորմը, սակայն հակասում է քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին և իմաստին:

Այլ հեղինակներ նշված չափանիշները իրավախախտող վարքագծի գնահատման համար առանձին չափանիշներ չհամարելով, դրանք ներառում են հակաիրավություն հասկացությունում: Ըստ այդ հեղինակների, եթե քաղաքացիների և իրավաբանական անձանց միջև ծագում են օրենքով չկարգավորված քաղաքացիական իրավահարաբերություններ, ապա դրանք իրավաչափ գնահատելը կախված է քաղաքացիական իրավունքի ընդհանուր սկզբունքներից և իմաստին համապատասխանելու հանգամանքից: Այդ պատճառով է քաղաքացիական իրավունքով հակաիրավական են ճանաչվում այն գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են քաղաքացիական իրավունքի նորմերով ամրապնդված կամ սանկցիավորված, ինչպես նաև իրավունքի կոնկրետ նորմով չնախատեսված, բայց քաղաքացիական օրենսդրության ընդհանուր սկզբունքներին և իմաստին չհակասող, իրավունքները և պարտականությունները: Ինչ վերաբերում է հասարակության բարոյական սկզբունքների խախտմանը, ապա, ըստ նրանց, «բարոյական նորմերը խախտող վարքագիծը կարող է հակաիրավական ճանաչվել միայն այն դեպքում, երբ օրենքը կոնկրետ բարոյական սկզբունքներին տալիս է իրավական բնույթ»<sup>1</sup>:

Ն.Գ.Եգորովն արդարացիորեն նկատում է, որ հակաիրավական է նաև պարտապանի այնպիսի վարքագիծը, որը չի համապատասխանում պարտավորությունների պատշաճ կատարմանը ներկայացվող պահանջներին: Ըստ նրա, քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող պարտավորությունների կատարմանը ներկայացվող պահանջներ պարունակում են ոչ միայն օրենքները, այլ իրավական ակտերը, գործարար շրջանառության սովորույթները կամ սովորաբար ներկայացվող պահանջները, այլև պարտավորությունների ծագման հիմքերը: Այդ պատճառով էլ, եթե պարտավորությունը ծագում է պայմանագրից, ապա հակաիրավական է ճանաչվում պարտապանի՝ պայմանագրի

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիանի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 571:

պայմանները խախտող վարքագիծը, եթե պարտավորության հիմք է հանդիսանում միակողմ գործարքը, ապա հակաօրինական կլինի պարտապանի այն վարքագիծը, որը չի համապատասխանում միակողմ գործարքի պայմաններին: Վերջապես, բարդ իրավական կազմից ծագող պարտավորություններում պարտապանի վարքագիծը պետք է համապատասխանի այդ բարդ իրավական կազմի բոլոր տարրերին: Հակառակ դեպքում, պարտապանի վարքագիծը ձեռք կբերի հակաիրավական բնույթ»<sup>1</sup>:

Պայմանագրային պատասխանատվության կապակցությամբ իրավագետների կողմից կարծիք է հայտնվել նաև այն մասին, որ նպատակահարմար չէ ուշադրություն սևեռել իրավախախտողի հակաիրավական վարքագծի՝ որպես քաղաքացիաիրավական պատասխանատվություն առաջացնող պարտադիր հատկանիշի վրա: Այդպիսի մոտեցումը, ըստ Վ.Վ. Վիտրյանսկու, դատարանին կողմնորոշում է ամեն անգամ փնտրել այն կոնկրետ իրավունքի նորմը, որին չի համապատասխանում խախտողի վարքագիծը: Բավական է ասել, որ պայմանագրի ցանկացած չկատարում կամ ոչ պատշաճ կատարում a priori հանդիսանում է իրավունքի նորմի խախտում: Ըստ հեղինակի, վերջինս բխում է Ռ.Ղ. Քաղ. օր. 309 (ՀՀ Քաղ. օր. 347 հ.) հոդվածի բովանդակությունից, որի համաձայն պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող պահանջներին համապատասխան<sup>2</sup>:

Նման կարծիքը, մեր խորին համոզմամբ, հիմնավոր չէ: Այդ կարծիքի հերքումն ամրագրված է հենց այն հոդվածում, որն, իր տեսակետը հիմնավորելու համար, վկայակոչում է Վ.Վ. Վիտրյանսկին (Քաղ. օր. 347 հոդվ.): Այդ հոդվածի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ պայմանագրային պատասխանատվության կիրառման դեպքում պարտապանի հակաիրավական վարքագծի գնահատման համար առաջնակարգ դերը վերապահված է պարտավորության պայմաններին (այն ինչ առաջարկում է Վ.Վ. Վիտրյանսկին): Ինչ վերաբերում է օրենքին,

<sup>1</sup> Տե՛ս *Ädäæäiñeïä ýðäái. Ó=ááièè. Èçä. 4-ä. Ýïä ðää. Ä.Ï.Ñadäáááá, Ð.È.Ðíèñöíái. Ð 1. Ï .: "ÐÈ Ääèäè", 1996, 2002, էջ 491:*

<sup>2</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 572:

այլ իրավական ակտերին և այլն, ապա դրանց անդրադառնալու անհրաժեշտություն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված չեն այն պայմանները, որոնք խախտել է պարտապանը: Միանգամայն բնական է, որ վարքագիծը իրավախախտում որակելու համար դատարանն անհրաժեշտաբար պետք է վկայակոչի այն կոնկրետ իրավական նորմը, գործարար շրջանառության սովորույթը և այլն, որին չի համապատասխանում խախտողի վարքագիծը:

Բացի դրանից, հենց Վ.Վ. Վիտրյանսկին ինքն է նշում, որ կողմերն իրավունք ունեն կնքել ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր (Քաղ. օր. հոդվ. 437 մաս 2): Կողմերն իրավունք ունեն նաև իրենց հարաբերությունները կարգավորել բացառապես պայմանագրի պայմաններով (եթե միայն դրանք նախատեսված չեն իմպերատիվ նորմերով), որի կատարման ժամանակ չեն ղեկավարվի իրավունքի որևէ նորմով կամ գործարար շրջանառության սովորույթով, այլ կղեկավարվեն պայմանագրի համաձայնեցված պայմաններով: Պայմանագրի այդ պայմանների խախտման դեպքում կոնկրետ իրավական այն նորմերը փնտրելը, որոնց հակասում է պայմանագրով նախատեսված համապատասխան պարտականությունը չկատարած պարտապանի վարքագիծը, կդիտվի արհեստական և ավելորդ<sup>1</sup>: Նման հետևության հետ չհամաձայնվելն անհնարին է: Բայց մեզ թվում է, որ նման հետևության անհրաժեշտություն չկա, քանի որ ինչպես արդեն նշեցինք, համաձայն Քաղ. օր. 347 հոդվածի՝ պարտավորական հարաբերության մասնակիցների վարքագծի հակաիրավության գնահատման հարցում նախապատվությունը վերապահված է պարտավորության պայմաններին:

Անկախ նրանից՝ հակաիրավական վարքագծի դրսևորմամբ խախտվել են պարտավորական, թե այլ բնույթի հարաբերություններ, հակաիրավական վարքագիծը պետք է դրսևորվի կամ արգելված գործողությունների կատարմամբ, կամ պարտադիր գործողությունները չկատարելով: Այսինքն, հակաիրավական վարքագիծը պետք է դրսևորվի կամ հակաիրավական գործողությամբ, կամ հակաիրավական անգործությամբ: Գործողությունը գործունեության ակտիվ ձև է, որի օգնությամբ անձը, հիմք ունենալով բնության և հասարակության օբյեկ-

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 572:

տիվ օրենքների իմացությունը, ակտիվորեն ներգործում է իրեն շրջապատող իրականության վրա<sup>1</sup>:

Գործողությունը, որպես իրականության օբյեկտիվ փաստ, հիմնականում գիտակցված ակտ է: Անձի գիտակցված գործողությունը սովորաբար բնութագրվում է նպատակաուղղվածությամբ և դրանց հետևանքների կանխատեսմամբ: Անձի զգացմունքները և մտադրությունները, եթե գործողությամբ չեն դրսևորվում, իրավական արժեքավորում ստանալ չեն կարող: Դրսևորված գործողություններին իրավական արժեքավորվում է տրվում՝ ելնելով նրանց օգտակարությունից և վնասակարությունից: Օգտակար գործողություններն արժեքավորվում են հասարակական հարաբերություններում մարդկանց ակտիվությունն ամրապնդելու և զարգացնելու համար, իսկ վնասակար գործողությունները՝ այլ անձանց կամ հանրության շահերին հակասող հետևանքները կանխելու կամ վերականգնելու համար: Այդպիսի գործողությունները հակաօրինական են, և դրանց կատարումն արգելված է օրենքով: Ուրեմն գործողության հակաօրինական բնույթը նախ և առաջ բխում է օրենքով արգելված լինելու փաստից: Սովորաբար օրենսդիրն ուղղակիորեն սահմանում է, թե ինչ գործողություններ չի կարելի կատարել: Օրինակ, առուծախի պայմանագիրը կատարող վաճառողն իրավունք չունի գնորդին հանձնել պայմանագրով որոշված քանակից պակաս, տեսականու խախտմամբ, ոչ պատշաճ որակի, անկոմպլեկտ ապրանք:

Անգամ այն դեպքում, երբ օրենքով որոշակի գործողության կատարումը արգելված չէ, դա դեռևս չի նշանակում, որ դրա կատարումը հակաօրինական չի համարվի: Օրինակ, պարտավորության կատարումը կարող է դրվել երրորդ անձի վրա, եթե օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից կամ դրա էությունից չի բխում պարտավորությունն անձամբ կատարելու պարտականությունը (Քաղ. օր. հոդվ. 351): Բացի դրանից, հակաօրինական են ճանաչվում այն գործողությունները, որոնք հակասում են իրավական նորմերին, համակեցության կանոններին, գործարար շրջանառության սովորույթներին, պայմանագրի պահանջներին, քաղաքացիական օրենսդրության ընդհանուր սկզբունքներին և իմաստին:

<sup>1</sup> Տե՛ս Է՛րժժձձ Ի .Ն. Է՛չձձձձ Ի՛ւձ ձձձձ. Ծ 1, Ն՛Ի՛ ձ, 2003, էջ 448:

**Հակաիրավական անգործությունը** հասարակ պասսիվություն չէ:

Այն հանդիսանում է սուբյեկտի համար պարտադիր կատարման ենթակա գործողությունների չկատարում: Օրինակ, մատակարարը պարտավոր է արտադրանքը գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված ժամկետներում: Եթե այդ պարտավորությունը չի կատարում, նշանակում է՝ թույլ է տալիս անգործություն և պարտավոր է վերացնել դրա վնասակար հետևանքները: Եթե անձը պարտավոր չէ որոշակի գործողություններ կատարել, ապա դրանց չկատարումը անգործություն համարվել չի կարող: Այսինքն, անգործությունը հակաիրավական կարող է ճանաչվել, եթե թույլ է տրված այն անձի կողմից, որը պարտավոր էր և կարող էր գործել: «Պարտավոր լինելը» իրավական չափանիշ է, որը ենթադրում է որոշակի գործողություններ կատարելու պարտականություն, «կարողանալը» ֆիզիկական չափանիշ է, որը ենթադրում է կատարելու փաստացի հնարավորություն<sup>1</sup>: Ուրեմն, հակաիրավական անգործությունն այն գործողությունների չկատարումն է, որոնք անձը պարտավոր էր կատարել օրենքի, պայմանագրի կամ գործարար շրջանառության սովորույթների ուժով:

Այն գործողությունները, որոնք պետք է կատարվեն պարտավորության ուժով, որոշվում են պարտավորությամբ կամ այն իրավական ակտերով, որոնք կարգավորում են տվյալ պարտավորական հարաբերությունները: Օրինակ, կոմիսիոնները կոմիտենտի համար ձեռք բերված իրի մեջ թերություններ կամ պակասորդ հայտնաբերելու դեպքում պարտավոր է միջոցներ ձեռնարկել կոմիտենտի իրավունքների պաշտպանության համար, հավաքել անհրաժեշտ ապացույցներ և այդ մասին ամհասպաղ հաղորդել կոմիտենտին (Քաղ. օր. հոդվ. 799 մաս 2): Այդպիսի պարտավորությունը կոմիսիոնների վրա դրված է անկախ պայմանագրում այդ մասին հիշատակում լինելու հանգամանքից, և եթե կոմիսիոնների կողմից դրանք չկատարվեն, ապա չկատարումը կդիտվի որպես հակաիրավական անգործություն:

Անգամ օրենքում կամ պայմանագրում համապատասխան ցուցումների բացակայության դեպքում որոշակի գործողությունների կատարումը կարող է բխել ձևավորված սովորույթներից, համակեցության կանոններից, և դրանց չկատարումը կդիտվի հակաօրինական անգոր-

<sup>1</sup> Տե՛ս Է՛րժժձձ Ի .Ն. Ի՛ ձձձձձձձձձձձձ Ի՛ Ի՛ ձձձձ. Ի ., 1975, էջ 111:

ծություն այնքանով, որքանով օրենսդիրն իրավական արժեքավորում է տալիս այդ գործողությունների կատարմանը:

Բացառված չեն մասնաձևերը, որոնք հարկային գործողությունների կատարելու պարտականություններ ունեցող անձը հնարավորություն չունի դրանք կատարելու: Այդ պատճառով էլ անգործությունը հակաիրավական որակելու համար անհրաժեշտ է, որ պարտավորության մասնակիցը ոչ միայն պարտավոր լինի, այլև կարողանա կատարել գործողությունը: Օրինակ, եթե տարերային աղետի հետևանքով մատակարարը չի կատարել իր պարտականությունները, ապա այդպիսի անգործությունը հակաօրինական համարվել չի կարող: Անգործությունը հակաօրինական համարվել չի կարող մասնաձևերում, եթե գործողության կատարումն արգելվել է իրավասու մարմնի կողմից (օրինակ, լիցենզիայի գործողության կասեցումը):

Այլ կերպ ասած, եթե անգործությունը հետևանք է օբյեկտիվ պատճառների կամ օբյեկտիվ անհրաժեշտություն է, այն հակաիրավական համարվել և քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթարկելու պայման հանդիսանալ չի կարող:

Սակայն հարկ է նկատել, որ քաղաքացիական իրավունքի գաղափարախոսության համապատասխան, հակաիրավության տեսանկյունից գնահատման պետք է արժանանա ոչ թե գործողությունը (անգործությունը), այլ սուբյեկտիվ իրավունքի խախտումը: Այս հարցում անհրաժեշտ է համաձայնել Վ. Վ. Վիտրյանսկու հետ, որ և՛ տուժողին, և՛ դատարանին բոլորովին էլ չի հետաքրքրում, թե պարտապանի որ գործողությունները կամ անգործությունն է դարձել պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառ: Բացի դրանից, օրենքն էլ պատասխանատվության առաջացումը կախման մեջ չի դնում այն բանից, թե պարտապանի որ գործողությունը կամ անգործությունն է առաջացրել այդ խախտումը: Օրենքին, ըստ ընդհանուր կանոնի, հետաքրքրում է բուն իրավախախտման փաստը, և ոչ թե այն, թե պարտապանի ինչպիսի գործողությունների արդյունք է այդ խախտումը<sup>1</sup>: Բացառություն են կազմում, թերևս, կատարման անհնարինության հետևանքով պարտավորությունների չկատարման դեպքերը: Սակայն այս դեպքում էլ պարտապանի գործողության գնահատականն իրավա-

կան նշանակություն ունի այնքանով, որքանով վերջինս ապացույցներ պետք է ներկայացնի պատասխանատվությունից ազատող հանգամանքների մասին: Այսինքն, այն մասին, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, տվյալ պայմաններում՝ արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով (Քաղ. օր. հոդվ. 417, մաս 2):

Եթե ընդհանուր կանոնից վերը նշված բացառությունը նկատի չունենանք, ապա պետք է ընդունել, որ իրավախախտողը պատասխանատվության է ենթարկվում ոչ թե իրավախախտման պատճառ հանդիսացող հիպոթետիկ գործողությունների (անգործության) համար, այլ սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքի խախտման համար: Իրավախախտողը կարող է ազատվել պատասխանատվությունից, եթե ապացուցի, որ սուբյեկտիվ իրավունքների խախտումը (պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը) կատարման անհնարինության պատճառով հակաիրավական բնույթ չի կրում<sup>1</sup>:

Այսինքն, քաղաքացիաիրավական պատասխանատվության պայմաններ են հանդիսանում իրավախախտողի այն գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են իրավահարաբերության մասնակցի սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքները:

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ քաղաքացիական իրավախախտումների մեծամասնության դեպքում իրավախախտողի կատարած գործողությունների կամ թույլ տրված անգործության հակաիրավությունն ինքնին ենթադրվում է (անբարեկարգության կանխավարկած) և ապացուցման անհրաժեշտություն չունի: Բացառություն են կազմում միայն այն դեպքերը, երբ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանը վկայակոչում է կատարման անհնարինությունը: Այս դեպքում պարտապանը հարկադրված է ապացուցել, որ իր գործողությունները համապատասխանել են պարտավորության բնույթին և շրջանառության պայմաններից բխող հոգատարության և շրջահայացության պահանջներին, որ ինքը ձեռնարկել է պարտավորության պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր միջոցները (Քաղ. օր. հոդվ. 417):

<sup>1</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Բ., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 573:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը:

### 3.3. Պատճառական կապի հիմնահարցը քաղաքացիական իրավունքում

Քաղաքացիաիրավական պատասխանատվության համար պատճառական կապն իրավական արժեքավորում է ստանում և պատասխանատվության պայման է համարվում միայն այն ժամանակ, երբ խոսքը գնում է իրավախախտմամբ պատճառված վնասների փոխհատուցման մասին: Իսկ եթե կիրառվում են այլ սանկցիաներ՝ տուժանք, դրամական պարտավորությունների խախտման համար տոկոսներ, ապա պատճառական կապի ապացուցման անհրաժեշտություն ընդհանրապես չի առաջանում: Թերևս միայն այն դեպքում, երբ պարտապանը առարկություններ է անում՝ թույլ տրված խախտմանը գանձվող տուժանքի գումարի ակնհայտ անհամապատասխանության մասին, դատարանը կարող է (բայց պարտավոր չէ) հաշվի առնել նաև պատճառական կապի հետ կապված հանգամանքները<sup>1</sup>:

Ըստ էության, պայմանագրային պատասխանատվության դեպքում պատճառական կապի հարցն ունի ոչ այնքան գործնական, որքան տեսական նշանակություն: Պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վնասների փոխհատուցման կոնկրետ գործեր քննելիս պատճառական կապը պարզելու պրոբլեմ, որպես կանոն, չի ծագում կամ տրանսֆորմացվում է վնասների չափի ապացուցման պրոբլեմի<sup>2</sup>: Եվ միայն առանձին դեպքերում է պայմանագրի խախտման և առաջացած բացասական հետևանքների միջև պատճառական կապի առկայության կամ բացակայության ապացուցումը դառնում վիճարկվող իրավահարաբերության կենտրոնական հարց:

Օրինակ, Հայաստանի Հանրապետության տնտեսական գործերով վերաքննիչ դատարանը, քննելով գործն ըստ հայցի «Աջակցություն պետական ծառայությանը» ամսագրի խմբագրության՝ ընդդեմ Տավուշի մարզպետարանի 404.385 դրամ բռնագանձելու պահանջի մասին, պարտավորված էր քննարկման առարկա դարձնել նաև պատճառական կապի հարցը, քանի որ հայցվորի պնդմամբ մարզպետարանի կողմից ստացած ամսագրերի դիմաց լրիվ չվճարելու հետևանքով չի կարո-

ղացել վճարել «Արդշինբանկ» ԲԲԸ-ի հետ կնքած վարկային պայմանագրի տոկոսները:

Դատարանը, ապացուցված համարելով պարտավորության չկատարման հարցում պարտապանի մեղքը, որոշել է նրանից բռնագանձել միայն հիմնական պարտքի գումարը: Ինչ վերաբերում է «Արդշինբանկ» ԲԲԸ-ին վարկային պայմանագրով նախատեսված տոկոսների չվճարված գումարները պատասխանողից բռնագանձելու պահանջին, որն, ըստ հայցվորի, առաջացել է պատասխանողի կողմից պայմանագրային պարտավորությունը պատշաճ չկատարելու հետևանքով, ապա դատարանը դատաքննությամբ չհաստատված համարեց պատճառական կապը հայցվորի մոտ վարկային պայմանագրով տոկոսների վճարման պարտականություն առաջանալու և պատասխանողի կողմից պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու միջև և այդ մասով՝ հայցը մերժեց<sup>1</sup>: Բերված օրինակը հիմք է տալիս եզրակացնել, որ կարող է փոխհատուցվել պատասխանողի գործողությունների (անգործության) հետևանքով «պատճառված» այն վնասը, որ հանդիսանում է նրա գործողությունների տրամաբանական հետևանքը: Այսինքն, եթե կապացուցվի, որ վնասը պատճառվել է պատասխանողի կողմից տուժողի հանդեպ ունեցած պարտականությունների խախտման հետևանքով: Օրինակ, ավտոմեքենայի վրաերթի հետևանքով հետիոտնի ստացած վնասի հատուցումը նախ և առաջ կախված է վարորդի կողմից նախագուշակական բոլոր միջոցների պահպանման պարտականությունները անթերի կատարելու հանգամանքից: Եթե ապացուցվում է, որ վարորդը գործել է ոչ այնպես, ինչպես պետք է գործեր գիտակից մարդը տվյալ պայմաններում վնաս պատճառելու սպառնալիքը վերացնելու համար ընդհանուր շրջահայացության պահանջներից ելնելով և վնասը հանդիսանում է պատասխանողի կողմից պարտականությունների խախտման անխուսափելի հետևանք, ապա այդպիսի պատճառահետևանքային կապի առկայությունը, հետևաբար նաև վրաերթի հետևանքով ստացած վնասի հատուցումը կասկածի տակ դրվել չի կարող:

Չնայած պատճառական կապի, որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության պայմանի, սակավ գործածությանը, այնուհանդերձ, դրա էության և ապացուցման եղանակների իմացությունն ու-

<sup>1</sup> Տե՛ս *Մատթ. 13:12* *Եվ ասաց ինչպես ընդհանուր լույսը չի տրվում ընդհանուր լույսի, այլ միայն ընդհանուր լույսի համար: Եվ ասաց ինչպես ընդհանուր լույսը չի տրվում ընդհանուր լույսի, այլ միայն ընդհանուր լույսի համար:* *Մատթ. 13:12*

<sup>2</sup> Տե՛ս *Մատթ. 13:12* *Եվ ասաց ինչպես ընդհանուր լույսը չի տրվում ընդհանուր լույսի, այլ միայն ընդհանուր լույսի համար: Եվ ասաց ինչպես ընդհանուր լույսը չի տրվում ընդհանուր լույսի, այլ միայն ընդհանուր լույսի համար:* *Մատթ. 13:12*

<sup>1</sup> Քաղաքացիական գործ թիվ S-267, 2000 թ.: Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, Եր., 2002, 46-47 էջեր:

նի կարևոր նշանակություն: Թերևս այդ է պատճառը, որ իրավագետները պատճառական կապի բացահայտման նկատմամբ ցուցաբերել են լուրջ ուշադրություն:

Պատճառական կապի ուսումնասիրման թե՛ գործնական, թե՛ գիտական նշանակության կարևորությունը ընդգծել է դեռևս Գ.Ֆ.Շերշենիչը, մատնանշելով, որ քաղաքացիական իրավախախտումը ենթադրում է հակաիրավական գործողության և վնասի այնպիսի համագոյակցություն, որը կբացահայտեր նրանց միջև պատճառական կապը: Այդ երկու երևույթների այդպիսի հաջորդականության դեպքում ծագում են հարցեր, թե որքանով են անօրինական գործողությունները վնասի պատճառ և որքանով է վնասն անօրինական գործողության հետևանք<sup>1</sup>:

Գործնականում բոլոր հեղինակներն ընդգծել են, որ պատճառականության հասկացությունը հատուկ իրավական հասկացություն չէ, այն վերաբերում է բնական երևույթներին և ընդհանուր է ինչպես բնական, այնպես էլ հումանիտար գիտությունների համար: Այդ իմաստով՝ գերմանացի փիլիսոփա Մյուլլեր պատճառը սահմանում էր հետևյալ կերպ. «Խոսելով փիլիսոփայորեն՝ պատճառը երևույթի դրական և բացասական պայմանները միասին վերցրած ամբողջ գումարն է, բոլոր տեսակի պատահականությունների ամբողջ համակցությունը, որոնց առկայությունն անպայմանորեն առաջացնում է հետևանք»<sup>2</sup>:

Պատճառական կապ ասելով, սովորաբար, հասկացվում են ռեալ իրականության երևույթների միջև գոյություն ունեցող օբյեկտիվ կապը: Այն բնութագրվում է նրանով, որ մի երևույթի՝ պատճառի ներգործության ուժով, առաջանում է մեկ այլ երևույթ՝ հետևանք:

Հարկ է նկատել, որ պատճառականության վերաբերյալ ձևավորվել են տարբեր տեսություններ՝ «Հավասարաբեք պայմանների» տեսությունը (Բուրի, Լիստ), «Անհրաժեշտ պայմանի» տեսությունը (Օրտման, Բիրկմյետեր, Բինդինտ), «Աղեկվատ պատճառականության» տեսությունը (Կրիզ, Ռյումելին, Տոն, Տրեդեր) և այլն<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս *Θάδοαι άάε* = *Ά.Ο. Ϊ άύάγ άάί άέγ ι άάά. Ο=άάί ίά ι ίή άέά. Ά 2-ό άί ι άό. Ό.2. Ϊ ., 1995, էջ 264:*

<sup>2</sup> Այստեղ և հաջորդները բերվում են ըստ Բրազինսկու և Վիտրյանսկու նշված աշխատության, էջ 577:

<sup>3</sup> Այդ տեսությունների մասին տե՛ս *Όάάάάε Ό.Ά. Ϊ άε=εί ίάγ ήάγύ ά άάίείάί ι ι άάάά. Ϊ ., 1963, էջեր 72-115, Բրազինսկի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 577:*

Խորհրդային ժամանակաշրջանում, այսպես կոչված, «հակագիտական իդեալիստական և մեխանիկական կոնցեպցիաները» մերժվում էին և առաջարկվում էին պատճառական կապի նոր կոնցեպցիաներ: Պատճառականության բուրժուական գաղափարախոսական տեսությունների հաղթահարման խնդիրը լուծվեց քրեական իրավունքի բնագավառում խորհրդային գիտնականների (Ա.Ա. Պիանտկովսկու, Տ.Վ. Սերգենի, Մ.Գ. Շարգարոսկու և ուրիշների) կողմից առաջ քաշված և որոշ քաղաքացիագետների (Բ.Ա. Անտիմոնովի, Լ.Ա. Լունցի, Ե.Ա. Ֆլեյշիցի և այլնի) կողմից պաշտպանվող անհրաժեշտ և պատահական կապի տեսությամբ: Այդ տեսության կողմնակիցների կարծիքով, հանրորեն վտանգավոր հետևանքների հետ կապի մեջ գտնվող ցանկացած գործողություն չէ, որ կարող է հիմնավորել պատասխանատվությունը: Պատասխանատվության օբյեկտիվ նախադրյալ հանդիսացող գործողությունների շրջանակը առանձնացնելու համար նրանք առաջարկում էին օգտագործել անհրաժեշտության և պատահականության դիալեկտիկական կատեգորիաները<sup>1</sup> և դրանից ելնելով գտնում էին, որ միայն ոչ իրավաչափ վարքագծի և առաջացած հետևանքների միջև գոյություն ունեցող անհրաժեշտ պատճառական կապը կարող է արդյունքի համար պատասխանատվության հիմք ծառայել: Եթե պատճառականությունը կրում է պատահական բնույթ, պատասխանատվության ենթարկելու համար չկան բավականաչափ նախադրյալներ<sup>2</sup>:

Անհրաժեշտ պատճառականության կողմնակիցները (Վ.Պ. Գրիբանով, Վ.Ի. Կոֆման), ի հակադրություն առաջինների, պնդում էին, որ պատահական պատճառական կապեր չկան, և եթե մի երևույթը հանդիսացել է մեկ այլ երևույթի պատճառ, ապա նրանց միջև կարող է գոյություն ունենալ միայն անհրաժեշտ կապ: Այսպես, Վ.Պ. Գրիբանովը գտնում էր, որ «պատճառականությունը համընդհանուր փոխկապակցվածության այն կողմն է, որն արտացոլում է երևույթների անհրաժեշտ կապը» և, հետևաբար, համընկնում է օրինաչափության հետ<sup>3</sup>:

Անհրաժեշտ պատճառականության մասին տեսակետները բաժանում են նաև ժամանակակից որոշ իրավաբաններ: Օրինակ, Ն.Գ. Եգորովը գտնում է, որ և՛ տեսական, և՛ գործնական տեսանկյունից առավել

<sup>1</sup> Տե՛ս Ծերեթելի Տ.Վ., նշված աշխատությունը, էջ 130:  
<sup>2</sup> Տե՛ս Բրազինսկի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 578:  
<sup>3</sup> Տե՛ս *Άάάάάί ήεί ά ι άάάί. Ό.1, Ϊ ., 1969., էջ 528:*



ընդունելի է ուղղակի և անուղղակի պատճառական կապի տեսությունը: Ըստ նրա, այդ տեսությունը հիմնված է պատճառականության ընդհանուր փիլիսոփայական ուսմունքից բխող երկու հիմնական դրույթների վրա: Առաջին, պատճառականությունը երևույթների միջև օբյեկտիվորեն, մեր գիտակցությունից անկախ գոյություն ունեցող կապ է: Երկրորդ, պատճառը և հետևանքը, որպես այդպիսին, նշանակություն ունեն միայն տվյալ դեպքի համար: Անձի հակաիրավական վարքագիծը միայն այն դեպքում է համարվում վնասների պատճառ, երբ այն ուղղակի (անմիջականորեն) կապված է այդ վնասների հետ: Իսկ հակաիրավական վարքագծի և վնասների միջև առկա անուղղակի միջնորդավորված կապի առկայությունը նշանակում է, որ տվյալ արարքը կոնկրետ դեպքի շրջանակներից դուրս է, հետևաբար նաև՝ իրավականորեն արժեքավորվող պատճառական կապի սահմաններից դուրս: Ըստ Ն.Գ. Եգորովի ուղղակի պատճառական կապն առկա է այն ժամանակ, երբ հաջորդաբար զարգացող դեպքերի շղթայում անձի հակաիրավական վարքագծի և վնասների միջև գոյություն չունեն քաղաքացիաիրավական պատասխանատվության համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Իսկ այն դեպքերում, երբ անձի հակաիրավական գործողության և վնասների միջև առկա են այնպիսի հանգամանքներ, որոնց օրենքը նշանակություն է տալիս պատասխանատվության հարցը լուծելիս՝ երրորդ անձանց գործողություն, անհաղթահարելի ուժ և այլն, ապա առկա է անուղղակի պատճառական կապ<sup>1</sup>:

Հնարավորության և իրականության տեսության հեղինակ Օ.Ս. Իոֆֆեն գտնում է, որ ազդեցությունը, որը տարբեր հանգամանքներն ունենում են ոչ իրավաչափ հետևանքների առաջացման վրա, արտահայտվում են նրանում, որ նրանց մի մասը ստեղծում է վերացական հնարավորություններ, մյուսները կոնկրետ հնարավորություններ, իսկ երրորդները՝ արդյունքի իրողությունը՝ (деуствительность): Եթե ոչ իչավաչափ վարքագիծը խաղում է միայն վերացական հնարավորության դեր, պատասխանատվությունը բացառվում է: Եթե այն առաջացրել է արդյունքի կոնկրետ հնարավորություն կամ, առավել ևս, արդյունքը հնարավորությունից դարձրել է իրականություն, առկա է պատճառական կապ: Ինչ վերաբերում է վերացական և իրական հնարավորությունների տարանջատման չափանիշներին, ինչպես նաև արդյունքը ստեղծող և այն իրականություն դարձնող վարքագծի սահմանազատմանը, ապա Օ. Ս. Իոֆֆեն առաջարկում է հետևյալ մոտեցումը: Եթե հայտնի են արդյունքի առաջանալուն նպաստող բոլոր հանգամանքները, ապա «հնարավորությունը իրականություն՝ դարձնող հանգամանքների թվում կարող են դասվել միայն նրանք, որոնց պատճառականության ուժն իր արտահայտությունն է ստացել տվյալ արդյունքի, ֆիզիկական կամ հասարակական, անհատական արտահայտությունում»: «Հնարավորությունը կոնկրետ է, եթե այն վերածվում է իրականության՝ օբյեկտիվորեն կրկնվող հանգամանքներով: Հնարավորությունը վերացական է, եթե նրա վերածվելն իրականության առաջացել է օբյեկտիվորեն չկրկնվող հանգամանքներով»<sup>1</sup>:

<sup>1</sup> Ст'у Аџаааііџааі іџааі. Оааіџџ. І іа џаа. А.І. џаџаааа, Բ.Е.џіџіџі. ×аџіі 1. І ., 1996, էջ 493:

րությունների տարանջատման չափանիշներին, ինչպես նաև արդյունքը ստեղծող և այն իրականություն դարձնող վարքագծի սահմանազատմանը, ապա Օ. Ս. Իոֆֆեն առաջարկում է հետևյալ մոտեցումը: Եթե հայտնի են արդյունքի առաջանալուն նպաստող բոլոր հանգամանքները, ապա «հնարավորությունը իրականություն՝ դարձնող հանգամանքների թվում կարող են դասվել միայն նրանք, որոնց պատճառականության ուժն իր արտահայտությունն է ստացել տվյալ արդյունքի, ֆիզիկական կամ հասարակական, անհատական արտահայտությունում»: «Հնարավորությունը կոնկրետ է, եթե այն վերածվում է իրականության՝ օբյեկտիվորեն կրկնվող հանգամանքներով: Հնարավորությունը վերացական է, եթե նրա վերածվելն իրականության առաջացել է օբյեկտիվորեն չկրկնվող հանգամանքներով»<sup>1</sup>:

Մենք միտումնավոր չենք անդրադառնում վերը վկայակոչված տեսակետների թեր և դեմ կողմերի վերլուծությանը, առավել ևս՝ իրավական գրականության մեջ դրանց կապակցությամբ արված քննադատական դիտողություններին, նկատի ունենալով, որ դրանցից յուրաքանչյուրը պարունակում է պատճառականության բարդագույն երևույթի բացահայտմանն օժանդակող ուշադրության արժանի հիմնադրույթներ: Այդ պատճառով մենք միանում ենք Վ.Վ. Վիտրյանսկու այն կարծիքին, որ բերված կոնցեպցիաները միմյանց չեն հակասում, և դրանք բոլորը, առանց բացառության, օժանդակում են պատճառական կապի հասկացության ըմբռնմանը: Յուրաքանչյուր տեսության մեջ կա ռացիոնալ հատիկ, որի պատճառով էլ պատճառական կապի մասին էությունամբ տարբեր տեսական պատկերացումները կարող են օգտագործվել այս կամ այն կոնկրետ իրավիճակում պատճառական կապը պարզելու համար, անհրաժեշտ հնարքների և միջոցների օգտագործման համար<sup>2</sup>:

Պատճառականությունն օբյեկտիվ կատեգորիա է: Այդ պատճառով իրավական գիտությունը չպետք է ստեղծի պատճառականության հատուկ տեսություն, այլ հենվելով այդ կատեգորիայի փիլիսոփայական ձևակերպումների վրա պետք է մշակի կանոններ, որոնց կիրառությունը հնարավորություն կտա յուրաքանչյուր կոնկրետ դեպքում բացահայտել իրավախախտողին պատժելու համար անհրաժեշտ պատճառահետևանքային փոխկապակցվածությունը:

<sup>1</sup> Ст'у Еіџџа І .џ. І аџаџаџіііа іџааі. І ., 1975, 118-120 էջեր:  
<sup>2</sup> Ст'у Բրազիիսկի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 580:

Եթե երևույթների միջև գոյություն ունեցող փոխկապակցվածությունը դիտարկենք գույքային պատասխանատվության անհրաժեշտ պայմանի տեսանկյունից, ապա այն կարող ենք բնութագրել, որպես իրավախախտման և առաջացած վնասների կապվածությունը բացահայտող ուղղակի և անմիջական կապ: Այդ կապը պարզելու համար անհրաժեշտ է վնասակար հետևանքների պատճառ հանդիսացող փաստական հանգամանքները սահմանազատել նմանատիպ այլ հանգամանքներից և ապացուցել, որ հետևանքներն առաջացել են հենց այդ հանգամանքների ուժով:

Միայն սահմանազատելով բոլոր կողմնակի գործոններն ու երևույթները, կարելի է ձեռնամուխ լինել այն հարցի պարզաբանմանը, թե ինչպիսի կապի մեջ են գտնվում տուժողի վնասները իրավախախտման հետ և որքանով է էական այդ կապը: Պրակտիկայում հաճախ է պատահում, որ վնասների առաջացման պատճառ հանդիսանում է ոչ թե իրավախախտումը, այլ մեկ այլ երևույթ (տուժողի անձեռնահասությունը, նրա մոտ անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների բացակայությունը, տեխնիկական սարքավորումների խափանումը, էներգիայի մատակարարման ընդհատումները և այլն): Հետևաբար պատճառական կապի հարցի ճիշտ լուծման համար հարկավոր է հանգամանորեն ուսումնասիրել գործի հանգամանքները, վեր հանել արդյունքի վրա ազդեցություն գործած բոլոր երևույթները: Եթե դա չկատարվի, ապա կարող է պարզվել, որ դատարանը, որպես պատճառ հիմք է ընդունել փաստ, որը շատ հեռավոր կապ ունի առաջացած հետևանքի հետ և չի նկատել այն հանգամանքը, որը վճռորոշ նշանակություն է ունեցել հետևանքի առաջացման համար: Արդյունքի վրա ազդեցություն գործած երևույթների տարանջատումը հանգամանքների ամբողջական շղթայից անհրաժեշտ է այնքանով, որքանով պատճառա-հետևանքային կապի բացահայտմամբ է պայմանավորված տուժողի վնասների համարժեք փոխհատուցման հարցի լուծումը, և միայն այդ եղանակով է հնարավոր հասկանալ իրավախախտման դերը վնասների առաջացման գործում:

Բանն այն է, որ կոնկրետ գործերով պատճառականության բացահայտումը նշանակություն ունի միայն կոնկրետ իրավախախտման և դրա առաջացրած հետևանքների կապը քննելիս: Այդ կապը հասկանալու համար առանձին երևույթները պետք է առանձնացվեն հետևանք առաջացնող բազում պատճառներից և դիտարկվեն առանձնացված:

Գաղտնիք չէ, որ իրական կյանքում հետևանքը հանդիսանում է ոչ թե մեկ այլ մի քանի երևույթների արդյունք: Անգամ տարրական գործերում կարելի է գտնել հետևանք առաջացնող մի քանի պատճառներ, բայց դրանից չի հետևում, որ կոնկրետ գործեր քննելիս կարելի է սահմանափակվել այդ պատճառների վրա վերացական հղում կատարելով: Դատարանը պարտավոր է պարզել այն պատճառը, որը հիմք է ծառայել հետևանքի առաջացմանը:

Բնական է՝ հետևանքի բացահայտման պրոբլեմը որևէ բարդություն չի ներկայացնում, այն ակնհայտ է, քանի որ վնասների բացակայության դեպքում ոչ միայն թույլ տրված խախտման և վնասների միջև պատճառահետևանքային կապի պարզաբանման անհրաժեշտություն չի առաջանում, այլև գույքային պատասխանատվության հարց չի առաջանում:

Առավել դժվար է բացահայտել այն փաստերը, որոնք գտնվելով փոխներգործության ընդհանուր համակարգում, հանդիսացել են տվյալ հետևանքի պատճառ: Չնայած, ցանկացած արդյունքի առաջացումը բխում է ոչ թե մեկ, այլ մի քանի հանգամանքներից, ճիշտ չէր լինի մտածել, որ դրանք բոլորը խաղում են միատեսակ դեր<sup>1</sup>: Հասկանալի է, որ արդյունք առաջացնող հանգամանքները խաղում են առավել կարևոր դեր, քան դրանց սպասարկող հնարավորությունները: Բայց հնարավորություններն էլ տարբեր են լինում, դրանց մի մասը ստեղծում է վերացական հնարավորություն, երկրորդները՝ կոնկրետ հնարավորություն, իսկ երրորդները՝ արդյունքի իրականացում: Եթե ոչ իրավաչափ վարքագիծը խաղում է միայն վերացական հնարավորության դեր, ապա պատասխանատվությունը բացառվում է: Եթե այն առաջացրել է արդյունքի կոնկրետ հնարավորություն կամ արդյունքը հնարավորից դարձրել է իրականություն, առկա է պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պատճառական կապ<sup>2</sup>: Հետևաբար պատճառի և հետևանքի միջև կապը հանդիսանում է անհրաժեշտ կապ: Այն նշանակում է ոչ թե երկու երևույթների միմյանց պարզ անփոփոխ հաջորդում, այլ հետևանքի իր պատճառին անխուսափելիորեն հետևելը<sup>3</sup>:

Եթե հետևանքի առաջացման գործում դեր են խաղացել մի քանի գործոններ, ապա նրանցից յուրաքանչյուրի դերը կորոշվի արդյունքի

<sup>1</sup> Տե՛ս Իոֆֆե Օ.Ս., նշված աշխատությունը, էջ 61:

<sup>2</sup> Տե՛ս նույն աշխատությունը, 62-63 էջեր:

<sup>3</sup> Տե՛ս Ծերեթելի Տ.Վ., նշված աշխատությունը, էջ 167:

առաջացման գործում՝ նրա ակտիվության աստիճանից ելնելով, քանի որ հետևանք առաջացնող գործոնների ընդհանուր շղթայում մասնակցող ամեն մի գործոն, միշտ խաղում է առանձնահատուկ դեր և երկու բացառապես հավասարաթեք և հավասարագոր գործոններ չեն լինում<sup>1</sup>:

### **3.4. Մեղքի, որպես գույքային պատասխանատվության պայմանի էվոլյուցիան**

Իրավունքի պատմությունը ցույց է տալիս, որ ի սկզբանե կիրառվում էր օբյեկտիվ պատասխանատվությունը: Այդ պատասխանատվության կիրառման հիմք էր հանդիսանում տուժողի անձին կամ գույքին վնաս պատճառելու փաստը: Իրավունքը ձգտում էր ցանկացած պարագայում տուժողի համար ստեղծել բավարարում ստանալու հնարավորություն, ապահովել վնաս պատճառողին պատժելը, իսկ ավելի ուշ՝ բավարարում տալ տուժողին վնաս պատճառողի ունեցվածքի հաշվին<sup>2</sup>: Դա լիակատար բավարարում էր նախնադարյան մարդու հոգեբանությունը, որն իր անձին կամ գույքին ցանկացած վնաս պատճառելու դեպքում (բացի գերբնական ուժերի ներգործության դեպքերից) պահանջում էր դատաստան, իսկ ավելի ուշ ժամանակներում՝ փրկագին (հատուցում): Մարդկային պատմությունը վկայում է, որ այդ ժամանակահատվածում, քանի որ պատասխանատվության առաջացման միակ հիմքը համարվում էր վնաս պատճառելու փաստը, սուբյեկտի մեղավորության հարցին որևէ նշանակություն չէր տրվում: Այդ պատճառով պատասխանատվության էին ենթարկվում (ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական) անգամ խելագարները և փոքրահասակները<sup>3</sup>:

Ի դեպ, առանց մեղքի (օբյեկտիվ) պատասխանատվությունը լայն կիրառություն ուներ նաև դասական ժամանակաշրջանի հռոմեական իրավունքում: Միայն հետագայում ըստ երևույթին բյուզանդաքրիստոնեական ազդեցության հետևանքով հռոմեական իրավունքում ձևավորվեցին մեղքի նկատմամբ որպես պատասխանատվության անհրաժեշտ

պայմանի մասին պատկերացումները: Հուստինիանոսի կողմից կայացված մտցված տեքստերի միջադրությունները (интерполация), հանգեցրին նրան, որ մեղքի համար պատասխանատվության սկզբունքը ճանաչվեց հռոմեական իրավական մտքի առավել արժեքավոր տարրերից մեկը: Այսինքն, իրավունքի պատմությունը ցույց է տալիս, որ օբյեկտիվ պատասխանատվություն կիրառող հասարակությունն աստիճանաբար սկսում է գիտակցել, որ որոշակի դեպքերում (օրինակ՝ կռիվ հրահրողի պատահական մահվան դեպքում) և որոշակի անձանց նկատմամբ (օրինակ՝ փոքրահասակների և խելագարների) ընդհանուր կանոնների կիրառումը ոչ միայն արդարացի, այլև ճիշտ չէ<sup>1</sup>: Այդպիսի գիտակցումը հանգեցրեց նրան, որ աստիճանաբար մշակվեց և օրենսդրորեն ամրագրվեց սուբյեկտիվ պատասխանատվության՝ մեղքի համար պատասխանատվության սկզբունքը, և վնասի պատճառման փաստի հետ միասին, պատասխանատվության հիմք ճանաչվեց վնաս պատճառողի մեղքը (դիտավորությունը և անգոյությունը):

Պատասխանատվություն մեղքի համար սկզբունքը առաջին անգամ ձևակերպվեց հռոմեական իրավունքում: Հին Հռոմում մեղքը բնութագրվում էր հետևյալ դրույթով՝ «չկա մեղք, եթե պահպանվել է այն ամենը, ինչ պահանջվում էր»<sup>2</sup>, այստեղից էլ հետևում էր, որ մեղք (culpa) նշանակում էր այնպիսի վարքագիծ չդրսևորելը, որը պահանջվում էր իրավունքով:

Մեղքը (culpa) լայն իմաստով ներառում էր երկու տեսակ՝ *դիլիյանություն* (dolus), երբ պարտապանը կանխատեսում է խախտման (գործողության կամ անգործության) հետևանքները և ցանկանում է դրանց առաջացումը, և *սևզգուշություն* (culpa)՝ այդ բառի նեղ իմաստով, երբ պարտապանը չի կշռադատում իր գործողությունները այն աստիճանի հոգածությամբ, որի կիրառությունը նրանից պահանջում է իրավունքը սովորական դեպքում<sup>3</sup>:

Հռոմեական իրավունքի աղբյուրները տարբերում էին անգոյության մի քանի աստիճան: Կոպիտ անգոյություն (culpa lata), երբ պար-

<sup>1</sup> Տե՛ս նույն աշխատությունը, էջ 169:

<sup>2</sup> Տե՛ս *Ādōāēēī Āēōī ēūā. Ī ā īdāōōāāīīīnōē īī ādāēāīīnēīī ō īdāāō. Ī ., 1978, էջ 35:*

<sup>3</sup> Տե՛ս *Ī īēōīānēēē Ē.Ā. Ī nīīāī ūā īdīāēāī ū ādāēāīīnēīāī īdāāā. Ī ., 2001, էջ 285:*

<sup>1</sup> Տե՛ս *Ōī ōēī āā Ā.Ā. Ī īī yōēā ādāēāīī nēīī -īdāāīāī ē īdāōōāāīīīnōē. Ā ēī.: Āēōōāēūī ūā īdīāēāī ū ādāēāīīnēīāī īdāāā. Āūīōnē īyōōē, Ī .: "Nōāōōō", 2002, էջ 70:*

<sup>2</sup> Տե՛ս *Đēī nēīā +ānōī ā īdāāī. Ō=āāī ēē. Ī ī ā dāā. īdīō. Ē.Ā.Ī īāēōēīāī ē Ē.Ē.Ī ādāōōnēīāī. Ī ., 1996, էջ 349:*

<sup>3</sup> Տե՛ս *Ōāī nōī ā Ā.Ī . Nēnōāī ā dēī nēīāī īdāāā. Ō=āāī ēē, Ī ., 1996, էջ 192:*

տապանը չի ցուցաբերում այն հոգաժողովունը, ինչպիսին կարելի է պահանջել յուրաքանչյուրից, և նրա գործողություններում (անգործությունում) դրսևորվում է «չհասկացություն այն բանի, ինչը հասկանում են բոլորը»<sup>1</sup>: Հին Հռոմում *culpa lata*-ն շատ հաճախ հավասարեցվում էր դիտավորությանը<sup>2</sup>:

Թեթև անգոյություն (*culpa levis*), երբ պարտապանը հանդես չի բերել բարի տիրոջը, հոգատար ընտանիքի գլխին՝ հատկանշական հոգատարություն: Հետագայում մեղքի այս աստիճանը ստացավ *culpa abstracto*, այսինքն՝ «վերացական չափանիշներով մեղք» անվանումը<sup>3</sup>:

Եվ վերջապես՝ կոնկրետ չափանիշներով որոշվող անգոյություն (*culpa in concreto*), երբ պարտապանը չի պահպանում հոգաժողովուն այն չափանիշները, որը նա կցուցաբերեր սեփական գործերում<sup>4</sup>:

Որպես կանոն, Հին Հռոմի դասական իրավունքում պատասխանատվությունը կրում էր սուբյեկտիվ բնույթ: Թեև պատասխանատվության տոտալ սուբյեկտիվիզացիային, Հին Հռոմի իրավական միտքն առանձնացնում էր իրավիճակներ, որոնց դեպքում ոչ միայն թույլատրելի էր, այլև ճշմարտացի էր առանց մեղքի պատասխանատվությունը<sup>5</sup>: Օրինակ՝ գույքի անվթարության համար պահառուի պատասխանատվությունը, վնասների համար նավաստիի պատասխանատվությունը և այլն:

XII դարից սկսվում «և ընդգրկում է Արևմտյան Եվրոպայի երկրների մեծամասնությունը, ֆեոդալիզմի ամբողջ ժամանակաշրջանի կարևորագույն պատմական պրոցեսներից մեկը՝ հռոմեական իրավունքի ռեցեսայիան»<sup>6</sup>: Հռոմեական իրավունքի ռեցեսայիայի հետ միասին մեղքի սկզբունքը մտավ նոր ժողովրդների իրավունք և կարծեք թե դարձավ ամեն մի քաղաքակիրթ իրավակարգի անասանելի հիմնական

<sup>1</sup> Տե՛ս Բարայան Լև, Հռոմեական մասնավոր իրավունք, Ռուսմնական ձեռնարկ, Եր., 2000, էջ 104:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 104:

<sup>3</sup> Տե՛ս *Dei neia +anoia idaa. O+aaiee. I ia daa. idi o. E.A. I ia eoeia e E.N. I adadoneia. I ., 1996, էջ 351:*

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 351:

<sup>5</sup> Տե՛ս *Oioeia A.A. I iyoea adaaai nei-idaai ae idaaonooai iinoe. A ei.: Aeoaeiu na idi aeai u adaaai nei ai idaaa. Aci one iyone. I .: Eca-ai "Noaoo", 2002, էջ 286:*

<sup>6</sup> Տե՛ս *Oai noi a A.I. . Neioai a dei nei ai idaaa. O+aaiee. I ., 1996, էջ 70:*

սկզբունք<sup>1</sup>: Մայրցամաքային Եվրոպայի երկրներում հիմք ընդունվեց պարտապանի մեղավորության կանխավարկածը: Այսինքն՝ պարտատերը պարտավոր է ապացուցել միայն պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը, իսկ պարտապանը՝ իր մեղքի բացակայությունը: Հետագայում այդ սկզբունքն իր ամրապնդումն ստացավ Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրների քաղաքացիական օրենքներում: Օրինակ, Ֆրանսիական քաղաքացիական օրենսգրքում (հոդվ. 1382), Գերմանական քաղաքացիական օրենսգրքում (§ 823), Շվեյցարական պարտավորությունների մասին օրենքում (հոդվ. 41), Իտալիայի քաղաքացիական օրենսգրքում (հոդվ. 1318) և այլն: Վեշան դե Բարենի դիպուկ բնութագրման համաձայն մեղքը հանդիսացավ ինչպես պայմանագրային, այնպես էլ դելիկտային պատասխանատվության առավել ընդհանուր և համատարած ընդունված սկզբունք<sup>2</sup>:

Սակայն անհրաժեշտ է նաև արձանագրել, որ այդ երկրների օրենսդրությունը մեղքի հասկացությունը չի տալիս, այլ նախատեսում է մեղքի տեսակները (դիտավորություն, անգոյություն)<sup>3</sup>: Ընդ որում, պարտապանի մեղավորության հարցը լուծելիս, որպես կանոն, հիմք ընդունելով շրջանառության սովորույթներին համապատասխանող կամ լավ գործատիրոջը հատկանշական վերացական չափանիշը, արժեվորվում է պարտավորության կատարման նկատմամբ հոգատարության աստիճանը: Գերմանական քաղաքացիական իրավունքում պարտապանի մեղքը պարզելու համար օգտագործվում է նաև «օրինավոր կոմերսանտի» պատշաճ հոգատարության չափանիշը<sup>4</sup>: Այդ երկրների օրենսդրությամբ հոգատարության վերացական չափանիշները կիրառվում են միայն հատուցելի պարտավորությունների դեպքում, իսկ անհատույց պարտավորությունների չկատարման դեպքում օգտագործվում է պարտապանի վարքագծի գնահատման ավելի մեղմ չափանիշ՝ հոգատարության այն աստիճանը, որը պարտապանը հանդես է բերում

<sup>1</sup> Տե՛ս *I i edia nee E.A. I ni ai na idi aeai u adaaai nei ai idaaa. Eca-ai "Noaoo", I ., 2001, էջ 286:*

<sup>2</sup> Վեշան դե Բարենի կարծիքը տե՛ս Վարկալր Վիտուլ, նշված աշխատությունը, էջ 100:

<sup>3</sup> Տե՛ս *Adaaai nei a e idi ai ai idaaai eai eoaeeone+aneeo ai noaadnoa. I ., 1993, էջ 286:*

<sup>4</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 595:

սեփական գործերի նկատմամբ (Պարտավորությունների մասին շվեդարական օրենքի 99 հոդված):

Ի տարբերություն մայրցամաքային Եվրոպայի երկրների, անգլո-ամերիկյան իրավունքում գործում է «բացարձակ» պատասխանատվության սկզբունքը և մեղքը քաղաքացիաիրավական պատասխանատվության ընդհանուր նախապայման չի համարվում: Նախադեպային իրավունքը պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման նկատմամբ իրավախախտողի վերաբերմունքը և նրա մեղավորության աստիճանը չի արժեքավորում: Այդ երկրներում պայմանագիրը դիտարկվում է որպես խոստում, երաշխիք, որով պարտապանը երաշխավորում է ոչ թե պարտավորության իրական կատարումը, այլ որոշակի գումարի փոխանցումը պարտատիրոջը: Այսինքն, պարտապանը պատասխանատվության է ենթարկվում ոչ թե պարտավորության չկատարման, այլ երաշխավորությունը չպահպանելու համար: Պարտապանը իր պայմանագրային պարտավորությունները չի կատարել, կետանցել է դրանք, կամ պատշաճ չի գործել, վճռորոշ նշանակություն չունի, քանի որ «պայմանագրի խախտման» փաստի արձանագրման համար կարևոր է միայն, որ ձեռք չի բերվել խոստացված արդյունքը, չի պահպանված պարտապանի կողմից իր վրա վերցված երաշխիքը<sup>1</sup>: Նման մոտեցման դեպքում, բնական է, որ կատարման անհնարինության հարցն ընդհանրապես չի արժարժվում: Օրինակ, Ալդերալենդը ընդդեմ Խենդոնի քիմաքսիան գործով (1945թ.) դատավորը մատնանշում է, որ «Լվացքատունն իր վրա վերցնում է ոչ թե հաճախորդի հագուստը լվանալիս պատշաճ հոգատարություն ցուցաբերելու, այլ դրանք լվանալու և արդուկելու պարտականություն, և եթե չի լվանա և արդուկի, ապա իմաստ չունի հայտարարել. «Ես արել եմ ինձանից կախված ամեն ինչ, ցուցաբերել եմ պահանջվող հոգատարություն, ձեռնարկել եմ խելամիտ նախազգուշական միջոցներ և շատ ցավում եմ, եթե իրերը քավակնաչափ լավ չեն լվացվել»: Անկախ մեղքից պատասխանատվության տիպական օրինակ է նաև Նիկոլեն Լտդ ընդդեմ Միմոնդսի գործով (1952թ.) դատավոր Սելլերսի եզրահանգումը. «Նշանակություն չունի, որ վաճառողը պայմանագիրը չի կատարել իր անտարբերության, կանխամտածված անփութության, թե հասարակ անհաջողության

<sup>1</sup> St'u Öååéååðð Ê. Êåðð Õ. Åååååíèà à ñðååíèðåèüííà ìðååíååååíèà à ñðååðå-åññóííåí ìðååå. Å 2-ð ò. Õ. 2. Ì ., 2000, էջ 241:

հետևանքով: Ինչպիսին է պատճառը, նշանակություն չունի: Նշանակություն ունի միայն կատարման փաստը»<sup>1</sup>:

Անգլո-ամերիկյան օրենսդրությունը և դատական պրակտիկան երբեմն «Բացարձակ» պատասխանատվության սկզբունքից, բացառություններ է կատարում ոչ իրավաչափ գործողություններով (դեղիկտ) պատճառված վնասի հատուցման դեպքում: Ընդ որում, այս դեպքում էլ այն սկզբունքը, որ մեղքը չի կարող ազդել պարտավորությունը խախտող կողմի վճարելիք փոխհատուցման չափի վրա, մնում է անձեռնմխելի<sup>2</sup>:

Բացի դրանից, ԱՄՆ-ի օրենսդրությունը գնում է ոչ թե պատասխանատվությունների առանձին տեսակների նկատմամբ մեղքի տարբեր ձևերի կիրառումը կարգավորելու, այլ դրանց չկատարման համար պարտապանին պատասխանատվությունից ազատելու օրենսդրական հիմքերի նախատեսման ուղղությամբ<sup>3</sup>:

Պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն նախատեսող միջազգային ակտերը նույնպես մեղքի հասկացությունը չեն օգտագործում, նրանցում գերակշռող են պարտապանին պատասխանատվությունից ազատելու կոնկրետ պայմաններ նախատեսող նորմերը: Օրինակ՝ «Վիեննայի կոնվենցիան» (հոդվ. 79), «Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքները» ( ՅՈՒՆԻԴՐՈՒՄ 1994 թ., հոդվ. 7.4.4) պարտապանի պատասխանատվությունը կախվածության մեջ են դնում նրա կողմից պայմանագրի կնքման պահին չկատարման հետևանքները կանխատեսելու հնարավորությունից: Ըստ «Վիեննայի կոնվենցիայի» (հոդվ. 79), կողմը պատասխանատվություն չի կրում ցանկացած պարտավորության չկատարման համար, եթե կապացուցի, որ այն առաջացել է իր վերահսկողությունից դուրս գտնվող արգելի պատճառով, և չէր կարելի նրանից ողջամտորեն սկսելալել, որ պայմանագիրը կնքելիս, հաշվի կառնեք այդ արգելքը կամ դրանից խուսափելը, կամ այդ արգելքը և դրա հետևանքները հաղթահարելը<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է մինչհեղափոխական Ռուսաստանի քաղաքացիական օրենսդրությանը, որը, բնականաբար, կիրառվում էր նաև Հա-

<sup>1</sup> St'u Öååéååðð Ê. Êåðð Õ. Åååååíèà à ñðååíèðåèüííà ìðååíååååíèà à ñðååðå-åññóííåí ìðååå. Å 2-ð ò. Õ. 2. Ì ., 1998, էջ 242:

<sup>2</sup> St'u Êíí ìðí à Á.Ñ. Ì ðååðñðååíííñòü à èí ì ì ðð-åñèí ì áíðí ðå. Ì ., 1991, էջ 42:

<sup>3</sup> St'u Բրազիլիայի Մ.Բ., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 596:

<sup>4</sup> St'u Միջազգային մասնավոր իրավունք, նշված ժողովածուն, էջ 131:

յաստանում<sup>1</sup>, ապա այդ ժամանակաշրջանում գործող օրենսդրությունը հիմք ընդունելով՝ պարտավորությունների անվերապահ կատարման և «Բացարձակ» պատասխանատվության սկզբունքները, սահմանում էր, որ ճիշտ կազմված ցանկացած պայմանագիր կնքողների վրա դնում է այն կատարելու պարտականություն: Ընդ որում, պայմանագրերը պետք է կատարվեն դրանց բովանդակությանը համապատասխան, առանց հաշվի առնելու կողմնակի հանգամանքները, այսինքն՝ անկախ պարտապանի մեղքից:

Պարտավորությունների չկատարման համար պարտապանին, անկախ նրա մեղքից, նաև պատահարի ու անհաղթահարելի ուժի դեպքում, անվերապահորեն պատասխանատվության ենթարկելը այն աստիճան անարդարացի էր, որ գրեթե բոլոր ցիվիլիստները նշում էին պարտավորությունների չկատարման համար անվերապահ պատասխանատվության կիրառման անհնարինության մասին և գտնում էին, որ պարտավորությունների չկատարման համար պարտապանի մեղքը պատասխանատվության անհրաժեշտ պայման է<sup>2</sup>:

Խորհրդային Հայաստանի քաղաքացիական օրենսդրությունը պատասխանատվություն էր նախատեսում բացառապես մեղքի սկզբունքով: Այդ սկզբունքն ի սկզբանե ձևավորվեց անուղղակիորեն: Հայկական ՍՍԲ- 1923թ. Քաղ. օր. 118 հոդվածով նախատեսվեց, որ պարտապանն ազատվում է իր պարտավորությունը չկատարելու պատասխանատվությունից, որչափով այլ բան չի սահմանված օրենքով կամ պայմանագրով, եթե ապացուցի, որ կատարելու անկարելությունը հետևանք է եղել մի հանգամանքի, որի առաջն ինքն առնել չէր կարող կամ արդյունք է եղել պարտատիրոջ չար դիտավորության կամ անզգուշության<sup>3</sup>:

1964թ. Հայկական ՍՍՀ քաղաքացիական օրենսգիրքը մեղքը, որպես պարտավորությունների խախտման համար պատասխանատ-

<sup>1</sup> Ինչպես արդարացի նշում է պրոֆ. Խ. Սամուելյանը, «Հայ իրավունքը ... սնվել է այն ժողովուրդներից յուրաքանչյուրի օրենքներով, որոնց հետ նա քաղաքական և կուլտուր-տնտեսական հարաբերություններ է ունեցել: Այդ օրենքները մասնավոր ռեցեպցիայի կարգով մուտք են գործել հայ իրականության մեջ և կիրառվել են տեղական իրավաբանական և դատական պրակտիկայում:» (Հին հայ իրավունքի պատմությունը, հատոր 1, Եր., 1939, էջ 34:

<sup>2</sup> Տե՛ս Բրազինսկի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, 588-589 էջեր:

<sup>3</sup> Մեղքի սկզբունքի մնանատիպ ձևակերպում էր տրված նաև ուրիշի անձին կամ գույքային վնաս պատճառելու համար պատասխանատվություն սահմանող 403 հոդվածում:

վորյան պայման արդեն ձևակերպում էր ուղղակիորեն՝ սահմանելով, որ «Պարտավորությունը չկատարած կամ այն ոչ պատշաճ կերպով կատարած անձը գույքային պատասխանատվություն է կրում միայն մեղքի (դիտավորության կամ անզգուշության) առկայության դեպքում, բացի օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերից: Մեղքի բացակայությունը պետք է ապացուցի այն անձը, որը խախտել է պարտավորությունը» (224):

Ինչպես ժամանակին նկատել է Ս.Ս. Ալեկսեևը, նորմատիվ ակտերը, որոնք կարգավորում են քաղաքացիական իրավահարաբերությունների հետ կապված իրավախախտումները, իրավական նշանակություն են տալիս ոչ թե մեղքի առկայությանը, այլ նրա բացակայությանը, այն դիտարկելով որպես պատասխանատվությունից ազատելու հիմք<sup>1</sup>:

Մեղքի՝ որպես պատասխանատվության սկզբունքի, ձևակերպման նկատմամբ նույնպիսի մոտեցում է ցուցաբերել նաև Հայաստանի Հանրապետության գործող (1998թ.) քաղաքացիական օրենսգիրքը: Ըստ այդ օրենսգրքի 417 հոդվածի «Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները»:

Բերված բոլոր ձևակերպումներից, անկախ դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունների, երևում է, որ Հայաստանի օրենսդրությամբ բոլոր ժամանակներում մեղքը համարվել է քաղաքացիաիրավական պատասխանատվության ընդհանուր սկզբունք՝ պատասխանատվության անհրաժեշտ պայման<sup>2</sup>:

Ընդ որում, Խորհրդային քաղաքացիաիրավական դոկտրինայում անցյալ դարի վաթսուներկու թվականներից ամրապնդվեց այն տեսակետը, որ մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր հակաիրավական վարքագծի և դրա հետևանքների նկատմամբ: Մեղքի նկատմամբ այդպիսի մոտեցում՝ տարբեր դրսևորումներով, կարելի է հանդի-

<sup>1</sup> Տե՛ս *Äeäēñááá Ñ.Ñ. Ī ñí ñòááá äðäæááí ñéíáí ìðááí òí òáí èý. Ī ðááí ááááí èá, 1958 No 1, 51-52 էջեր:*

<sup>2</sup> Հարկ ենք համարում նկատել, որ մեղքը պատասխանատվության ընդհանուր սկզբունք է համարվել նաև միջնադարի հայ իրավունքում: Օրինակ, Մխիթար Գոշը դատաստանագրքում գրում է. «...գործերը կշռվում են մեղքերի համեմատ, և ծանր կշռողն է վճիռը շահում» (Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, Եր., 2001, էջ 16):

պել տարբեր իրավագետների աշխատություններում<sup>1</sup>, գիտագործնական մեկնաբանություններում, քաղաքացիական իրավունքի դասագրքերում<sup>2</sup>: Օրինակ, Գ.Կ. Մատվելը մեղք էր համարում, «Սոցիալիստական քաղաքացիական իրավակարգը դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտողի հոգեբանական վերաբերմունքը գործողությունների և դրանց վնասակար հետևանքների նկատմամբ»<sup>3</sup>: Իսկ Օ.Ս. Իոֆֆեն մեղքի տակ հասկանում է անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած հակաիրավական գործողության և առաջացած հետևանքների նկատմամբ<sup>4</sup>:

Նման տեսակետի արմատավորման համար թերևս հիմք ծառայեց այն հանգամանքը, որ քաղաքացիական օրենսդրությունը մեղքի հասկացությունը չէր սահմանում և պրակտիկայում օգտագործում էր քրեական օրենսդրությամբ ամրագրված հասկացությունը: Բայց նկատի ունենալով, որ քաղաքացիական և քրեաիրավական մեղքը նույն բնույթը չունեն, քաղաքացիագետները մեղքի այլ հասկացություն սահմանելու փոխարեն փորձում էին քրեաիրավական հասկացության շրջանակներում տարբերակել և ընդգծել քաղաքացիաիրավական մեղքի առանձնահատկությունները: Օրինակ, Օ.Ս.Իոֆֆեն ընդգծում էր, որ «մեղքը քաղաքացիական իրավունքում սուկ պատասխանատվության հիմք է և ոչ թե պատճառված վնասի համար պատասխանատվության չափ: Դա նշանակում է, որ անձին պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է մեղք, բայց դրա առկայության դեպքում պատասխանատվության ծավալը կախված է ոչ թե մեղքի աստիճանից, այլ վնասի չափից»<sup>5</sup>: Ի.Ս Սամոչչենկոն գտնում էր, որ խորհրդային իրավունքի այլ ճյուղերը դիտավորության և անզգուշության ըմբռնման հար-

ցում քրեական իրավունքից սկզբունքորեն չեն տարբերվում: Տարբերությունը, որը կա, կայանում է մի կողմից նրանում, որ խորհրդային քաղաքացիական իրավունքը դիտավորությունը չի բաժանում ուղղակի և անուղղակիի և անզգուշությունը բաժանում է ոչ թե ինքնավատահության և անփութության, այլ կոպիտ և հասարակ անզգուշության<sup>1</sup>: Իհարկե, Ի.Ս.Սամոչչենկոն չէր էլ փորձում բացատրել, թե ինչու գոյություն ունի և ինչի հետևանք է այդ տարբերությունը, ինչով են տարբերվում կոպիտ անզգուշությունը և ինքնավատահությունը կամ անփութությունը և հասարակ անզգուշությունը: Այդ նույն ժամանակահատվածում որոշ քաղաքացիագետներ, հիմք ունենալով քաղաքացիական իրավախախտումների առանձնահատկությունները և մնալով քաղաքացիաիրավական դիրքերում, մեղքի բնութագրման համար «հոգեբանական վերաբերմունք» արտահայտությունը կամ չէին օգտագործում, կամ մնան արտահայտության օգտագործումը ճիշտ չէին համարում: Օրինակ, Մ.Ս. Ազարկովի բնութագրմամբ՝ «մեղք է համարվում անձի հակաիրավական գործողությունների կատարումը պայմանավորող դիտավորությունը կամ անզգուշությունը»<sup>2</sup>: Բ.Ի. Պուզինսկին ընդգծում էր, որ «պարտապանի մեղքը պետք է բնութագրվի ոչ թե որպես հոգեբանական ակտ (երևույթ- Տ.Բ.), այլ որպես կոնկրետ պայմաններում իրականացված գործունեության բնութագրություն»<sup>3</sup>:

Մեղքի բնութագրման համար «հոգեբանական վերաբերմունք» արտահայտությունը չեն օգտագործում նաև Արևմտյան Եվրոպայի իրավաբանները: Օրինակ, Ֆրանսիայի իրավաբան Ռենե Սավատյեն գտնում էր, որ մեղքը կարելի է բնութագրել որպես այն պարտականության խախտում, որի մասին անձը կարող է գիտենալ, և որը կարող էր պահպանել: Ըստ այդ հեղինակի մեղավոր վարքագիծը բաղկացած է երկու տարրերից՝ 1) պարտավորության չկատարումից և 2) վարքագիտակցությունից (вменимость), այսինքն՝ անձի այդ պարտականության իմացության և այն կատարելու հնարավորությունից<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ի աօաաա Բ.Է. Բեիա ի՛ ի նիաօոնեի յ օ ձաաաի նեի յ օ ի ձաաօ. Էեաա, 1955, էջ 178: Ուի ի լաի էի Է.Ն. Ի ի յօեա ի ձաաի ձաօօաի էյ ի ի նիաօոնեի յ օ չաի ի ի աօաօեւնօաօ. Ի ., 1963, 130-131 էջեր: Ի ձաօիա Է.Ի. Ի ձաաօոնաի ի նօս օ ի ձաաիա չա ի ձաօօաի էյ ի աչաօաօեւնօաօ. Ի ., 1974, 115-116 էջեր: Էի ՕՕա Ի .Ն. Ի աչաօաօեւնօաօի ի ի ի ձաաի. Ի ., 1975, էջ 128: Ծաօեի ի աե+ Բ.Է. Բեիա էաե ի նիաօաի էա ձաաի ձաօի է ի ձաաօոնաի ի նօս ի ձաաի ձեյօեյ. Ի ., 1975, էջ 32 և ուրիշներ:

<sup>2</sup> Տե՛ս Էի ի ի աի ձաօե է Բաաաի նեի յ օ էիաեո ձՆՕՆԾ. Ի իա. ձաա. Ն.Ի. Բաաօոնյ, Ի .Ի. Նաաեիա. Ի ., 1982, էջ 266: Հայկական ՍՍՀ Քաղաքացիական իրավունք, Եր., 1978, 494-495 էջեր: Բաաաի նեիա ի ձաաի. Օ+աի էե. Բ 2-օ օ. Օ. 1. Ի ի ձաա. ի ձաօ. Բ.Ա.Նօօաի իա. Ի ., 1993 էջ 180:

<sup>3</sup> Տե՛ս Ի աօաաա Բ.Է. Բեիա ի՛ ի նիաօոնեի յ օ ձաաաի նեի յ օ ի ձաաօ. Էեաա, 1955, էջ 178:

<sup>4</sup> Տե՛ս Էի ՕՕա Ի .Ն. Ի աչաօաօեւնօաօի ի ի ի ձաաի. Ի ., 1975, էջ 128:

<sup>5</sup> Տե՛ս նույն աշխատությունը, էջ 132:

<sup>1</sup> Տե՛ս Ուի ի լաի էի Է.Ն. Ի ի յօեա ի ձաաի ձաօօաի էյ ի ի նիաօոնեի յ օ չաի ի ի աօաօեւնօաօ. Ի ., 1963, էջ 138:

<sup>2</sup> Տե՛ս Աաաձեիա Ի .Ի . Ի աչաօաօեւնօաօի ի ի նիաօոնեի յ օ ձաաաի նեի յ օ ի ձաաօ. Ի ., 1940, էջ 145:

<sup>3</sup> Տե՛ս Ի ձաի նեե Բ.Է. Բաաաի նեի-ի ձաաի աա ձաաօոնաա ա օ ի չեոնօաի է է աաօաօեւնօ. Ի .: Էչա-աի "Ք ձեչաաօ", 1984, էջ 150:

<sup>4</sup> Տե՛ս Նաաօուա Ծ. Օաի ձեյ ի աչաօաօեւնօաօ. Ի ., 1972, էջ 334:

Մեղքի նկատմամբ քաղաքացիագետների նման մոտեցումները ներկայումս էլ, երբ օրենսդրությունում կատարվել են էական փոփոխություններ, արժանանում են պետության և իրավունքի տեսության մասնագետների «քննադատությանը»: Մասնավորապես Գ.Ա. Լիպինսկին գտնում է, որ քաղաքացիական իրավունքի մասնագետները, ձգտում են մեղքը սուբյեկտիվ (հոգեբանական) ոլորտից փոխադրել օբյեկտիվ ոլորտ և «քողարկել» առանց մեղքի պատասխանատվությունը: Ըստ հեղինակի ցիվիլիստիկա ներմուծվել են ոչ թե մեղքի հասկացության նկատմամբ քրեիրավական մոտեցումները, այլ կամքի ազատության, մարդու վարքագծի դետերմինիստական բնույթի մասին ուսմունքները, մարդու գործողությունների պայմանավորվածությունը նրա գիտակցությամբ: Գ.Ա. Լիպինսկին համոզված է, որ պատասխանատվությունը նախատեսված է միայն իր գործողությունները գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակ սուբյեկտի նկատմամբ ներգործելու համար, այն սուբյեկտի համար, որը գիտակցել է իր գործողությունները, քանի որ, ըստ նրա, դրանում է կայանում մեղքի հոգեբանական ըմբռնումը: Այդ դիրքերից ելնելով հեղինակը արսուրդ և քննադատության չդիմացող է համարում իր գործողությունները գիտակցելու անընդունակ քաղաքացու պատճառած վնասի համար նախատեսված պատասխանատվությունը (Քաղ. օր. 1077 հոդվ.), գտնելով, որ պատասխանել կարելի է միայն այն բանի համար, ինչ արտացոլվել է մարդու գիտակցությունում<sup>1</sup>:

Մեր կարծիքով, իր դատողությունները հիմնավորելիս՝ Գ.Ա. Լիպինսկին թույլ է տալիս մի շարք անճշտություններ, որոնք էլ կասկածի տակ են դնում դրանց հիմնավորվածությունը:

Նախ, հարգարժան տեսաբանը անտեսում է այն փաստը, որ քաղաքացիագետները առանց մեղքի պատասխանատվությունը հիմնավորելու կամ «քողարկելու» անհրաժեշտություն չունեն: Բանն այն է, որ ի տարբերություն քրեական իրավունքի, քաղաքացիական իրավունքում գործում է մեղավորության կանխավարկածը և պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները (Քաղ. օր. հոդվ. 417): Այսինքն, քաղաքացիական իրավունքում ի սկզ-

բանե մեղքի բացակայության (անմեղության) մասին խոսք չի գնում, ընդհակառակը, իրավախախտողը համարվում է մեղավոր, քանի դեռ ինքը չի ապացուցել, որ «անմեղ» է: Ինչպես նկատում է Ի.Ս. Սամոչչենկոն, Ս.Ս. Ալեքսենև արդարացի է, երբ նշում է, որ ոչ թե մեղքը պետք է դասել քաղաքացիական իրավախախտման «կազմի տարրերի» թվում, այլ անմեղությունը որպես իրավական կատեգորիա, քաղաքացիաիրավական պատասխանատվությունից ազատելու հիմքերի թվում<sup>1</sup>: Ասվածից հետևում է, որ պատասխանատվությունից ազատելու համար իրավախախտողը ոչ թե պետք է բացատրի, պարզաբանի իր հոգեբանական վերաբերմունքը պարտավորության չկատարման նկատմամբ (պարտավորության կատարման նկատմամբ վերաբերմունքը նա արդեն կամովին դրսևորել է պարտավորության մասնակից դառնալիս), այլ հիմնավորի պարտավորությունը պատշաճ կատարելու համար իրենից կախված բոլոր միջոցները ձեռնարկելու փաստը:

Երկրորդ, հեղինակը միանգամայն ճիշտ է նկատում, որ ցիվիլիստիկա ներմուծվել են, (ավելի ճիշտ, ցիվիլիստիկայի հիմքում ընկած են) կամքի ազատության, մարդու վարքագծի դետերմինիստական բնույթի մասին ուսմունքները, մարդու գործողությունների պայմանավորվածությունը նրա գիտակցությամբ: Բայց Գ.Ի.Լիպինսկին և նրա տեսակետը բաժանող մյուս հեղինակները, անտեսում են մի շատ կարևոր հանգամանք, վերոհիշյալ հիմնադրույթների պահանջները անմնացող իրականացվում են քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ մտնելիս և ոչ ոք կամովին իրավահարաբերության մեջ չի մտնում այն խախտելու և պատասխանատվության ենթարկվելու համար: Եթե քաղաքացիական իրավունք ենք ներմուծում մեղքի քրեիրավական ըմբռնումը, ապա ստիպված ենք լինելու ընդունել նաև իրավախախտողի գիտակցության և կամքի խաթարվածությունը կամ այն հանգամանքը, որ պարտավորությունը չկատարողը կամ ոչ պատշաճ կատարողը պարտավորության մեջ մտնելու առաջին պահից գործել է խաբեությամբ, դիտավորյալ մոլորեցրել է գործընկերոջը, քանի որ վաղօրոք մտադրված էր խախտել պարտավորությունը: Նման երևույթ քաղաքացիական իրավունքում տեղի ունենալ չի կարող, քանի որ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում են իրենց կամքով և ի շահ իրենց (Քաղ. օր.

<sup>1</sup> Ст'у Èèì èí ñèèè Ä.Ä. Ì ðí àèàì ù þðèäè-àñèí é í ðááòñðááí í í ñòè. Ñí á.: Èçä-àí "Þ ðèäè-àñèèè èáí ðð ÿ ðáññ", 2004, 77-79 էջեր:

<sup>1</sup> Ст'у Սամոչչենկո Ի.Ս., նշված աշխատությունը, էջ 132:



հողվ 3): Ասվածի ապացույցն է նաև այն հանգամանքը, որ միջազգային ակտերը, մասնավորապես «Վիեննայի կոնվենցիան» (հողվ. 79), «Միջազգային առևտրային պայմանագրի սկզբունքները» (հողվ. 7.4.4.), պարտապանի պատասխանատվությունը կախվածության մեջ են դնում նրա կողմից պայմանագրի կնքման պահին չկատարման հետևանքները կանխատեսելու հնարավորությունից: Ըստ այդ նորմերի, կողմը պատասխանատվություն չի կրում ցանկացած պարտավորության չկատարման համար, եթե ապացուցի, որ այն առաջացել է իր հսկողության ներքո չգտնվող արգելքների հետևանքով և ճիշտ չէր լինի իրենից սպասել, որ պայմանագիրը կնքելիս ինքը հաշվի կառներ այդ արգելքը կամ դրանից խուսափելը, կամ այդ արգելքը և դրա հետևանքները հաղթահարելը<sup>1</sup>: Այսինքն, խոսքը գնում է ոչ թե իրավախախտման նկատմամբ հոգեբանական վերաբերմունքի, այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման խոչնդոտները գիտակցելու և դրանք հաղթահարելու հնարավորություններ փնտրելու մասին:

Վերջապես, մենք անվեհապահորեն ընդունում ենք, որ պատասխանատվությունը նախատեսված է միայն իր գործողությունները գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակ սուբյեկտի նկատմամբ ներգործելու համար: Բայց կատեգորիկ համաձայն չենք այն հետևությունների հետ, որ արսուրդ և քննադատության չդիմացող է իր գործողությունները գիտակցելու անընդունակ քաղաքացու, պատճառած վնասի համար Քաղ. օր. 1071 հողվածով նախատեսված, պատասխանատվությունը: Այդ հողվածը, որպես ընդհանուր սկզբունք սահմանում է, որ իր գործողությունների նշանակությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու անընդունակ անձը պատասխանատվություն չի կրում իր պատճառած վնասի համար և այդ սկզբունքից, որպես բացառություն, պատասխանատվությունից չի ազատում այն անձանց, ովքեր ոգելից խմիչքներ, թմրադեղեր օգտագործելով կամ այլ եղանակով իրենց հասցրել են այնպիսի վիճակի, որում չեն կարող գիտակցել իրենց գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք: Բանն այն է, որ ակտիվի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի օգտագործման հետևանքով հարբած վիճակում հանցանք կատարած անձը չի ազատվում նաև քրեական պատասխանատվությունից (Քր. օր. հողվ. 27),

<sup>1</sup> Տե՛ս Միջազգային մասնավոր իրավունք (Միջազգային իրավական փաստաթղթերի ժողովածու), Եր., 2005, 79, 161 էջեր:

և դա Գ.Ա.Լիպինսկին մեղքի հոգեբանական ըմբռնումից շեղում չի համարում:

Վերջապես անհասկանալի պատճառով Գ.Ա.Լիպինսկին անտեսում է, որ գործարարական ռիսկի համար պատասխանատվության սահմանմամբ, պատասխանատվության ապահովագրության կիրառությամբ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը ավելի ու ավելի է հեռանում մեղքի մասին քրեիրավական պատկերացումներից, կորցնելով կարգապահեցնող և դաստիարակչական բնույթը: Մեր կարծիքով իրավունքի տեսության մասնագետներին անհրաժեշտ է չսահմանափակվելով մեղքի քրեիրավական բնույթի պարզաբանմամբ (որը մեր կարծիքով բավականին հիմնավորված պարզաբանել են այդ ճյուղի մասնագետները) բացահայտեն այդ երևույթի սոցիալական բովանդակությունը: Հանցագործությունը իրավախախտման որակապես հատուկ տեսակ է<sup>1</sup>: Այն հանրորեն վտանգավորության հետ միասին ունի բազում այլ առանձնահատկություններ, որի համար էլ հանցագործի նկատմամբ հիմնականում կիրառվում են անձնական բնույթի ներգործության միջոցներ: Նման պարագաներում բնական է, որ քրեիրավական մեղավորության բնութագրիչները անվերապահորեն այլ իրավախախտումների դեպքում դրսևորող վարքագծի սուբյեկտիվ կողմի պարզաբանման համար կիրառվել չեն կարող:

Մեղքը սուբյեկտի կամային վարվելաձևի դրսևորումներից մեկն է, որը բնականոն գործընթացների խաթարմանն ուղղված սոցիալական բովանդակության շնորհիվ արժանանում է բացասական գնահատականի: Այդ պատճառով առանց իրավահարաբերության բնույթը, նրա մասնակիցների նպատակները պարզելու, հնարավոր չէ ճիշտ հասկանալ դրսևորվող բացասական վարքագծի՝ մեղքի էությունը:

Մարդկային գործունեության բնութագրական հատկանիշը նպատակաուղղվածությունն է: Այն ծնվում է մարդու պահանջումներից, դրանք բավարարելու ցանկությունից և հնարավորություններից: Պահանջումներն այն նախադրյալներն են, որոնց հիման վրա ձևավորվում են մարդկային գործունեության շարժառիթները: Առանց շարժառիթի կամային գործողություններ չեն լինում: Չիմանալով շարժառիթը՝ չի կարելի հասկանալ ինչու է մարդը ձգտում ոչ թե այս, այլ այն նպատակին, չի կարելի հասկանալ նրա գործողությունների իսկական իմաս-

<sup>1</sup> Տե՛ս Սամոչչենկո Ի.Ս., նշված աշխատությունը, էջ 156:

տը<sup>1</sup>: Հետևաբար, առանց շարժառիթները պարզելու, անհնարին է իմանալ իր պարտականությունների կատարման նկատմամբ, ինչպես նաև հանրային շահերի պահպանման նկատմամբ անձի բացասական վերաբերմունքի սոցիալական իմաստը: Դիտավորությունը և անզգուշությունը, այնպես, ինչպես ձևակերպված են օրենքով, մասնավորապես Քրեական օրենքով, իրենց մեջ շարժառիթներ չեն ներառում: Անգամ դիտավորությունը և ինքնավստահությունը իրենցից ներկայացնում են միայն սեփական վարքագծի հասարակական վնասակար հետևանքների կանխատեսման և այդ հետևանքները առաջացնելու ցանկություն<sup>2</sup>: Եթե քրեական իրավունքը ինչ-որ տեղ կարող է անտեսել շարժառիթի բացակայության հանգամանքը, քանի որ գործում է անմեղության կանխավարկածը, ապա քաղաքացիական իրավունքը դրանք անտեսել չի կարող երկու պատճառով. ա) իրենց կամքով հարաբերությունների մեջ մտած սուբյեկտներին, առանց շարժառիթը և նպատակը պարզելու հնարավոր չէ մեղադրել սկզբնական կամահայտնությունից չբխող և դրան հակառակ վարքագիծ դրսևորելու մեջ, բ) անհնարին է պարզել իրավախախտման վտանգավորությունը: Այսինքն, անհնարին է պարզել, թե անձը, որը որոշակի նպատակների իրականացման անհրաժեշտությունից ելնելով, կամովին մտել էր իրավահարաբերության մեջ, ինչու է դրսևորում այլ վարքագիծ՝ գիտակցելով դրա վնասակարությունը (վտանգավորությունը) ինչպես իր, այնպես էլ հարաբերության մյուս մասնակցի համար:

Հետևաբար, զանցանքներ և քաղաքացիական իրավախախտումներ<sup>3</sup> թույլ տվող սուբյեկտների մեղքի բնույթի պարզման համար անհրաժեշտ է ցուցաբերել այլ մոտեցում: Ինքնին հասկանալի է, որ մեղքի էության պարզաբանման համար հիմք են ծառայում իրավական ակտերում տեղ գտած ձևակերպումները: Հետևաբար, ներկայումս, երբ օրենսդրությունում կատարվել են փոփոխություններ, կարելի է, հաշվի առնելով մեղքի սկզբունքին միջազգային իրավական ակտերում տրված ձևակերպումները, քաղաքացիաիրավական վեճերը լուծելիս իրավախախտողի մեղքի բացակայության նկատմամբ դատարանների կողմից ցուցաբերվող վերաբերմունքը, գործող օրենսդրության նորա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>2</sup> Տե՛ս նաև Սամոչչենկո Ի.Ս., նշված աշխատությունը, էջ 157:

<sup>3</sup> Մեր կարծիքով քաղաքացիական իրավախախտումները զանցանք համարելը ճիշտ չէ:

մուծությունները, անդրադառնալ մեղքի էության նոր մեկնաբանությանը:

Հայաստանի Հանրապետության ժամանակակից քաղաքացիական իրավունքում պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ինքնին պարտատիրոջ համար վնասների փոխհատուցում պահանջելու, կամ այլ սանկցիաներ կիրառելու իրավունք չի առաջացնում: Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է համարվում պարտականությունները չկատարողի կամ ոչ պատշաճ կատարողի մեղքը, քանի որ ՀՀ քաղ. օր. 417 հոդվածը, որպես ընդհանուր սկզբունք, սահմանում է, որ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Դրա հետ միասին, ի տարբերություն Հայկական ԽՍՀ 1923, 1964 թթ. օրենսգրքերի, ՀՀ գործող քաղաքացիական օրենսգիրքը անմեղության ապահովման եղանակները նախատեսելու միջոցով բացահայտում է գույքային պատասխանատվության պայման ճանաչվող մեղքի էությունը կամ, ինչպես նկատում են քաղաքացիագետները, «անմեղության բնութագրման միջոցով սահմանում է մեղքի հասկացությունը»<sup>1</sup>: Մասնավորապես, ՀՀ քաղ. օր. 417 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Այսինքն, պարտապանը պատասխանատվությունից ազատվում է ոչ թե այն դեպքում, երբ ապացուցում է, որ ինքն այլ անձի սուբյեկտիվ իրավունքները խախտելու (պարտավորությունը չկատարելու, ոչ պատշաճ կատարելու, վնասներ պատճառելու) մտադրություն չի ունեցել, այլ այն դեպքում, երբ ապացուցում է, որ ինքը պարտավորությունը կատարելու համար ձեռնարկել է պարտավորության բնույթից և շրջանառության պայմաններից բխող բոլոր անհրաժեշտ միջոցները: Ինչպես ժամանակին նկատել է Գ.Ֆ.Շերշենևիչը, «Կատարվածը ex post գնահատող դատարանը պետք է հանգի ex ante տեսակետին և մարդուն (իրա-

<sup>1</sup> Տե՛ս *Είη ι α ί α δ α δ ε ε ε α δ α α ί η η ε ί ι ο ε ί α α ε η ο θ η η η ε η ε ί ε Ο α α α δ α δ ο ε ε . x λ η ο ε ι α δ α ί ε ( ι ι η ο α δ α ε ί ο ε ) . Ι ι α δ α α . Ι . Ι . Ν α α ε ε ι α α . Ι . ,* էջ 653: Բրազիլիական Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 607:

վահարաբերության սուբյեկտին – Տ.Բ.) չներկայացնի շրջահայացության ավելի մեծ պահանջներ, քան նրանք, որոնք հաշվի է առնում (նախատեսում է) օրենքը<sup>1</sup>: Այսինքն, մեղավորության կանխավարկածի գործողության պարագայում, ոչ ոք իրավասու չէ իրավախախտողին հոգեբանական վերաբերմունք վերագրել: Նման պարագայում մեղքի հարցը պետք է լուծել առկա իրողությունից՝ կատարված գործողության (անգործության) և դրանց հետևանքների բնույթից ելնելով: Իսկ պրակտիկան վկայում է, որ անձը պատասխանատվություն է կրում ոչ թե իրավախախտման նկատմամբ ցուցաբերած հոգեբանական վերաբերմունքի, այլ **օբյեկտիվորեն հասանելի նպատակներ չընկրելու և ընկրված նպատակներին հասնելու միջոցներն ընկրելու անկարողության համար**, այսինքն պարտականությունների կատարման նկատմամբ պահանջվող պարտադիր հոգածություն և շրջահայացություն չցուցաբերելու համար:

Քաղաքացիական իրավախախտման մեջ անձի մեղավորության պարզման համար վճռորոշ նշանակություն ունի ոչ թե անհրաժեշտությունը ճանաչելու ընդհանուր ունակության վրա հիմնված վարքագծի ընտրություն կատարելու բնույթը և փաստորեն կատարված ոչ իրավաչափ գործողություններից հրաժարվելու ունակությունը, ինչպես գտնում է Օ.Ս.Իոնֆեն<sup>2</sup>, այլ գիտակցված անհրաժեշտության վրա հիմնված գործիմացությամբ որոշումներ ընդունելու և դրանք կատարելու կարողությունը: Նշված հետևության հիմնավորում ծառայող պայմաններ նախատեսված են ԱՊՀ նմուշօրինակ քաղաքացիական օրենսգրքում (հոդվ 396, մաս 1)<sup>3</sup>: Այդ օրենսգիրքը, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, նախատեսում է, որ անձն անմեղ է ճանաչվում, եթե պարտավորության բնույթով և շրջանառության պայմաններով իրենից պահանջվող հոգատարության և շրջահայացության պահպանման

<sup>1</sup> Տե՛ս *Θάδοσάι άάε+ Ά.Ό. Ἰ άύάϑύ άάί άέϑ ἰ άάάά. Ό=άάίίά ἰίήίάέά. Ά. 2-σ ό. Ό.2. Ἰ ., 1995, էջ 268:*

<sup>2</sup> Տե՛ս *Ἐί όόά Ἰ .Ἰ. Ἰ άάάόήάίίίήήύ ἰί ήήάάόήήί ό άάάάάίήήήί ό ἰ άάάό. Ά έί.: Ἐάάάίίύά άάάά. Ό.1. Ἰ ., 2003, 324-325 էջեր:*

<sup>3</sup> ԱՊՀ նմուշօրինակ քաղաքացիական օրենսգրքի առաջին մասը, որպես Անկախ Պետությունների Համագործակցության հանձնարարական օրենսդրական ակտ, ընդունվել է անդամ պետությունների Միջպառլամենտական ասամբլեայի հինգերորդ գագաթաժողովում 1994թ. հոկտեմբերի 29-ին (Այդ գագաթաժողովին մասնակցել և այդ օրենսգրքի ընդունմանը կողմ է քվեարկել նաև Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի պատվիրակությունը):

պարագաներում ձեռնարկել է պարտավորությունը պատշաճ կատարելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները:

Մեր կարծիքով ժամանակակից իրավական ակտերում կատարված փոփոխությունների ելակետն այն է, որ անձը համարվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ձեռնարկել է պարտավորությունը կատարելու համար իրենից պահանջվող բոլոր միջոցները: Այսինքն, պետք է պատասխանատվության պայման համարել ոչ թե անձի «հոգեբանական» վերաբերմունքը, այլ պարտականությունների կատարման ուղղությամբ ձեռնարկված միջոցների բնույթն ու բավարարությունը: Նշված իմաստով՝ անձի մեղքը իրավախախտման նկատմամբ «հոգեբանական» վերաբերմունքից տարանջատելու ավելի հստակ պայմաններ են նախատեսում միջազգային մասնավոր իրավունքի ակտերը: Օրինակ, ինչպես Վիեննայի կոնվենցիան (հոդվ. 79), այնպես էլ Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքները (հոդվ 7.4.4) սահմանում են, որ կողմը պատասխանատվություն չի կրում պարտավորություններից ցանկացածի խախտման համար, եթե ապացուցի, որ այն առաջացել է իր հսկողությունից դուրս գտնվող արգելքների հետևանքով և բնականորեն հնարավոր չէր իրենից սպասել, որ պայմանագիրը կնքելիս հաշվի կառնի այդ արգելքը կամ դրա հետևանքը հաղթահարելը:

Չնայած պատասխանատվությունից ազատելու պայմանների օրենսդրական ձևակերպումներում կատարված մասն փոփոխություններին, ներկայումս էլ իրավական գրականությունում, այդ թվում նաև դասագրքերում և Քաղ. օր-ի մեկնաբանություններում<sup>1</sup>, մեղքը շարունակվում է բնութագրվել որպես իրավախախտողի հոգեբանական վերաբերմունքն իրավախախտման և դրա հետևանքների նկատմամբ: Մինչդեռ ոչ միայն վերոհիշյալ ակտերի ձևակերպումները, այլև քաղաքացիական իրավահարաբերությունների, (այդ թվում նաև պարտավորական

<sup>1</sup> Տե՛ս *Άάάάάίήήήά ἰ άάάί. Ἰ ἰά άάά. ἰ άί ό. Ά.Ά.Ἐάέίέίά, Ά.Ἐ.Ἰ άήέϑάά. ×άήήύ ἰ άάάάϑ. Ἰ .: Ἐά-άί "Ἦ άέήή", 1997, էջ 448: Ἐάάάάίήήήά ἰ άάάί. Ἰ ἰά άάά. ἰ άί ό. Ἐ.Ά.Ἰόόάίίάά. 2-ά έάάίέά. Ό. 1. Ἰ .: Ἐά-άί "ΆΨἘ", 1998, էջ 447: Ἐάάάάίήήήά ἰ άάάί. Ό=άάίέέ. Ἰ ἰά άάά., Ἐ.Ἰ . Ἰ άάάάάά, Ἦ .Ἐ. Όίέήήήί. Ἐά-ά 6-ά. Ό.1. Ἰ .: Ἐά-άί Ἰ Ἰ Ἰ "ΌἘ Ἰ ááéá", 2002, էջ 673: Բեքսեզյան Գ.Հ. Անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը. Եր., 2001, էջ 14 և այլն: Ἰ άó-ἰ ἰ-ἰ ááéé-áήéé έί ἰ ἰ á á á á á á é é +áήé ἰ á á á é Ἐάάááίήήήήί έί ááéήá Ḑ ἰ ἰ ἰ ἰ ééήé Ἐ áá á á á á é é á é ἰ á á á á é é ἰ á á á é. 2-á έá. á ἰ ἰ. é ἰ á á á á á. Ἰ .: Ἐá-áί "Ἰ á á é", 1999, էջ 522:*

հարաբերությունների) բնույթը, գործողությունների (անգործության) ու դրանց հետևանքների նկատմամբ ենթադրյալ «հոգեբանական» վերաբերմունքի, ինչպես նաև «իրավախախտման» նկատմամբ վերաբերմունքի մասին դատողություններ անելու հիմք չեն տալիս: Հակառակը՝ նշված նորմերի բովանդակությունից բխում է, որ խոսքը վերաբերում է պարտականությունների կատարման նկատմամբ համապատասխան հոգացություն ցուցաբերելուն: Այդ պատճառով մենք բաժանում ենք այն հեղինակների կարծիքը, որոնք գտնում են, որ մեղքը պետք է հասկացվի ոչ թե որպես հոգեբանական ակտ, այլ որպես կոնկրետ պայմաններում իրականացվող գործունեություն<sup>1</sup>: Միանգամայն արդարացի է Լ.Ն. Ուսպենսկին, երբ նշում է, որ իրավունքը (համենայն դեպս՝ քաղաքացիական իրավունքը – Տ.Բ.) գործ չունի հոգեկան պրոցեսների հետ, և դատարանում հոգեկան պրոցեսների մասին վեճ չի գնում<sup>2</sup>:

Բանն այն է, որ մասնավոր իրավունքում գործում է ներքին կամքի և կամահայտնության տարանջատվածություն, և առաջնությունը վերապահվում է ոչ թե ներքին կամքին, այլ գործողությունների միջոցով դրսևորվող կամահայտնությանը, այն կամահայտնությանը, որի միջոցով քաղաքացիական իրավունքի սուբյեկտն ի շահ իրեն ձեռք է բերում իրավունքներ և ստանձնում պարտականություններ (Քաղ. օր. հոդվ. 3. մաս 2): Նա կամովին՝ ի վնաս իր շահերի, իրավահարաբերությունների մեջ չի մտնի: Քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտները, պարտավորական հարաբերությունների մեջ մտնելիս մտահոգված են որոշակի շահ, օգուտ ստանալու իրավունքներ ձեռք բերելու, և ոչ թե պարտավորությունների չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ (իրավախախտմամբ) այլ անձի մոտ առաջացող վնասների և դրանց հետևանքների հաշվարկման մասին: Նրանք երբեք ուրիշին վնաս պատճառելու (իրավախախտում թույլ տալու) կանխամտածված ցանկությամբ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ չեն մտնում, քանի որ վաղօրոք հայտնի է, որ դրա հետևանքով վնասներ են կրելու նաև իրենք: Այդ պատճառով էլ, եթե պարտավորությունը չկատարողը կամ ոչ պատշաճ կատարողը ինչ-որ բանի համար մտահոգ-

ված է (ապրումներ է ունենում), ապա ոչ թե կոնտրագենտի մոտ առաջանալիք վնասների, այլ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով իր համար առաջանալիք հետևանքների, դրանք չեզոքացնելու կամ դրանց վնասակար հետևանքները նվազագույնի հասցնելու մասին: Հետևաբար, գույքային պատասխանատվության հարցերը պարզաբանելիս անհրաժեշտ է հրաժարվել խորհրդային քաղաքացիական իրավունքին յուրահատուկ մեթոդոլոգիական հիմքերի վրա ձևակերպված, ցիվիլիստիկայի հետ անհամատեղելի և գործնականում անօգտակար մեղքի հասկացությունից, վերադառնալ քաղաքացիական իրավունքի գիտության ակունքներին և անձի մեղավորության հարցերը լուծելիս հիմք ընդունել ոչ թե ենթադրյալ «հոգեբանական» վերաբերմունքը, այլ կոնկրետ չափանիշներով որոշվող հոգատարության և շրջահայացության աստիճանը: Պատահական չէր, որ Հին Հռոմի իրավագետները մասնավոր հարաբերություններում կիրառվող մեղքի մասին խոսելիս օգտագործում էին «իրավունքով պահանջվող վարքագիծ չդրսևորել», «պահանջվող հոգածություն չցուցաբերել», «բարի տիրոջ, ընտանիքի գլխին հատկանշական հոգատարություն» և նմանատիպ այլ արտահայտություններ:

Արված հետևության օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ Քաղ. օր-ը մեղքի տարբեր տեսակների բնութագրման համար օգտագործում է տարաբնույթ այնպիսի հասկացություններ, որոնք առավելապես բնութագրում են ոչ թե իրավախախտողի «հոգեբանական վերաբերմունքը», այլ պարտականությունների կատարման նկատմամբ ցուցաբերած գործնական հոգածությունը: Օրինակ, «թերությունների մասին չնախազգուշացնել» (հոդվ.603), «իմանալ և չհայտնել» (հոդվ. 615), «անհրաժեշտ շրջահայացություն» (հոդվ. 714), «պատշաճ հոգատարություն» (հոդվ. 964) և այլն: Ավելին, դժվար թե հնարավոր է խոսել վարձակալության հանձնված գույքի թերությունների համար վարձատուի հոգեբանական վերաբերմունքի մասին, երբ օրենքը նրան պատասխանատու է համարում վարձակալության հանձնված գույքի օգտագործումը լրիվ կամ մասնակի խոչընդոտող թերությունների համար, եթե նույնիսկ վարձակալության պայմանագիրը կնքելիս նա չի իմացել այդ թերությունների մասին (Քաղ. օր. հոդվ. 614):

Օրենսդրի կողմից քաղաքացիական իրավական մեղքի բնութագրման համար տարբեր հասկացությունների օգտագործումը վկայում է, որ պարտականությունները չկատարող կամ ոչ պատշաճ կատարող անձի

<sup>1</sup> Տե՛ս Ի օաճւի նեճե՛ Ա.Է. Աձաճաճի նե՛ի-ի ձաճի աճա՛ նձաճոճա՛ ա՛ օճի ցյեճոճաճի ի՛ն՛ օճոճաճի ի՛ն՛ օճա՛-աճի "Ք՞ ձեճաճ", 1984, էջ 150:

<sup>2</sup> Տե՛ս Օնիճի նեճե՛ Է.Ի. Ի՛ +աճե՛ Ի՛ թձեճե՛-աճե՛ի՛ օճի՛ն՛ն՛. Օձօճե՛ի՛ ձ, 1972, էջ 89: Բրազիլի Մ.Բ., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 598:

մեղքի գնահատման համար իրավական նշանակություն չունեն իրավախախտողի անհատական հատկանիշները, առավել ևս նրա «հոգեբանական ապրումները»: Դրա փոխարեն օրենսդիրը հիմք է ընդունում կոնկրետ իրավիճակում իրավահարեությունից բարեխիղճ մասնակցից սպասվող հոգածությունը: Այսինքն, մեղք է համարում պարտականությունների կատարման նկատմամբ դրսևորած վերաբերմունքը:

Այն հանգամանքը, որ ի տարբերություն քրեական իրավունքի, քաղաքացիական իրավունքում գործում է մեղավորության կանխավարկածը, արդեն իսկ վկայում է, որ «հոգեբանական վերաբերմունքը» իրավական արժեքավորման չի արժանացել: Վաղօրոք անձին վերագրվածը հետին թվով գնահատվել չի կարող:

Քաղաքացիական իրավունքում իրավախախտողի մեղավորությունը վաղօրոք ենթադրվում է, և քաղաքացիական իրավական պատասխանատվության կիրառման պայման է հանդիսանում: Այդ սկզբունքը կիրառվում է և՛ պայմանագրային, և՛ արտապայմանագրային պատասխանատվության դեպքում: Պայմանագրային պատասխանատվության համար այն ձևակերպված է Քաղ. օր. 417 հոդվ. 1-ի մասում, որի համաձայն՝ «Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները», իսկ արտապայմանագրային պատասխանատվության համար Քաղ. օր. 1058 հոդվածում, ըստ որի, «Վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել»: Այսինքն, մեղավորության կանխավարկածն օրենսդրական ենթադրություն է, որը դրվում է վճռի կայացման հիմքում, երբ իրավախախտողը չի կարողանում ապացուցել, որ պարտականությունների պատշաճ կատարման համար ձեռնարկել է անհրաժեշտ բոլոր միջոցները, բայց չի կարողացել կանխել առաջացած հետևանքները: Ապացուցման ծանրության այդպիսի բաշխումը ինքնանպատակ չէ: Օրենսդիրը նման կարգ է սահմանել՝ նկատի ունենալով, որ միայն պարտապանը գիտե, թե ինչու չի կատարել պարտավորությունը, ինչպիսի հոգածություն և շրջահայացություն է ցուցաբերել դրա կատարման համար: Հետևաբար, մեղավորության կանխավարկածի ամրագրումը քաղաքացիական իրավունքում ևս մեկ անգամ ապացուցում է, որ ո՛չ տուժողի, ո՛չ էլ դատարանի համար նշանակություն չունեն պարտականությունները չկատարողի կամ պատշաճ չկատարողի հոգեկան ապրումները: Նրանք կարևորում են այն փաստը, թե պար-

տականությունների կատարման համար ինչպիսի միջոցներ են ձեռնարկվել:

Վերջապես, քաղաքացիական իրավախախտումներում, որպես կանոն, բացակայում է **խախտում կատարելու պահանջումներով պայմանավորված ներքին մղումը՝ իրավախախտման շարժառիթը, այլ կերպ ասած՝ նպատակին հասնելու ցանկությունը**<sup>1</sup>: Դժվար թե կարելի է ողջամիտ համարել սեփական միջոցներով փոխհատուցելու նպատակով ուրիշին վնաս պատճառելը:

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով՝ մենք գտնում ենք, որ **քաղաքացիական իրավական մեղքն իր սրանչևս (կամ իր վրա դրված) պարտականությունների կատարման նկատմամբ հոգաբարություն և շրջահայացություն ցուցաբերելու անպարասխանաբարությունը կամ անկարողությունն է**:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքում, ինչպես երևում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի առաձին նորմերից, արժևորվում է մեղքի երկու ձև՝ դիտավորություն և անզգուշություն: Անզգուշությունն էլ լինում է կոպիտ և հասարակ: Ինչպես արդարացի նկատել է Գ.Կ.Մատվեևը, քաղաքացիական իրավունքում ձևավորվել է մեղքի տարբեր ձևերի այլ հարաբերություն, քան քրեական իրավունքում, իսկ մեղքի կոնկրետ ձևերի բաժանման բուն նշանակությունն ունի հատուկ բնույթ<sup>2</sup>:

Օրենսդրական նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը **դիտավորություն է համարում պարտականությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումից միտումնավոր չեռնպահ մնալը՝ անպարասխանաբարությունը**: Պարտավորությունները դիտավորությամբ չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում անձը գիտակցում է, որ իր համար կարող են առաջանալ անշահավետ իրավական հետևանքներ, բայց գտնում է, որ դրանք կրելն իր համար ավելի շահավետ է, քան պարտավորությունից բխող պարտականությունների կատարումը:

**Անզգուշության դեպքում անչք պարտականությունների կատարման նկատմամբ չի ցուցաբերում այն հոգաբարությունն ու**

<sup>1</sup> Շարժառիթի բնութագրությունը տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Եր., 2003, էջ 221:

<sup>2</sup> Գ.Կ.Մատվեևի կարծիքը տե՛ս *ԷՆՕՃԱ Ի.Ն. Ի օձաօնօձա՛ւ ի նօս ի՛ն նի՛ օձօնե՛ւն օ օձաօնի նե՛ւն օ ի՛ օձաօ. ԷՃձձա՛ւ ի՛ ւն օձօն. 0.1. Ի ., 2003, էջ 362:*



յամբ խախտելու հետևանքով<sup>1</sup>: Իրոք, եթե խոսքը վերաբերում է պարտավորական հարաբերություններին, ապա պատասխանատվության ենթարկելու և քաղաքացիաիրավական պատասխանատվության ծավալը որոշելու համար որևէ նշանակություն չունի պարտավորությունը չկատարողը կամ ոչ պատշաճ կատարողը գործել է դիտավորությամբ, թե անզգուշությամբ: Ավելին, մեղքի քրեաիրավական կոնցեպցիան ընդհանրապես կիրառելի չէ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է իրավաբանական անձանց նկատմամբ մեղքի սկզբունքի կիրառությանը: Բայց դա չի նշանակում, որ քաղաքացիական իրավունքում դիտավորության և անզգուշության սահմանազատումն անիմաստ է:

Դիտավորության և անզգուշության սահմանազատման հարցը հատկապես կարևոր նշանակություն ունի խառը պատասխանատվության կիրառման դեպքում, պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության, սեփականատիրոջ իրավունքների տիրապետությունից զրկելու հետ չկապված խախտումների արժեքավորման, հեղինակի բացառիկ իրավունքների պաշտպանության հարցերը լուծելիս և, վերջապես, այն դեպքում, երբ քաղաքացիական հայցը հարուցվում է քրեական գործի կապակցությամբ (եթե օրենքով նախատեսված չէ առանց մեղքի պատասխանատվություն): Այսինքն քաղաքացիական իրավունքում էլ դիտավորությունն ունի իրավական արժեքավորում և գործնական նշանակություն: Այլ բան է, որ դիտավորությունն արժեքավորվում է օրենքով նախատեսված սահմանափակ դեպքերում, իսկ անզգուշությունը խաղում է վճռորոշ դեր և հանդիպում է քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման դեպքերի մեծամասնությունում: Նշված հանգամանքը պայմանավորված է քաղաքացիաիրավական հարաբերությունների առանձնահատկությամբ, պատասխանատվության պայմանների դերով, նշանակությամբ, քաղաքացիաիրավական պատասխանատվության փոխհատուցողական բնույթով և այլ հանգամանքներով: Բնական է, որ ճնշող մեծամասնությամբ՝ իրավահարաբերության մասնակիցների ազատ կամահայտնությամբ առաջացող հարաբերությունները խախտվում են ոչ թե այն պատճառով, որ այդպիսի իրավահարաբերության կողմերից մեկը կամ երկուսն էլ ձգտում են մեկը մյուսին (հետևաբար նաև՝ իրենք իրենց) «վատուր-

<sup>1</sup> Տե՛ս *Áντιτάξ Α.Α. Νένοαι à è ίνίíáíúá íðείóείú íðείáíáíéý ñáíèðéé è òíçýéñoááí íúí íðááí èçáðéýí // Νίááòñéíá áí ñóááðñóáí è íðááí. 1967, No 3, 35-36 էջեր:*

յուն» անել, այլ անզգուշության, անփութության, անշրջահայացության կամ, այլ կերպ ասած, պարտավորությունների կատարման նկատմամբ պահանջվող հոգածություն չցուցաբերելու հետևանքով:

Վերը նշված նկատառումներից ելնելով ստիպված ենք արձանագրել, որ Քաղ. օր. 417 հոդվածի ձևակերպումները քննադատության չեն դիմանում:

Նախ, ի տարբերություն նախկին օրենսդրության, որը մեղքը համարվում էր պատասխանատվության պայման, նոր քաղ. օր-ը ( հոդվ. 417) այն համարում է պատասխանատվության հիմք: Բնական է, մնան մոտեցումը հիմնավոր համարվել չի կարող, քանի որ հիմքի բացակայությունը բացառում է պատասխանատվությունը, մինչդեռ մեղքի բացակայությունը բազմաթիվ դեպքերում (երբ օրենքով նախատեսված է առանց մեղքի պատասխանատվություն) չի բացառում: Երկրորդ, ՀՀ քաղ. օր. 417 հոդվածում խոսվում է ոչ թե«անձ» եզրույթի, այլ «պարտապանի» մասին, անտեսելով, որ պատասխանատվության կարող է ենթարկվել ոչ միայն պարտապանը, այլև պարտատերը, և, բացի դրանից, պարտապանը պատասխանատվություն կարող է կրել ինչպես սեփական, այնպես էլ այլ անձանց մեղքի համար: Երրորդ, չեն մատնանշված մեղքի ձևերը (դիտավորություն կամ անզգուշություն) այն դեպքում, երբ կոնկրետ խախտումների համար պատասխանատվություն նախատեսող նորմերը (հոդվ. 691, 828 և այլն) սահմանում են մեղքի տարբեր ձևեր: Չորրորդ, «կամ» շաղկապի հետ միասին օգտագործում է նաև «և» շաղկապը, այն դեպքում, երբ պարտավորության չկատարումը և ոչ պատշաճ կատարումը միասին դրսևորվել չեն կարող: Հինգերորդ, «ոչ պատշաճ կատարում» եզրույթի փոխարեն օգտագործվում է «անպատշաճ կատարում» արտահայտությունը, հաշվի չառնելով, որ «անպատշաճ»-ը անձի բարոյական գնահատականը բացահայտող արտահայտություն է, և չի կարող օգտագործվել «ոչ պատշաճ» եզրույթի փոխարեն: Վեցերորդ՝ առնվազն անհետևողականություն է նույն հոդվածում, նույն երևույթի պարզաբանման համար «պարտապան», «պարտավորությունը խախտված անձ», «պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած անձ» եզրույթների օգտագործումը: Վերջապես ամենակարևորը՝ նմուշօրինակ օրենսգիրքը ցանկացած հոգացություն և շրջահայացություն պատասխանատվությունից ազատելու հիմք չի համարում, վերացական չափանիշներ, այսինքն, իրենից կախված բոլոր միջոցների ապրիորի կիրառություն չի ընդունում: Այն պահանջում է

կոնկրետ պայմաններում և կոնկրետ հանգամանքներից բխող հոգա-  
ծության դրսևորում: Վերը նշված պատճառներով, մեզ թվում է, որ ՀՀ  
քաղաքացիական օրենսգրքի 417 հոդվածում անհրաժեշտ է կատարել  
համապատասխան փոփոխություններ: Իսկ հոդվածի 1-ին մաս շա-  
րադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Անչը պարզավորությունը չկատարելու կամ ոչ պարզաճ կա-  
տարելու համար պատասխանատվություն է կրում մեղքի (դիպավո-  
րության կամ անզգուշության) առկայության դեպքում, եթե այլ բան  
նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:**

**Անչը ճանաչվում է անմեղ, եթե պարզավորության բնույթով և  
չրջանատության պայմաններով իրենից պահանջվող հոգապարու-  
թյան և շրջահայացության ցուցաբերման պարագաներում չեռնարկել  
է պարզավորության պարզաճ կատարման համար անհրաժեշտ բո-  
լոր միջոցները»:**

Նման փոփոխությունը, մեր կարծիքով, կնպաստի ոչ միայն մեղքի  
քաղաքացիաիրավական հասկացության ճիշտ ըմբռնմանը, այլև նրա,  
որպես գույքային պատասխանատվության պայմանի, ճիշտ կիրառման-  
ընդ:

2. Քաղ. օր. 417 հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթները կիր-  
առվում են նաև այն դեպքերում, երբ քաղաքացիաիրավական պա-  
տասխանատվության է ենթարկվում իրավաբանական անձը: Բայց քա-  
նի որ իր հատկանիշներով իրավաբանական անձը, որպես քաղաքա-  
ցիական իրավունքի սուբյեկտ, էապես տարբերվում է ինքնուրույն վար-  
քագիծ դրսևորելու կարողությամբ օժտված ֆիզիկական անձանցից,  
ուստի անհրաժեշտություն է առաջանում բացահայտել, թե ինչ ենք  
հասկանում իրավաբանական անձի մեղք ասելով, և այդ մեղքը ինչպես  
է ձևավորվում: Այդ հարցերի կապակցությամբ արտահայտվել են բա-  
վականին շատ տեսակետներ, դրան նվիրվել են առանձին աշխատու-  
թյուններ: Սակայն նկատի ունենալով ներկա աշխատանքի նպատա-  
կաուղղվածությունը, առանց անդրադառնալու այդ տեսակետների թեր  
և դեմ կողմերի վերլուծությանը, հարկ ենք համարում նկատել, որ մեղ-  
քի, որպես հոգեբանական վերաբերմունքի, կոնցեպցիան առավել մեծ  
կասկածանքի տեղիք է տալիս իրավաբանական անձի դիտավորու-  
թյան կամ անզգուշության հարցերը լուծելիս: Նման կասկածները  
հետևանք են այն բանի, որ իրավունքի այդ սուբյեկտը ոչ միայն ինքնու-  
րույն մտածողություն դրսևորելու անընդունակ սուբյեկտ է, այլև այն

պատճառով, որ այդ սուբյեկտին կարելի է ենթարկել միայն գույքային  
պատասխանատվության: Հետևաբար, իրավաբանական անձի մեղա-  
վորության բացահայտման նկատմամբ անհրաժեշտ է ցուցաբերել ա-  
ռանձնահատուկ մոտեցում:

Իրավաբանական անձը ճանաչվում է իրավունքի սուբյեկտ, որ-  
պեսզի կազմակերպի և իրականացնի որոշակի գործունեություն, մաս-  
նակցի իրավահարաբերությունների, իր անունից ձեռք բերի ու իրակա-  
նացնի գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրի պար-  
տականություններ (Քաղ. օր. հոդվ.50): Նրա գործունեությունն ընթա-  
նում է իրավական ձևերով, իրականացվում է իրավահարաբերությու-  
նների միջոցով:

Իրավաբանական անձի իրավունքների և պարտականությունների  
ծագումը և դրանց իրականացումը տեղի է ունենում ոչ թե ինքնաբերա-  
բար, այլ կամքի ձևավորման և կամահայտնության միջոցով: Կամքը,  
այդ թվում նաև իրավաբանական անձի կամքը, իրենից ներկայացնում  
է այս կամ այն գործողությունը կատարելուն (կամ կատարելուց ձեռն-  
պահ մնալուն) ուղղված գիտակցված նպատակայնություն: Կամային  
գործողության սկզբնական օղակն է նպատակի գիտակցումը և ձևա-  
կերպումը, ապա գործելու որոշում կայացնելը, գործողությունների իրա-  
կանացման առավել նպատակահարմար եղանակների ընտրությունը:  
Այդ գործողությունները կամային բնութագրելու համար վճռորոշ հիմք է  
հանդիսանում որոշումների կատարումը<sup>1</sup>:

Բնական է, որ մարդկանց միջև ձևավորվող հարաբերություններ-  
ում մասնակիցներից յուրաքանչյուրի կամքը ձևավորվում է ուղղակիո-  
րեն՝ արտաքին աշխարհի երևույթները նրանց կողմից գիտակցելու և  
դրա հիման վրա կամային արաքներ կատարելու միջոցով: Ինչ վերաբե-  
րում է կոլեկտիվի (կուսակցության, դասակարգի, ժողովրդի և այլն)  
կամքի ձևավորմանը, ապա այդ կամքն ածանցյալ է անհատների կամ-  
քից, բայց նրանց կամքի թվաբանական գումարը չէ: Այդ պատճառով  
ցանկացած կոլեկտիվի (այդ թվում նաև՝ իրավաբանական անձի) կամ-  
քի ձևավորման գործընթացը պետք է ուսումնասիրվի, հաշվի առնելով  
կոլեկտիվի տվյալ տեսակի առանձնահատկությունները, նրա գործու-  
նեության կոնկրետ պայմանները: Նշված դիրքերից՝ հարցի լուծմանն  
առավել ճիշտ մոտեցում է ցուցաբերում Ն.Ս.Բրատուար: Ըստ նրա՝ ի-

<sup>1</sup> Տե՛ս Օձ՛էի ո՛ր Օ՛ն՛ձ՛ձ՛ ն՛՛ի ձձ՛ձ՛. Ի ., 1972, էջ 37:



րավաբանական անձի կամքը և գործողությունները կազմված են նրա անդամների կամքից և գործողություններից: Բայց իրավաբանական անձի կամքը և գործողությունները չի կարելի համարել այն կազմող և այն դեկլարող անձանց կամքի պարզ գումար: Իրավաբանական անձի գործունեությունը չնայած ձևավորվում է անհատական կամային գործողություններից, մեխանիկորեն դրանց չի հանգում: Այն իրենից ներկայացնում է իր գումարելիներից տարբերվող նոր որակ<sup>1</sup>: Նման մոտեցումը միանգամայն արդարացված է, քանի որ իրավաբանական անձի կամքի ձևավորման համար պարտադիր նշանակություն ունի նաև հիմնադիրների կողմից ձևակերպված նպատակների և իրավագործությունների բնույթը: Բացի դրանից, իրավաբանական անձի անունից գործողություններ կատարելիս իրավաբանական անձի մարմինը իրավաբանական անձի հիմնադիրների և կոլեկտիվի կամքն իրականացնում է ոչ թե մեխանիկորեն, այլ ստեղծագործաբար, արտահայտելով նաև իր սեփական կամքը: Այսինքն, իրավաբանական անձի կամքը, կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները որոշող հիմնադիրների կամքի, դրանց իրականացումն ապահովող աշխատակիցների և ծառայողների կամահայտության և կոնկրետ հանգամանքներով պայմանավորված տնտեսական գործունեության ուղիներն ու եղանակները որոշող մարմնի, իրավաբանական անձի շահերն ապահովող, կամահայտության ստեղծագործական համակցություն է: Այդ համակցության վերջնական ձևավորողը և արտահայտողն իրավաբանական անձի մարմինն է: Այդ պատճառով Քաղ. օր. 57 հոդվածը սահմանում է, որ իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով: Իր մասնակիցների և ներկայացուցիչների միջոցով իրավաբանական անձը կարող է ձեռք բերել քաղաքացիական իրավունքներ և ստանձնել քաղաքացիական պարտականություններ միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Իրավաբանական անձի կամքը չնայած մշակվում և արտահայտվում է նրա մարմինների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև՝ այլ անձանց կողմից, այսինքն՝ կենդանի մարդկանց միջոցով, այնուհանդերձ, դա ոչ թե այդ անձանց, այլ իրավաբանական անձի կամքն է,

<sup>1</sup> Տե՛ս Ἀδαόου Ν.Ι . Բ δεῖα: ἀνεί α εἰοῖ ἂ νῖ ἂαοῖεῖ ἰ ἂδᾶᾶἰ ἡῖεῖ ἰ ἰδᾶᾶ. Ἰ ., 1947, էջ 151:

որը նկատի ունենալով էլ Քաղ.օր. 57 հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Անձը, որն օրենքի կամ իրավաբանական անձի կանոնադրության ուժով հանդես է գալիս նրա անունից, պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող իրավաբանական անձի»: Եթե իրավաբանական անձի մարմինը դրսևորում է այնպիսի կամք, որը չի բխում իրավաբանական անձի շահերից կամ հաշվի չի առնում իրավաբանական անձի հիմնադիրների կողմից ձևավորված նպատակների և իրավագործությունների բնույթը, սահմանանցում կամ չարաշահում է իրեն վերապահված իրավունքները, ապա իրավաբանական անձի, նրա հիմնադիրների կամ իրավաբանական անձի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմնի հայցով իրավաբանական անձի մարմնի կնքած գործարքը դատարանը կարող է ճանաչել անվավեր (Քաղ.օր.հոդվ. 314): Իսկ եթե իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի գործողություններով իրավաբանական անձին վնաս է պատճառվել, ապա նա պարտավոր է իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) պահանջով հատուցել այդ վնասը:

Օրինակ, «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի հիմնադիրներից մեկը Հ.Հ.-ն դիմել էր դատարան «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն (միաժամանակ նաև հիմնադիր) Ա.Ռ.-ի և «Սեֆ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ի միջև առանց բաժնետերերի ընդհանուր ժողովի թույլտվության և որոշման կնքված 10 հազար ԱՄՆ դոլար վարկի և տարածքի գրավադրման պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջով: Դատարանը, հիմնավորված համարելով «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից կանոնադրությամբ և Քաղ.օր 57 հոդվածով վերապահված իրավասությունների սահմանանցումը՝ նրա կողմից կնքված վերոհիշյալ պայմանագիրը ճանաչել է անվավեր, պարտավորեցնելով «Սեֆ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ին վերադարձնել տասը հազար ԱՄՆ դոլար գումարը<sup>1</sup>:

Կենդանի մարդիկ (հիմնադիրներ, աշխատողներ, տնօրինություն, տնօրեն և այլն) ոչ միայն ձևավորում են իրավաբանական անձի կամքը և ապահովում են նրա մասնակցությունն իրավահարաբերություններին, այլև իրենց գործողություններով կամահայտության արատներով

<sup>1</sup> Տե՛ս Քաղաքացիական գործ թիվ S. 716, 2002թ. Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, Եր., 2002, 377-771 էջեր :

ձևավորում են նաև իրավաբանական անձի մեղքը: Մեղք, որը իր ծագմամբ պարտական է իրավաբանական անձի մարդկային կազմի (նրա առանձին անդամների) ոչ պատշաճ գործունեությանը, իսկ էությամբ վերափոխվում է իրավաբանական անձի մեղավորության այն բանի հետևանքով, որ տվյալ պարագայում ֆիզիկական անձինք կատարում են ոչ թե իրենց՝ որպես քաղաքացու պարտականությունները, այլ իրավաբանական անձի կողմից (կանոնադրությամբ, կանոններով) իրենց վրա դրված պարտականությունների համապատասխան մասը:

Նշված հանգամանքը օրենսդրին հնարավորություն է տալիս, հրաժարվել մեղավորության սկզբունքով կիրառվող անհատական պատասխանատվությունից և պատասխանատվության սուբյեկտ ճանաչել իրավաբանական անձին:

Բնական է, որ իրավաբանական անձը (եթե օրենքով այլ բան նախատեսված չէ) պատասխանատու է միայն իր աշխատողների ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ դրսևորած հակաիրավական և մեղավոր գործողությունների համար: Այսինքն, իրավաբանական անձի մեղքը նույնպես ձևավորվում է իրավաբանական անձի կամքը ձևավորող պաշտոնատար անձանց և աշխատակիցների մեղքի նոր որակ ձեռք բերելու, իրավաբանական անձի մեղքի վերափոխվելու հետևանքով: Այդպիսի վերափոխությունը տեղի է ունենում այն բանի ուժով, որ կազմակերպության պաշտոնատար անձինք և աշխատակիցները, իրենց վերապահված իրավագործությունների շրջանակում իրականացնում են կազմակերպության իրավասությունները և դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները: Ընդ որում, պարտականությունների կատարման նկատմամբ իրավաբանական անձի վերաբերմունքը, յուրաքանչյուր կոնկրետ պարագայում կարող է դրսևորվել կամ՝ մեկ աշխատողի գործողություններում, կամ մի քանի աշխատակիցների գործողություններում: Պայմանագրային պարտականություններ կատարելիս առավել հաճախ իրավաբանական անձի մեղքը հետևանք է մեկ անձի գործողության արատների, օրինակ, պակասորդի, տարայի վերադարձման, հաշվարկների չկատարման և այլ գործերով: Սակայն ճնշող մեծամասնությամբ իրավաբանական անձի պարտականությունները չեն կատարվում կամ ոչ պատշաճ են կատարում բազմաթիվ աշխատակիցների մեղավոր անգործության հետևանքով:

Տնտեսական պրակտիկայում տարածված են նաև այն դեպքերը, երբ պայմանագրային պարտավորությունների կատարման վրա ազդեցություն են ունենում ոչ միայն տվյալ կազմակերպության աշխատակիցների, այլև այլ կազմակերպությունների աշխատակիցների գործողությունները: Հետևաբար, իրավաբանական անձի մեղքը ձևավորվում է այն աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների (անգործության) հետևանքով, որոնց պաշտոնական (ծառայողական) պարտականությունն է կազմում այդ գործողությունների կատարումը:

Իրավաբանական անձի նկատմամբ պատասխանատվության կիրառումը ամենևին չի նշանակում, որ իրավախախտման գործում մեղավոր է ողջ կողեկտիվը: Կողեկտիվն ամբողջությամբ, որպես կանոն, մեղավոր լինել չի կարող: Որպես կանոն, մեղավոր են այն պաշտոնական անձինք և աշխատակիցները, որոնք պատասխանատու են իրենց ծառայողական (աշխատանքային) որոշակի պարտականությունների կատարման համար: Բայց «բոլորը մեկի, մեկը բոլորի համար» սկզբունքով կազմակերպության վրա է ընկնում իրավախախտման համար պատասխանատու լինելու պարտականությունը<sup>1</sup>:

Այս սկզբունքի դրսևորումն իր ամրապնդումն է գտել Քաղ. օր. 418 հոդվածում, որը սահմանում է. «Պարտավորության կատարմանն ուղղված պարտապանի աշխատողների գործողությունները համարվում են պարտապանի գործողություններ: Պարտապանը պատասխանատու է այդ գործողությունների համար, եթե դրանք հանգեցրել են պարտավորությունները չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն»: Ինչպես տեսնում ենք, Քաղ. օր. 418 հոդվածը, աշխատողների մեղքի մասին անգամ չի ակնարկում: Բանն այն է, որ իրավունքին հետաքրքրում է ոչ թե կամքի ձևավորման հոգեբանական պրոցեսը, այլ նրա, արտահայտողից անկախ կեցությունը և զարգացում ստացած օբյեկտիվ դրսևորումն իր արդյունքով և բովանդակությամբ<sup>2</sup>: Հետևաբար, իրավաբանական անձը պատասխանատվությունից կազատվի ոչ թե այն դեպքում, երբ կապացուցի իր մարմինների և անդամների անմեղությունը, այլ երբ կապացուցի, որ պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է այնպիսի հանգամանքների, որոնք իր ունե-

<sup>1</sup> Տե՛ս Թագնիսթոս Օ.Է. Άεία έαε ίνίίάαίεά αίάαίδίίε ίόάαοόάαίίίνοε ίόάαίδεγόεγ. Ι ., 1975. 55-56 էջեր:

<sup>2</sup> Տե՛ս Բրատուս Ս.Ն., նշված աշխատությունը, էջ 67:

ցած մարդկային ռեսուրսներով, նյութական հնարավորություններով և գործունեությամբ կանխել չէր կարող: Մենք համամիտ ենք Բ.Ի.Պուզինսկու այն տեսակետի հետ, որ անօրինական գործողություններ կատարելիս կազմակերպությունների աշխատողները գիտակցում են իրենց արարքների նշանակությունը և այդ պատճառով էլ նրանց վարքագիծը կարող է համարվել դիտավորություն կամ անզգուշություն: Սակայն այդպիսի ինքնագնահատականը և աշխատողների մեղքի բնույթը պատասխանատվության կիրառման համար որևէ դեր չեն խաղում: Իր արարքների նկատմամբ պարտապանի հոգեբանական վերաբերմունքի հետ գործ չունի ո՛չ այն անձը, որի իրավունքներն ու շահերը խախտվել են, ո՛չ վեճը քննող իրավասու մարմինը: Վեճերի լուծման կապակցությամբ դատարանների գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք չեն զբաղվում թույլ տրված խախտումների նկատմամբ կազմակերպության աշխատողների սուբյեկտիվ վերաբերմունքի ստուգմամբ<sup>1</sup>:

Իրավաբանական անձանց մեղքն արժեքավորվում է ոչ թե նրա աշխատողների կամ ղեկավարների հոգեբանական վերաբերմունքի գնահատմամբ, այլ նրա կողմից պարտականությունների կատարման համար, պարտավորության բնույթից և շրջանառության պայմաններից բխող հոգատարության և շրջահայացության անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու հանգամանքներից ելնելով: Այդ պատճառով էլ պարտապանը (լինի դա քաղաքացի, թե իրավաբանական անձ) ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները (Քաղ. օր. հոդվ. 417, մաս 1): Ընդ որում, անմեղության ապացուցման հնարավորություն իրավախախտ իրավաբանական անձին տրվում է միայն այն դեպքում, երբ օրենքով կամ պայմանագրով նախատեսված է, որ պարտապանը պատասխանատվություն է կրում մեղքի առկայության դեպքում, իսկ այն դեպքում, երբ մեղքը պատասխանատվության անհրաժեշտ պայման չէ (օրինակ, գործարարությամբ զբաղվող իրավաբանական անձանց համար), ապա այդ հարցն ընդհանրապես քննարկման առարկա դառնալ չի կարող:

### **3.5. Գործարարական ռիսկը որպես գույքային պատասխանատվության պայման**

1. XIX դարի սկզբում ստեղծված խոշոր կողիֆիկացված ակտերը (ՖԼՕ-ն 1804թ., ԳԼՈՒ-ն 1901թ., ավստրիական ԼՕ-ն 1811թ.) և հետագայում, ըստ էության, Հուստինիանոսի կողիֆիկացիաների հիման վրա, ընդունված քաղաքացիական օրենքները պատասխանատվության անհրաժեշտ պայման էին համարում միայն մեղքը, դրանից կատարելով բացառություն միայն այն դեպքերում, երբ օրենսդիրը սահմանում էր առանց մեղքի պատասխանատվություն: Նման մոտեցումը միանգամայն հասկանալի էր, քանի որ արտադրության մեջ և տրանսպորտում շոգեմեքենայի և ներքին այրման շարժիչի գործարկումից առաջ ընդունված իրավական ակտերը չէին կարող նախատեսել դժբախտ պատահարների, միջուկային վնասի, քիմիական և կենսաբանական աղետների ռիսկը:

Այդ ակտերի ընդունումից հետո տեղի ունեցած գիտատեխնիկական առաջընթացի հետևանքով նախ՝ արտադրություն, ապա՝ առօրյա կենցաղ ներթափանցեցին մարդու վերահսկողությանը լիարժեք չենթարկվող մեքենաներ, սարքավորումներ, տեխնոլոգիաներ և տեխնիկական այնպիսի միջոցներ, որոնց խաթարումներն ունակ են առաջացնելու անկանխատեսելի վնասակար հետևանքներ: Արդյունքում ոչ միայն ընդլայնվեցին մարդու հնարավորությունները, այլև բազմապատկվեց նրա գործունեության ռիսկայնությունը՝ այլ անձանց տեխնիկայի խաթարման հետևանքով վնաս պատճառելու հնարավորությունները: Անվիճելի է, որ տեխնիկայի խաթարման հետևանքով առաջացած վնասները վերջին հաշվով այն անձանց սխալների կամ թերությունների հետևանք են, որոնք պատրաստում, աշխատեցնում, կառավարում կամ վերահսկում են տեխնիկական կամ տեխնոլոգիական պրոցեսները: Բավական է այդ գործընթացներին մասնակցող աշխատողի մեկ վայրկյան անուշադրությունը կամ փոքր անզգուշությունը, որպեսզի առաջանան բազմամիլիոն կորուստներ, իսկ երբեմն էլ, օրինակ ատոմային սարքի խաթարման դեպքում, անկանխատեսելի աղետալի հետևանքներ: Սակայն հայտնաբերել խաթարման մեջ մեղավոր այն անձանց (անձին), որոնց սխալի, անուշադրության կամ անփութության հետևանքով առաջացել են վնասակար հետևանքները կամ աղետը, եթե

<sup>1</sup> Տե՛ս Պուզինսկի Բ.Ի., նշված աշխատությունը, 150-151 էջեր:

չասենք անհնարին, ապա չափից ավելի դժվարին խնդիր է: Օրինակ, պարզել ինքնաթիռի շարժիչի անսարքության հետևանքով առաջացած աղետի համար մեղավոր անձին, գրեթե անլուծելի խնդիր է:

Բացի դրանից, եթե արտադրության կոռպորացման, համակենտրոնացման, հարյուրավոր և ավելի մասեր, հանգույցներ, դետալներ պարունակող բարդագույն տեխնիկայի օգտագործման պարագայում պատճառված վնասի համար պահանջվի հայտնաբերել կոնկրետ մեղավորներին և նրանց վրա դնել տուժողի վնասները հատուցելու պարտականությունը, ապա դժվար թե տուժողները կարողանան փոխհատուցում ստանալ, նրանք ճնշող մեծամասնությամբ կգրկվեն հատուցում ստանալու հնարավորությունից: Անգամ այն դեպքերում, երբ, կոնկրետ մեղավորը հայտնաբերվի, շատ հաճախ կպարզվի, որ նրա միջոցները անբավարար են վնասները լիարժեք փոխհատուցելու համար: Նման պարագաներում անձանց շահերի պաշտպանությունը պահանջում էր փոխել վերաբերմունքը սուբյեկտիվ (մեղքի սկզբունքով) պատասխանողի նկատմամբ և անցում կատարել գործարարական ռիսկի համար (անկախ մեղքից) պատասխանատվության կիրառմանը:

Մեղքի սկզբունքով պատասխանատվությանն առաջին լուրջ հարվածը հասցրեց 1938թ. ընդունված «Երկաթուղու մասին» պրուսական օրենքը: Այդ օրենքն առաջինն էր, որ նախատեսեց պատասխանատվություն անկախ մեղավորությունից:

Մեղքի սկզբունքի արժեզրկմանը մեծապես նպաստեց նաև իրավաբանական անձի գույքային շրջանառության գլխավոր սուբյեկտ դառնալու հանգամանքը, քանի որ, վնասակար տնտեսական հետևանքների, մեղավորության սկզբունքից ելնելով արդարացի բաշխումը իրավաբանական անձի կոլեկտիվի անդամների միջև, որպես կանոն, հնարավոր չէ: Վնաս պատճառելու տնտեսական հետևանքները կարելի է արդարացի բաշխել այն դեպքում, երբ հնարավոր է հայտնաբերել այն անձին (անձանց), որը, գործելով որպես իրավաբանական անձի մարմին, ներկայացուցիչ կամ աշխատող, խախտել է իրավաբանական անձի պարտավորությունը: Անգամ մեղավորին հայտնաբերելու դեպքում դժվար է խոսել կոնկրետ մեղավորի պատասխանատվության մասին, քանի որ տեղի է ունենում պատասխանատվության տրանսմիսիա՝ պատասխանատվության է ենթարկվում ոչ թե կոնկրետ մեղավորը, այլ իրավաբանական անձը:

Արևմտյան իրավագիտությունը չէր կարող անտեսել նշված գործընթացները: XIX դարի վերջում Գերմանիայում, Իտալիայում և Ֆրանսիայում լույս տեսան աշխատանքներ, որոնցում ապացուցվում էր, որ մեղքը քաղաքացիաիրավական պատասխանատվության պարտադիր պայման չէ: Իրավագետները գտնում են, որ արտադրության, տեխնիկայի զարգացման, տեխնոլոգիաների կատարելագործման հետևանքով սուբյեկտիվ պատասխանատվության սկզբունքը, որը կոչված էր պահպանել անձի շահերը, սկսում է գործել ի վնաս նրա, իսկ օբյեկտիվ պատասխանատվության սկզբունքը վեր է ածվում անձի շահերի պահպանության գործուն միջոցի, որի պատճառով էլ տարբեր երկրներում և տարբեր ժամանակներում ընդունվում են անկախ մեղքից ձեռնարկությունների պատասխանատվությունը նախատեսող հատուկ օրենքներ: Հեղինակները պնդում էին, որ մեղքի պահանջը քրեական և քաղաքացիական պատասխանատվությունները միմյանց հետ խառնելու՝ վնասների հատուցումը և քրեական պատասխանատվությունը խառնելու արդյունք է<sup>1</sup>:

Նրանք գտնում էին, որ գիտատեխնիկական առաջընթացը ոչ միայն մեծացրեց անհատի կյանքին, առողջությանը, ունեցվածքին և շրջակա միջավայրին վնաս պատճառելու ռիսկը, այլև գործարարների համար ապահովեց գերշահույթ ստանալու հնարավորություն: Հետևաբար, վնասների առաջացման ռիսկայնության ավելացման և գերշահույթի հաշվին դրանք վճարելու առաջացած մեծ հնարավորությունների պայմաններում մեղքի սկզբունքով կիրառվող անհատական պատասխանատվությունն անբավարար է մեծ չափերի հասնող վնասները հատուցելու համար:

Պատասխանատվության մասին նոր տեսության կողմնակիցների կարծիքով, յուրաքանչյուրը, ով որոշել է զբաղվել այս կամ այն գործունեությամբ, պետք է կրի այդ գործունեությամբ պատճառված վնասները հատուցելու ռիսկը: Այլ կերպ ասած՝ ով շահ է ստանում, կրում է նաև վնասակար հետևանքների ռիսկը: Հետևաբար պատասխանատվության պայման է ոչ թե մեղքը, այլ ռիսկը: Այդ տեսությունը գրականության մեջ ստացավ «ռիսկի տեսություն» անվանումը<sup>2</sup>: Օրինակ, Լ. Ի. Գյուզեն, անդրադառնալով իրավաբանական անձանց (խմբակային

<sup>1</sup> Տե՛ս *Ēōēāēī Ī .Ē. Ēçāðāí í ūā í ðí èçāāāāí èy. Ī ., 1997*, էջ 282:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

կամ կոլեկտիվ սուբյեկտի) պատասխանատվությանը, նշում էր, որ կոլեկտիվ սուբյեկտը ստանում է անմիջական օգուտ և արդարացի է, որ ռիսկը, որին ենթարկում է անհատներին և այլ խմբերի, ընկնի հենց նրա վրա<sup>1</sup>:

Ռիսկի տեսությունը մեծ թվով կողմնակիցներ գտավ և օրենսդրական ամրապնդում ստացավ այն պատճառով, որ գիտատեխնիկական առաջընթացի պարագաներում իրավաբանական անձանց գործունեությանը պատճառված վնասները մեղքի սկզբունքով բաշխելը սկսում էր գործել ի վնաս տուժողների և պարտադրում էր պատասխանատվության օբյեկտիվացման գործընթացի կիրառում:

Օբյեկտիվ պատասխանատվության սկզբունքի վերածնունդի համար լուրջ խթան հանդիսացավ նաև գործարարական գործունեության ռիսկայնության գործոնը: Տնտեսագիտության դասականներն առաջինը հիմնավորեցին, որ գործարարության կարևորագույն հատկանիշներից մեկն այդ գործունեության ռիսկայնությունն է: Գործարարը, ըստ Ադամ Սմիթի, կապիտալի սեփականատեր է, որն առևտրային գաղափարի իրականացմամբ շահույթ ստանալու համար գնում է տնտեսական ռիսկի<sup>2</sup>: Գործարարական նախագծերի իրագործման ժամանակ հաջողության հասնելու համար գործարարը պետք է կարողանա կանխատեսել ռիսկը և վաղօրոք մշակել դրա հետևանքները կանխելու միջոցներ: Եթե չի կարողանում կանխատեսել գործունեության ռիսկայնությունը և չի մշակում դրա հետևանքները կանխելու համարժեք միջոցներ, ապա պետք է կրի նաև պատասխանատվության ռիսկը: Հետևաբար, ռիսկի համար պատասխանատվությունն արդարացի է և օրինաչափ:

Թերևս դրանք էին այն լուրջ պատճառները, որոնք օրենսդիրներին ստիպեցին գույքային պատասխանատվության բնագավառում կատարել լուրջ փոփոխություններ: Այդ փոփոխություններից հիմնականն այն էր, որ մեղավորության սկզբունքով անհատական պատասխանատվության հետ միասին կարևոր նշանակություն տրվեց նաև գործարարական ռիսկի համար պատասխանատվությանը, ինչպես նաև ընդ-

<sup>1</sup> Լ.Ի Գյուլեյի տեսակետը տես *Ölçer A. A. İ i yöde a ddaæai nei -i daai ai e idaaodaa i i noe. A ei.: Aedoaëüü üa i di aéai ü adæaai nei ai i daaa. Äü öne 5. İ ., 2002*, էջ 72:

<sup>2</sup> Ադամ Սմիթի կարծիքը տես *Äai önoa İ .Ä. e äd. İ daai dei ei äoaëüoai. Ö-áái eë. İ ., 2002*, էջ 4:

լայնվեցին անկախ մեղքից պատասխանատվության կիրառման շրջանակները:

Մեղքի սկզբունքով պատասխանատվությանը, ճնշող մեծամասնությամբ, առաջնություն վերապահվեց պարտավորական հարաբերությունների (բացառությամբ գործարարական հարաբերություններում ձևավորվող պարտավորությունների) խախտման հետևանքով առաջացած վնասների հատուցմանը, ինչպես նաև դելիկտային գործողություններով պատճառված վնասների հատուցմանը: Սակայն օրենսդրությունը սկսեց առանձնակի վերաբերմունք ցուցաբերել գործարարական գործունեությանը զբաղվող սուբյեկտների կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման հետևանքով պատճառած վնասների, ինչպես նաև արտադրության (ծառայությունների մատուցման) գործընթացների խաթարման հետևանքով պատճառված վնասների հատուցման կարգավորմանը:

Հասունացած անհրաժեշտության հետևանքով օբյեկտիվ պատասխանատվության սկզբունքը սկսեց ավելի ու ավելի ամրապնդում գտնել իրավական ակտերում: Բայց այս դեպքում դրա համար հիմք էր ծառայում ոչ թե առանց մեղքի պատասխանատվության գաղափարը, այլ գործարարական ռիսկը, այդ պատճառով՝ ռիսկի համար պատասխանատվություն սահմանվում էր հիմնականում այն ոլորտներում, որոնցում գործում էին իրավաբանական անձինք: Օրինակ, Գերմանիայում, գործունեության ռիսկայնության գործոնը հաշվի առնելով, անկախ մեղքից պատասխանատվություն սահմանվեց երկաթուղու, ձեռնարկությունների պատճառած վնասի համար: Ֆրանսիայում 1898թ. ապրիլի 9-ին ընդունվեց «Բանվորների հետ աշխատանքի ժամանակ պատահած դժբախտ դեպքերի մասին» օրենքը, որն ըստ Դյուգե Լեոնի, առաջին օրենքն էր, որը բացահայտ սանկցիավորեց օբյեկտիվ պատասխանատվությունը<sup>1</sup>:

Ռիսկի համար պատասխանատվության սկզբունքն իր օրենսդրական ամրապնդումը ստացավ նաև ընդհանուր իրավունքի համակարգի երկրներում: Ինչպես հայտնի է, ի տարբերություն մայրցամաքային իրավունքի, ընդհանուր իրավունքի համակարգում անգամ պայմանագրերի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում մեղքի ապացուցման անհրաժեշտության հարց չի դրվում: Անգլո-ամերիկյան

<sup>1</sup> Տես Խոխլովա Գ.Վ., նշված աշխատությունը, էջ 72:

պայմանագրային պատասխանատվությունն ունի բացառապես փոխհատուցողական բնույթ և այդ ֆունկցիայի, որպես գործարարական ռիսկի բաշխման եղանակի վրա դարձվում է ավելի մեծ ուշադրություն<sup>1</sup>: Ընդհանուր իրավունքում հիմք է ընդունվում այն սկզբունքը, որ յուրաքանչյուր պայմանագրով պարտապանը երաշխիք է տալիս, եթե նա խախտում է պայմանագիրը, ապա պատասխանատու է այդ խախտմամբ պատճառած վնասի համար՝ անկախ մեղքից: Չնայած դրան, անգլիական օրենսդրությունն օբյեկտիվ պատասխանատվություն է ամրագրում ինքնաթիռի տեղերի համար, երկրի մակերեսին պատճառված վնասի համար (Օրենք ավիացիայի մասին 1949թ.), ատոմային էներգիա արտադրողների և օգտագործողների համար (Օրենք միջուկային սարքերի մասին 1965թ.), անորակ ապրանքներ թողարկողների համար (Օրենք սպառողների պաշտպանության մասին 1987թ.)<sup>2</sup>: Այսինքն, առանձնահատուկ կարգավորում է գործարարական ռիսկի համար կիրառվող պատասխանատվության հարցերը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությանը, ապա հանդիսանալով ԽՍՀՄ քաղաքացիական օրենսդրության գրեթե պատճենահանված օրինակը, քաղաքացիական պատասխանատվության պայման էր համարում բացառապես իրավախախտողի մեղքը: Իսկ այն բացառիկ դեպքերը, երբ նախատեսվում էր իրավախախտողի առանց մեղքի պատասխանատվություն, հիմք չէին տալիս պնդել, որ այդ պատասխանատվությունը պատասխանատվություն է գործարարական ռիսկի համար: Պլանային տնտեսության պայմաններում, երբ տնտեսավարման և՛ շահութաբերությունը, և՛ վնասակարությունն ուղղակի անդրադառնում էին պետական բյուջեի վրա, պետական ունեցվածքով աշխատող առանձին տնտեսավարող սուբյեկտների գործարարական ռիսկն ուշադրության չէր արժանանում: Այդ պատճառով՝ խորհրդային քաղաքացիագետները գործարարական ռիսկի գործոնին և դրա համար գույքային պատասխանատվության կիրառման հարցերին ընդհանրապես չէին անդրադառնում: Թերևս միակ հեղինակը, որը ռիսկի գործոնը, որպես պատասխանատվության հիմք, հպանցիկ շոշափել է, պրոֆեսոր Ս.Ն.Բրատուսն է, որն իր աշխատութ-

<sup>1</sup> Տե՛ս Էի՛ն Թի՛ն Լ.Ն. Ի՛ օճճօնօճի՛ննօ՛ն Ե՛նի՛ն Ի՛ Թ՛+Թ՛նի՛ն Ի՛ Թի՛ն Թի՛ն. Ի՛ ., 1991, 359-365 էջեր:

<sup>2</sup> Տե՛ս Օճճճճճ Է. Էճճ Օ. Դճճճճճ Ե՛ ԹճճճճճճճճՓ՛ն Ի՛ ԹճճճճճճճՓ՛ն Ե՛ ԹճճճճճճճՓ՛ն. Ի՛ ., 2000, էջ 455.

յուններից մեկում նշել է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար հարկադրական միջոցների օգտագործումը բացատրվում է այն հանգամանքով, որ քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ այդ միջոցների կիրառման հիմք է ոչ միայն իրավախախտողի մեղքը, այլև նրա ռիսկը օրինակ, գործարարության ռոբոտում<sup>1</sup>:

Հարկ է նկատել, որ Հայաստանի քաղաքացիական օրենսդրությամբ ոչ միայն «գործարարական ռիսկ», այլև «ռիսկ» եզրույթը օգտագործվում էր շատ սակավ: Առաջին անգամ «ռիսկ» եզրույթն օգտագործվել է Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի 1923թ. քաղաքացիական օրենսգրքում: Այդ օրենսգրքի 233 հոդվածը նախատեսում էր, որ կապալի պայմանագրով նախքան կատարած գործի հանձնումը նյութերի պատահական ոչնչանալու ռիսկը պատկանում է նյութեր հայթայթող կողմին, իսկ 380 հոդվածը սահմանում էր, որ ապահովագրվողին տրված ապահովագրում կամ անդորրագրում պետք է ցույց տրվի այն ռիսկը, որի հանդեպ կնքվում է ապահովագրությունը: Այսինքն, առաջին անգամ «ռիսկ» եզրույթն օգտագործվեց վնաս պատճառելու սպառնալիք պարունակող վտանգի կամ անշահավետ գույքային հետևանքներ կրելու իմաստով: Այդ նույն իմաստով ռիսկ արտահայտությունն օգտագործվում էր նաև Խորհրդային Հայաստանի 1964թ. քաղաքացիական օրենսգրքում, որը նորմեր էր պարունակում միայն պատահական կորստի և պահական փչացման ռիսկի մասին (140,359 հհ.):

Այսինքն, մինչև 1998թ. օրենսգրքի ընդունումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը «ռիսկ» եզրույթն օգտագործում էր սահմանափակ դեպքերում և շատ կոնկրետ իմաստով: Ինչ վերաբերում է «գործարարական ռիսկ» հասկացությանը, ապա այն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքին անհայտ էր, քանի որ այդ օրենսդրությամբ գործարարական հարաբերությունները չէին կարգավորվում: Առաջին անգամ այդ հասկացությունն օգտագործվեց Հայաստանի Հանրապետության 1998թ. քաղաքացիական օրենսգրքում, որում սահմանվեց, որ *չեռնարկադիրական* է

<sup>1</sup> Տե՛ս ԴճճճՓ՛ն Ն.Ի. Թ՛ ծեճե՛+Թ՛նե՛ն Ի՛ ԹճճճՓ՛ն Ե՛ շճճՓ՛ն Ե՛ ., 1976, էջ 45:

համարվում անձի ինքնություն, իր **նիսկով** իրականացվող գործունեությունը<sup>1</sup>:

Ընդ որում, Քաղ. օր.-ը ոչ միայն արժեքավորեց «գործարարական ռիսկ» հասկացությունը, որպես գործարարության իրականացման հիմնական պայմաններից մեկը, այլև նախատեսեց, որ նման ռիսկայնությամբ գործունեություն իրականացնող սուբյեկտը (գործարարը) պատասխանատվություն է կրում անկախ մեղքից (Քաղ. օր. հոդվ. 417, կետ 3): Այսինքն, գործարարների պատասխանատվության հիմք համարեց գործարարական ռիսկը:

Չնայած դրան, ո՛չ Քաղ. օր.-ը, ո՛չ էլ քաղաքացիաիրավական այլ ակտերը չեն բացահայտում ինչպես «ռիսկ», այնպես էլ «գործարարական ռիսկ» հասկացությունը: Ռիսկի հասկացությունը բացահայտված չէ նաև միջազգային իրավական ակտերում: Այդ պատճառով էլ ռիսկի հասկացության բացահայտման փորձեր կատարում են իրավագետները տարբեր տեսակի ռիսկերին (տնտեսական, ֆինանսական, առևտրային, սպահովագրական և այլն) անդրադառնալիս: Օրինակ, Մ.Ս.Գրինբերգը, խոսելով արտադրական ռիսկի մասին, նշում է, որ դա իրավաչափ վտանգավոր գործողություն է, որի ժամանակ պետական կամ հասարակական կազմակերպության ծառայողն, աշխատակիցներին իրավունքով պաշտպանվող շահերը վտանգի ենթարկելով, հասնում է այլ միջոցներով անհասանելի արտադրական հաջողությունների<sup>2</sup>: Ըստ Վ.Ռաստրոլվսկու՝ ռիսկը որոշակի երևույթ է, որի իրականանալու դեպքում առաջանում են վնասակար հետևանքներ<sup>3</sup>: Խորհրդային մեծ հանրագիտարանը ռիսկը բնութագրում է որպես գույքի ոչնչանալու կամ

<sup>1</sup> Քաղ.օր.-ը «գործարարական գործունեություն» արտահայտության փոխարեն օգտագործում է «ձեռնարկատիրական գործունեություն», որը մեր կարծիքով, ճիշտ չէ: Գործարարությունը, ձեռնարկություն ունենալու, իսկ գործարարը ձեռնարկատեր լինելու հետ կապ չունի: Գործարարությունը գործունեության ինքնություն տեսակ է: Տնտեսավարում իրականացնելու գործառույթ, որը կարող է իրականացվել նաև առանց ձեռնարկատիրության: Բացի դրանից, «ձեռնարկատիրություն» տերմինը չի կարող օգտագործվել նաև այն պատճառով, որ ՀՀ քաղ.օր.-ը «ձեռնարկություն» տերմինը ընդհանրապես չի օգտագործում: Այդ պատճառով հետագա շարադրանքում մենք կօգտագործենք «գործարարական ռիսկ» արտահայտությունը:

<sup>2</sup> Տե՛ս *Äðeíááðá Ĩ .Ñ. Ĩ ðíáeáí ú ìðíèçáíãñòááíííáí ðeñeá á óáíeíáííì ìðááá. Ĩ ..1963.*

<sup>3</sup> Տե՛ս *Ðáññóáíãñeéé Á. Áííðíñ íá eì óúãñòááíííì ðeñeá á áðáeááíñeíì ìðááá // Ñíááðñeáý ĩñðeðeý. 1963, No 18, էջ 29:*

փչանալու կամ պարտավորության չիրականանալու (որի համար մասնակիցները պատասխանատվություն չեն կրում) հետևանքով վնասներին առաջանալու հնարավորություն<sup>1</sup>:

Կարելի է վկայակոչել նաև այլ տեսակետներ, բայց մեր կարծիքով նշվածներն էլ բավարար են համոզվելու համար, որ ռիսկի միասնական ըմբռնում գոյություն չունի: Գոյություն չունի նաև գործարարական ռիսկի հասկացություն միասնական ըմբռնում: Օրինակ «Предпринимательство» դասագրքի հեղինակները գտնում են, որ գործարարական ռիսկը, որպես տնտեսագիտական կատեգորիա, իրենից ներկայացնում է իրագործման համար նախատեսված գործարարական գործունեության արդյունքի, անորոշության քանակական (թերևս նաև՝ որակական) արտահայտությունը, որն արտացոլում է գործարարի (ֆիրմայի) գործունեության անհաջողության (կամ հաջողության) աստիճանը վաղօրոք պլանավորված արդյունքների համեմատությամբ<sup>2</sup>: Իրավական տեսանկյունից գործարարական ռիսկին անդրադարձած Օ.Ա.Կարիշևը այն բնութագրում է որպես շուկայում շահույթ կամ վնասներ ստանալու հավանականության անորոշության պայմաններում գործարարի գործունեություն, երբ որոշումներ ընդունողը, ի վիճակի չլինելով միանշանակ կանխատեսել կատանա շահույթ, թե կկրի վնասներ, կանգնում է որոշումների երկրնորելի տարբերակներից մեկն ու մեկի առջև<sup>3</sup>:

Մեր կարծիքով **գործարարական ռիսկը հավելյալ օգուտներ ստանալու կամ վնասներ կրելու հավանականության փոփոխական գործունեության առանձնահատկություններից բխող իրավիճակային անորոշությունն է:**

Ինչպես տեսնում ենք, գործարարական ռիսկի ըմբռնման հարցում ևս կարծիքները միմյանցից տարբերվում են: Դա միանգամայն բնական է, քանի որ «ռիսկ» հասկացությունն օգտագործվում է ինչպես տարբեր գիտությունների կողմից, այնպես էլ նույն գիտության շրջանակներում տարբեր երևույթներ բնութագրելու համար: Այդ առումով բացառություն չէ նաև քաղաքացիական իրավունքը: Այն «ռիսկ» հասկացությունն օգտագործում է գործարարական գործունեության ա-

<sup>1</sup> Տե՛ս *ÁÑÝ, ò. 36, էջ 544:*

<sup>2</sup> Տե՛ս *Èáíóñòá Ĩ .Á., Ĩ ìðóíáá Á.Á., Ñòáðíñòeí Ð.È., Ñeáì áe Á.Á. Ĩ ðááí ðeí eì áòáeúñòáí. Ĩ .., 2002, էջ 433:*

<sup>3</sup> Տե՛ս *Èááúøáá Ĩ .Á. Ĩ ðááí ðeí eì áòáeúñeéé ðeñe: ì ðááí áúá áí ì ðí ñú, էջ 12, www.mirip.ravo.ru diser-index.htm*





Մեր կարծիքով, արված եզրակացությունը բխում է Քաղ. օր. 417 հոդվածի իմաստից: ՀՀ քաղ.օր. 417 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գործարարական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չսպացուցի, որ պատշաճ կատարումը անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Այսինքն, գործարարների պատասխանատվությունը առանձնանում է նրանով, որ նրանց պատասխանատվությունից ազատելու հիմք է համարվում միայն անհաղթահարելի ուժը՝ ֆորս մաժոր (vis major) հանգամանքները: Այդպիսի հանգամանքների թվում դասվում են՝ տարերային աղետները՝ երկրաշարժ, ջրհեղեղ, սելավ, փոթորիկ և այլն, հասարակական երևույթները՝ ռազմական գործողություններ, համաճարակներ, համընդգրկուն գործադուլներ և այլն, ինչպես նաև պետական իրավասու մարմինների արգելող միջոցները՝ կարանտին հայտարարելը, փոխադրումներն արգելելը, որպես միջազգային սանկցիա՝ առևտուրն արգելելը և այլն<sup>1</sup>: Օրենքն արտակարգ և անկանխելի հանգամանքներ չի համարում պարտապանի կոնտրագենտների կողմից պարտականությունների խախտումը, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը (Քաղ. օր. հոդվ. 417)<sup>2</sup>:

Գործարարների համար անկախ մեղքից գործարարական ռիսկի համար պատասխանատվություն սահմանելը, Մայրցամաքային Եվրոպայի երկրների օրենսդրության առանձնահատկությունն է: Դրանում տրամաբանական ավարտ է ստացել պարտապանին միայն պարտավորության կատարման բացարձակ անհնարինության դեպքում պատասխանատվությունից ազատելու գաղափարը<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս *Επίλοιπάδες ε άδαεάιπέίί ο είάαεήο Δίηηέεήείε Οάάαδάοεε. xάηδε ίάδαιε (ίίηόηάεί ύε). Ι ίά δαά. Ι.Ι .Ναάεείάα. Ι ., 1998*, էջ 654:

<sup>2</sup> Չնայած կատարված փոփոխությանը՝ որոշ դատարաններ գործարարական գործունեություն իրականացնող անձանց միջև գործերը քննելիս նախկին ինտերգիայով անդրադառնում են նաև պատասխանողի մեղավորության հիմնավորմանը, երբ քննվող գործով դա անհրաժեշտ չէ: (Տե՛ս օրինակ «Ինտերգանկ» ՓԲԸ-ի և «Հայկասպ» բանկ ՍՊԸ-ի գումարի բռնագանձման պահանջի մասին վճիռը (Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, էջ 71):

<sup>3</sup> Տե՛ս Բրագինսկի Մ.Ի., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 609:

Այսինքն, անձը պարտավոր է սպացուցել, որ պարտավորությունը չի կատարել բացառապես անհաղթահարելի ուժի հետևանքով: Եթե անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած հետևանքները հնարավոր են դարձել նաև պարտապանի կողմից համապատասխան շրջահայացություն և հոգացություն չցուցաբերելու հետևանքով, սապ պարտապանը պատասխանատվությունից չի ազատվի<sup>1</sup>:

Այլ խոսքով, գործարարները պարտավորությունների չկատարման և ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից կարող են ազատվել միայն այն դեպքում, երբ կասպացուցեն, որ պարտավորությունը չի կատարվել իրենցից չկախված այնպիսի արտաքին հանգամանքների ուժով, որոնք առաջացրել են պարտավորության կատարման բացարձակ անհնարինություն:

Մինչև նոր Քաղաքացիական օրենսգրքի ընդունումը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, մեղքը համարելով քաղաքացիաիրավական պատասխանատվության ընդհանուր պայման, նախատեսում էր նաև այն դեպքերը (պատասխանատվություն երրորդ անձանց գործողությունների համար, առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար, պատահարի հետևանքով գույքի ոչնչացման դեպքում և այլն), երբ իրավահարաբերության մասնակիցները կրում էին առանց մեղքի պատասխանատվություն: Նոր օրենսդրությունը, պահպանելով այդ ամենը, քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցող գործարարների համար սահմանում է պատասխանատվության նոր, մինչև այդ հանրապետության օրենսդրությանն անհայտ (ավելի ճիշտ չօգտագործվող) սկզբունք՝ պատասխանատվություն անկախ իրավախախտողի մեղավորությունից: Ընդ որում, այդ սկզբունքը կիրառելի է համարում միայն գործարարների կամ նրանց մասնակցությամբ գործարարական հարաբերությունների իրականացման հետևանքով պատճառված անձնական և գույքային վնասների փոխհատուցման համար, անկախ նրանից՝ դրանք պայմանագրային, թե դեղիկտային պարտականությունների խախտման հետևանք են: ՀՀ քաղ. օր. 417 հոդվածի 3-րդ մասի ձևակերպումներն ունեն այնպիսի ուղղվածություն, որ հիմք են տալիս եզրակացնելու, որ այդ հոդվածով սահմանված պատասխանատվության պայմաններն ունեն առանձնահատուկ բնույթ և կիրառություն: Այդ հոդվածը գործա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

րարներին պատասխանատվությունից ազատելու պայման է համարում ոչ թե նրանց վերաբերմունքը (մեղքը կամ դրա բացակայությունը) պարտականությունների կատարման նկատմամբ, այլ անիմաստ է համարում և արգելում է քննարկել պարտապանի կողմից պարտավորության պատշաճ կատարման համար ձեռնարկված միջոցների՝ պարտապանի անմեղության հարցը: Մեղքի սկզբունքից նմանօրինակ ընկրկումն արդարացված է երկու պատճառով: Առաջին, գործարարական ռիսկի համար պատասխանատվությունը, ըստ օրենսդրի մտահղացման, կիրառվում է՝ անկախ նրանից՝ պարտավորությունը չկատարողը կամ ոչ պատշաճ կատարողը մեղավոր է, թե ոչ: Երկրորդ, օրենսդիրը գտնում է, որ շահույթ ստանալու նպատակով գործարարական գործունեություն իրականացնողն իր վրա պետք է վերցնի այդպիսի գործունեության բացասական հետևանքների ռիսկը:

Բերված պատճառները ցույց են տալիս, որ գործարարական ռիսկի համար պատասխանատվությունն ամենևին էլ առանց մեղքի պատասխանատվություն չէ, այն կարող է կիրառվել ինչպես մեղքի բացակայության, այնպես էլ մեղավորության պարագաներում: Մեր կարծիքով, առավել հաճախ գործարարական ռիսկի համար պատասխանատվությունը հետևանք է ինչ-որ անձի (անձանց) մեղավոր գործունեության: Բայց այդ հարցն ընդհանրապես քննարկման առարկա չի դառնում, քանի որ օրենսդիրը գործարարական ռիսկի համար պատասխանատվության պայման է համարում որոշակի գործունեությամբ պատճառված վնասի փաստը: Գործարարական ռիսկի համար պատասխանատվության հարցն օրենսդիրն արգելում է քննարկել նաև այն պատճառով, որ այդ պատասխանատվության հիմնական նպատակն է համարում վնաս կրած անձանց վնասները արագ և լիարժեք փոխհատուցելը: Դրանք են այն հիմնական պատճառները, որ օրենսդիրը չի պարտավորեցնում պարզել այն աշխատակիցների մեղքը, որոնց սխալի կամ թերացումների հետևանքով պատճառվել է վնասը, ինչպես նաև այն կազմակերպատեխնիկական սխալները, որոնք հանդիսացել են աշխատակիցների թերացումների պատճառ:

Գործարարական գործունեություն հաջողության գրավականներից ամենակարևորը ռիսկերի գնահատման և կառավարման արդյունավետ ռազմավարության ընտրությունն է: Գործարարի հիմնական պարտականությունն է՝ ընտրել այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն կտա ստանալ բավարար տեղեկատվություն, կանխատեսել

գնահատել և կառավարել կազմակերպության կողմից իրականացվող գործունեության համար բնորոշ ռիսկերի ամբողջ սպեկտրը և չեզոքացնել կամ նվազեցնել դրանց ազդեցությունը կազմակերպության գործունեության վրա:

Գործարարական գործունեության իրականացնելիս, եթե պարբերաբար չիրականացվեն նախազգուշական անհրաժեշտ միջոցներ, եթե չցուցաբերվի անհրաժեշտ հոգացություն և շրջահայացություն, վնասի առաջացումը կդառնա անխուսափելի: Բանն այն է, որ ռիսկերը հաստատուն չեն: Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի ռիսկային հակվածության աստիճանը՝ կախված տնտեսական, քաղաքական, օրենսդրական, փոփոխություններից, շուկայի տատանումներից, անընդհատ փոփոխվում է: Հետևաբար կազմակերպության ղեկավարությունը, ինչու չէ, նաև անհատ գործարարը, պարտավոր են անընդհատ իրականացնել ռիսկի վրա ազդող գործոնների և միջավայրի ուսումնասիրություն ու մոնիտորինգ: Նման վերաբերմունք չցուցաբերելու հանգամանքն արդեն իսկ (մեղավորության կանխավարկածի պայմաններում) հանդիսանում է գործարարի մեղավորությունը ենթադրելու և նրա նկատմամբ սանկցիաներ կիրառելու հիմք: Այս դեպքում, մեր կարծիքով, տեղի ունի մեղքի վերափոխում, այն հանդես է գալիս «դիմազրկված տեսքով» ունի «անդեմ» բնույթ և արտահայտվում է նրանում, որ գործարարությամբ զբաղվող սուբյեկտը չի ապահովում կազմակերպատեխնիկական այնպիսի կատարելություն և հուսալիություն, որն անհրաժեշտ է գործունեության խաթարումների հետևանքով առաջացող վնասներից խուսափելու համար<sup>1</sup>:

Շուկայական հարաբերությունների պայմաններում գործարարը, որպեսզի ապահովի իր բիզնեսի անվտանգությունը սոցիալական և բնական երևույթներից, պարտավոր է իրականացնել գործունեության ռիսկայնությունը նվազագույնի հասցնող միջոցառումներ: Եթե նա չի իրականացնում մեծ միջոցառումներ կամ իրականացնում է անբավարար չափով, ապա մեղքի բացակայության մասին խոսք գնալ չի կարող:

Մեղքի առկայության կամ բացակայության հարցերը քննարկման առարկա չեն դառնում և ապացուցողական նշանակություն չեն ստա-

<sup>1</sup> Տե՛ս *Åaðéaæéí Áeðíeüä. Í á íðáaðñðááíííñðè íí äðáæááíñèíí ó íðááð. Í ., 1978, էջ 221:*

նում անգամ այն դեպքերում, երբ պարտավորությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած գործարարները, ի արդարացումն իրենց կողմից թույլ տրված խախտումների, վկայակոչում են իրենց կոնտրագենտների անբարեխղճությունը կամ պարտավորությունների կատարման ընթացքում թույլ տված խախտումները:

Օրինակ, «Դավ-Գար» ՍՊԸ-ի և «Յունիթեքս-Ափերլ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերով «Դավ-Գար» ՍՊԸ-ն պարտավորվել է կարել և «Յունիթեքս-Ափերլ» ՍՊԸ-ին հանձնել կանացի կիսակարճ անդրավարտիքներ: Պայմանագրի 7-րդ կետի համաձայն, աշխատանքների դիմաց վճարումը պետք է կատարվեր պատվիրատուին պատրաստի արտադրանքի հանձնման օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումն ուշացնելու համար պայմանագրով նախատեսվել է տույժ՝ առաքված պատրաստի արտադրանքի գումարի 0.1 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր օրվա համար:

«Դավ-Գար» ՍՊԸ-ն կատարել է իր պարտականությունները: Մինչդեռ «Յունիթեքս Ափերլ» ՍՊԸ-ն լրիվ չի վճարել արտադրանքի դիմաց, պարտք մնալով 15.989.987 դրամ և վճարումն ուշացնելու համար 9.144.654 դրամ տույժի գումարը: «Յունիթեքս-Ափերլ» ՍՊԸ-ն, ընդունելով հիմնական պարտքը, դատարանից խնդրում էր մերժել տույժի մասով հայցը, նկատի ունենալով, որ հայցվորը չի պահպանել ապրանքի առաքման գրաֆիկները, և ինքը ստիպված է եղել իր միջոցների հաշվին կատարել թվով 21 ավիափոխադրում, որի հետևանքով կրել է խոշոր չափերի նյութական վնաս:

Դատարանը, հաստատված համարելով, որ պատասխանողը վճարումները կատարել է պայմանագրի 7.1 կետով նախատեսված ժամկետների խախտմամբ և մատնանշելով, որ համաձայն ՀՀ քաղ.օր. 417 հոդվածի 3-րդ մասի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհատափաստի ուժի հետևանքով, վճռել է «Յունիթեքս-Ափերլ» ՍՊԸ-ից բռնագանձել ինչպես հիմնական պարտքը, այնպես էլ տույժի գումարը՝ 50 տոկոսի չափով<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հայաստանի տնտեսական դատարանի վճիռների ժողովածու, Եր., «Նոյան տապան» հրատ., 2002, 331-333 էջեր:

Բերված օրինակից հետևում է, որ դատարանը պատասխանողի մեղավորության հարցը քննարկման առարկա չի դարձրել, նկատի ունենալով, որ ըստ Քաղ. օր. 417 հոդվածի, պատասխանատվությունը բացառող հանգամանքներ չեն պարտավորությունների խախտումը կոնտրագենտների կողմից, պարտապանի մոտ անհրաժեշտ միջոցների բացակայությունը և այլն: Իսկ տույժի գումարը 50 տոկոս պակասեցնելը մասն պարագաներում, Քաղ. օր. 372 հոդվածի համաձայն, դատարանի իրավունքն էր:

Շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ քաղ.օր. 417 հոդվածը նախատեսում է ոչ թե առանց մեղքի պատասխանատվություն, այլ պատասխանատվություն՝ անկախ մեղքից, որի պարագայում առաջնությունը վերապահվում է ոչ թե մեղավորության բացահայտմանը, այլ պատճառով վնասի պարտադիր հատուցման սկզբունքի կիրառմանը: Ընդ որում, Քաղ. օր. 417 հոդվածի 3-րդ մասի նորմը դիսպոզիտիվ է և, ինչպես ցանկացած դիսպոզիտիվ նորմ, թույլատրում է սահմանված կանոնը կիրառել այն դեպքում, երբ օրենքը կամ իրավահարաբերության մասնակիցներն այլ կարգ կամ այլ կանոն չեն նախատեսի: Քանի որ Քաղ.օր. 417 հոդվածը թույլ է տալիս պայմանագրով նախատեսել այլ բան, ուստի դրանից հետևում է, որ կողմերը պայմանագրում կարող են նախատեսել պատասխանատվության ենթարկելու կամ պատասխանատվությունից ազատելու մասն այլ կարգ և հիմքեր<sup>1</sup>:

Նման պայմաններում գործարարներին անհրաժեշտ է լուրջ հոգացություն ցուցաբերել պարտավորությունների չկատարման համար պատասխանատվության հիմքերը ճիշտ սահմանելու նկատմամբ, այլապես կարող են պատասխանատվության ենթարկվել անգամ մեղքի ակնհայտ բացակայության դեպքում<sup>2</sup>: Օրինակ՝ Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանի քննած գործերի վերլուծությունը ցույց է տվել, որ ֆորս մաժոր հանգամանքների փոփոխումը, ոչ հստակ ձևակերպումները, պատասխանատվությունից ազատելու հանգամանքների կոնկրետ ցանկ սահմանելը երբեմն առաջացնում է անցանկալի հետևանքներ, քանի որ արբիտրաժը որոշում է կայացնում պարտապանի հսկողության ոլորտից դուրս գտնվող հանգամանքների

<sup>1</sup> Դատական պրակտիկան վկայում է, որ պայմանագրեր կնքելիս կողմերը, որպես պատասխանատվությունից ազատելու հիմքեր, բացի ֆորս մաժոր հանգամանքներից, նախատեսում են նաև այլ հանգամանքներ:

<sup>2</sup> Տե՛ս Բրազիլիայի Մ.Ի., Վիտորյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը էջ 608:

հետևանքով առաջացած վնասները փոխհատուցելու մասին, եթե այդ հանգամանքները պայմանագրում նախատեսված ցանկում նշված չեն<sup>1</sup>: Այդ պատճառով պայմանագրում, օրենքից տարբերվող, պատասխանատվության պայմաններ սահմանելիս չի կարելի պարզապես մատնանշել քաղ.օր. 417 հոդվածի 4-րդ մասը չկիրառելու մասին:

Նման համաձայնություն կայացնելու դեպքում պարտավորությունը չկատարող կամ ոչ պատշաճ կատարող կողմը պատասխանատվություն կկրի անգամ անհաղթահարելի ուժի հետևանքով պատասխանատվությունը չկատարելու դեպքում: Այլ խոսքով դա կնշանակի պատավորության խախտում<sup>2</sup>:

Ճիշտ չէ նաև պայմանագրում այն հանգամանքների թվարկումը, որոնց առկայությունն ազատում է պատասխանատվությունից: Այդ հանգամանքներն այնքան բազմաթիվ են, որ սպառիչ ցանկ կազմելը դժվարին խնդիր է:

Պարտավորությունների խախտման համար պատասխանատվության այլ կարգ սահմանելու ամենաճիշտ միջոցն այն է, որ ավելորդ բարդություններից խուսափելու համար պայմանագրում նշեն, որ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կողմերը պատասխանատվություն կկրեն մեղքի առկայության դեպքում:

Այսպիսով, պարտավորական հարաբերության կողմերն իրավասու են պայմանագրում նախատեսելու պարտապանին պատասխանատվությունից ազատելու լրացուցիչ պայմաններ, փոփոխել պատասխանատվության պայմանները, նախատեսել պատասխանատվության ծավալը փոփոխելու պայմաններ, բայց իրավունք չունեն պարտավորությունը խախտած պարտապանին ազատել վնասները հատուցելու պարտականությունից (Քաղ.օր. 409 հոդվ., մաս 1), ինչպես նաև վերացնել կամ սահմանափակել պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար պատասխանատվությունը (Քաղ.օր. 417 հոդվ., մաս 4):

Գործարարական ռիսկի համար կիրառվող պատասխանատվության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ առաջացած վնասների փոխհատուցումն ապահովելու նպատակով լայնորեն կիրառվում է ապահովագրություն: Ինչպես արդեն նշել ենք, գործարարական ռիս-

կի համար պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի կիրառման հիմնական նպատակը վնաս կրած անձանց կորուստների լիարժեք փոխհատուցումն է: Քանի որ գործարարներն ավելի վճարունակ են, քան նրանց այն աշխատակիցները, որոնց սխալների կամ թերացումների հետևանքով պատճառվել է վնասը, ուստի օրենսդիրը հրաժարվում է մեղավորության սկզբունքով կիրառվող անհատական պատասխանատվությունից և պատասխանատվության սուբյեկտ է ճանաչում իրավաբանական անձին: Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ շատ դեպքերում կարող են առաջանալ այնպիսի վնասներ, որոնց հատուցումը վեր է անգամ իրավաբանական անձի ուժերից: Այդ պատճառով ռիսկային գործունեություն իրականացնելիս ինչպես սեփական շահերի, այնպես էլ առաջացած վնասների իրական փոխհատուցումն ապահովելու նպատակով գործարարները սկսեցին օգտագործել պատասխանատվության ապահովագրությունը: Ընդ որում, պրակտիկայի պահանջներից ելնելով, օրենսդրությամբ նախատեսվեց «վնաս պատճառելու համար պատասխանատվության» (Քաղ. օր. 987 հոդվ.), «Պայմանագրով պատասխանատվության» (Քաղ. օր. 988 հոդվ.), «Գործարարական ռիսկի» (Քաղ.օր. 989 հոդվ.) ապահովագրություն: Նշված ինստիտուտների նախատեսման հետևանքով փոխվեց ոչ միայն քաղաքացիաիրավական պատասխանատվության, այլև ապահովագրության ինստիտուտի բնույթը: Ավանդաբար կիրառվող գույքային և անձնական ապահովագրության պայմանագրերի հետ միասին սկսեցին կնքվել նաև տարբեր ռիսկերի հետևանքով առաջացող պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր: Ի տարբերություն անձնական և գույքային ապահովագրությունից, պատասխանատվության ռիսկի ապահովագրությունը վնաս պատճառողին պատասխանատվությունից ազատելու նպատակին չի ծառայում: Այդ ապահովագրությամբ ապահովվում է ապահովագրական հարաբերությունների մասնակից շահնդիսացող անձանց կրած վնասների փոխհատուցումը: Ընդ որում, եթե ավանդական ապահովագրության տեսակները (գույքային և անձնական) կոչված են ապահովելու վնասի հատուցումն այն դեպքերում, երբ տեղի է ունենում ապահովագրական դեպք, ապա պատասխանատվության ռիսկի ապահովագրությունը որևէ կապ չունի ապահովագրական դեպքերի հետ: Այդ ապահովագրությամբ ապահովագրվում է ապահովագրողի կողմից այլ անձանց վնաս պատճառելու ռիսկը, պայմանագիրը խախտելու ռիսկը, գործարարական

<sup>1</sup> Տե՛ս *Θίςαίάαδᾶ Ἰ Ἄ., Ἐπίδδαῶθ ἰ ἀαῶίᾶδῖᾶίῆ ἑῶίῆ ἰδῖᾶᾶῆ. Ἴῖᾶδᾶί ᾶίᾶῖ ἰδᾶῆῆᾶ ᾶῆῆῖ-ᾶίῆῖ. Ḑᾶḑᾶῶᾶί ῆᾶ Ἴδῖᾶ. Ἰ ., 1996, էջ 8:*

<sup>2</sup> Տե՛ս Բրազիսկի Մ.Բ., Վիտրյանսկի Վ.Վ., նշված աշխատությունը, էջ 611:

ռիսկը: Այս ապահովագրությունը վնաս պատճառողին պատասխանատվությունից ազատելու նպատակին չի ծառայում, այլ ապահովում է ապահովագրվածի կողմից այլ անձանց պատճառած վնասների հատուցումը:

Գործարարական ռիսկի ապահովագրությունը, ըստ էության, փոխում է պատասխանատվության բնույթը<sup>1</sup>: Քաղաքացիաիրավական պատասխանատվության փոխհատուցողական գործառույթն ավելի ու ավելի է հեռանում մեղքի սկզբունքով պատասխանատվության կադապարից, վերածելով տուժողներին սովորական ռիսկերից պաշտպանելու միջոցի:

Փոխվում է նաև այդ պատասխանատվության նախականիսիչ գործառույթը: Այդ պատասխանատվությունն ազդում է ոչ միայն մարդկանց վարքագծի, նրանց փութաջանության, շրջահայացության վրա, այլև ապահովում է սարքերի, հմտությունների, կազմակերպատման միջոցառումների նկատմամբ անհրաժեշտ վերաբերմունքի ձևավորումը:

Գործարարական ռիսկի ապահովագրության հիմնական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ապահովագրական պայմանագրի կնքմամբ գործարարն ապահովագրական կազմակերպությանն է փոխանցում իր պատասխանատվության ռիսկը, դրա փոխարեն պարտավորվելով ապահովագրողին հատուցել որոշակի դրամական գումար (ապահովագրական պարգև): Շնորհիվ դրա, ապահովագրվողը դառնում է միջանկյալ օղակ և գործնականում ազատվում է իր գործողությունների համար պատասխանատվությունից, իսկ ապահովագրող կազմակերպությունը «պատասխանատվություն» է կրում անկախ նրանից՝ տուժողներին վնասը պատճառվել է մեղավորությամբ, թե առանց մեղքի: Գործարարական ռիսկի ապահովագրմամբ՝ գործարարը հնարավորություն է ստանում «ազատվել պատասխանատվությունից», իսկ տուժողները, հանձնին ապահովագրական կազմակերպության, ձեռք են բերում ավելի վճարունակ և հուսալի պատասխանող:

Գործարարական ռիսկի ապահովագրության դեպքում վնասների հատուցման հուսալիությունն ավելանում է այն պատճառով, որ ապահովագրությունն ինքնին երաշխիք է այն բանի, որ առաջացած կորուստների ծավալը որոշելուց հետո տուժողների կրած վնասները ա-

ռանց քաշքշուկի, արագ կբավարարվեն: Բացի դրանից, ապահովագրական ընկերությունը վնասները հատուցում է ոչ թե իր միջոցներից, այլ հատկապես այդ նպատակի համար ստեղծված հիմնադրամից: Ընդ որում, ապահովագրական կազմակերպության համար տուժողներին վնասների գումարները հանձնելը առանձնակի բարդություն չի ներկայացնում և նրանք այդ գումարները ստանում են համարյա մեխանիկորեն: Ապահովագրողները, օգտագործելով մեծ թվերի օրենքը և վիճակագրական տվյալները, սահմանում են ամենամյա ապահովագրական վճարների այնպիսի չափ, որ կուտակված գումարները ծածկեն տուժողներին փոխհատուցելու հետ կապված ծախսերը: Բացի դրանից, տուժողների կրած վնասների փոխհատուցումը ապահովագրական ընկերության աշխատանքի հիմնական մասն է, որի արդյունքում կազմակերպությունն իր մոտ կուտակված միջոցները օգտագործում է իրենց նպատակային նշանակությամբ, կատարելով այն խնդիրները, որոնք կազմում են կազմակերպության բնականոն աշխատանքը:

Հետևաբար, ընդհանուր անվտանգության շահերից ելնելով, պատասխանատվության ապահովագրությունը տուժողների համար, կարծես թե, կատարում է հասարակական ծառայություն<sup>1</sup>: Այդ պատճառով՝ տուժողների համար գործարարական ռիսկի ապահովագրությունը պարզեցված կարգով փոխհատուցում ստանալու բացարձակ երաշխիք է: Ինչքան էլ մեծ լինի վնասի գումարը, տուժողը կստանա փոխհատուցում, քանի որ ապահովագրողը վճարունակ է<sup>2</sup>: Ինչ վերաբերում է այն անձանց, ովքեր վնաս են պատճառում, ապա վնասների փոխհատուցման ծախսերը ապահովագրության միջոցով սահմանափակվում են, վաղօրոք սահմանված գումարով (ապահովագրական վճարով): Իր պատասխանատվությունն ապահովագրած գործարարը հնարավորություն է ստանում ապահովագրական ծախսերը՝ մտցնել արտադրության ծախսերի մեջ և դրանով իսկ դրանք դնել ապրանքները կամ ծառայությունները սպառողների վրա: Այսինքն, տեղի է ունենում «ռիսկի սոցիալիզացիա»՝ վնասների բաշխում բազմաթիվ անձանց միջև<sup>3</sup>, որի արդյունքում ապահովագրության համար կատարած ծախսերը կրում են արտադրանքն սպառողները կամ ծառայություններից օգտվողները:

<sup>1</sup> Տե՛ս Սավաոյե Ռ., նշված աշխատությունը, էջ 327:

<sup>2</sup> Տե՛ս Կուլագին Մ.Ի., նշված աշխատությունը, էջ 283:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>1</sup> Տե՛ս Νῆααδουά Δ. Οάί δέϑ ἰ άϑϑαδάεϑϑῶ. Ἰ ., 1972, էջ 326:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ներկայումս քաղաքացիաիրավական պատասխանատվության ապահովագրության կիրառությունն անընդհատ ընդլայնվում է: Եթե նախկինում գույքային պատասխանատվության ապահովագրությունը կիրառվում էր տնտեսական հարաբերությունների առանձին ոլորտներում (ավտոմեքենայով պատճառված վնասի ապահովագրություն, միջուկային միջադեպի հետևանքով պատճառված վնասի պարտադիր ապահովագրություն և այլն), ապա գործող օրենսդրությամբ նախատեսված են ընդհանուր նորմեր, որոնք քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտներին հնարավորություն են տալիս ապահովագրել ցանկացած ռիսկ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը իրավունք է վերապահում ապահովագրել այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու հետևանքով ծագող պատասխանատվության ռիսկը (Քաղ. օր. հոդվ. 987), պայմանագրի խախտման համար պատասխանատվության ռիսկը (հոդվ. 988), ինչպես նաև գործարարական ռիսկը (հոդվ. 989): Առաջին դեպքում կարող է ապահովագրվել հենց ապահովագրողի կամ այլ անձի պատասխանատվության ռիսկը: Երկրորդ դեպքում կարող է ապահովագրվել միայն ապահովագրողի պատասխանատվության ռիսկը՝ հօգուտ այն կողմի (շահառուի), որի առջև պայմանագրի պայմաններով ապահովագրվողը պետք է համապատասխան պատասխանատվություն կրի, իսկ երկրորդ դեպքում կարող է ապահովագրվել միայն ապահովագրվողի գործարարական ռիսկը և միայն նրա օգտին: Հարկ է նկատել, որ չնայած ամրագրված հիշյալ նորմերին, Քաղ. օր.-ը պարտավորեցնում է առանձին հարաբերություններ կարգավորող իրավական ակտերով նախատեսել այլ անձանց կյանքի, առողջության կամ գույքի, կամ այլ անձանց հանդեպ քաղաքացիաիրավական պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (Քաղ. օր. հոդվ. 983, մաս 3): Քաղաքացիաիրավական պատասխանատվության ապահովագրության լայն տարածումը նախ և առաջ պետք է բացատրել այն իրողությամբ, որ ապահովագրական մեխանիզմի օգտագործումն ունի որոշակի առավելություններ, որի հետևանքով շահեկանորեն տարբերվում է չապահովագրված քաղաքացիաիրավական պատասխանատվությունից: Այդ առավելություններից ամենահիմնականը, ինչպես ցույց տրվեց վերևում, վնասների արագ և լիարժեք փոխհատուցումն է: Այդ պատճառով էլ օրենսդիրը գործարարական ռիսկի համար պատասխանատվության շրջանակների

հետ միասին նախատեսում է նաև պարտադիր ապահովագրություն այն դեպքերում, երբ ռիսկային գործունեությամբ պատճառվող վնասների առաջանալու հավանականությունն առավել մեծ է (օրինակ, օդային փոխադրումների, միջուկային սարքերի խաթարման դեպքում):

Քաղաքացիաիրավական պատասխանատվության ապահովագրության կիրառման շրջանակների ընդլայնումն արևմտյան շատ իրավաբաններ համարեցին պատասխանատվության մայրամուտի վկայություն: Քաղաքացիաիրավական պատասխանատվության ապահովագրության կիրառմամբ, ըստ Ռենե Սավատյեի, քաղաքացիաիրավական պատասխանատվության նախկին հիմնավորվածությունն անհետանում է: Պատասխանատվությունը մեղավորի համար կորցնում է իր կարգապահեցնող և բարոյականացնող բնույթը<sup>1</sup>: Ֆրանսիացի մեկ այլ հեղինակի՝ Ժորժ Ռեպերի կարծիքով, որը վկայակոչում է Մ.Ի. Կուլագինը քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունը ստեղծում է վտանգավոր անպատասխանատվություն<sup>2</sup>: Ինչպես նշում է Մ.Ի. Կուլագինը, արտասահմանյան հետազոտողները վաղուց ուշադրություն են դարձրել այն բանի վրա, որ ապահովագրությամբ պատասխանատվության դուրս մղելը ոչ թե ուժեղացնում, այլ թուլացնում է տուժողների պաշտպանվածությունը, քանի որ, նկատի ունենալով պատասխանատվության ապահովագրությունը՝ անձն իրեն պահում է ավելի անհոգ, անպատասխանատու ձևով, հետևաբար նաև՝ սոցիալապես ավելի վտանգավոր<sup>3</sup>:

Սեզ թվում է, որ նման կարծիքները հիմնավորված չեն: Քաղաքացիաիրավական պատասխանատվության ապահովագրությունը պատասխանատվության ինստիտուտին չի փոխարինում, այն պատասխանատվությունը, ընդ որում, մեղքի սկզբունքի հաշվառմամբ, փոխադրում է մեկ այլ հարթություն՝ ապահովագրողի դեմ ապահովագրվածի պատասխանատվության հարթություն:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության ապահովագրման հետևանքով տեղի է ունենում պատասխանատվության դեզինտեգրացիա: Դադարում է վնաս պատճառողի և տուժողի միջև իրավախախտման փաստի ուժով առաջացող կապը: Դրա փոխարեն հարաբերություններ են առաջանում տուժողի և ապահովագրողի միջև: Եթե

<sup>1</sup> Տե՛ս Նաաձուձա Թ. Օձի ծեյ ի ձյճձձձեւնձձ. Ի ., 1972, էջ 326:

<sup>2</sup> Տե՛ս Կուլագին Մ.Ի., նշված աշխատությունը, էջ 284:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

անմիջական իրավախախտողին պատասխանատվության ենթարկելիս լուծվում են թե՛ իրավախախտողին կորուստներ պատճառելու (պատժելու), թե՛ իրավախախտումները կանխարգելելու խնդիրները, ապա պատասխանատվության ապահովագրվածության պարագայում, քանի որ առաջին պլան է մղվում տուժողների վնասների փոխհատուցումը, այդ խնդիրները ընդհանրապես անտեսվում կամ «լուծվում» են այլ իրավական մեխանիզմների, ինստիտուտների (ռեգրեսային պահանջների) օժանդակությամբ, այդ պատճառով պատասխանատվության ապահովագրությունը լրացվում է ապահովագրողի կողմից տուժողին վճարածը ռեգրեսային հայցով գանձելու հնարավորությամբ:

Բացի դրանից, հարկ է նկատել, որ գործարարական ռիսկի համար պատասխանատվության ընդհանուր կանոնից Քաղ. օր.-ը նախատեսում է բազմաթիվ բացառություններ, դրանով իսկ էլ ավելի սահմանափակելով դրա կիրառման ոլորտը: Օրինակ, էներգամատակարարման պայմանագրով, եթե օրենքի կամ այլ իրավական ակտի հիման վրա իրականացվող էներգիայի ռեժիմի կարգավորման արդյունքում աբոնենտին էներգիա մատակարարելիս թույլ է տրվել ընդհատում, էներգամատակարարող կազմակերպությունը պատասխանատվություն է կրում միայն մեղքի առկայության դեպքում (հոդվ. 547), գույքի անհատույց օգտագործման պայմանագրով գույքը հանձնողը պատասխանատվություն է կրում գույքի այն թերությունների համար, որոնք նա դիտավորությամբ չի նշել պայմանագիրը կնքելիս (հոդվ. 691), գիտահետազոտական, փորձարարական կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրի խախտման համար կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով (հոդվ. 775), փոխադրողը բեռի կամ ուղեբեռի կորստի, պակասորդի, վնասվածքի համար պատասխանատվություն է կրում, եթե չի ապացուցում, որ դրանք տեղի են ունեցել այնպիսի հանգամանքներում, որոնք փոխադրողը չէր կարող կանխել, և որոնց վերացնելն իրենից կախված չէր (հոդվ. 866) և այլն:

Վերջապես, գործարարական ռիսկի համար պատասխանատվություն նախատեսող նորմը դիսպոզիտիվ է, պայմանագրի մասնակիցներին իրավունք է վերապահում կայացնել այլ համաձայնություն: Այսինքն, գործարարներին իրավունք է վերապահում պայմանագրեր կնքելիս լուրջ վերաբերմունք ցուցաբերել պատասխանատվության

պայմանների համաձայնեցման նկատմամբ, նախատեսել պատասխանատվության, ներառյալ՝ պատասխանատվությունից ազատող պայմաններ: Հակառակ դեպքում, կարող են առաջանալ իրավիճակներ, երբ պատասխանատվություն կառաջանա անգամ մեղքի ակնհայտ բացակայության պայմաններում:

Վերջապես, ամենակարևոր հանգամանքը, որն անտեսում են ապահովագրության կիրառմամբ՝ քաղաքացիաիրավական պատասխանատվության թուլանալու և անպատասխանատվություն առաջանալու մասին խոսող հեղինակները, այն է, որ պատասխանատվության կիրառման կարգի և մեխանիզմների ցանկացած փոփոխություն անկարող է փոփոխել քաղաքացիաիրավական պատասխանատվության կանխարգելիչ, փոխհատուցողական և ճնշամիջոցի միասնական ու միմյանց պայմանավորող գործառույթները: Նման փոփոխություն հնարավոր չէ այն պարզ պատճառով, որ մասնավոր հարաբերություններում յուրաքանչյուր սուբյեկտ իրավահարաբերությունների մեջ է մտնում որոշակի իրավունքներ կամ շահ ձեռք բերելու ակնկալիքով և գիտակցում է, որ նպատակին կարող է հասնել միայն պարտականությունները կատարելու պարագայում: Հետևաբար, իրավահարաբերության ցանկացած մասնակից օգտագործում է իր բոլոր հնարավորությունները պարտականությունների պատշաճ կատարմամբ այն արդյունքին հասնելու համար, որի համար իր ազատ կամահայտնությամբ ստանձնել է պարտականություններ: Եվ եթե ինչ-ինչ պատճառներով՝ պարտականությունները չի կատարում, անկախ պատասխանատվության կիրառման ձևից և եղանակից, այս կամ այն ձևով կրում է առաջացող անշահավետ հետևանքների ծանրությունը:

Բարսեղյան Տարիել Կարապետի

**ԳՈՒՅՔԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ  
ԱՐԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

**Առնայի Օձձաե Էձձաիձձիձե՛**

**ՄԱԻ ԷՔ ՕԷՅ Է ԱԷՃՕԱԷՄԻ ՄԱ Ի ԾԻ ԱԷԱԻ Մ  
ԷԻ ՆՃԷՃՕՃԱ ԷԻ ՕՄԱՆՃԱԻ Ի Ի Է  
Ի ՃԱՃՆՃԱԻ Ի Ի ՆՃԷ**

Չափը 60×84<sup>1</sup>/<sub>16</sub>: Թուղթը օֆսեթ:  
19 տպագրական մամուլ:  
Տպաքանակը՝ 500:

Երևանի համալսարանի հրատարակչություն  
ՀՀ, Երևան - 375049, Ալեք Մանուկյան 1